

Zyngn
Pzdumtelop

Uwuu III, by. 6
Uwuu IV, 2, 7, 8+9

Uwuu V, 2, 9, 10+11

1910

84

2-66

24
2.66
Հեղինակ
ՎԻՔԹՈՐ ՇԻՒԿՕ

20 APR 2006
Քարգմանիչ
ԳՐ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
12.9 NOV 2010

*just warmer
Hadar
II*

Թ Շ Ո Ւ Ա Ռ Ն Ե Ր




Պ Ա Տ Կ Ե Ր Ա Զ Ա Ր Դ
Ե Ր Ր Ո Ր Դ Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն (Վ Ե Ր Ս Տ Ի Ն Ս Ր Բ Ա Գ Ր Ո Ւ Ա Ծ)



Մ ա ս ն Ե ի ղ ո ղ ղ — Մ Ա Ր Ի Ո Ւ Ս

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Հ Ա Տ Ո Ր

Ա Զ Ա Տ Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր Թ Ի 27



Հ Ր Ս Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Վ. ԵՐ Պ. Զ Ա Ր Դ Ա Ր Ե Ա Ն Ե Ղ Ր Ա Յ Ր Ն Ե Ր Ո Ւ
Կ. Պոլիս — Զարմայնչյար, Թի. 24—26



Տպագր. Ռ. ՍԱԳԱԵԱՆ

1910

(ԹԵՆԱՆԱՆԵՐ 65)

12.06.2013

6386

Թ Ն Ո Ւ Ա Ռ Ն Ե Ր

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Գ Ի Ր Գ

Ե Ր Կ Ո Ւ Ա Ս Տ Ղ Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Դ Ի Պ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ Ա

Մ Ա Կ Ա Ն Ո Ւ Ն . — Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն Կ Ա Չ Մ Ե Լ Ո Ւ Կ Ե Ր Պ

Այնպիսի Մարիա գեղեցիկ երիտասարդ մըն էր հասակը միջին, մաղերը թանր և սևաթուր, ճակատը բարձր և հանճարեղ, ունեքերը բաց և սրաշունչ, կերպարանքը պարզ և հանդարտ էր, իսկ դէմքին վրայ գիտեմ ինչպիսի բան մը կար որ սէգ, խորունկ և անմեղ էր: Կիտակէմքը՝ որու ամէն գիծերը բոլորչի ու միանգամայն հաստատուն ինչ այն գերմանական անուշութիւնը ունէր զոր գաղղիական դէմքը Ալդատէն և Լորէնէն ընդունեց. իսկ կերպարանքին վրայ բնաւ որ և է անկիւն չէր նշմարուեր. կերպարանի մը վրայ անկէններու այս անթերի տարակայութիւնը այն դիմական յատկութիւնն է որով Սիգամայրընքը Հումայեցիներու մէջ շուտ կը ճանչցուէին և սրով առիւծային ցեղը արծուայինէն կը զանազանուի:

Մարիա կեանքի այն եղանակին մէջն էր ուր խորհող մարդոց միտքը՝ գրեթէ հաւասար համեմատութեամբ կորովութիւն և



68931-68

աղարդութիւն ընդունելով կը կազմուի: Եթէ նրակալու պարագա-
 յի մը մէջ գտնուելու ըլլար, Մարիուս ամբողջապէս ունէր ինչ որ
 պէտք էր ապուշ մը ըլլալու համար. թող բային անգամ մը ևս
 դառնար, և ահա Մարիուս կրնար վսեմ ըլլալ իր վարմունքը ըզ-
 դոյ, ցուրտ, քաղաքավար և քիչ մը վեհեմ կերպեր ունէր:
 Բերանը սիրուն, շուրթները խիստ կարմրագեղեցիկ ակունքներն ալ շատ
 սպիտակ էին, հետեւաբար իր ժպիտը անոր դէմքին ամէն խստու-
 թիւնները կը մեղմէր: Կային ժամեր ուր այդպէս ճակատը և
 հեշտաշունչ ժպիտը տարօրինակ հակապատկեր կը ընծայէին: Աչքը
 պզտիկ, այլ նայուածքը մեծ էր:

Յետին թշուառութեան մէջ գտնուած մասնակ Մարիուս կը
 դիտէր թէ՛ երբ կանոնէր ինք՝ նորատի աղջիկները անդին կը դառ-
 նային, հետեւաբար դառն վիշտ մը զգալով իր կուտար կամ կը
 պահուէր: Մարիուս կը կարծէր թէ այն աղջիկները իր հին զգեստ-
 ներուն կը նայէին և կը խնդային. ճիշդը խալու համար կը խոս-
 տովանինք թէ անոնք Մարիուսի կը նայէին անս զի գեղեցիկ էր
 և վասն զի կերպղէին անոր այս գեղեցկուիւնն վրայ:

Մարիուս խրաչող էր այս անբարեկամ թիւրիմացութեան
 պատճառաւ որ տեղի ունեցած էր իր և այլ գեղանի անցորդու-
 հիներուն միջև: Անոնց և ոչ մէկը ընտրեց, անս զի ամենէն ալ
 կըզուշանար. Մարիուս օրերը այսպէս անցնելով անորոշապէս ապ-
 րեցաւ, — աւանակի մը պէս, կըսէր Գուրգէնի ագ:

Գուրգէնի ագ նաև կըսէր անոր. Գուրգէնի փափաքի պատկա-
 ուելի ըլլալ: (Վասն զի արդէն կը դուդիկն ըլլար. դու ըսելով խո-
 սակցելը երիտասարդական բարեկամութեան միտումն է): Բարե-
 կամ, խրատ մը տամ քեզ: Այնքան մի կարող կնիկները լաւ բա-
 մը աւելի նայէ՛ բողբոռն: Այս հանած վայրէջ կնիկները լաւ բա-
 ներ ունին, ո՛ր Մարիուս: Եթէ ատանկ միշտ խախտի և ամչնաս,
 օր մըն ալ ապուշ մը պիտի դառնաս:

Երբեմն ալ Գուրգէնի ագ Մարիուսին հանդիպելով, կ'ըսէր.
 — Բարի լո՛յս, վարդապետ:
 Մարիուս երբ Գուրգէնի ագէն այսպիսի խօսք մը կը լսէր,
 ութը օր ա՛լ աւելի կը խորչէր թէ նորատի և թէ՛ պառաւ կինե-
 րէն, և մասնաւոր աւելի կը խորչէր Գուրգէնի ագէն:

Սակայն անբաւ տիեզերքիս մէջ երկու կին կար որոնցմէ Մա-
 րիուս չէր խորչեր, և ոչ կ'զգուշանար բնաւ: Ստուգիւ շատ պիտի
 զարմանար Մարիուս եթէ ըսուէր իրեն թէ կին են անոնք: Մէկը
 մօրուսաւոր պատաւն էր որ անոր սենեկին հաւքաուքը կ'ընէր և որ
 առիթ կուտար Գուրգէնի ագին ըսելու. Մարիուս՝ տեսնելով թէ
 մօրուք ունի իր սպասուհին, ինք չկրեր իր մօրուքը: Միւսը գրե-
 թէ պզտիկ աղջիկ մըն էր զոր խիստ յաճախ կը տեսնէր և որու
 չէր նայեր ընաւ:

Մարիուս տարիէ մը ի վեր Լիւքսանպուրի ամայի ծառուղի-
 ներէն մէկուն, այսինքն Բէրնիէրի պարսպին կից ծառուղիին մէջ
 մարդ մը և խիստ նորատի աղջիկ մը կը տեսնէր որոնք Ուէտթի-
 գոսին կողմէն ծառուղիին ամենէն ամայի ծայրը նստարանի մը
 վրայ կը նստէին գրեթէ միշտ քով քովի:

Գիպուածը որ մտախոհութեամբ համակուող մարդոց պտոյա-
 ներուն հետ կը խառնուի, ամէն անգամ որ Մարիուսը այս ծա-
 ռուղիին մօտ կը ընթեր, — գրեթէ ամէն օր էր այս, — Մարիուս
 հան կը տեսնէր այն մօրը:

Մարդը վաթսուս տարեկանի չափ կ'երևար. արտուժ և ծանր
 էր կերպարանքը. իր բոլոր անձը ծառայութենէ քաշուող մար-
 տիկներու պէս յաղթանդամ և յոգնած տեսք մը ունէր: Եթէ չքա-
 նշան մը ունեցած ըլլար, Մարիուս պիտի կարծէր թէ վաղեմի բա-
 պայ մըն է ան: Բարի այլ անմատչելի կ'երևար ան և նայուածքը
 ամենեւին չէր ուղղէր որ և է անձի մը նայուածքին: Կապոյտ բան-
 թալօն մը, կապոյտ թիկնոց մը և լայնկր գլխարկ մը ունէր օ-
 րոնք միշտ նոր կ'երևային, նաև սև վզնոց մը և գուէլքորի յա-
 տուկ այսինքն հաստ կտաւէ սպիտակափայլ շապիկ մը: Կրիզէթ
 մը երբ անոր քովէն անցաւ օր մը, ահա խիստ մաքրասէր այրի
 մարդ մը, ըսաւ:

Մազերը բոլորովին ճերմակ էին:
 Պատանուհին որ այս մարդուն կրնկերանար, առջի անգամ
 երբ հետը եկաւ և նստաւ այն նստարանին վրայ զոր կերևայ թէ
 մասնաւորապէս ընտրած էին, տասներեք կամ տասնչորս տարե-
 կան, գրեթէ ագեղ երնելու չափ նիհար, անչնորհ, աննշան աղջ-
 կան մը նման բան մըն էր, այլ սակայն թերևս կը խոստանար

բաւական աղու աչքեր ունենալ որ մը: Միայն թէ զանոնք տեսակ մը անտիրոթ համարձակութեամբ վեր կընէր միշտ. Աղջկան հագուստը վանքի մէջ աշակերտող աղջկան մը հին ու միանգամայն մանկային հագուստին կը նմանէր, սև մերիցիուսէ բոզա մը ունէր որ ազէկ ձևուած չէր: Կրնար կարծուիլ թէ հայր և աղջիկ էին անոնք:

Մարիուս երկու կամ երեք օր քննեց այս ծեր (vieux) մարդը որ տակաւին ծերունի (vieillard) մը չէր, նաև անտիական աղջիկը որ անձ մը չէր տակաւին, յետոյ ամենևին ուշադրութիւն չըրու անոնց: Անոնք ալ նոյնպէս կարծես թէ չէին տեսներ զայն: Հանդարտ և անտարբեր կերպարանքով կը խօսակցէին: Աղջիկը անընդհատ, նաև զուարթօրէն կը շաղակրատէր: Մեր յարգը քիչ կը խօսէր և՛ մերթ ընդ մերթ՝ հայրութեան անպատու մզացումով լի աչքերը անոր վրայ կը յառէր:

Մարիուս մեքենայաբար սովորութիւն ըրած էր այս ծառուղիին մէջ ման գալ: Անփոփոխ հոն կը գտնէր զանոնք:

Ահա ըսինք թէ ինչպէս կը կատարուէր իրողութիւնը:

Մարիուս ամենայն յօժարութեամբ ծառուղիին անոնց նստաբանին դիմացի ծայրէն կուգար, ճամբուն բոլոր երկայնութեամբը կը քալէր, անոնց առջևէն կ'անցնէր, ապա ետ կը գտնար և կերթար մինչև այն ծայրը ուրկէ եկած էր, և նորէն կսկսէր քալել առջի կերպով: Շրջագայութեան ժամանակ հինգ կամ վեց անգամ այսպէս կերթեկէր, և ամէն շաբաթ այս կերպով հինգ կամ վեց անգամ կը պատէր առանց երբէք այն անձերու բարև մը տուած կամ անոնց բարևը առած ըլլալու: Այս Նշանաւոր անձը և դեռահաս աղջիկը կ'երևար թէ ուրիշներուն նայուածքէն կը խորչէին. թէ՛ այս պատճառաւ և թէ՛ գուցէ իրօք խորչիլ ուզելով բնականաբար քիչ մը հեռաբերութիւն տուած էին հինգ կամ վեց ուսանողներու օրոնք մերթ ընդ մերթ Բէթիմիլիէրի մօտ կը պտըտէին՝ ուսումնասէրները իրենց դասէն և ոմանք ալ գնդաստաղէն ետք: Գուրբէյրագ՝ որ վերջիններուն թիւէն էր՝ ժամատով և զգուշութեամբ խոյս տուած էր անկէ: Իբր պարթև փառած էր՝ նետ մը արձակելու պէս՝ մականուն մը նետելով անոնց



Կրնար կարծուիլ թէ հայր և աղջիկ էին անոնք: Էջ 6
Պատկեր թիւ 56
Թշուառները 2.

Վրայ: Միայն աղջկան սև րօպան և ձերին ճերմակ մազերը Գուր-
 Ֆէյրազին ուշադրութիւնը գրաւեր էին, հեռաբար ուսանողը
 աղջկանը օրիորդ Լաւուար (սև) և հօրը պարօն Լըպլան (ճերմակ)
 անունը տուած էր, և որովհետև ոչ ոք կը ճանչնար անոնց թէ՛ ո՛վ
 ըլլալը և թէ՛ ինչպէս անուանուիլը, մականունը մնացած էր: — Ա՛հ,
 Պ. Պլան իր նստարանին վրան է, կըսէին ուսանողները, և ուրիշ-
 ներուն պէս Մարիուս ալ յարմար գտած էր Պ. Պլան անուանել
 այն անձանօթ մարդը:

Մենք ալ անոնց պիտի հեռեինք և պատմելու դիւրութեան
 համար Պ. Պլան պիտի ըսենք:

Մարիուս առջի տարին գրեթէ ամէն օր մի և նոյն ժամուն
 հոն տեսաւ զանոնք: Մարդը հաճելի, ալ աղջիկը բաւական ան-
 ջնորհ կերակար իրեն:

Գ. Լ. ՈՒՆԵ Բ.

ԵՒ ԵՂԵՒ ԼՈՅՍ

Երկրորդ տարին, պատմութեանս ճիշդ այն միջոցին ուր հա-
 սաւ ընթերցողը, Մարիուս Լիւքսանպուր երթալու և պարտելու
 սովորութիւնը ընդհատեց՝ առանց ինքն ալ քաջ գիտնալու պատ-
 ճառը, և վեց ամիսի չափ օտք չկոխեց իր ծառուղին: Վերջապէս
 օր մը դարձեալ հոն գնաց: Ամառնային պայծառ առաւօտ մըն էր
 երբ պարտելու ելաւ. Մարիուս զուարթ էր այն զուարթութեամբ
 զոր կ'զգայ մարդ երբ օդը գեղեցիկ է: Կը կարծէր թէ սրտին
 մէջն էին թռչուններու այն ամէն դայլայլիկները զոր կը լսէր և
 երկնից այն ամէն բեկորները զոր կը տեսնէր ծառերու տերեւնե-
 րու մէջէն:

Գնաց ուղղակի « իր ծառուղին », և՛ երբ ծայրը հասաւ՝
 դարձեալ նոյն նստարանին վրայ նշմարեց այն ծանօթ ամօլները:
 Միայն թէ՛ մօտենալով՝ դիտեց որ մարդը միեւնոյնն էր, բայց

աղջիկը միևնոյնը չերեցաւ իրեն: Այն աղջիկը զոր հիմայ կը տեսնէր, մեծահասակ և գեղանի անձ մըն էր և ունէր այն ամէն շատ զմայելի ձեւերը զոր կին մը կ'ստանայ երբ կը հասնի այն վայրկեանը ուր անոնք մանկութեան ամենէն բնական վայելչութեանց հետ կը միանան: Փախուսիկ (fugitif) և անարատ վայրկեան զոր միայն սա բառերը կրնան մեկնել. Տասնընինգ տարեկան: Մտղեքը ոսկեզօծ երակներով խառն, կաստանագոյն և սքանչելի էին, ճակատը կարծես մարմարաշէն էր, այտերը վարդի տերեւով մը կազմուած կերեւային, աչնահար կարմրուք մը, ծփին սպիտակութիւն մը, ընտիր բերան մը ուրկէ ժպիտը իբր ճառագայթ մը և խօսքը իբր երաժշտութիւն մը կեղնէր, գլուխ մը զոր Ռաֆայէլ Մարիամի արժանի համարէր թերևս, և այս գլուխին ներքե վիզ մը զոր գուցէ ժան կուժօն Աստղիկին արժանի սեպէր: Եւ այս չքնաղ պատկերը անթերի ըլլալու համար ունէր նաև քիթ մը որ գեղեցիկ (beau) չէր այլ աղւոր (joli). որ ոչ ուղիղ և ոչ կոր, ոչ խալեան և ոչ յունական, այլ բարիզեան քիթ մըն էր, այսինքն կայտառ, ազնիւ, անկանոն և անարատ բան մը որ պատկերահաններուն յուսահատութիւն իսկ բանահիւսներուն զմայլում կուտայ:

Երբ Մարիուս գեղանիին քովէն անցաւ, չկրցաւ տեսնել անոր աչքերը որոնք միշտ վար կը նայէին: Միայն անոր երկայն և կասկեգոյն յոնքերը տեսաւ որոնք ստուերով և ամօթխածութեամբ ուղղուած էին:

Բայց և այնպէս կը ժպտէր գեղանի պատանուին, մտիկ ընելով սպիտակահեր մարդուն որ անոր հետ կը խօսէր, և ոչինչ կրնար այնքան զմայելի ըլլալ որքան էր աչնկոր նայուածքի մը հետ այս նորափթիթ ժպիտը:

Մարիուս նախ կարծեց թէ նոյն մարդուն ուրիշ մէկ աղջիկն է, հարկաւ առաջինին մէկ քոյրն էր այն. Բայց պտոյտի անփոփոխելի սովորութեամբը երբ երկրորդ անգամ նստարանին մօտեցաւ, ուշադրութեամբ դիտելով տեսաւ որ միևնոյն աղջիկն էր: Վեց ամիսի մէջ պատանուին երիտասարդուելի մը եղած էր. այս էր ահա այլակերպութեան (transfiguration) պատճառը: Այս երևոյթը շատ անգամ կը պատահի, կայ վայրկեան մը ուր աղջիկները

կը փթթին ակնթարթի մը մէջ և յանկարծ վարդ կըլլան: Երէկ գեռ մանկուհիներ էին, բայց այսօր անհանդարտութիւն կուտան տեսնողին:

Այս աղջիկը ոչ միայն մեծցած այլ նաև տեսլական գեղեցկութիւն առած էր: Ինչպէս ապրիլ ամիսին մէջ երեք օր կը բաւէ տեսակ մը ծառեր ծաղիկներով ծածկուելու համար, նոյնպէս և այս աղջիկը գեղեցկութեամբ զարդարուելու համար վեց ամիս բաւական եղած էր: Անոր յատուկ ապրիլն ալ եկած էր:

Երբեմն կը տեսնուին այնպիսի աղքատ և գձուձ մարդիկ որոնք կարծես կարթննան, չքաւորութենէ պերճութեան կանցնին, ամէն տեսակ ծախս կընեն, և յանկարծ փառաւոր, զեղխ և շքեղ կ'ըլլան: Ինչո՞ւ վասն զի երէկ պայմանաժամ մը լրանալով եկամուտ մը գրպանած են: Նորափթիթ աղջիկը իր վեցամսեայ եկամուտը ընդունած էր:

Մանուանդ թէ ա'լ թաւ փեղոյր, մերինսէ րօպա և դպրօցական մուճակներ հագնող աշակերտուհի մը չէր ան, և ոչ ալ կարմիր ձեռներ ունէր: Գեղեցկութեան հետ ճաշակն ալ եկած էր. տեսակ մը պարզ և ճօխ վայելչութեամբ, նաև առանց սեթեւեթի հագուած չքուած անձ մըն էր: Սև տամասկէ րօպա մը, նմանադիպակ լօղիկ մը և սպիտակ շարձէ փեղոյր մը ունէր: Անոր սպիտակ թաթպանները տեսնողը կը հասկնար թէ որքան ազնիւ էր ձեռքը որ չինական փղոսկրէ հովանոցի մը կոթին հետ կը խաղար իսկ մետաքսեայ կիսակօշիկը անոր ոտքին փոքրութիւնը կը ծրագրէր: Եթէ քովէն անցնէիր, իր բոլոր արդուզարդէն զմայելի և ազդու անուշահոտութիւն մը կը բուրէր:

Իսկ մարդը միևնոյն մարդն էր:

Մարիուս երբ երկրորդ անգամ երիտասարդուելին մօտեցաւ, նէարտեանունքը վեր ըրաւ. աչքերուն գոյնը երկնային և խիտ կապոյտ էր. բայց այս սքողուն կապուտակութեան մէջ տակաւին մանկային նայուած մը կար միայն: Անտարբերութեամբ Մարիուսին նայեցաւ՝ մօլաթգնիներուն տակ վազվզող մանկիկին, կամ նստարանին շուք տուող մարմարեայ անօթին նայելու պէս. Մարիուս ալ իր պտոյտը շարունակեց ուրիշ բանի վրայ մտածելով:

Չորս կամ հինգ անգամ ևս անցաւ նստարանին քովէն ուր նստած էր ծաղկահաս աղջիկը, այլ առանց բնաւ անոր դարձնելու իր աչքերը:

Հետեւեալ օրերն ալ՝ սովորականին պէս՝ Լիւքսանպուր եկաւ, սովորականին պէս հոն գտաւ «հայր և աղջիկը», բայց դարձեալ ուշագրութիւն չըրաւ անոնց: Մտքէն չանցուց այս աղջիկը երբ գեղանի եղաւ, ինչպէս անցուցած չէր երբ ագեղ էր ան: Միշտ նստարանին խիստ մօտէն կ'անցնէր՝ ոչ թէ նպատակ մը ունենալուն, այլ որովհետեւ իր սովորութիւնն էր այդ:

Գ. Լ. ՈՒՆԵ Գ.

ԳՐԱՆ ԱՐԴԻՒՆԲՐ

Օր մը օդը բարեխառն, Լիւքսանպուրի պարտէզը շուքերով և փերեներով ողողուած, և երկինք այնքան յստակ էր որ կարծես թէ հրեշտակները առտուն լուացած էին զայն. ճնճողուկները կասկենիներու խորերէն պղտիկ ձայներ կը հանէին. Մարիուս իր սիրտը բնութեան բացած էր բոլորովին: Որ և է բանի վրայ չէր մտածեր, կ'ապրէր և կը շնչէր: Երբ անցաւ այն նստարանին մօտէն, անտիական աղջիկը աչքերը վերցնելով Մարիուսին նայեցաւ, և երկուքին նայուածքները իրարու հանդիպեցան:

Այս անգամ ինչ կար արդեօք նորահաս աղջկան նայուածքին մէջ: Մարիուս չէր կրնար ըսել թէ ինչ կար: Բան մը չկար, և ամէն բան կար: Տարօրինակ փայլակ մը եղաւ այն նայուածքը:

Աղջիկը առջին նայեցաւ, Մարիուս ալ իր ճամբան շարունակեց: Մարիուսի տեսածն էր չէ թէ մանկուհիի մը անմեղ և ընական նայուածքը, այլ խորհրդաւոր վիճ մը որ կէս մը բացուած և յանկարծ գոցուած էր դարձեալ:

Կայ օր մը ուր ամէն նորագի աղջիկ այսպէս կը նայի: Վայ անոր որ այս նայուածքին կենթարկուի:

Դեռ ինքզինքը չճանչցող հոգիի մը այս առաջին նայուածքը երկնից մէջ այդի (aube) կը նմանի: Ճառագայթաւոր և անձանօթ բանի մը զարթումն է այն: Չկայ բան մը որ կարենայ արտագրել այս անակնկալ նշոյլին վտանգալի հրապոյրը, նշոյլ որ յանկարծ աղօտապէս կը լուսաւորէ պաշտելի խաւար մը և որ ներկային բոլոր անմեղութեամբը և տղազային ամէն արիփովը (passion) կը բաղկանայ: Տեսակ մը անորոշ գորով է այն որ պատահաբար կը յայտնուի և որ կ'սպասէ: Մուղակ մըն է զոր անմեղութիւնը յանգէս կը լարէ և որով սիրտեր կը գրաւէ՝ ակամայ և անդիտութեամբ: Կոյս մըն է այն որ կնոջ մը պէս կը նայի:

Այսպիսի նայուածքէ մը գրեթէ միշտ խորին մտահոգութիւն մը կը ծնի ուր որ կ'ուզողուի այն նայուածքը: Ամէն անարատութիւններն ու ամէն անմեղութիւնները իրարու կը հանդիպին այն երկնային և աղէտաւոր ճառագայթին մէջ որ հպտասէր կիներու ամէնէն սիրագրգիռ նայուածքներէն աւելի հմայական զօրութիւն ունի յանկարծ սրտին մէջ ձլել տալու անուշարոյր հօտերով ու միանգամայն թոյներով լի այն մթին ծաղիկը որ կ'անուանուի սէր:

Մարիուս իրիկունը սենեակը դառնալով իր զգեստներուն նայեցաւ, և առաջին անգամ դիտեց թէ աղտեղութիւն, անպատեհութիւն և անլուր յիմարութիւն մըն է Լիւքսանպուրի մէջ պարտիլ իր «ամէն օրուան զգեստներովը», այսինքն գլխարկով մը որու ժապաւէնին քովի կողմը կտրուած է, հաստ մուճակներով որոնք սայլօրդներու յատուկ էին, և սև թիկնոցով մը որուն արմուկները տըժգունած էին:

Պ. Լ. ՈՒՆԻՍ

ՄԵԾ ՀԻՒՍՆԳՈՒԹԵԱՆ ՄԸ ՍԿԻԶԻԸ

Հեռուեալ օրը սովորական ժամուն Մարիուս պահարանէն հանեց իր նոր թիկնոցը, նոր բանթալօնը, նոր գլխարկը և նոր կօշիկները. սպառազինուեցաւ այս ամէն զէնքերով, ձեռնոցները դրբաւ, — ծայրայեղ շոյու թիւն —, և Լիւքսէնպուրկ գնաց պատելու: Ծամբուն վրայ Գուրֆէյրագին հանդիպեցաւ, այլ չտեսնելու զարկաւ: Գուրֆէյրագ երբ իր սենեակը վերադարձաւ, բարեկամներուն ըսաւ.

— Հիմա Մարիուսին նոր գլխարկը և նոր թիկնոցը տեսայ, նաև Մարիուսը որ անոնց մէջն էր: Անշուշտ դպրոց կ'երթար քըննութիւն մը անցնելու համար: Ապուշ մը դարձած էր բոլորովին: Մարիուս երբ Լիւքսէնպուրկ հասաւ, աւազանին բոլորովին զարձաւ և կարապները դիակեց. յետոյ բաւական ժամանակ արձանի մը առջև կեցաւ ակնապիշ նայելով, այս արձանին գլուխը բորբոսէն բոլորովին սևցած էր և ազդրերէն մէկը կը պակսէր: Աւազանին մօտ քառասնամնայ և մեծորովայն քաղքենի մը կար որ հինգ տարեկան աղու մը ձեռքէն ընծած էր և կըսէր անոր.

— Զգուշացի՛ր ծայրայեղութիւններէ, թէ՛ բռնամոլութիւնէ և թէ անիշխանութիւնէ հաւասարապէս հեռու կեցիր, ո՛րդեակ իմ: — Մարիուս լսեց այս քաղքենիին խօսքերը: Յետոյ անգամ մը ևս աւազանին շուրջը դարձաւ. վերջապէս ուղղուեցաւ դէպ «իր ծառուղին» յամբարսը և կարծես ակամայ քաղցրով: Կրնար ըսուիլ թէ բռնադատուած ու միանգամայն արգիլուած էր հոն երթալու, թէեւ ինք ամենեւին չէր հասկնար իր այս վիճակը, և կը կարծէր թէ ամէն օրուան պէս կերթար:

Մեր ծառուղին մտաւ, նշմարեց Պ. Լըպլանը և նորատի ազդիկը որոնք միւս ծայրը նստարանին վրայ էին: Թիկնոցը վերէն վար կոճկեց և մարմնոյն վրայ լաւ մը տեղաւորեց որպէս զի ծալք չունենայ, տեսակ մը խնդութեամբ բանթալօնին յզկուն ցուլումները քննեց, և դէպի նստարանը արշաւեց: Այս արշաւումին մէջ յարձակում և անշուշտ աշխարհակալութեան (conquête) կամէութիւն (velléité) մը կար: Անոր համար կ'ըսեմ թէ արշաւեց դէպ ի նրստարանը, իբր թէ ըսէի. Աննիպալ դէպ ի Հոսմ արշաւեց:

Սակայն Մարիուսի ամէն շարժումներն ալ մեքենայական էին և ամենեւին ընդհատած չէր իր մտքին և աշխատութեանց սովորական հնունուքը: Նոյն պահուն կը մտածէր թէ Մանիւկ տիւ Պագալօրեան անպիտան գիրք մըն է և թէ անշուշտ հազուադիւտ անմիտներէ շարագրուած է այն, քանի որ մարդկային մտքի իբր հրաշակերտ Ռասինին երեք ողբերգութիւնը, իսկ Մօլիերի միայն մէկ կատակերգութիւնը վերլուծուած են անոր մէջ: Ականջը կը զարնէր սուր կերպով: Մինչդեռ նստարանին կը մօտենար, թիկնոցին ծալքերը կը բանար, իսկ աչքերը անտիական ազդկան վրայ կը յառէր: Կը կարծէր Մարիուս թէ այն ազդիկը ծառուղիին ամբողջ ծայրը կապտագոյն և ազօտ նշոյլով մը կողողէր:

Բանի կը մօտենար, իր քայլը հետզհետէ կը թուլնար: Երբ նստարանէն այս ինչ հեռաւորութիւն ունեցող կէտ մը հասաւ, կանգ առաւ՝ թէև տակաւին շատ հեռու կը գտնուէր ծառուղիին ծայրէն, և նոյն իսկ ինքն ալ չկրցաւ գիտնալ թէ ինչպէս եղաւ որ ետ դարձաւ: Եւ ոչ իսկ ըսաւ իրովի թէ մինչև ծայրը չէր երթար: Նորատի ազդիկը հեռուէն հազիւ հազ կրցաւ նշմարել զայն և տեսնել անոր ազուր կերպարանքը զոր կուտային իր նոր դգեստները: Սակայն Մարիուս ենթադրելով թէ ետեւը գտնուողը կըրնայ իրեն նայիլ, խիստ ուղիղ կը կենար լաւ կերպարանք ունենալու համար:

Մինչև հանդիպակայ ծայրը հասաւ, յետոյ ետ դարձաւ, և այս անգամ քիչ մը աւելի մօտեցաւ նստարանին: Մտաբու երեք անջրպետ մնալու չափ անգամ մօտեցաւ նստարանին, բայց հոն չգիտեմ ինչո՞ւ անհնարին թուեցաւ իրեն աւելի հեռու երթալը, և դեդեւեցաւ: Տեսնել կարծած էր թէ նորատի ազդկան երեսը դէպ թ

իրեն կը հակէր: Սակայն առնական և բուռն ջանագրութիւն մը բուռ, զօպեց իր դեղեւումը և շարունակեց յառաջ երթալ: Բանի մը բոպէէն ետք նստարանին առջևէն կ'անցնէր. ուղիղ և հաստատ կենալով, մինչև ականջները կարմրելով, առանց աջ կամ ձախ նայիլ համարձակելու, և ձեռքը պետական մարդու մը պէս թիկնոցին մէջ դրած: Երբ անցաւ — բերդին թնդանօթներուն տակէն — սրտի սոսկալի բաղտում մը զգաց: Աղջիկը առջի օրւան պէս տամազգետայ բօզան հագած և շղարչէ փեղոյրը դրած էր: Մարիուս անպատում ձայն մը լսեց որ անշուշտ զանոր ձայնն էր: Աղջիկը հանդարտօրէն կը խօսակցէր: Շատ աղւոր էր: Մարիուս կզգար թէ աղւոր էր նորաօրի աղջիկը, թէև զայն տեսնելու փորձ մը չըրաւ: Այլ սակայն, կ'ըսէր Մարիուս մտապէս, այն իմ վրայ յարգ և համարում պիտի ունենար անշուշտ եթէ դիտնար թէ ես իսկ յօրինած եմ Մարիոս Օպրէկօն Տը Լա Բօնայի վրայ այն ճառը զոր պարոն Ֆրանսուա Տը Նէօֆշաթօ իր տպած փիլ Պլասի սկիզբը գրաւ իբր իր կողմէ հեղինակուած:

Նստարանէն անցաւ, ծառուղիին մինչև յետին ծայրը գնաց որ խիտ մօտ էր, յետոյ ետ դարձաւ և դարձեալ դեղանի աղջկան առջևէն անցաւ: Այս անգամ բոլորովին դեղնած էր Մարիուսին գոյնը: Մանաւանդ թէ անախօրժ բաներ կզգար միայն: Հեռացաւ նստարանէն և երիտասարդուհիէն, և կ'անակը անոր դարձնելով կը կարծէր միանգամայն թէ աղջիկը իրեն կը նայի, և այս պատճառաւ կը գայթէր:

Ա'լ նստարանին մերձեցալու փորձ չըրաւ, ծառուղիին գրեթէ կէտին վրայ կանգ առաւ, և բան մը ըրաւ զոր բնաւ չէր ըրած, այսինքն նստաւ, աչքին ծայրովը նայելով և մտքին ամենէն անշուշտօրէն անդունդներուն մէջ մտածելով թէ վերջապէս կարելի չէր որ բոլորովին անզգայ ըլլան իր յգկուն բանթալօնին և նոր թիկնոցին նկատմամբ այն անձերը որոնց սպիտակ փեղոյրին և սեւաթոյր բօզային վրայ կսքանչանար ինք:

Քառորդէ մը ետք ելաւ, իբր թէ նորէն օւղէր քայել դէպի այն նստարանը որ լուսնդէն պակ մը կը կրէր: Սակայն ոտքի վրայ և անշարժ կը կենար: Ըսաւ իրովի, — և տասնը հինգ ամիտէ ի վեր առաջին անգամն էր այսպիսի բան մը ըսելը, — թէ այն պա-

րոնը որ ամէն օր հոն կը նստէր իր աղջկան հետ, անշուշտ դիտած էր զինքը, և հաւանական էր թէ տարօրինակ կը համարէր իր դեգերումները:

Նոյնպէս առաջին անգամ ըլլալով անպատկառութիւն մը ըզգաց այն անձանօթը՝ հոգ չէ թէ մտքին մէջ գազանապէս՝ Պ. Լըպլան (Պ. Սպիտակը) ծիծաղելի մակնունով կոչած ըլլալուն համար:

Այսպէս քանի մը բոպէ ակնկոր կեցաւ՝ աւազին վրայ ծրագիրներ շինելով նուրբ գաւազանով մը զոր ձեռքը բռնած էր:

Յետոյ նստարանին, Պ. Լըպլանին և անոր աղջկան հանդիպակաց կողմէն յանկարծ ետ դարձաւ և իր սենեակը գնաց:

Այն օր մտնած էր պանդօկը երթալ և ճաշել: Իրիկուն ժամը աւթնին նշմարեց ճաշի գացած չըլլալը և որովհետև շատ ուշ ըլլալուն չէր կրնար մինչև Սէն-ժազի գոհե՛ր երթալ, ինչ ընեմ, ըսաւ, և պատառ մը հաց կերաւ:

Նախ խոզանակեց (brosser) թիկնոցը և զգուշութեամբ ծալելէն ետք պառկեցաւ:

Գ. Լ. ՈՒՍ Ե.

ՊՈՒԿՕՆ ԽԱԹՈՒՆԻՆ ՎՐԱՅ ԱՅԼԵԻԱՅԼ ԿԱՅԾԱԿՆԵՐ Կ'ԻՋՆԵՆ

Հետեւեալ օրը Պուկօն խաթունը, — Գուրֆէյրագ այսպէս կ'անուանէր Կորպոյի խաթնուլ տան պառաւ դռնապան, գլխաւոր վարձկալ և սպասուհին, — որու՝ ինչպէս հաստատեցինք արդէն՝ բուն անունը տիկին Պիւրկօն էր, սակայն Գուրֆէյրագի շուտիկ լեզուն քան մը չէր խնայեր, Պուկօն խաթունը, կըռնք, արժանալով դարձանալով դիտեց որ Մարիուս դարձեալ նոր թիկնոցովը դուրս կ'ելլէր:

Մարիուս Լիւքսէնպուրկ գնաց, այլ չանցաւ ծառուղիին կէտէն անդին ուր էր իր նստարանը: Նստաւ ասոր վրայ առջի օրուան պէս՝ հեռուէն դիտելով և որոշապէս տեսնելով սպիտակ փեղոյրը:

սեւաթոյր բոսպան և մանաւանդ կապոյտ նշոյլը: Լիւքսէնպուրկի
դուռներուն մինչև գոցուիլը տեղէն չշարժեցաւ, և երբ գոցուե-
ցան, ան ասան ինքն ալ ելաւ և իր սենեակը վերադարձաւ: Չտե-
սաւ Պ. Լըպլանին և իր աղջկան ելլելը և երթալը, ուրկէ հետե-
ցուց թէ անոնք Ուէսթի փողոցին վանդակէն ելլելով գացեր էին
պարտէզէն: Ետքէն, քանի մը շարաթ ետք, երբ ուզեց միտքը
բերել թէ ո՛ւր ճաշած էր այն իրիկուն, ամենևին չկրցաւ յիշել:

Հետևեալ օրը, այսինքն երրորդ օրը Պուկօն խաթունը դարձ-
եալ խռովեցաւ մեծապէս, վասն զի Մարիուս նոր թիկնոցովը
գուրս գլաւ. — Ետեւէ ետեւ երե՛ք օր, պուսպ Պուկօն:

Մարիուսին ետեւէն երթալու աշխատեցաւ. բայց Մարիուս ա-
բագօրէն և ահագին քայլերով կ'երթար. լեռնայծ մը հալածել
սկսող ձիագէտի մը կրնար սեպուիլ Պուկօն այս պարագային մէջ:

Դեռ երկու վայրկեան անցած էր, և ահա պառաւը դադրե-
ցաւ տենեւիէ երիտասարդը, և կատղելով տուն դարձաւ շնչաս-
պառ, իր ծանրաշնչութեամբը գրեթէ հոգին բերանը եկած: Մի-
թէ համ հոտ ունի, մրմուռաց, ամէն օր գեղեցիկ զգեստները հագ-
նիլ և առանկ ետեւէն մարդ վազցնելը:

Մարիուս Լիւքսէնպուրկ գացած էր:

Նորատի աղջիկը հոն էր Պ. Լըպլանին հետ: Մարիուս կարելի
եղածին չափ մօտեցաւ՝ զիրք մը կարդալ ձեւացնելով, սակայն
դարձեալ խիստ հեռու մնաց, ապա եկաւ իր նստարանին վրայ
բազմեցաւ, ուր չորս ժամ կեցաւ՝ ծառուղիին մէջ բուն ճնճուկ-
ներու ցատկրտելը դիտելով, և կարծելով զգալ թէ իր վրայ կը
խնդային այն թռչունները:

Այսպէս տասնը հինգ օրի չափ անցաւ: Մարիուս Լիւքսէն-
պուրկ կերթար՝ ա՛լ չէ թէ պտըտելու այլ միշտ իր տեղը նստելու
համար և առանց գիտնալու թէ ինչո՛ւ կը նստէր: Երբ հոն կու-
գար, ա՛լ տեղէն չէր շարժեր: Առէն առաւօտ իր նոր թիկնոցը կը
հագնէր՝ հինովը չտեսնուելու համար. և հետևեալ օրը նոյնը կը
շարունակէր:

Աղջիկը իրատի հրաշալի գեղեցկութիւն մը ունէր: Միայն մէկ
գիտութիւն կարելի էր ընել իբր քննադատութիւն. այս աղջկան
արտում նախորածքին և ուրախալի ժպտին մէջ հակասութիւն մը

կար որով փոքր ինչ մօլորսագին կ'երեւար անոր կերպարանքը, հե-
տեւարար ժամանակ առ ժամանակ տարօրինակ կ'երեւար այ՛ տ-
նուչ դէմքը առանց կորսնցնելու իր գեղեցկութիւնը:

Պ. Լ. ՈՒՆԻՍ Գ.

ՄԱՐԻՈՍ ԿՈՒՆԱՒՈՐ

Երկրորդ շաբթուն վերջին օրերէն օր մը Մարիուս՝ սովորու-
թեանը համեմատ՝ իր նստարանին վրայ նստած էր, ձեռքը
բաց գիրք կը ունենալով որուն և ոչ իսկ մէկ երեսը դարձուցած
էր երկու ժամէ ի վեր: Յանկարծ սարսուռ մը եկաւ վրան: Մառ-
ուղիին ծայրը դէպք մը կ'անցնէր. Պ. Լըպլան և իր աղջիկն ելած
էին իրենց նստարանէն, աղջիկը հօրը թեւը մտած էր, և երկուքն ալ
յամբաբար կ'ուղղուէին դէպ ի ծառուղիին մէջտեղը, ուր նստած
էր Մարիուս: Երիտասարդը գիրքը գոցեց, նորէն բացաւ, յետոյ
ուզեց կարդալ: Մարիուս կը դողար: Լուսեղէն պսա՛կը, գեղանի
օրիորդը ուղղակի իրեն կուգար: — Ա՛հ. Աստուած իմ, կը մտա-
ծէր, ամենեւին ժամանակ չպիտի ունենամ զիրք մը առնելու: Մա-
կայն սպիտակահեր մարդը և անտիական աղջիկը կը յառաջանային:
Կը թուէր Մարիուսի թէ դար մը կը տեւէր անոնց քայլն ու միան-
գամայն վայրկեան մը կը տեւէր միայն: — Ինչո՞ւ համար դէպ այս
կողմը կուգան, կը հարցնէր իւրովի: — Ի՛նչ, հիմա ուրեմն տակէ՞
պիտի անցնի նէ: Իր ստեղծը այս աւազին վրայ, այս ծառուղիին
մէջ, ինձմէ երկու քայլ անդ ին պիտի քայլե՛ն: Մարիուս սաստիկ
կը խռովէր, կ'ուզէր որ խիստ գեղանձն երիտասարդ մը ըլլար,
կ'ուզէր որ խաղի շքանշանը ունեցած ըլլար: Անոնց քայլերուն մեղմ
և չափաւոր ձայնը լսեց: Կ'երեւակայէր թէ Պ. Լըպլան իրեն կը

68931-68

Ձ. ՀԱՍՏԻՐ

(ԹՇՈՒՆԱՌՆԵՐ 66)



նայէր զայրազին: Արդեօք հետս պիտի խօսի՞ այս պարօնը, կ'ըսէ՞ր մտապէս: Մարիուս աչքերը վար ըրաւ, և երբ նորէն վեր ըրաւ ձ տեսաւ որ բոլորովին մօտեցած էին իրեն: Պատանուհին անցաւ, և անցնելու միջոցին Մարիուսին նայեցաւ: Ուղղակի նայեցաւ և այնպիսի խորհուն անուշութեամբ մը որմէ Մարիուս ոտքէն մինչև գլուխը սարսուեցաւ: Մարիուս կարծեց թէ պատանուհին կը յանդիմանէր զինքն այնքան ժամանակ սպասելուն և մինչև իր քով չԵ գալուն համար, և թէ կ'ըսէր իրեն. Ահա ես եկայ: Մարիուս շտացաւ՝ տեսնելով նորափ աղջկան ճառագայթներով և անդունդնեօրով լի բերանը:

Կը կարծէր թէ ուղեղին մէջ կրակ մը կը վառէր: Գեղանի աղջիկը մինչև իրեն եկած էր. ինչ ուրախութիւն, մանաւանդ թէ ինչպէ՞ս նայած էր իրեն: Տակաւին այնքան գեղանի երեւցած չէր Մարիուսին որքան երեցաւ հիմա. իրօք գեղանի էր կանացի ու միանգամայն հրեշտակային գեղեցկութեամբ մը, գեղանի՛ այնպիսի անթերի գեղեցկութեամբ մը, որուն առջեւ Բեթրարգ կ'երգէր և Տանթէ ծանր կը դնէր անշուշտ: Մարիուս երեւակայեց թէ երկնքի կապառազեղ տարածութեանց մէջ կը լողայ: Միանգամայն սոսկալի կերպով կը նեղանար, վասն զի կօշիկներուն վրայ փռի կար:

Մարիուս ապահովապէս գիտնալ կը կարծէր թէ նէ իր կօշիկներուն ալ նայած էր:

Մարիուս անընդհատ աղջկան ետեւէն նայեցաւ մինչև աներևոյթ ըլլալը: Յետոյ սկսաւ լիւքոէնպուրկի մէջ յիմարի մը պէտքալել: Հուանական է թէ երբեմնակի կը խնդար մինակը և բարձր ձայնով կը խօսէր: Մանկանց դայեակներուն մօտ այնքան կը մտախօսէր որ անոնց ամէն մէկը կը կարծէր թէ իրեն սիրահար է ան:

Մարիուս դուրս ելաւ Լինքոէնպուրկէն փողոցի մը մէջ պատանուհիին հանդիպելու յոյսով:

Օտէօնի կամարներուն ասկ Գուրֆէյրագին հանդիպեցաւ և ըսաւ. եկուր, միտակը ճաշենք: Ռուսոյի պանդակը գացին, և վեց ֆրանք ծախս ըրին: Մարիուս սպայի մը պէս կերաւ: Վեց սուպարգեւ առաւ ծառային: Միք ուտելու միջոցին Մարիուս Գուրֆէյրագին ըսաւ. կարդացի՞ր լրագիրը: Ո՛րքան գեղեցիկ է Օտթի Տը Բիւտալօի ատենարանութիւնը:

Մարիուս սաստիկ սիրահար էր:

Ճաշէն ետք Գուրֆէյրագին ըսաւ. — Թատրոն երթանք. ասուսակը ինձմէն: Բօրթ Սէն — Մարթէնի թատրոնը գացին Լ'օպերո մեկ Անտրի ըսուած թատրերգութեան մէջ Յըէտէրիկը տեսնելու համար: Մարիուս խիստ շատ զուարճացաւ:

Մի եւ նոյն ժամանակ կրկնապատկուեցաւ իր անողոքելի ըզգաստամտութիւնը: Թատրոնէն ելլելու ժամանակ չուզեց նորոյթի գործաւորուհիի մը ծնրակապին նայիլ, երբ այս կինը ուղիսի մը վըրայէն կ'ոտտէր, և գրեթէ պժգում եկաւ իր վրայ երբ Գուրֆէյրագ ըսաւ իրեն. Սա կինն ալ յօժարակամ կ'անցնէի արդէն ունեցած կիներուս ցանկիս մեջ:

Գուրֆէյրագ հետեւեալ օրը Վօլթէրի օրճարանը նախաճաշիկի հրաւիրած էր զայն: Մարիուս գնաց օրճարանը և առջի օրուանէն աւելի կերաւ: Բոլորովին խոհուն և խիստ զուարթ էր: Կարծես թէ առիթ չէր փախցնէր քահ քահ խնդալու համար: Գուրգուրանօք ողջագուրեց անծանօթ գաւառացի մը որ իրեն ներկայուեցաւ: Ուսանողներու խումբ մը սեղանին բոլորափքը շրջան մը կաղմելով կը խօսէին այն զրարանութեանց վրայ որոնք Սօրպօնի բեմին վրայ կ'ըսուին և որոնց համար տէրութիւնը ամառական կուտայ: Յետոյ խօսակցութիւնը դարձաւ Գիշերաբառարաններուն և առողջանութեանց սխալներուն և անկատարութեանը վրայ: Մարիուս վիճաբանութիւնը ընդմիջելով, պօռաց. Այլ օտկայն շա՛տ հաճելի բան է շքանշան մը ունենալը:

— Ահաւասիկ բան մը որ շատ զուարճելի է ըսաւ կամաց մը Գուրֆէյրագ՝ ժան Բրուվէրին:

— Ոչ, պատասխանեց ժան Բրուվէր, շատ լուրջ է:

Արդարև լուրջ էր: Մարիուսի համար հասած էր այն առաջին բուն և սիրուն ժամը ուր մարդս կ'սկսի եռանդագին սիրել:

Մարիուսի կրած այս ամէն փոփոխութեան պատճառ եղած էր նայուածք մը միայն:

Ամենեւին պէտք չէ զարմանալ երբ ականը լի է վառօթով և հրդեհը պատրաստ: Նայուածք մը կայծ մըն է:

Ա՛լ եղած լմնացած էր: Մարիուս ա՛լ կին մը կը սիրէր: Մարիուսի ճակատագիրը անծանօթ աշխարհները կը ժամէր:

Կիներուն նայուածքը տեսակ մը առերեւութապէս հանդարտ
 և սոսկալի ճախարակներու կը նմանի: Ամէն օր այս ճախարակներ-
 րուն քովէն կ'անցնիս հանդարտօրէն, անպատիժ և անկասկած:
 Կուգայ վայրկեան մը ուր կը մտնաս նոյն իսկ թէ հոն է այն բանը:
 Կ'երթաս, կուգաս, կը մտախոհես, կը խօսիս, կը խնդաս: Յան-
 կարծ բռնուիլ կ'զգաս: Ա'լ ճար չկայ: Ա'լ ճախարակէն կը բռ-
 նուիս, նայուածքէն կը գրաւուիս: Ստուգիւ այն նայուածքը գը-
 րաւեց զքեզ չգիտեմ ուրկէ՛ և ի՛նչպէս, բայց ստոյգ է թէ գրաւեց՝
 բռնելով քայքայուն մտքիդ այս կամ այն մասէն, կամ թարթա-
 փումէ մը զոր ունեցած է միտքդ: Ա'լ կորսուեցար: Բոլորովին
 պիտի բռնուիս: Գաղտնի զօրութեանց շղթայով մը կը կաշկան-
 դուիս: Պարապ տեղը կը յուզուիս: Ա'լ հնարին չէ մարդկային
 ձեռնառութիւն գտնել: Անիւններու ակռաներուն մէկէն միւսին
 տակ, վշտէ վիշտ, տանջանքէ տանջանք պիտի իյնաս, թէ՛ դուն
 և թէ՛ միտքդ, հարստութիւնդ, ապագադ, հոգիդ. և այս զար-
 հուրելի մեքենայէն ուրիշ կերպով չպիտի ելլես թէ ոչ նախատին-
 քէն տձեռնալով՝ եթէ չարասիրտ արարածի մը իշխանութեան ներ-
 քեւն ես, կամ տրիփէն այլակերպուելով՝ եթէ ազնիւ սրտի մը իշ-
 խանութեան ներքեւ կը զանուիս:



Գ Լ Ո Ւ Ն Ե Կ .

ԱՐԿԱՅՆԵՐԸ Մ ՏԱՌԻՆ ՈՐՈՒ ՎՐԱՅ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ Կ'ԸՂԼԱՆ

Առանձնացու՛մք, ամէն բանէ հրաժարու՛մք, մեծամտութիւնը,
 անկասութիւնը, բնասիրութիւնը, օրական և նիւթական գործու-
 նէութեան տարակայութիւնը, կեանքը ըստ ինքեան, սրբակեցու-
 թեան թագուն կռիւները և բոլոր արարածներու առջև բարեօթ-
 րական հիացումը պատրաստած էին Մարիուսը այն վայելումին որ
 կ'անուանի արիփ: Հօրը վրայ եռանդագին սքանչացումը սակաւ
 առ սակաւ կրօնք մը եղած, և՛ ամէն կրօնքի պէս՝ իր սրտին խօ-
 րը քաշուած էր: Բան մը պէտք էր առաջին երեսին վրայ, և ահա
 սէրը հասաւ:

Ամբողջ ամիս մը անցաւ, և այս ամիսին մէջ Մարիուս ամէն
 օր Լիւքսէնպուրկ գնաց: Երբ ժամանակը կուգար, ոչ ինչ կրնար
 արգիլել զայն: — Գործի մէջ է, կ'ըսէր Գուրֆէյրագ: Մարիուս
 հիացումով համակուած կ'ապրէր: Ստոյգ է թէ նորատի ազլիկը
 իրեն կը նայէր:

Մարիուս վերջապէս համարձակութիւն առած էր և նստա-
 րանին կը մտնար: Սակայն ա'լ անոր առջեւէն չէր անցներ՝ հը-
 նազանդելով վեհերոտութեան բնազդումին, միանգամայն սիրա-
 հարներու խոհեմութեան բնազդումին: Օգտակար կը սեպէր «հօրը
 ուշադրութիւնը» չը հրաւիրել իր վրայ: Ծառերուն և արձաննե-
 րուն պատուանդաններուն ետև խորին մաքիավէլութեամբ մը
 կայաններ կը կարգադրէր որպէս զի կարելի եղածին չափ աւելի
 տեսնուի՝ ազլկան և կարելի եղածին չափ նուազ տեսնուի ծեր
 մարդուն: Երբեմն ամբողջ կէս ժամ անչարժ կը կենար Լէօնիտասի
 կամ Սպարթազիւսի անդրիի մը շուքին տակ՝ ձեռքը գիրք մը

բաներով որու վրայէն աչքերը կտայ կտայ հեռանալով գեղանի աղջիկը կը փնտռէին, և աղջիկն ալ իր կողմէ տարտամ ժպտով մը իր սիրուն կիսադէմքը (profil) դէպի Մարիուս կը դարցունէր: Պատանուհին սպիտակահեր մարդուն հետ ամենաքնակաւ և ամենահանդարտ կերպով խօսակցելովը հանդերձ կուտական և սիրաշունչ նայուածքի մը ամէն մտախոհութիւնները Մարիուսի վրայ կը դնէր: Հինօրեայ և անյիշատակ սատանութիւնը զոր Եւա աշխարհիս առջի օրէն գիտէր և զոր ամէն կին գիտէ կենաց առջի օրէն: Իր բերանը մէկին պատասխան կուտար և նայուածքն ալ միւսին կը պատասխանէր:

Պէտք է կարծել սակայն թէ Պ. Լըպլան վերջապէս բան մը նշմարած էր. վասն զի շատ անգամ՝ երբ Մարիուս կուգար՝ Պ. Պլան կ'ելլէր և կսկսէր քայլել: Պ. Լըպլան իր սովորական տեղը ձգած էր և ծառուղիին միւս ծայրը կլատիաթէօրին լոտ նստարանը ընտրած էր կարծես տեսնելու համար թէ արդեօք Մարիուս հոն ալ պիտի գար իրենց ետեւէն. Մարիուս չհասկցաւ, և անոնց ետեւէն երթալու յանցանքը գործեց: «Հայրը» սկսաւ ոչ այնքան կանոնաւոր ըլլալ. և ալ ամէն օր հետը չբերաւ «իւր աղջիկը»: Երբեմն մինակ կուգար: Այն ատեն Մարիուս չէր կենար. ուրիշ յանցանք մըն ալ այս էր:

Մարիուս չէր զգուշանար այս թագուն նշաններէն: Վեհերոտութեան վիճակէն կուրութեան վիճակը անցած էր. բնական և աղետաւոր յառաջդիմութիւն. իր սէրը կ'ածէր: Ամէն գիշեր կերպէր իր սիրոյն վրայ: Մանաւանդ թէ անյուսալի երանութիւն մը ունեցած էր. կրակին վրայ իւր թափած էր, աչքերը պաշարող խաւարը կրկնապատկուած էր: Իրիկուն մը վերջալոյսի ժամանակ «Պ. Լըպլանի և իր աղջկան» նստարանին վրայէն՝ ուրկէ պահ մը առաջ ելած էին անոնք՝ Մարիուս թաշկինակ մը, բոլորովին պարզ և անզարդ թաշկինակ մը գտած էր որմէ կը կարծէր թէ անպատում անուշահոտութիւններ կը բուրէին. Մարիուս մեծ ուրախութեամբ առաւ թաշկինակը որու վրայ Ս. Բ. նշանատառերը կային. Մարիուս այն գեղանի պատանուհին վրայօք բան մը չէր գիտեր, անոր ոչ ընտանիքը, ոչ անունը և ոչ բնակարանը ծանօթ էին իրեն. այս պատանուհին վերաբերող իրերուն առաջին բանն էր

այն տառերը զոր կը բռնէր, պաշտելի՛ սկզբնատառեր որոնց վրայ շուտ մը սկսաւ կարծիքներ դիզել: Ս (իւ) անշուշտ անունն էր, Իւրսիւլ էր, ըսաւ մտովին, ի՛նչ զարմանալի անուն: Համբուրեց թաշկինակը, հոտոտեց, ցերեկը սրտին վրայ, մարմինին վրայ, գիշերն ալ շուրթերուն վրայ դրաւ քնանալու համար:

Կ'ըզգամ թէ այս թաշկինակին մէջն է իր բոլոր հոգին, կ'ազազակէր մարիուս:

Սակայն ծեր մարդունն էր այն թաշկինակը որ պարզապէս անոր գրպանէն ինկած էր:

Թաշկինակը գտած օրէն ետք Մարիուս ալ ամէն անգամ որ Լիւքսէնպուրկ կ'երթար, կը համբուրէր և սրտին վրայ կը դնէր զայն: Գեղանի պատանուհին չէր հասկնար ամենեւին թէ Մարիուս ինչո՛ւ կը պագնէր և կուրծքին վրայ կը դնէր այն թաշկինակը, և իր բան մը չհասկնալն ալ աննշմարելի նշաններով կ'իմացնէր:

Ո՛ համեստութիւն, կ'ըսէր Մարիուս:

Գ. Լ. ՈՒՆ Ը.

ՄԵՐՈՒՆԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՆ ԻՍԿ ԿՐՆԱՆ ԵՐԶԱՆԻԿ ԸԼԼԱԼ.

Քանի որ արաւսանեցինք համեստութիւն բառը, և քանի որ բան մը չենք ծածկեր, կը պարտուորինք ըսել թէ անգամ մը Մարիուս հիացումներով համակուած միջոցին խիստ ծանր գրկանք մը կրեց «իւր Իւրսիւլէն»:

Սովորութեանը համեմատ օր մը աղջիկը համոզեց Պ. Լըպլանը նստարանէն ելլելու և ծառուղիին մէջ պառտելու: Մայիսի բռնաշունչ հով մը ելած էր որ սօսիններուն կատարները կը չարծէր:

Հայր և աղջիկ թե թեի տալով, եկան Մարիուսի նստարանին առջեւէն անցան: Երբ անոնք անցան, Մարիուս ոտքի վրայ ելլելով սկսաւ անոնց ետեւէն նայիլ անընդհատ, ինչպէս կը վայելէ սիրայոյզ հոգիի մը այսպիսի կացութեան մէջ:

Յանկարծ հովին շունչերէն մէկը որ միւսներէն աւելի զուարթ էր և թերեւս գարունին գործերը կարգադրելու պաշտօնը ունէր, ծառաստանէն ելաւ, ծառուղիին վրայ յարձակեցաւ, վերջի վերջուրեւորեց և թէօգրիթի դաշտային դիցուհիներուն արժանի զմայելի սարսուռով մը համակրեց անտիական օրիորդը, և անոր բոզան, ա՛յն որ իսիս դիցուհիին բոզաէն աւելի նուիրական էր, մինչև ծնրակապին բարձրութիւնը վերցուց: Սրունք մը երեւաց որու ձեւը ընտիր էր: Մարիուս տեսաւ սրունքը, սաստիկ զայրացաւ և կատղեցաւ:

Դեռարոյս աղջիկը երկնային խրոչումով լի շարժումով մը անմիջապէս վար առած էր բոզան, այլ Մարիուս ոչ նուազ սրբամտած էր այս իրողութեան վրայ: Ստոյգ է թէ միայն ինք կար ծառուղիին մէջ: Բայց կրնար ուրիշ մարդ ալ գտնուած ըլլալ: Եւ եթէ ուրիշ մըն ալ ըլլար հոն: Միթէ ասանկ բան մը լսուած կամ եղած է երբէք: Սոսկալի բան մը ըրած չէր. մէկ յանձաւոր կար միայն որ էր հովը. բայց քերովբէական Մարիուս որ նաև իրր Պարթօլօ (*) խառն ի խուռն կը սարսուէր, որոշած էր զժգոհիլ, և կը նախանձէր իր ստուերէն: Իրօք անա այսպէս մարդուօ օրաին մէջ կը ծնի և՛ նաև առանց իրաւունքի՝ կ'իշխէ մարմնոյ նկատմամբ դառն և այլանդակ նախանձոտութիւնը: Մանաւանդ թէ այս նախանձոտութիւնը մէկուսի ձգելով իսկ, Մարիուս ամենեւին հաճութիւն մը զգացած չէր այն դեղեցիկ սրունքը տեսնալովը. այս կամ այն կնոջ սպիտակ զանկապարը թերեւս աւելի հաճոյք տար Մարիուսին:

Երբ «իւր Իւրօրը» ծառուղիին մինչև ծայրը երթալէն ետք Պ. Լըսլանին հետ ետ դարձաւ և անցաւ այն նստարանին առջեւէն

(*) Պարթէ Եւ Սեւէլ անուն կատակերգութեան անձերուն մէկը, որ նախանձոտ և կասկածոտ խնամալալի տիպար կը նշանակէ:

որու վրայ Մարիուս նստած էր, Մարիուս բարկալի և գաղտնական նայուածքով մը անոր նայեցաւ անգամ մը: Նորատի աղջիկն այս նայուածքը նշմարելով դէպ ետեւը ուղղեցաւ քիչ մը և միանգամայն արտեւանուքը վեր վերցուց, ըսել ուղեւորով. — Բայց ի՞նչ կայ, ի՞նչ ունի:

Այս եղաւ անա «անոնց առջի վէճը»:

Մարիուս աչքերովը հազիւ թէ այս տմարդի յարձակումը ըրած էր պատանուհիին վրայ, և անա մէկը անցաւ ծառուղիէն: Բողբովին կորած, խորշոմած և սպիտակահեր ծերունի զինուոր մըն էր, Լուի Ժ. ի ձեւով կորուած համազգեստ մը ունէր, նաև կարմիր չուխայէ և խաշածե սուրբով հաւկթածե պզտիկ շքանշան մը, զինուորի խաչ մը որ Սէն-Լուիի խաչն էր: Թիկնոցի թեւոց մը՝ ներսէն առանց թեւի, արծաթեայ կզակ և փայտէ սրունք մը: Մարիուս կարծեց նշմարել թէ այս անձը շատ գոհունակ կ'երեւար: Կարծեց նաև թէ ծերունի իրրը իր քովէն կազմիկազ անցած միջոցին խիստ եղբայրական և խիստ ուրախալի կերպով մը աչքը թարթած էր իրեն՝ իրր թէ դիպումածով մը արդէն բարեկամութիւն հաստատուած ըլլար իրենց մէջ և թէ անակնկալ շահ մը վայելած ըլլային միասին: Ի՞նչ ունէր Սրէսի այս բեկորը որ այնքան գոհ կ'երեւար: Ի՞նչ անցած էր անոր փայտէ սրունքին և միւսին մէջ: Մարիուսի նախանձը յետին աստիճան գրգռուեցաւ: — Գուցէ հո՛ն էր այն, թերեւս տեսաւ, ըսաւ իւրովի: — Եւ փափաքեցաւ ջանջախել ծերունի զինուորը:

Ժամանակին օգնելովը, ամէն սուք կը բխանայ: Մարիուսին «Իւրօրի» դէմ այս ունեցած բարկութիւնը, որքան ալ արդարացի և օրինաւոր սեպուէր, անցաւ: Մարիուս ներեց վերջապէս, բայց ճիշդ թափեց ներել կարենալու համար, երեք օր ծուռ դէմքով նայեցաւ նորատի աղջկան:

Սակայն այս ամէն իրերու հետ և այս ամէն իրերուն պատճառաւ իր սէրը կ'աճէր և մոլեգին կ'իրք մը կը դառնար:



Գ Լ ՈՒՆ Թ.

Խ Ա Ի Ա Ր Ո Ւ Մ

Ընթերցողը քիչ մը առաջ տեսաւ թէ Մարիուս ի՛նչպէս իմացած կամ իմանալ կարծած էր թէ Իւրսիւլ էր աղջկան անունը :

Մարդ երբ կը սիրէ, արտօմակը կը գրգռուի : Արդէն մեծ բան էր գիտնալ թէ Իւրսիւլ է անոր անունը, բայց քիչ բան էր այս : Մարիուս երեք կամ չորս շաբաթի մէջ լափեց այս երանութիւնը : Ուղեց ուրիշ երանութիւն մըն ալ վայելել : Ուղեց գիտնալ թէ ուր կը բնակի ան :

Մարիուս երկու պակասութիւն ըրած էր արդէն . առաջինն էր Գլատիաթէօրի նստարանին դարանը իյնալը . երկրորդն էր Լիւքսէնպուրկ չկենալ երբ Պ . Լըպլան մինակ կուգար հոն . հիմա երրորդ մըն ալ, ահագին պակասութիւն մըն ալ ըրաւ, «Իւրսիւլին» ետեւէն երթալով :

«Իւրսիւլ» Ուէսթի փողոցը եռայարկ նոր տան մը մէջ կը բնակէր . դուրսէն անլուք կերեւար այս տունը, և փողոցին ամենէն առանձնական կողմն էր :

Այն օրէն սկսելով Մարիուս՝ «Իւրսիւլը» Լիւքսէնպուրկ ծառուղիին մէջ տեսնելու երանութենէն ի դատ՝ նաև մինչև տունը ետեւէն երթալու երջանկութիւնը ունեցաւ :

Մարիուսի անօթութիւնը կ'աւելնար : Գիտէր թէ ի՛նչ էր անոր անունը, գէթ պզտիկ անունը, կնոջ մը սիրուն, ճշմարիտ անունը . գիտէր նաև թէ ո՛ւր կը բնակէր . ուղեց նաև գիտնալ թէ ո՛վ էր ան :

Գիշեր մը մինչև տունը անոնց ետեւէն գնաց, և երբ մեծ դռան տակէն անհրկոյթ եղան երկուքն ալ, Մարիուս եւս ներք մտաւ անոնց ետեւէն, և արիւարար ըսաւ դռնապանին .

— Այս եկող մարդը առաջին յարկը բնակող պարոնը չէ՞ :

— Ոչ, պատասխանեց դռնապանը, երրորդ յարկը բնակող պարոնն է այն :

Մարիուս բան մը ևս իմացած եղաւ, և այս յաջողութենէն համարձակութիւն առնելով, հարցուց :

— Մի՞թէ առջևի կողմը կը բնակի :

— Չարմանալի հարցում, ըսաւ դռնապանը, տունը միայն փողոցին վրայ շինուած է :

— Եւ ի՞նչ է այս մարդուն արհեստը :

— Հասառու մըն է, (*) պարոն : Խիստ բարի մարդ մըն է, և բարիք կընէ դժբաղդներու, թէև ինք հարուստ չէ :

— Անունը ի՞նչ է, կրկնեց Մարիուս :

Դռնապանը գլուխը վերցուց, և ըսաւ .

— Մի՞թէ պարոնը ստիկանութեան լրտես մըն է :

Մարիուս՝ ամօթահար՝ մեկնեցաւ . բայց շատ ուրախ էր, վասն զի կը յառաջանար :

— Լա՛ւ, ըսաւ միտքէն : Գիտեմ որ անունը Իւրսիւլ է . գիտեմ թէ հասառուի մը աղջիկն է, և թէ Ուէսթի փողոցը տունի մը երրորդ յարկը կը բնակի :

Հետեւեալ օրը Պ . Լըպլան և իր աղջիկը Լիւքսէնպուրկ եկան, քիչ մը կեցան . դեռ բոլորովին ցորեկ էր երբ ձգեցին գացին : Մարիուս անոնց ետեւէն գնաց մինչև Ուէսթի փողոցը, ինչպէս որ սովորութիւն ըրած էր : Երբ ճիշդ դուռը հասան, Պ . Լըպլան առաջ աղջիկը մացուց, յետոյ սեմէն անցնելէն առաջ կանգ առաւ, ետեւը դարձաւ և ուղղակի Մարիուսին նայեցաւ :

Հետեւեալ օրը Պ . Լըպլան և իր աղջիկը Լիւքսէնպուրկ չեկան Մարիուս ընդունայն անոնց սպասեց մինչև գիշեր :

Երբ գիշերուան մութը տիրեց, Մարիուս Ուէսթի փողոցը գընաց, և երկրորդ յարկին պատուհաններէն լոյս տեսաւ : Լոյսին մինչև մարիլը այս պատուհաններուն տակ պարտեցաւ :

Հետեւեալ օրը նոյնպէս անոնցմէ ոչ ոք Լիւքսէնպուրկ եկաւ : Մարիուս ցերեկը սպասեց, յետոյ երբ գիշեր եղաւ, գնաց պա-

(*) Rentier.

տուհաններուն տակ պահնորդութիւն ընելու՝ նախորդ գիշերուան պէս: Այս կերպով ժամը մինչեւ տասը կը կենար: Իր ընթրիքը կըլլար ինչ որ կրնար ըլլալ: Հիւանդը ջերմով և սիրահարը սէրով կը սնի:

Այսպէս ութը օր անցաւ: Պ. Լըպլան և ազջիկը ա՛լ Լիւքսէնպուրկ չէին գար: Մարիուս տրամալի ենթադրութիւններ կընէր: համարձակութիւն չունէր ցորեկով երթալ և մեծ դուռը դիտել: Գիշերը Ուէսթի փողոցը երթալով և պատուհաններուն կարմիրկէկ լոյսը նկատելով դո՛ւ կ'ըլլար: Մերթ ընդ մերթ սառեւրներու անցնիլը կը տեսնէր, և սիրտը կը բաղխէր:

Ութերորդ օրը երբ պատուհաններուն ներքև եկաւ, լոյս չը կար: Չարմա՛նք, ըսաւ, ճրագը դեռ վառուած չէ, սակայն արդէն գիշեր է: Դու՛րս ելան արդեօք: Ժամը մինչեւ տասը, մինչեւ կէս գիշեր, մինչեւ առաւօտեան ժամը մէկ սպասեց: Երրորդ յարկին մէջ ամենեւին ճրագ մը չվառուեցաւ, և ոչ ալ տունը դարձող և ներս մտնող մը եղաւ: Մարիուս անհարին տխրութեամբ մը համակուելով փողոցէն մեկնեցաւ:

Հետեւեալ օրը, — վասն զի հետեւեալ օրէ հետեւեալ օր կ'ապրէր միայն, և կրնայ ըսուիլ թէ ա՛լ այսօր չկար անոր համար, — հետեւեալ օրը, կ'ըսենք, ոչ դոք տեսաւ Լիւքսէնպուրկի մէջ արդէն ինքն ալ կը յուսար թէ չպիտի տեսնէր՝ երեկոյեան ժամանակ տունը գնաց: Պատուհաններէն ամենեւին լոյս մը չէր երևար: Շերտդոյրները (persienne) դոց էին. երրորդ յարկը բոլորովին խաւարամած էր:

Մարիուս մեծ դուռը դարկաւ, մտաւ և դռնապանին հարցուց.

— Երրորդ յարկի պարոնը ի՞նչ եղաւ:

— Այո տունէն ելաւ, պատասխանեց դռնապանը:

Մարիուս երեքայ, և տղար ձայնով մը ըսաւ:

— Ե՛րբ:

— Երէկ:

— Ո՛ւր կը բնակի հիմա:

— Չեմ գիտեր:

— Նոր հասցէ մը չթողո՞ւց բնաւ:

— Ոչ:

Եւ դռնապանը քիթը վերցունելով ճանչցաւ Մարիուսը:
— Ի՛նչ. դո՞ւք էք դալձեալ. անտարակոյս ստիկանութեան լրտես մըն էք, ըսաւ:



ԵՕՐԵՐՈՐԳ ԳԻՐԻՔ

ԲԱԹՐՈՆ — ՄԻՆԷԹ

Գ. Լ. ՈՒՆԻՍ Ա.

ԱԿԱՆՆԵՐՆ ԵՒ ԱԿԱՆԱՀԱՏՆԵՐԸ

Մարդկային ընկերութեանց ամէնքն ալ ունին ինչ որ թառ-
քոններու մէջ երբորդ ստորայարկ մը կ'անուանուի: (Նշիրային հո-
ղը ամենուրեք ականուած է մերթ բարութեան և մերթ չարութեան
համար: Այս ականները վրայ վրայի բացուած են: Վերին ական-
ներ, նաև ստորին ականներ կան: Վեր մը եւ վար մը ունի այս
մթին ստորերկըր (sous-sol) որ երբեմն քաղաքակրթութեան ներ-
քե կը կըրի և զօր ուժի տակ կ'առնեն մեր անտարբերութիւնն ու
անհոգութիւնը: Վերջին դարու մէջ Հանրագիտարանը գրեթէ վը-
րան բաց տկան մըն էր: Խաւարը, ա՛յն որուօ ներքե պահուելով
կը պատրաստուէր նախկին քրիստոնէութիւնը, առիթի մը կ'սպա-
սէր կետարներու իշխանութեան ժամանակ պայթելու և մարդկային
սեւը լոյսով ողողելու համար: Վասն զի նուիրական խաւարին մէջ

Թազուն (latent) լոյս կայ: Հրաշեաները լի են մթութեամբ մը որ
կարող է փայլատակելու: Ամէն հրափրփուր նախ երբ կը կազմուի
խաւարին ձևը կ'առնէ: Ստորերկրեայ գերեզմանները՝ ուր առաջին
պատարազը մատուցուեցաւ, ոչ միայն Հռոմի նկուղը այլ նաև աշ-
խարհիս սանդարամեան էին:

Ընկերային շէնքին, խարխուլ տունի մը հետ խառնուած այս
հրաշալիքին ներքեւ ամէն տեսակ խոռոչներ կան: Կրօնական խո-
ռոչ, փիլիսոփայական խոռոչ, քաղաքական խոռոչ, անտեսագի-
տական խոռոչ, յեղափոխական խոռոչ: Մէկը գազափարով կը
պեղէ, միւսը թիւով կը պեղէ, այսինչն ալ բարկութեամբ: Ակա-
նատաները մէկ ականէ միւս ականը կը ձայնեն և կը պատասխա-
նեն: Իւթօփիններն (*) երկրիս ներքեւ խողովակներու մէջ կը քա-
լեն. հոն ամէն կողմէ ճիւղեր կ'արձակեն. երբեմն իրա-
ջու կը հանդիպին և բարեկամ կ'ըլլան: Ժան-Ժագ-Ռուսօ
էր կանգունը փոխ կուտայ Դիոգինէսին որ փոխադարձաբար իր
զուպտերը անոր փոխ կուտայ: Իւթօփինները երբեմն ալ իրարու դէմ
կը կուռին հոն: Գալվէն Սոսէնի մազերը կը բռնէ: Բայց ոչինչ
կրնայ գաղբեցնել, ոչ ալ ընդհատել այն այն ձգտումը որով այս
զօրութիւնները դէպ ի իրենց նպատակը կը մղուին, և այն միաս-
նական ընդարձակ գործունէութիւնը որ այս մթութեանց մէջ
կ'երթեւեկէ, կ'ելնէ, կ'իջնէ, դարձեալ կ'ելնէ, և որ վրան տակով և
գուրօր ներսով կ'ալածեւէ յամբարար. անձանօ'թ և անբա'ւ վըխտում
(fourmillement): Մարդկային ընկերութիւնը հազիւ հազ կ'զգաց
այս պեղումը որ անոր մակերեւոյթը իրեն կը թողու և ընդերքը
կը փոխէ: Ո՛րքան ստորերկրեայ յարկեր, նոյնքան զանազան աշ-
խատութիւններ կան, և նոյնքան զանազան իրեր կը հանուին:
Ի՞նչ կ'ելլէ այս ամէն խորունկ նկուղներէն. — Ապագան:

Քանի որ կ'ընկղմիս, ա՛լ աւելի խորհրդաւոր գործաւորներ
կը տեսնես: Գործը օգտակար է մինչև աստիճան մը, զոր ընկե-
ցային իմաստասէրը կրնայ որոշել. բայց այս աստիճանէն անդին
հասկածելի և խառն է գործը. եթէ աւելի վար իջնես, սոսկալի
կը գտանայ այն: Կայ որոշ խորութիւն մը ուր տեղի խոռոչներու

(*) Երեւակայական երկիր բարորութեան, Յնորական խորհուրդ:

մէջ չկրնար թափանցել քաղաքակրթութեան ոգին, այս խորութիւնը անցած է այն սահմանէն ուր մարդս կրնայ շնչել. հրէշներու սկզբնաւորութիւն մը հնարին է հոն:

Տարօրինակ է դէպ ի վար ամենող սանդուղը, և ամոր ամէն մէկ աստիճանը կը յարարերի յարկի մը ուր փխրիստօփայութիւնը կրնայ ամիջապէս կենալ և ուր կրնանք հանդիպիլ այն բանւորներէն մէկուն որոնցմէ ոմանք երկնային են, ոմանք ալ տաճեւ: Ժամ Հիւսիէն վար Լիւթերը կայ, Լիւթերէն վար Տէգարթը, Տէգարթէն վար Վօլթէրը. Վօլթէրէն վար Գօնտօրսէն. Գօնտօրսէնէն վար Բօպտիստէրը. Բօպտիստէրէն վար Մարան. Մարանէն վար Պապէօֆը և այսպէս կը շարունակուի միւս բանւորներու շարքն ալ: Աւելի վար, հոն ուր անորոշելին անտեսանելիէն կը զատուի, ուրիշ մթին մարդիկ ալ կը նշմարուին խառն ի խառն, որոնք թերեւ էթիքին չունին. երէկուան մարդիկ հիւաղներ, վաղուաններն ալ ուրուականներ են: Մտքին աչքը աղօտապէս կը նշմարէ զանոնք: Ապագային սաղմնական (embryonnaire) աշխատութիւնը փխրիստիային ցնորական տեսիլքներէն մէկն է:

Լիմպոսի մէջ աշխարհ մը որ սաղմնային վիճակի մէջ է, ինչ անուր դիմաստուեր:

Սէն-Սիտն, Օվըն, Ֆուրիէ նոյնպէս հոն են, կողմնական խրամներու մէջ կը դորձեն:

Ստոյգ է թէ երկնային աներևոյթ շղթայով մը իրարու հետ յանգէտս կապուած են այս ամէն ստորերկրեայ ուսնվիրաները որոնք գրեթէ միշտ՝ առանձին ըլլալ կը կարծեն և որոնք մինակ չեն, այլ սակայն անոնց աշխատութիւնները զանազան աշխատութիւններ են, և ոմանց լոյսը հակապատկեր կ'ընծայէ ուրիշներու փայլատակումին հետ: Ոմանք դրախտային են ոմանք ալ ողբերգային: Սակայն ինչ որ ալ ըլլայ իրենց հակապատկերը, այս ամէն բանւորները, ամէնէն վերինէն մինչև ամէնէն գիշերայինը, ամէնէն իմաստունէն մինչև ամէնէն յիմարը նոյնութիւն մը ունին, որ է անչափանդրութիւն: Մարա եր անձը կը մոռնայ Յիսուսին պէս: Ամէնքն ալ մէկուսի կը թողուն իրենց: անձը, կը մոռնան զայն, իրենց վրայ չեն մտածեր բնաւ: Ուրիշ բան կը տեսնեն և ոչ թէ իրենց անձը: Նայուածք մը ունին, և այս նայուածքը



ԲԱԹՐՕՆ-ՄԻՆԷԹ

բացարձակը կը փնտռէ: Առաջինին աչքերուն մէջը կայ ամբողջ
երկինքը. վերջինինը, որքան ալ կնճռալի ըլլայ, յոնքերուն տակ
անսահմանութեան տեղոյն ճառագայթը ունի: Մեծարանաց ար-
ժանի է այն որու բիբը ասող է. ինչ կ'ուզէ թող ընէ այս նշանը
ունեցողը, մեծարէ՛ զինքը:

Միւս նշանն է խաւարին բիբը:

Այս նշանէն կը սկսի շարութիւնը: Մտածէ՛ և վախցի՛ր այն
մարդուն առջեւ որու նայուածքը մութ է: Ընկերային կարգաւա-
րութիւնը գեշերագէժ ականահատներ ալ ունի:

Կէտ մը կայ ուր խռուչը գերեզման է, և ուր լոյսը կը մարի:

Այս ամէն ականներուն տակը զոր քիչ մը առաջ ցուցցինք,
այս ամէն գետնափոր ճամբաներուն տակ, յառաջդիմութեան և
իւթօփիին այս երակաւոր և ստորերկեայ անբաւ ամբողջութեան
ներքեւ, երկրիս խիստ խորունկ տեղը, Մարայէն աւելի վար, Պա-
պէօֆէն աւելի վար, աւելի վար, շատ աւելի վար, ուրիշ և յետին
խրամ մըն ալ կայ որ ամենեւին յարաբերութիւն չունի վերնագոյն
յարկերուն հետ: Զարհուրելի է այս յետին խրամը. այս է անա-
այն զոր երրորդ ստորայարկ անուանեցինք: Խաւարին փոսն է
այն: Կոյրերու խռուչն է այն: Դժօխքն է:

Այդ յետին խրամը դէպ անդունդները կը տանի:

ՊԼՈՒՄ Բ.

ՍՏՈՐԱՅԱՏԱԿԸ

Հոն կ'անհետի անշահախնդրութիւնը: Հոն սատանան աղօտապէս կը ծրագրուի. ամէն ոք իրեն համար կ'ապրի: Կոյր եսութիւնը կ'ոռնայ, կը փնտռէ, կը խարխափէ և կը կրծէ:

Այս վիճին մէջն է ընկերային իւկոլէնը (*):

Այս փոսին մէջ թափառող վայրենաբարոյ և մթին կերպարանքները, որոնք գրեթէ գազաններ, գրեթէ ուրուականներ են, տիեզերական յառաջդիմութեան չեն պարապիր. չգիտեն յառաջդիմութեան գաղափարը և խօսքը. իրենց միակ հոգն է անհատական յագումը: Գրեթէ գիտակցութիւն չունին, և իրենց ներքը բան մը կը ջնջուի զարհուրելի կերպով: Երկու մայր ունին, երկուքն ալ մօրու, այսինքն ազիտութիւն և թշուառութիւն: Առաջնորդ մը ունին որ է պիտոյքը. իսկ վայելումի ամէն եղանակները կամփոփուին միայն կերպի մը մէջ որ է ստամոքսը: Անամնապէս օրկորուտ են, այսինքն անգութ. անգութ չէ թէ բռնաւորին այլ վագրին պէս: Այս ճիւղները տառապանքէն դէպ ի ոճիր կ'անցնին. աղէտալի՛ բղխում, անարկո՛ւ ծնունդ, արամաբանութի՛ւն մթութեան: Ընկերային երրորդ ստորայտակին մէջ սողացողը ա՛լ

(*) Իւկոլէն Տըլա կերարտեսագ Բիգայի ազնիւ և զօրեղ գերգաստաններէն մէկուն անունն է: Այս ընտանիքին ամէնէն հանրածանօթ և երեւելի անձն է Կերարտեսագայի կոմս Իւկոլէն որ այլ և այլ կոիւններու մէջ յաղթելէն և յաղթուելէն ետք վերջապէս բռնուեցաւ, և իր թոռներէն մէկը Բօժէր՝ զայն զաւակներովը միատեղ աշտարակի մը մէջ բանտարկեց և թողուց որ անօթի մեռնի հոն: Տանթէ իր Գեորգիէն մէջ սքանչելի տաղանդով մը նկարագրած է Իւկոլէնի և իր զաւակներուն Անթոնիոսի և Ալբրտիէն մէջ բաշտ տանջանքները:

ոչ թէ բացարձակին ծածկուած պահանջուի՛ր՝ այլ նիւթին բողբոջն է: Մարդս վիշապ կը դառնայ հոն: Սկզբնակէտն է անօթի ըլլալ. ծարաւի ըլլալ. վերջակէտն է Դեւ ըլլալ: Լատրնէր (*) այս ստորերկրեայ խոռոչէն կ'ելլէ:

Ասկէ առաջ՝ չորրորդ գրքին մէջ՝ տեսանք վերին ականին, քաղաքական, յեղաշրջական և փիլիսոփայական ընդարձակ խրամին խորշերէն: Այս խորշին մէջ՝ ինչպէս ըսինք արդէն՝ ամէն բան աղնիւ, անարատ, արժանաւոր և պատուաւոր է: Հոն ստոյգ է թէ մարդս կրնայ մոլորիլ, և կը մոլորի իսկ, բայց այն տեղի մոլութիւնը այնքան դիւցազնութիւն կ'ենթադրէ որ մեծարելի է: Հոն կատարուած դործերուն ամբողջութիւնը անուն մը ունի, որ է Յառաջդիմութիւն:

Ուրիշ խորութիւններ, սոսկալի խորութիւններ ալ ընդնշմարելու ժամը հասաւ:

Կը կրկնեմք թէ մարդկային ընկերութեան ներքև շարութեան մեծ նկուղը կայ, նկո՛ւղ մը որու էութիւնը պիտի շարունակուի մինչև որ ազիտութիւնը փարատի:

Այս նկուղը ամէն նկուղներուն տակն է և ամէնուն ալ թըշնամին: Ատելութեան նկուղն է այն որ բացառութիւն չը գիտեր: Այս նկուղը փիլիսոփայ չճանչնար. իր դաշոյնը գրիչ կտրած չէ բնաւ: Իր սեւութիւնը ամենեւին նմանութիւն մը չունի կազմարին վեհ սեւութեան հետ: Տգիտութեան մատերը՝ որոնք այս շընչարգել ձեղունին ներքև կը գալարուին՝ բնաւ ոչ գիրք թղթատած (feuilleter), ոչ ալ լրագիր բացած են: Պատէօֆ շահախնդիր մըն է Գարթուշի համար. Մօրա ազնուապետական մըն է Շէնտըրհան աւաղակապետին համար: Այս նկուղին նպատակն է ամէն բանի կըրումը:

Ամէն բանի: Նաև վերագոյն խրամներուն զոր կը քամահրէ: Իր սոսկալի վխտումովը ական կը բանայ ոչ միայն արդի ընկերային կարգաւորութեան, այլ նաև փիլիսոփայութեան, այլ նաև գիտութեան, այլ նաև իրաւունքին, այլ նաև մարդկային մշտքին, այլ նաև քաղաքակրթութեան, այլ նաև յեղափոխութեան:

(*) Աւաղակապետի մը անունն է: Ծ. Թ.

այլ նաև յառաջդիմութեան ներքև: Պարզապէս իր անունն է գործութիւն, բողոքութիւն և մարդասպանութիւն: Սաւար է այն, և քառորդ կ'ուզէ: Իր գմբէթը կազմող տարերջներուն ամբողջութիւնն է տգիտութիւն:

Վերին նկուղներուն ամէնքն ալ նպատակ մը ունին միայն որ է բառնալ այս չարութեան նկուղը: Փիլիսոփայութիւնն ու յասնաշխիւթիւնը իրենց ամէն միջոցներովը միահամուռ ահա այս նպատակին կը դիմեն, թէ՛ իրականը բարւոքելով և թէ՛ բացարձակը նկատելով: Ձնջէ՛ Տգիտութեան նկուղը, և ահա ջնջած կըլլաս Ոճիր խլուրդը:

Քանի մը խօսքով ամփոփենք մեր այս գրածներուն մէկ մասը: Ընկերային միակ վտանգն է Մթութիւնը:

Մարդկութիւնը նոյնութիւն է: Ամէն մարդիկ միևնոյն կաւով կազմուած են: Նախասահմանութեան մասին՝ գէթ այս աշխարհիս մէջ՝ տարբերութիւն մը չկայ: Միևնոյն խաւար՝ ծնելէ առաջ, միևնոյն մարմին՝ կենդանութեան ժամանակ, միևնոյն աճիւն՝ մահուընէ ետք: Բայց տգիտութիւնը՝ երբ կը խառնուի մարդկային խմորին հետ՝ կը սեւցնէ դայն: Այս անբուժելի սեւութիւնը մարդուս ներքը կը ծաւալի և կըլլայ Չարութիւն:

Գ. Լ. ՈՒՆԻ Գ.

ՊԱՊԷ, ԿԷՕԼՄԷՐ ԳԼԱԳՍՈՒ ԵՒ ՄՕՆԲԱՐՆԱՍ

Աւազակներու քառեակ մը, այսինքն Գլազու, Կէօլմէր, Պապէ և Մօնբարնաս 1830էն մինչեւ 1835 Բարիզի երրորդ սասորայարկը կը կառավարէին:

Կէօլմէր դասատ (déclassé) հերքիւլ մըն էր: Իր այրն էր Արշ-Մարիօնի կոյուղին (égout): Վեց ոտք բարձրութեամբ հասակ մը, մարմարեայ լանջ մը, արօյրէ երկճզի (diceps) ջիղեր, խոռոչային շնչառութիւն մը, վիթխարի իրան մը, թռչունի գանկ մը ունէր: Ով որ տեսնէր զինքը, կանեփեայ կտաւէ բանթալօն և բամբակեայ թաւշէ բաճկոնակ մը հագած Հերքիւլ Փարնէզը(*) տեսնել պիտի կարծէր: Կէօլմէր՝ արձանական կազմութեամբը՝ կըրնար վայրենի գազանները զսպել. բայց աւելի յարմար գտած էր ինքն ալ անոնց մէկը ըլլալը: Ցած ճակատ լայն քունք'ր, գրեթէ քառասնամեայ հասակ և սագի թաթեր ունէր. մազը կարծր և կարճ, այտը խոզանակի նման և մօրուքը վարազային էր. արդէն կը տեսնուի անոր ինչպիսի մարդ ըլլալը: Իր ջիղերն աշխատիլ կ'ուզէին, բայց իր ապշութիւնը չէր ուզեր: Ահազին ծոյլ զօրութիւն մըն էր ան: Կէօլմէր մարդ կ'ուպաննէր անհողութեամբ: Կը կարծուէր թէ խառնածին մըն էր այն. 1815ին Ավինիօնի մէջ բեռնակրութիւն ըրած, և հաւանական է թէ քիչ մը մատ ունեցած էր Մարեշալ Պրիւնի սպաննութեան մէջ, Ավինիօնի մէջ բեռնակրութիւն ընելէ դադրելով աւազակ եղած էր:

(*) Փարնէզի գերգաստանին պաշտպանութեամբը բանդակուած Հերքիւլի ահագին անդրի մը կայ Իտալիայի մէջ, և կ'անուանի Հերքիւլ Փարնէզ:

Պապէի թափանցկութիւնը (diaphanéité) ներհակ պատկեր մը կ'ընծայէր Կէօլմէրի մարմինին հետ: Պապէ նիւար էր և գիտուն: Թափանցիկ էր, այլ անթափանցելի: Իր ոսկորներուն մէջէն լոյս, այլ բիրին մէջ ոչինչ կը տեսնուէր: Ինքզինքը քիմիագէտի տեղ կը դնէր. Պապէին քով միմոս և Պապինօյին քով ծաղրածու էր: Սէն-Միհիէլի թատրոնին մէջ նուագաւոր զաւելտի դերասանութիւն ըրած էր: Դիտաւորութիւններ ունեցող և լաւ խօսող մարդ մըն էր. իր ժպիտները կ'ստորագծէր և շարժումները կը չափեր (guillemette): Արհեստն էր փողոցները բռնալէն կիսարձաններ և «Տէրութեան Պետին» պատկերներ ծախել: Նաեւ ակռայ կը քաշէր: Տօնավաճառներու մէջ երեւոյթներ ցուցուցած, և խորհիւ մը ունեցած էր շեփորայով և այս ծանուցագրով. — Պապէ արհեստագէտ առամնարուժ, անդամ ձեմարաններու, բնագիտական փորձեր կը կատարէ մետաղներու և մետաղակերպերու վրայ, ակռայ կը քաշէ, և կը ձեռնարկէ այն ակռայի բեկորներուն զոր թողած են իր արհեստակիցները: Գին, մէկ ակռայ, մէկ Փրանք յիտուն, երկու ակռայ, երկու Փրանք, երեք ակռայ, երկու Փրանք յիտուն: Առիթը մի՛ փախցնէք: — (Այս առիթը մի՛ փախցնէք կը նշանակէր, կարելի եղածին չափ ակռայ քաշել տուէք): Ժամանակաւ կարգուած և զաւակներ ունեցած էր: Չգիտեր թէ ի՞նչ եղած էին իր կինն ու զաւակները, Կորսնցուցած էր զանոնք թաշկինակ մը կորսնցնելու պէս: Պապէ իր խաւարասէր ընկերներուն մէջ մտքացառութիւն ըլլալով, լրագիրները կը կարդար: Օր մը երբ ընտանիքը տակաւին իր հետն էր իր թաւալուն խրճիթին մէջ: Մեծ սածիկ լրագիրը կարդալով իմացած էր թէ կին մը բաւական ապրելի տղայ մը բերած է որ կովի կնճիթ մը ունի, և աղաղակած էր. Ահա հարստութիւն մը ինչո՞ւ իմ կինս ալ ինձի աւանկ գաւակ մը ծնելու խելքը ջուրեմար:

Անկէ ետք ամէն բան թողած էր Բարիզին ձեռնարկելու համար: Իրն էր այս խօսքը:

Գլագուստ ի՞նչ էր: Եւաւարն էր: Տեսնուելու համար կ'ապաստէր որ երկինք սեւնայ: Գիշերը ծակէ մը կ'ելլէր, և լուսնալու մօտ դարձեալ հո՞ն կը մտնէր: Ո՞ր էր այս ծակը, ոչ ոք գիտէր: Ամենէն թանձր մութին մէջ անգամ միշտ կ'ոնակը դարձնելով կը խօ-

տէր իր մեղսակիցներուն հետ: Գլագուստ էր անունը, ոչ: Անունս Ամենեւին է, կ'ըսէր: Եթէ ճրագ մը բերուէր յանկարծ, դիմակ մը կ'առնէր ան, որովայնախօս էր: Պապէ կ'ըսէր. Գլագուստ երկնայն տխուր եղանակ մ'է: Գլագուստ անյայտ, թափառական և սոսկալի էր. ոչ ոք ստուգապէս գիտէր թէ ձայն մը ունի, վասն զի որովայնը աւելի ստեպ կը խօսէր քան թէ բերանը. ոչ ոք ստուգապէս գիտէր թէ երես մը ունի ան, վասն զի ամէն մարդ անոր միայն դիմակը կը տեսնէր: Կաներեւութանար անհետուի մը պէս. երբ կ'երեւար, կարծես թէ երկնից տակէն կ'ելլէր:

Սոսկալի անձ մըն ալ Մօնթարնասն էր: Մօնթարնաս պատանի մըն էր. քսան տարեկան չկար. աղւոր երես մը, կերասանման շուրթներ, սեւաթոյր և զմայլելի մազեր, և աչքերուն մէջ գարնանային պայծառութիւն ունէր. ամէն մոլութիւն կար իր վրայ, և ամէն ոճիր գործելու կը փափաքէր: Մօնթարնաս չարը մարտելովը յոռեգոյնի նկատմամբ ախորժակը կ'աւելնար: Նախ ստամբակ մըն էր, յետոյ թափառաչըլիկ սրիկայ, ետքն ալ մարդասպան (escarpe) եղաւ:

Սիրուն, կնատ, շնորհաձեւ, հաստաբազուկ, մեղկ և գազա- նարարոյ էր: 1829ի ձմեռն համկմատ գլխարկին եզրը ձախ կողմէն դէպի վեր կը նայէր՝ մազերուն փունջը ցուցնելու համար: Բռնապէս գողութիւն ընելով կ'ապրէր: Թիկնոցը լաւագոյն ձեւով կը տրուած, բայց խիստ մաշուած էր: Մօնթարնաս մօտայի քանդակ մըն էր, որ թշուառութեան մէջ ըլլալով մարդասպանութիւններ կ'ընէր նենգապէս: Այս չափահասին ամէն եղեռնագործութեանց պատճառն էր հագուած շքուած ըլլալու փափաքը: Առջի անգամ հանդիպող կրիգերը Մօնթարնասին գեղեցիկ ես, ըսելով՝ անոր սիրտը խաւարով արատած և այս Արէլը կայէն մը ըրած էր: Մօնթարնաս աղւոր ըլլալուն համար ուզած էր վայելչասէր ըլլալ. այդ վայելչասիրութեանց առաջինն է պարապորդութիւնը. աղքատի մը պարապորդութեան հետեւանքն է ոճրագործութիւն: Թափառաչըլիկներու մէջ քիչերը Մօնթարնասին պէս ահարկու էին: Տասնութը տարեկան էր, և արդէն բազմաթիւ դիակներ ունէր իր ետեւը: Շատ անցորդներ այս թշուառականին շուքին մէջ գետինը փռուած էին թեւատարած և իրենց երեսը արեան մօրի մը մէջ ընկղմած:

Մօնրարնասի մաղերը գանգրանել և անուշահոտ իւղերով ծեփ-
ուած. մէջքը բարակ և ազդերը կնային էին. կէս մէջքէն վերը
բրուսիացի պաշտօնատարի մը կը նմանէր. պուլվարին ազջիկները
իր վրայ կը փսփսային. փողկապը վարպետութեամբ կը կապէր,
գրգանին մէջ մահակ մը և կոնկարանին (boutonniere) վրայ ալ
ծաղիկ մը կը կրէր. այսպէս էր ահա այս գերեզմանին պճնամօլ
երիտասարդը:

Գ. Լ. ՈՒՆԵ Պ.

ԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Այս չորս աւազակները տեսակ մը Բրոթէ (Պրօտէվս) կը կազ-
մէին ի միասին՝ ոստիկանութեան առջեւէն, ետեւէն կամ մէջէն
օձապառլոյտ սողալով, տարբեր դէմք առնելով, ծառի, բոցի, աղ-
բիւրի կերպարանք մտնելով՝ վիտօղի հետաքրքիր նայուածքին չե-
րեւելու համար. իրենց անունները և գործողութեան միջոցները
մէկ մէկու փոխ տալով, բուն իսկ իրենց մթութեան մէջ պահուե-
լով, իրարու համար գաղտատուի (boite à secrets) և պատըս-
պարան ըլլալով, դիմակային պարահանդէսի (bal masqué) մէջ
իրենց շինծու քիթը հանելու պէս իրենց անձերը այլափոխելով,
երբեմն ամէնքը մէկ անձ կազմելու չափ նուաղելով, երբեմն ալ
այնքան բազմանալով որ նոյն իսկ Դօզօ-Լադուր բազմութիւն մը
կը կարծէր զանոնք:
Այս չորս մարդերը չորս մարդ էին. այլ տեսակ մը քառ-
գրկի և թագուն գող մը. և Բարիզի մէջ մեծ գողութեանց կը

ձեռնարկէին. չարութեան հրէշատիպ բազմութեանն էին անոնք և
ընկերութեան գեանափորին մէջ կը բնակէին:

Իրենց ճիւղերուն, նաև յարաբերութեանց ստորերկեայ ցան-
կին շնորհիւ կէօլմէր, Գլազուս, Պապէ և Մօնրարնաս Սէն գա-
ւառին դաւաճանութեանց ընդհանուր ձեռնարկութեան վարիչներն
էին: Անոնք անցորդը ստորերկեայ պետական հարուածով կը տա-
պալէին: Այս տեսակ գաղափարներ գտնողները, գիշերային երե-
ւակայութիւն ունեցող մարդերը անոնց կը գիմէին իրենց գաղա-
փարին գործադրութեան համար: Մրագիրը հայթայթուելով այն
չորս չարագործներուն կը յանձնուէր, անոնք ալ տեսարանը հանե-
լու պաշտօնը կը կատարէին: Տեսարանին վրայ կը գործէին: Միշտ
պատրաստ էին պէտք եղածին չափ և յարմար անձեր տալ այն
ամէն եղեռնական ձեռնարկութեանց որոնք բաւական շահաբեր
էին և անմիջական ձեռնարկութեան մը կարօտ: Ոճիր մը երբ բա-
զուկ կը փնտռէր, անոնք մեղսակիցներ կուտային անոր: Այս չորս
աւազակները գիշերադէմ դերասաններու խումբ մը ունէին՝ խօ-
սողներու ամէն ողբերգութեանց ներկայացումը տալու պատրաստ:

Սովորաբար Սալբէթրիէրի մօտակայ տափաստանները կը հաւա-
քուէին գիշերուան մութը արեւու ժամանակ որ անոնց զարթու-
մին ժամանակն էր: Հոն կը խորհրդակցէին: Մինչև առաւօտ
տասներկու դիշերային ժամեր ունէին որոնց գործածութիւնը կը
կարգադրուէր այն աւազակներու ժողովին մէջ:

Ստորերկեայ շրջաբերութեան մէջ Բարրօն-Միներ կ'անուան-
ուէր այս չորս մարդերուն ընկերակցութիւնը (association): Ժո-
ղովրդային հին և այլանդակ լեզուին մէջ որ ամէն օր կորսուելով
կ'անհետի, Բարրօն-Միներ առաւօտ ըսել է, ինչպէս որ անբրբ
շիկն է լու (չուէի և գայլի մէջ) խօսքն ալ երեկոյ կը նշանակէ:
Այս Բարրօն-Միներ անունը հաւանօրէն (probablement) յառաջ
եկած էր այն ժամէն ուր կը վերջանար խումբին գործողութիւնը,
ըստ որում արշալոյսը ուրուականներու անհետացումին և աւա-
զակներու բաժանումին միջոցն է: Չորս աւազակները այս անունով
ճանչցուած էին: Եղեռնակոտն ատենին նախագահը երբ բանաբ
գնաց Լասընէր աւազակապետը տեսնելու, հարցումներ ըրաւ ա-
նոր իրողութեան մը նկատմամբ զոր կ'ուրանար Լասընէր: — Ո՞վ

ըրաւ այս բանը, հարցուց նախագահը: — Լաթընէր յետագայ պատասխանը տուաւ որ դատաւորին համար անիմանալի այլ ստախկանութեան համար դիւրիմանալի էր. — Գուցէ Բաթրօն-Մինէթը:

Երբեմն թատրերգութիւն մը ինչ ըլլալը կը գուշակուի երբ անձերու անունները կ'իմացուին, այսպէս ալ գրեթէ կարելի է խուճրի մը արժէքը կշռել աւագակներու անուններուն ցանկը տեսնելով: Ահա հոս կը նշանակենք Բաթրօն-Մինէթի գլխաւոր անդամակիցներուն անունները, վասնզի այս անունները դեռ մասնաւոր յիշողութեանց մէջ կը ծփան:

Բանշօ, որ նաև Բրէնթանիէ ու Պիկրընայլ կ'ըսուի:

Պրիւժօն, (Պրիւժօնի սերունդ մը կար, որու վրայ քանի մը խօսք պիտի խօսինք ետքէն):

Պուլաթրիւէլ ուղեգործ, զոր ընթերցողն արգէն կը ճանշնայ քիչ մը:

Լավէօլ:

Ֆինիսթէր:

Օմէր Օկիւ, սեւաղէմ:

Մարախուար:

Տէրէշ:

Փօնլըրօյ, որ Պուզըթիէր ալ կ'ըսուի:

Կլօրիէօ, ազատագիր թիապարտ:

Պարըզարօս, որ Պարոն Տիւրօն ալ կ'ըսուի:

Լէրլանատ-տիւ-Սիւտ:

Բուսակոյիվ:

Գարմանեօլէ:

Իրիւիտընիէ, որ Պիզարրօ ալ կ'ըսուի:

Մանժաանթէլ:

Լէ-բիէզ-ան-լէր:

Տըմի-լիար, որ Տէօ-Միլիար ալ կ'ըսուի:

Եւ այլն, և այլն...

Ուրիշ անուններ ևս կան, բայց զանց կ'ընենք, թէև յոռեգոյններու կարգէն չըլլան: Այս անունները կերպարանք ունին: Ոչ միայն էակներ, այլ նաև տեսակներ կը ցուցունեն: Այս անուն-

ներուն ամէն մէկը քաղաքակրթութեան ներքև բուսող ամէն սունկերուն ամէն մէկ զանազանութիւնը կը նշանակէ:

Այս անձերը որոնք ոչ այնքան կը ցուցնէին իրենց երեսը, չէին այն անձերու կարգէն որոնք փողոցները կ'երթեւեկեն: Տաժանելի գիշերներ անցուցած և յոգնած ըլլալով՝ ցորեկը կ'երթային կը քնէին մերթ բուսնոցներու (four à platre), մերթ Մօնմարթըրի կամ Մօնրուժի լքեալ քարաշատներուն, երբեմն ալ կոյուղներուն մէջ: Երկրի տակ կը պահուէին:

Ինչ եղան այս մարդերը. կ'ապրին միշտ անպրած են միշտ: Հօրաս կը խօսի այս մարդերու նկատմամբ. Ambubaiarum collegia, pharmacopola, mendici mina (*) և՛ քանի որ մարդկային ընկերութիւնը իր արդէն էութիւնը պիտի չարունակէ, անոնք ալ իրենց էութիւնը պիտի ունենան: Իրենց նիւթին մթին ձեղունին տակ անընդհա կը ծնին ընկերային ծորուճէ: Կը վերադառնան այս ճիւղները, միշտ մի և նոյն յատկութիւններով. միայն թէ ա՛լ ոչ մի և նոյն անունները և ոչ ալ մի և նոյն մարմինները կը կրեն:

Անհատները հեաաջինջ կ'ըլլան, այլ տոհմը միշտ կայ:

Միշտ մի և նոյն կարողութիւնները ունին: Տեղը՝ մուրացկանէն թափառողին կ'անցնի անարատ: Ասոնք գրպանին մէջ դրրուած ստակը կը գուշակեն, ժամացոյցին հոար կ'առնեն: Ոսկին և ստակը հօտ մը ունի անոնց համար: Կան այնպիսի միամիտ քաղքենիներ որոնց համար կարելի բսել թէ գողանալի երեւոյթ մը ունին: Այս մարդերը համբերութեամբ այն քաղքենիներուն ետեւէն կ'երթան: Երբ օտարական մը կամ զաւառարնակ մը կ'անցնի, սարդի պէս ցնցում մը կ'զգան անոնք:

Երբ կէս զիշերի միջոցին ամայի պուլվարի մը վրայ հանդիպելու ըլլաս այս մարդերուն կամ ընդնշմարես զանոնք, կը զարհուրիս, վասն զի սոսկալի են: Այն միջոցին մարդերու չեն նմանիր, այլ կենդանի մշուշով մը կազմուած կերպարանքներու, կրնայ ըսուիլ թէ սովորաբար խաւարէն չեն զանազանուիր, թէ իրենց հօ-


(*) Այս լատիներէնը կը նշանակէ, Դեղատնայն, Ժուրայի, Կարմիրքոյն Կանանք Ընկերութիւն:

գին խաւարն է միայն, և թէ առ ժամանակեայ կերպով և հըրէ-
շային կեանքով մը քանի մը վայրկեան ապրելու համար զատուած
են խաւարէն:


Ի՞նչ պէտք է այս ճիւղաները բնաջինջ ընելու համար: —
Լո՛յս, հեղեղանման լոյս: Զիղչերուն և ոչ մէկը կը դիմադրէ ար-
շալոյսին: Լուսաւորէ ստորերկրային ընկերութիւնը:



ՈՒԹԵՐՈՐԴ ԳԻՐԻՔ



ՅՈՌԻ ԱՂՔԱՏԸ



ԳՂՈՒԽՍ Ա.

ՄԱՐԻՈՒՍ ՓԵՂՈՒՐԱՒՈՐ ԱՂՋԻԿ ՄԸ ՓՆՏՈՒԵԼՈՎ
ԳԼԽԱՆԱԿԱՒՈՐ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ

Ամառը անցաւ, աշունն ալ անցաւ, և ձմեռը եկաւ: Ոչ Պ.
Լըպլան, ոչ ալ անտիական օրիորդը Լիւքսէնպուրկ եկած չէին
բնաւ: Մարիուսի մինակ մտածումն էր նորէն տեսնել այն քաղցր և
պաշտելի դէմքը: Միշտ կը փնտռէր, ամենուրեք կը փնտռէր, այլ
բան մը չէր գտներ: Մարիուս առաջուան պէս ա՛լ ոչ եռանդուն
մտախոհ մը, ոչ համարձակ, վառ ու բորբոք և անյողդողդ մարդ
մը, ոչ ճակատագրին յանդուգն գրգռիչը, ոչ ապագան ապագայի
վրայ կազմող ուղեղը, և ոչ ալ յատակագծերով, նպատակներով,
մեծամտութիւններով, դաղափարներով և կամքով լի նորակազմ
միտքն էր, այլ կորսուած շուն մը: Սեւ տրամութեամբ մը համա-

կուեցաւ: Ա'լ գործը լմնցած էր: Աշխատութիւնը կ'ատէր, շրջագայութեան ժամանակ կը յոգնէր, առանձնութեան մէջ կը ձանձրանար. հիմայ բոլորովին դատար' կ'երեւար իրեն հանրածաւալ բնութիւնը որ առաջները կ'ըպարանքներով, պայծառութիւններով, ձայներով, խորհուրդներով, հեռառոտիւններով, հորիզոններով և ուսումներով լի կը թուէր: Կը կարծէր թէ ամէն բան աներեւոյթ եղած է:

Մարիուս կը մտածէր միշտ, վասն զի մտածումէ ի դատ բան մը չէր կրնար ընել, բայց իր մտածումները առաջուան պէս հաճութիւն չէին տար: Այս մտածումները ինչ որ իրեն կ'առաջարկէին լռելեայն և անշուշտ, Մարիուս կը մերթէր և մութիւն մէջ կը պատահանէր. ինչի' կը ծառայէ:

Բիւր յանդիմանութիւններ կ'ընէր ինքնիրեն: Ինչո՞ւ ետեւէն գացի: Ո՞րքան երջանիկ էի միայն տեսնելով զինքը: Իսկի կը նայէր նէ. մի' թէ անբաւ բարիք մը չէր այսքանը. նաև կ'երեւար թէ կը սիրէր զիս. մի' թէ այս չէ ամէնը: Ուրիշ ինչ տեսնել ուզեցի. սիրուելէն ետք ա'լ ուրիշ բան չկայ: Այլանդակ վարմունք ունեցայ: Յանցանքը իմա է... և այլն... Գուրբէյրագ որու Մարիուս բան մը յայտնած չէր՝ իր բնաւորութեանը համեմատ և որ սակայն քիչ մը կը դուշակէր ամէն բան, վասն զի դուշակելն ալ Գուրբէյրագի բնաւորութիւնն էր, նախ Մարիուսը՝ սիրահար ըլլալուն համար՝ շնորհաւորած և միանգամայն հիացած էր անոր սիրահարութեան վրայ. յետոյ տեսնելով թէ Մարիուս այսպիսի թախծութեամբ մը կը համակուի, ըսած էր անոր. — Կը տեսնեմ որ պարզապէս աւանակ մըն ես եղեր: Նայէ՛ ինչ կ'ըսեմ, եկո՛ւր Ծոս միէր երթանք:

Սեպտեմբերի արեւափայլ օրերէն օր մը Մարիուս՝ Գուրբէյրագի, Պօսիւէի և Կրանթերի թախանձանաց զիջանելով՝ Սօի պահանջէն դացած էր, յուսալով թէ, ո՛հ, ինչ երազ, թերեւս հոն պիտի գտնէր իր սիրունին: Փութանք ըսելու թէ Մարիուս չը գտաւ այն աղջիկը զոր կը փնտռէր. — Սակայն հոս կը գտնուին ամէն կորուսած կիները, կը մըրտար Կրանթեր մեկուսի: Մարիուս պարանանդէսը թողուց իր բարեկամները, և ետ դարձաւ հնտի, միանկ և տենդահար. Ինչեւային մթութեան մէջ իր աչքերը կը

պղտորուէին և կը արամէին. իսկ այն դուարթ կառքերը որոնց մէջ խոնոզ և երգող անձերը պարանանդէսէն կը դառնային և անօրքովէն կ'անցնէին, իրենց աղմուկովն ու փոշիովը կը շփոթէին զայն. Մարիուս անա այսպէս իր սենեակը դարձաւ, վհատելով և՛ գլուխը դովաջնելու համար՝ ճամբուն վրայի ընկուզենիներուն կծու հոտը շնչելով:

Սկսաւ հետզհետէ աւելի առանձնութեամբ, մոլորումով, վհատութեամբ ազրիլ, բոլորովին իր ներքին վիշտովը համակուելով, որողայթը ինկող գայլի մը պէս իր վշտին մէջ երթեւեկելով, ամենուրեք տարակայ օրիորդին հետքը որոնելով և սիրովը ապուշ մը դառնալով:

Անգամ մը՝ բան մը պատահեցաւ Մարիուսի և տարօրինակ ապաւորութիւն մը ըրաւ իր վրայ: Տէգ-էնվալիտի պուլվարներուն մօտակայ գոեհներուն մէջ Մարիուսի դէմ մարդ մը ելած էր. այս մարդը բանորի մը պէս հազուած էր և երկայն պահանակով գլխանոց մը ունէր որու տակէն խիստ սպիտակ մազերու փունջեր կ'երեւային: Մարիուս դարմացաւ այս սպիտակ մազերուն գեղեցկութիւնը տեսնելով և մարդուն նայեցաւ որ յամբապէս կը քալէր և կարծես թէ ցաւազին մտախոհութեան մը մէջ ընկղմած էր: Մարիուս կարծեց թէ Պ. Լըպլանն էր ան. ինչ դարմանալի բան: Մարիուս նոյն մազերը, նոյն կիսադէմքը կը տեսնէր որքան որ գլխանոցին տակէն կ'երեւար ան, նաև մի եւ նոյն ընթացքը, միայն թէ աւելի արտոււմ էր մարդը: Բայց ինչո՞ւ բանորի զգեստներ հագած էր այն. ինչ ըսել կ'ուզէր այս. ինչ կը նշանակէր այս ծրագումը: Մարիուս շատ դարմացաւ: Երբ ուշարեցաւ, իր առաջին շարժումն եղաւ այս մարդուն ետեւէն երթալ. ո՛վ գիտէ, թերեւս գտած էր վերջապէս այն հետքը զոր կը փնտռէր: Ինչ կ'ուզէ թող ըլլայ, պէտք է, կ'ըսէր, ի մօտուտ նորէն տեսնել մարդը և կընձիւրը քակել: Բայց շատ ուշ ծնաւ այս գաղափարը իր մտքին մէջ, վասն զի մարդը ա'լ հեռացած և աներեւոյթ եղած էր. կողմնական պզտիկ փողոցներէն մէկը մտած էր, հետեւաբար Մարիուս չկրցաւ գտնել զայն: Այս հանդիպումը քանի մը օր անոր միտքը գրաւեց, յետոյ մոռցուեցաւ. — Մանաւանդ թէ, ըսաւ իւրովի, հաւանորէն ոչ այլ ինչ էր այն եթէ ոչ նմանութիւն մը:

Գ Լ Ո Ւ Ն Ե Բ .

Գ Ի Ի Տ Մ Ը

Մարիուս Կորպոյի խարխուլ տունը կը բնակէր միշտ, ուր եւ ոչ մէկուն ուշադրութիւն կ'ընէր:

Ստուգիւ այն միջոցներուն Կորպոյի տան մէջ իրմէ և ժօնարէթ անուն ընտանիքէն ի դատ ոչ ոք կը բնակէր: Մարիուս անդամ մը այս ժօնարէթներուն վարձքը ինք վճարած, սակայն ոչ հօրը, ոչ մօրը, ոչ ալ աղջիկներուն հետ խօսած էր: Միւս վարձարնակները տունէն ելած կամ մեռած և կամ վարձքը վճարել չկարենալով արտաքսուած էին:

Նոյն ձմեռը օր մը արեւը քիչ մը երկւցած էր կէսօրէն ետք: Բայց փեթրուարի երկուքին օրն էր ան, Տեառնդառաջի այն հին օրը որու մատնառ արեւը վեց շաբաթուան ցուրտի կարապետն է և որ Մաթէօ Լաէնսպէրկի յետադայ երկտող և (Ֆրանսերէնի մէջ) իրաւամբ դասական ըսուած բանահիւսութիւնը ներշնչեց:

Թե արեւ փայլի միշտ կամ մերք ընդ մերք.
Արջը դասնալով իր խոռոչ մտնէ:

Մարիուս իր խոռոչէն պահ մը առաջ ելած էր: Գիշերուան մութը կը տիրէր: Ընթրելու ժամանակն էր այս: Վասն զի, աւանդ պէտք էր ընթրել սկսիլ դարձեալ. ո՛ր տկարութիւն տեսուկան սիւրոյ:

Մարիուս դուրս ելած էր իր դռան սեմէն զոր նոյն միջոցին Պուկօն խաթունը կ'աւելէր յետադայ երեւելի մենախօսութիւնը արտասանելով.

— Զիմայ ի՞նչ կայ աժան. ամէն բան սուղ է: Միայն աշխարհիս վիշաբ աժան է. ոչինչ գինով կ'ստացուի աշխարհիս վիշաբ:

Մարիուս կամաց կամաց քայելով պուլվարէն վեր կ'ելէր և դէպի քաղաքադուռ կ'ուղղուէր Սէն Ժագի գոտիը երթալու համար: Գլուխը կախած և խորհուն կերպարանքով կը քալէր:

Յանկարծ արձուկէ մը դրդուիլ զգաց մուշին մէջ. ետեւը դարձաւ և ցնցոտիներ հազած երկու մեծ աղջիկ տեսաւ, որոնց մէկը երկայն և նրբաձեւ հասակ ունէր, իսկ միւսը քիչ մը պզտիկ էր. և որոնք արագապէս, շնչասպառ և անարեկ կ'անցնէին և կարծես թէ կը փախչէին. այս աղջիկները Մարիուսի դէմը ելած. եւ՛ քովէն անցնելու միջոցին՝ չտեսնելով դրդած էին դայն: Մարիուս վերջալուսին մէջ անոնց աժգոյն կերպարանքը, բաց և հերարձակ գլուխը, սոսկալի գտակները, հինուփուտ միջազգեստները և բոպիկ սաքերը կը նշմարէր: Կը վազէին ու միանգամայն կը խօսէին աղջիկները: Ամենէն մեծը ցած ձայնով կ'ըսէր.

Փայտորները (cognes) եկան: Ի՞նչ մնաց դիպ պիտի բռնէին Կէս-շրջանին մէջ:

Միւսը կը պատասխանէր. — Ես ալ տեսայ զանոնք: Փախայ, բոլոր ուժովս փախայ: Արկօթեան սոսկալի լեզուով կ'ըսէին այս խօսքերը, զոր Մարիուս իմացաւ և աղջիկներուն ստիկանութեան մարդերէն դժուարաւ ազատելով խոյս առած ըլլալը հասկցաւ:

Աղջիկները Մարիուսին ետեւի կողմէն պուլվարին ծառերուն տակ սուղուեցան, և հոն մութին քանի մը վայրկեան տեսակ մը անորոշելի սպիտակութիւն կազմեցին որ շուտ մը անհետ եղաւ:

Մարիուս պահ մը կանգ առաւ:

Ճամբան շարունակել ուղած միջոցին գետինը սաքերուն քով պզտիկ և գորշագոյն ծրար մը նշմարեց: Մոեցաւ և առաւ ծրարը. տեսակ մը պահարան էր այն և կ'երեւար թէ թուղթեր կը պարունակէր:

— Լաւ, ըսաւ, կարծեմ թէ այն թշուառուհիները ձգած պիտի ըլլան այս ծրարը:

Ես դարձաւ, կանչեց, բայց չգտաւ զանոնք. մտածելով թէ արդէն հեռացած էին աղջիկները, ծրարը գրպանը դրաւ և ընթրելու գնաց,

Ձ. Հաւսար

(ԹԵՆԱՐԱՆԵՐ 68)

Համբան քաղելու ժամանակ Մուֆթարի փողոցին մօտ ծառուղիին մէջ մանուկի դազազ մը անտաւ որ սեւ սաւանով մը ծածկուած և երեք օթոռի վրայ դրուած էր և զոր ճրագ մը կը լուսաւորէր: Մշուշին մէջ նշմարած երկու աղջիկները միաքը եկան:

— Խեղճ մայրեր ըսաւ մտապէս. բան մը կայ որ իր դուռկին մեռնիլը անսնկէն աւելի արտաժի է, այսինքն անսնկ անոնց գէշ ապրիլը:

Յետոյ ելան մաքէն այս ստուերները արոնք զանազանութիւն կուտային անոր արտաժեան, և նորէն պաշարուեցաւ իր սովորական մտահոգութիւններէն: Սկսաւ մտածել իր վեցամսեայ սիրոյն և երանութեան վրայ զոր Լիւքսէնպուրկի ծառերուն տակ բաց օդով և պայծառ լոյսով վայելած էր:

— Բանիօ'ն Թիւրքաւ կեանքս, կ'ըսէր իրովի: Նորատի աղջիկներ միշտ կ'երեւան ինձ, միայն թէ առաջները հրեշտակներ, իսկ հիմա դիտելը ձիւազներ (goule) էին անոնք:



Գ. Լ. ՈՒՆԻ Պ.

ՉՈՐՍ ՆԱՄԱԿ

Գիշերը՝ Մարիուս պառկելու համար՝ երբ վրայի զգեստները կը հանէր, ձեռքովը զրգանը խառնած միջոցին հանդիպեցաւ այն ծրարին զոր պուլվարին վրայ գեանէն գտած էր: Մարիուս մոռցած էր զայն: Մտածեց թէ անօգուտ չպիտի ըլլար բանալ ծրարը. թէ երիասարդուհիներուն հասցէն թերևս անոր մէջ նշանակուած է, և թէ իրօք անոնց կը վերաբերէր այն, և թէ գէթ պիտի ըստանար հարկ եղած տեղեկութիւնները որպէս զի հասկնայ ծրարին որու վերաբերիլը և յանձնէ զայն տիրոջը:

Բացաւ պահարանը որ կնքուած չէր և որու մէջ չորս նամակ կար նոյնպէս անկնիք:

Այս նամակներուն հասցէները գրուած էին:

Չորան ալ ծխախոտի օտակալի հօտ մը կուտար:

Առաջին նամակին հասցէն էր. Ա. Տիկին, տիկին մարքիզոնի Տը կրիշըրի, երեսփոխանաց Խորհրդարանին հրապարակք, քիւ Մարիուս ըսաւ իրովի թէ հաւանօրէն պիտի ստանար իր փնտռած տեղեկութիւնները, և մանաւանդ թէ նամակը գոց չըլլալով ստոյգ էր թէ կրնար կարգացուիլ առանց անպատեհութեան: Ահաւասիկ այս նամակին պատճէնը:

«Տիկին մարքիզուհի,

«Ընկերական միութեան ամենէն սերտ կապն է գթութեան և բարեպաշտութեան առաքինութիւնը: Պաշտօնացէ՛ք ձեր քրիստոս-

նէական զգացումը և կարեկցարար նայեցէ՛ք անգամ մը աննը-
սեհ Սպանիացիին որ Պուրպոնեան ցեղին նուիրական դատին յա-
րած և հաւատարիմ մնացած ըլլալուն համար նահատակուեցաւ:
որ նոյն դատը պաշտպանելու համար իր արիւնը թափեց, հարըս-
տութիւնը, վերջապէս ամէն բան զոհեց, և որ այսօր յետին թըշ-
ուառութեան մէջ կը գտնուի: Ապահով եմ թէ ձեր պատուարժան
անձը օգնութիւն մը պիտի չնորհէ ինձ՝ պահպանելու համար
կեանք մը որ վերջով լի կիրթ և պատուակիր զինուորականի մը
չափ անտանելի եղած է. կը վստահիմ ձեր սրտին մարդասիրու-
թեան և այն համակրութեան, զոր դուք, Թիկի՛ն մարքիզուհի,
ունիք այսպիսի դժբաղդ ազգի մը վրայ: Մեր աղաչանքը ապար-
դիւն չպիտի մնայ և մեր երախտագիտութիւնը պիտի պահէ ձեր
սիրուն յիշատակը:

«Ընդունեցէ՛ք իմ յարգական զգացումներու հաւաստիքը:
«Մնամ և այլն»

«ՏՕՆ ԱԼՎԱՐԷՉ, Սպանիացի գըն-
դապետ հեծելազօրաց, և արքայա-
կան, որ իր հայրենիքը երթալու հա-
մար ուղեւորելով Ֆրանսա հասած և
ապաւինած է, և որ իր ճամբորդու-
թիւնը չկրնար շարունակել ստակ
չունենալուն համար»

Այս ստորագրութեան քով հասցէ մը չկար ամենեւին: Մարի-
ուս յուսաց թէ հասցէն միւս նամակին մէջ պիտի գտնէ, որուն
վրայ գրուած էր. Առ Տիկի՛ն, տիկի՛ն Տը Մօնվերնէ կոմսուհի՛
Գասեք փողոց. քի. Թ:

Մարիուս յետագայ տողերը կարդաց.

«Տիկի՛ն կոմսուհի,

«Դժբաղդ մայր մըն եմ ես և վեց զաւակ ունիմ որոնց վեր-
ջինը ութ ամիսուան է: Վերջին ծննդաբերութենէս ի վեր հիւանդ

եմ, հինգ ամիսէ ի վեր էրիկօ թողած է զիս, սոսկալի չքաւորու-
թեան մէջ կը տառապիմ՝ աշխարհիս մէջ ամենեւին ձեռնառու մը
չունենալով:

«Տիկի՛ն կոմսուհի, յոյսս ձեր վրայ դնելով,
Մնամ խորին յարգանօք
«Կի՛ն ՊԱԼԻՉԱՐ»

Մարիուս երրորդ նամակն ալ կարդաց որ նախորդներուն պէս
աղերսաբար մըն էր:

«Պ. Բապուրժօ, ընտրող, մեծ վաճառական-խոյրարար,
Սէն-Տընի փողոց, Օ-Ֆէր փողոցին անկիւնը.

«Կը համարձակիմ այս նամակը ուղղելու ձեզ և աղաչելու որ
ձեր համակրութեանց անգին շնորհը չզլանաք ինձ և պաշտպա-
նէք գրագէտ մը որ մօտ օրերս թատերգութիւն մը զրկած է Թէ-
աթրը-Ֆրանսէ թատրոնը: Նիւթը պատմական է, և գործողու-
թիւնը Օվէրնիէի մէջ տեղի կունենայ կայսերական կառավարու-
թեան ժամանակ: Ոճը կարծեմ թէ բնական և լակոնական է, և
կրնայ արժէք մը ունենալ: Չորս տեղ երգի տուններ կան: Այս թա-
րերգութեան մէջ ծիծաղաշարժ, անկատակ և անակնկալ դէպքե-
րը կը խառնուին բնասրութեանց զանազանութեան և վիպակա-
նութեան գոյնի մը հետ, որով թեթեւակի նկարուած են գործա-
ղութեան ամէն մէջէ մէջ խառնուող պատահարները, գործողու-
թիւն մը որ խորհրդաւորապէս կը յառաջանայ, և որ յանկարծա-
կան փոփոխումներէ ետք կը վերջանայ տեսարանի բազմաթիւ և
փառաւոր իրողութիւններով:

«Ելլաւոր նպատակօ է յագեցնել այն փափաքը որով հետ
զհետէ կը վառի մեր դարուն մարդը, այսինքն մօտան, այն ան-
հեղեղ և այլանդակ հողմացոյցը որ ամէն նոր հովին փոփոխու-
թիւն կառնէ:

«Թէ և թատերգութիւնս այս կատարելութիւնները ունի, բայց
և այնպէս կը վախնամ որ առանձնաշնորհեալ հեղինակներուն նա-

խանձոտութիւնը, ինքնամոլութիւնը թերևս պիտի կրնայ զիս
արտաքսել տալ թատրոնէն, վասն զի գիտեմ այն ամէն դառնու-
թիւնները զոր կը ձաշակեն նորեկները:

«Գ. Բապուրժո, դուք գրագէտներու լուսաւոր պաշտպանը
ըլլալու իրաւացի համբաւը ունիք. ահա այս համբաւէն խորտու-
սելով կը զրկեմ ձեզ ազջիկս որ մեր չքաւոր վիճակը պիտի նկատ-
րագրէ ձեզ և պիտի ըսէ թէ ինչպէս առանց հացի և կրակի մը
նացած ենք այս ձմեռնային եղանակին մէջ: Կը փափաքիմ ձեր ա-
նունին նուիրել թէ՛ այն թատրերգութիւնս և թէ՛ այսուհետեւ
գրելիքներս աղաչելով որ հաճիք ընդունիլ իմ այս ակնածական
նուէրս. ասիկայ կ'ապացուցանէ թէ ո՛րքան կուզեմ ձեր վա-
հանին ներքև ապաւինելու և հեղինակութիւններս ձեր անու-
նին պաշտպանութեան ներքեւ դնելու պատիւով փառաւորիլ: Եթէ
կը հաճիք պզտիկ նուէրով մը պատուել զիս, անմիջապէս պիտի
սկսիմ տաղաչափական երգ մը յօրինելու պարագիւր՝ երախտագի-
տութեանս հաւաստիքը ձեզ նուիրելու համար: Այս երգը զոր կըր-
ցածիս չափ պիտի աշխատիմ անթերի կերպով հեղինակելու, թատ-
րերգութեան սկիզբը տպուելէ և տեսարանին վրայ կարդացուելէ
առաջ ձեզ պիտի զրկուի:

«Կը համարձակիմ յարգանացս հաւաստիքը նուիրելու.

«Ա. Պարոն
և Տիկին Բապուրժո.

«ԺԱՆՖԼՕ» գրողէս.

«Յ. Գ. Գէթ երկու Ֆրանք ըլլայ, չնորհք ըրէք:

«Ներեցէ՛ք անձամբ չիգալու և աղջիկս զրկելու համար,
վասն զի, առաջ, հազուստի տրամալի պատճառներ զիս կարգելին
գուրս ելնելու ...»:

Մարիուս վերջապէս չորրորդ նամակն ալ բացու - Հասցէն էր
Ա. Պարոն բարերար Սեն-ժազ սիւ Հօ-Բա Եկեղեցւոյ.
Նամակը յետագայ տողերը կը պարունակէր:

« Բարերար մարդ,

« Եթէ կը զիջանիք աղջկանս հետ գալ, թշուառ աղէաք մը
պիտի տեսնէք, և վկայագիրներս պիտի ցուցունեմ ձեզ:

« Երբ պիտի տեսնէք այս վկայագիրները, ձեր առատարուղիս
սիրաբը զգալի բարեսիրութեան զգացումով մը թունտ պիտի ելլէ,
վասն զի ճշմարիտ փիլիսոփաները միշտ բուռն կերպով կը յուզ-
ուին:

« Հաւանեցէ՛ք, կարեկից մարդ, թէ պէտք է անագորոյն հարկ
մը զգալ, և թէ միսիթարութիւն մը գտնելու համար շատ ցաւալի
բան է ապացոյցով հաստատել այս հարկը, իբր թէ ազատ չըլլայինք
վշտարեկ տառապելու և տնտնուհ մնալով մեռնելու՝ սպասելով
որ սփոփում մը գտնէ մեր թշուառութիւնը: Ծակատագիրներն ու-
մանց համար շատ աղէտաբեր և ոմանց համար շատ առատաձեռն
կամ պաշտպան են:

« Ձեր ներկայութիւնը կամ նուէրը կ'սպասեմ, եթէ կը հաճիք
նուէր մը ընելու, և կ'ազաչեմ որ ընդունիք իմ յարգանաց հաւաս-
տիքը որով

« Մնամ, ո՛ ստուգիւ մեծ անձն մարդ, ամենա-
խոնարհ և ամենահնազանդ ծառայ ձեր

« Բ. ՖԱՊԱՆԹՈՒ» ղերասանապետ.

Մարիուս այս չորս նամակները կարդալէն ետք առջի գիտ-
ցածէն աւելի բան մը չիմացաւ:

Նախ ստորագրողներուն և ոչ մէկը իր հասցէն նշանակած էր
ստորագրութեանը քով:

Երկրորդ կ'երեւար թէ այս նամակները չորս զանազան ան-
ձերու, այսինքն Տօն Ալվարէզի, կին Պալիզար կնոջ, Ժանֆլօ
գրագէտին և Ֆապանթու դերասանապետին կողմէն գրուած էին,
բայց զարմանալի է որ այս նամակներուն չորսն ալ միեւնոյն գի-
րով գրուած էին:

Առկէ կը կարծուէր թէ չորսն ալ միեւնոյն անձին կողմէ գր-
կուած էր. ուրիշ ի՞նչ հետեւութիւն կարելի էր հանել:

Այս կարծիքը աւելի իրականման (vraisemblable) կ'երևար ուրիշ պատճառով մըն ալ. չորս նամակին թուղթն ալ միեւնոյնն էր, այսինքն ստորին և դեղին. չորսն ալ միեւնոյն ծխախոտի հոտը ունէր. և թէև յայտնապէս կ'երևար թէ օճը փոփոխելու ջանք մը եղած է, սակայն միեւնոյն ուղղագրական սխալները չորսին մէջն ալ խորին հանդարտութեամբ մը կ'արտագրուէին, և ժանֆլօ գրագէտը սպանիացի գնդապետէն ոչ նուազ ուղղագրական սխալներ ըրած էր (բնագրին մէջ) :

Անագուտ աշխատանք էր այս պղաղիկ հանելուկը լաւձելու նկրտիլը: Եթէ զեանէն գտնուած չըլլային նամակները, կրնար կարծուիլ թէ միամիտներու քիթէն բռնելու համար գրուած էին անոնք: Մարիուս շատ արտում ըլլալով չէր կրնար աղէկ միտքով տանուլ նաեւ դիպուածին մէկ կատակը և ներել այն խաղը զոր կ'երեւայ թէ փողօցին քարայրտակը կ'ուզէր խաղալ իրեն: Մարիուս կը կարծէր թէ ինք Աչք-կապուկ մըն էր չորս նամակներուն մէջ որոնք զինքը կը ծագրէին:

Մանաւանդ թէ ասնեւեւին նշան մը չկար հաստատելու համար թէ անոնք կը վնասներէին այն նորատի աղջիկներուն օրոնց հանդիպած էր Մարիուս պուլվարին վրայ: Վերջապէս յայտնապէս կ'երևար թէ կարեւորութիւն չունեցող թուղթեր էին այն նամակները:

Մարիուս նորէն պահարանին մէջ դրաւ զանոնք, մէկդի նետեց և պառկեցաւ:

Առաւ ժամը եօթնին ելլելէն և նախաձաշիկը ընելէն ետք աշխատիլ սկսելու կը պատրաստուէր, կամաց մը իր սենեկին դուռը զարնուեցաւ:

Մարիուս բան մը չունենալուն համար բանալին դուռին վրայէն հանած չէր. երբեմն և խիստ քիչ անգամ կը հանէր, և այն երբ ստիպողական գործի մը պարագայու ըլլար: Մանաւանդ թէ դուրս ելած ժամանակները անգամ բանալին կղպակին վրայ կը թողուր: Բան պիտի գողցունես, կ'ըսէր Պուկօն խաթունը: — Ի՞նչ պիտի գողցնես, կ'ըսէր Մարիուս: — Սակայն ստոյգ է թէ օր մը Մարիուսին զոյգ մը էին կռիւր գողցուած էր ի մեծ յաղթանակ Պուկօն խաթունին:

Սենեկին դուռը անգամ մըն ալ զարնուեցաւ տառջուան պէս խիստ կամաց մը:

— Մտի՛ր, ըսաւ Մարիուս:

Դուռը բացուեցաւ:

— Ի՞նչ կ'ուզես, Պուկօն խաթուն, հարցուց Մարիուս աչքը առանց վերցունելու իր դիրքերուն և ձեռագիրներուն վրայէն:

— Ներեցէ՛ք, պարոն... պատասխանեց ձայն մը որ Պուկօն խաթունին ձայնը չէր:

Այս ձայնը սուր, տկար, քաշուած և թուլցած ձայն մըն էր, օղի և ցքի խմած ծեր մարդու մը կերկերուն ձայնին նման ձայն մըն էր:

Մարիուս խկոյն ետեւը դարձաւ և նորատի աղջիկ մը տեսաւ:



ԳԼՈՒԽ Գ.

ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՉ ՎԱՐԴ ՄԸ

Կիսաբաց դրան սեմին վրայ նորահաս աղջիկ մը կեցած էր։ Վերնայարկի երդն ուր լոյս կ'երեւար, ճիշտ դրան դէմն էր և տժգոյն լուսով մը կը լուսաւորէր այս կերպարանքը։ Տժգոյն, վըտիտ և սակերուտ անձ մըն էր այն, և մարմինին վրայ՝ օրու մերկութիւնը կը սարսուէր և կը սառէր, շապիկէ և միջազգեստէ մը թ դատ ոչինչ կար։ Գօտիի տեղ չուան մը, գդակի տեղ նոյնպէս չուան մը, սրածայր ուսեր օրոնք շապիկէն դուրս կ'ելլէին, խարօտեղանման և աւշային տժգնութիւն մը, հողազոյն անրակներ, կարմիր ձեռքեր, կիսաբաց և աւերուն բերան մը, ակուաներու պակասութիւն, աչքը մթին, յանդուգն և ստորին, ազազուն երիտասարդուհիի մը ձեւերը և ամպարիշտ պառաւի մը նայուածքը, յիանամեայ հասակի հեռ խառնուած տասնըինգամեայ հասակ մը, այն արարածներէն մէկը որոնք տկար ու միանգամայն սոսկալի են և օրոնք սարսուռ կուտան տեսնողին եթէ չկրնան լայնել դայն. ահա այս էր Մարիուսի դրան շեմին վրայ սպասող աղջկան նկատարարը։

Մարիուս ելած էր և տեսակ մը շուարումով այս աղջկան կը նայէր որ երազներու մէջէն անցնող ստուերին ձեւերուն գրեթէ համատիպն էր։

Տեսնողը կսկիծ մը կ'զգար մանաւանդ դիտելով թէ այս նորատի աղջիկը ազեղ ըլլալու համար եկած չէր աշխարհ։ Իր առաջին մանկութեան մէջ կ'երեւայ թէ աղւորութիւն անգամ ունեցած էր։ Նորահասութեան գեղեցկութիւնը ապակին կը կուտէր շուայտութեան և աղքատութեան կանխահաս և սոսկալի ծերութեան

դէմ։ Այս ատանը վեցամեայ դէմքին վրայ գեղեցկութեան մնացորդ մը կը մեռնէր այն տժգոյն արեւին նման որ ձմեռնային օրուան մը արշալոյսին ժամանակ սոսկալի ամպերու ներքեւ կը մարի։

Այս դէմքը բոլորովին անծանօթ չէր Մարիուսի։

Կը կարծէր Մարիուս թէ տեղ մը տեսած է դայն։

— Ի՞նչ կ'ուզէք, օրիորդ, հարցուց։

Նորատի աղջիկը արբշխ թիապարտի մը ձայնով պատասխանեց։

— Ձեզ նամակ մը բերի, պարոն Մարիուս։

Երիտասարդուհին Մարիուսին անուներ տալով կը խօսէր. հետեւաբար Մարիուս առանց տարակուսելու հասկցաւ թէ իրօք զինք տեսնելու եկած էր ան. բայց ո՞վ էր այս աղջիկը. ինչպէս գիտէր իր անունը։

Ներս մտաւ աղջիկը առանց սպասելու որ Մարիուսէն հրաւէր ընդունի ներս մտնելու։ Ներս մտաւ վստահութեամբ՝ սենեակին ամէն կողմը և դեռ չշտկուած անկողինին նայելով տեսակ մը սրբասամբիկ համարձակութեամբ։ Ոտքերը բոպիկ էին։ Միջազգեստին լայն ծակերէն անոր երկայն օրունքը և նիհար ծունկերը կը տեսնուէին։ Աղջիկը ցրտահար կը սարսուէր։

Իրօք ձեռքը նամակ մը կար դոր Մարիուսին տուաւ։

Մարիուս այս նամակը բանալով դիտեց որ լայն և ահագին նշխարը տակաւին թաց էր։ Ըսել է թէ նամակը հեռու տեղէ եկած չէր կրնար ըլլալ։ Մարիուս յետագայ օրերը կարգաց։

«Սիրելի դրացիդ իմ երիտասարդ։»

«Իմացայ ձեր ինծի համար ըրած բարիքը, իմացայ թէ վեց ամիս առաջ սենեակիս վարձքը վճարեք էք։ Կ'օրհնեմ զձեզ, ո՞վ երիտասարդ։ Առջինէկ աղջիկէս պիտի իմանաք որ երկու օրէ ի վեր առանց պատաստ մը հացի մնացած ենք, չօրս հողի և իւրանդ կինս։ Եթէ միտքովս խաբուած չեմ, կարծեմ կը պարտաւորիմ յուսալ թէ ձեր վե՛ս սիրաբ պիտի գլթայ մեր այս վիճակին վրայ և

ձեզ ինձ նպատակով ըլլալու և թեթեւ ողորմութիւն մը տալու փափաքը պիտի ներշնչէ :

«Մնամ այն յարգալի ակնածութեամբ զոր կը պարտաւորինք մարդկութեան բարերարներուն :

«ԺՕՆՏԲԷԹ»

«Յ. Գ. Աղջիկս ձեր հրամանին պիտի սպասէ, սիրելի պարոն Մարիուս :

Առջի գիշերուանէ ի վեր Մարիուսին ուշը զբաւոյց միտն դէպքին մէջ այս նամակը նմանեցաւ նկուղի մը մէջ վառուած ճըրազի մը : Ամէն բան յանկարծ լուսաւորուեցաւ :

Նամակը՝ կուգար միւս չորս նամակներուն տեղէն : Մի և նոյն գիրքը, մի և նոյն թուղթը, մի և նոյն ծխախոտի հոտն էր :

Հինգ նամակ, հինգ պատճառութիւն, հինգ տնուն, հինգ ստորագրութիւն, և միայն մէկ ստորագրող կտրու Տօն Ալվարէզ սպանիացի գնդապետը, Պալիզար անուն գեղարար մայրը, բանաստեղծ Փանֆիլօ, և ծերունի թատերագու գերասանտոյետ Յապանթու Փօնարէթ կ'անուանուէին, եթէ սակայն նոյն իսկ Փօնարէթի անունը իրօք Փօնարէթ էր :

Մարիուս երկար ժամանակէ ի վեր թէև այս խարխուլ տունը կը բնակէր, բայց՝ ինչպէս ըսինք արդէն՝ խիստ քիչ անգամ առիթ ունեցած էր տեսնելու, ընդնշմարելու իսկ իր ամենաարուստ դրօշակները : Միտքը ուրիշ տեղ էր, և մարդուս միտքը երբ ուրիշ տեղ կը շրջի, նայուածքն ալ հոն կը շրջի : Շատ անգամ նրբանցքին մէջ և սանդուխին վրայ Փօնարէթներու հանդիպած էր. բայց ասոնք իրեն համար ուրիշ բան մը չէր եթէ ոչ դիմաստուէրներ, այնքան ուշադրութիւն չէր ըրած որ առջի օր երեկոյեան ժամանակ ընդհարում մը ունեցած էր Փօնարէթի աղջիկներուն հետ առանց ճանչնալու զանոնք. ըստ որում յայտնի է թէ անոնք էին պուլվարին վրայ իրեն հանդիպող աղջիկները, և թէ տեսնելով այն աղջիկը որ հիմայ իր սենեակը մտած էր, պժգումով և կարեկցութեամբ համակուած միջոցին մեծ դժուարութեամբ և անորոշապէս կրցած էր յիշել թէ տեղ մը հանդիպած էր անոր :



Մերս մտաւ աղջիկը առանց սպասելու : էջ 59
Պատկեր քիւ 58
Թշուառները 9.

Հիմայ Մարիուս ամէն բան յայտնապէս կը տեսնէր: Կը հասկընար թէ իր Ժօնտրէթ անուն դրացին յետին կարօտութեանը մէջ բարերար անձերու գթասիրութենէն շահ հանելու արհեստը ունէր, թէ հասցէներ կառնէր, և թէ կեղծ ստորագրութիւններով նամակներ կը գրէր այնպիսի անձերու զոր հարուստ և գթոտ կը կործէր, նամակներ զոր իր աղջիկները կը տանէին՝ վասնզը և պատասխանատուութիւնը իրենց վրայ ունենալով, վասն զի այս հայրն իր աղջիկները վասնզի դնելու վիճակին հասած էր ալ. ճակատաբէրն հետ խաղ մը կը խաղար և ստակին տեղ այս աղջիկները կը դնէր խաղին մէջ: Մարիուս այս թշուառութիւններուն առջի օրուան փախուստը. շնչասպառութիւնը, սարսափը և արկօթեան խօսքերը յիշելով ըստ այնմ դատելով կը հասկնար թէ անոնք հաւանօրէն չգիտեմ ի՞նչ տխուր արհեստ մըն ալ կը բանէին, և թէ այս ամէն իրերէ մարդկային ընկերութեան արդի վիճակին մէջ երկու տեսակ թշուառ արարածներ գոյացած էին, որոնք ոչ մանուկ, ոչ աղջիկ և ոչ ալ կին էին, այլ տեսակ մը պիղծ և անմեղ հրէշներ զոր թշուառութիւնը արտագրած էր:

Տրամելի՛ արարածներ որոնք ոչ անուն, ոչ հասակ և ոչ սեռ ունին. որոնց համար ոչ բարին և ոչ չարը հնարին է, և որոնք մանկութեան հասակէն ելլելով այս աշխարհի մէջ արդէն բան մը չունին, ոչ ազատութիւն, ոչ առաքինութիւն և ոչ պատասխանատուութիւն: Հողիներ որոնք երէկ փթթած և այսօր թօշած են փողոցը նետուած այն ծաղիկներուն պէս զոր ամէն տիղմերը կը թառամեցնեն մինչև որ անիւի մը ներքև ճնշուին:

Սակայն մինչդեռ Մարիուս անդու աղջկանը կը նայէր զարմանօք և ցաւօք, նորատի աղջիկը ճիւղաղային յանգստութեամբ մը վերնայարկին մէջ կ'երթեւեկէր: Հոն հոս ժուռ կուգար առանց հող ընելու իր մերկութիւնը: Իր քակուած և պատառուած շապիկը երբեմն գրեթէ մինչև մէջքը կ'իյնար: Աթոռները կը շարժէր, դարանի վրայ դրուած պտճուճանքի առարկաները կը խառնէր, Մարիուսի զգեստներուն կը դպէր, հոն հոս ինչ որ կար, հետաքրքրութեամբ կը քննէր:

— Ահա հայելի մը, ըսաւ նորատի աղջիկը:

Եւ սենեկին մէջ առանձին ըլլալու պէ՛տ՝ ակռաներով սկսաւ
 երգախառն գաւեչտի կտորներ, զուարթուն հագներգներ երգել
 որոնք անոր կեկորդային և բիրտ ձայնովը սոսկալի եղանակ մը կը
 դառնային: Այս յանդգնութեան տակ չգիտեմ ի՛նչպիսի զգուշու-
 թիւն, խուսովութիւն և խոնարհութիւն մը կ'ընդնշմարուէր: Լըր-
 բութիւնը ամօթ մըն է: Ամենատխուր բան մըն էր տեսնել թէ այս
 աղջիկը ինչպէս Մարիուսի սենեկին մէջ կ'զբօսնուր և կարծես թէ
 կը թուշտէր լոյսէն խրաչող կամ թեւաբեկ թուշուսի մը շարժում-
 ներով: Մարիոս կ'զգար թէ այս նորատի աղջիկը եթէ ուրիշ տե-
 սակ կրթութիւն և ճակատագիր ունեցած ըլլար, իր զուարթ և
 համարձակ ընթացքը կրնար քաղցր և սիրուն բան մը ըլլալ: Կեն-
 դանիններուն մէջ բնաւ ծովարձիւի մը չփոխուիր այն արարածը որ
 աղաւնի մը ըլլալու համար ծնած է: Այս փոփոխութիւնը միայն
 մարդերու մէջ կը տեսնուի:

Մարիուս կը մտախոհէր, և կը թողուր որ աղջիկը ուզածը ընէ:
 Սեղանին մօտեցաւ նորատի աղջիկը:

— Ա՛հ ահա՛ գիրքեր, ըսաւ:

Նշոյլ մը անցաւ անոր աղօտ աչքին մէջէն:

— Կարդալ գիտեմ ես, կրկնեց, և իր ձայնը բանի մը նկատ-
 մամբ պարծելու երանութիւնը կ'արտայայտէր, երանութիւն զոր
 չկայ մարդկային արարած մը որ չզգայ:

Սեղանին վրայ բացուած գիրքը առաւ ուժգնակի, և դիւ-
 րութեամբ կարդաց.

«... Պօտիւէն զօրապետը հրաման ընդունեց իր վաշտին հինգ
 գունդերովը Ուկոմօնի դղեակին տիրել որ վաթերւոյի դաշտին
 մէջ տեղն է...»:

Ընթերցումը ընդմիջելով, պօռաց.

— Ա՛հ, վաթերւօ. գիտեմ ասոր ի՛նչ ըլլալը: Պատերազմ
 մըն է որ ասկէ առաջ տեղի ունեցաւ: Հայրս ալ այս պատերազ-
 մին մէջը կար: Հայրս բանակներուն մէջ զինուորութիւն ըրած է:
 Մենք ամէնքս ալ ընտանիքով հանդերձ հաւատարիմ պօլարարթ-
 եան ենք, գիտէ՛ք: Վաթերւօն անգլիացիներուն դէմ պատերազմ
 մըն էր:

Վար դբաւ գիրքը, գրիչ մը առաւ և պօռաց.

— Գրել ալ գիտեմ:

Գրիչը մեկանին թաթղեց, և դէպի Մարիուսին դառնալով.

— Կուզէ՞ք տեսնել: Ահա խօսք մը գրեմ տեսնելու համար:

Եւ առանց ժամանակ աւալու Մարիուսին որ պատասխանէ,
 սեղանին վրայ դրուած թերթ մը ճերմակ թուղթին վրայ գրեց,
 Փայտուորներն եկան:

Ապա գրիչը նետելով.

— Ուղղագրական սխալ չկայ, ըսաւ. կրնանք նայիլ: Բոյրս
 և ես կրթութիւն առած ենք: Ինչ որ ենք հիմա, նոյնն եղած
 չէինք միշտ: Մեր առջի վիճակին նայելով պէտք չէր որ հիմա
 մենք...

Հոս ընդմիջեց իր խօսքը, մթին բիրք Մարիուսին վրայ յա-
 ւեց, և քահ քահ խնդալով, վա՛շ, ըսաւ այնպիսի հնչումով մը
 որ ամէն անամօթութիւններէ զսպուած ամէն վիշտերը կը պա-
 րունակէր:

Եւ ապա սկսաւ ակռաներովը յետագայ խօսքերը երգել զը-
 ւարթ եղանակով մը:

Նօրի եմ, հայր իմ,
 Սակայն հաց ջուցիմ.
 Կը մսիմ, մայր իմ,
 Բայց զգեստ ջուցիմ:
 Յուրտէն դողայ
 Թող երանիկ,
 Եւ հեծկլտայ
 Ապերգանիկ:

Հազիւ թէ լմնցուցած էր այս երգը, և ահա պօռաց.

— Երբեմն թատրոն կ'երթա՞ք, պարոն Մարիուս: Ես կ'երթամ,
 Պղտիկ եղբայր մը ունիմ որ դերասաններուն հետ բարեկամ է և որ
 Երբեմն տոմսակ կուտայ ինձի: Օրինակի համար վերնատուններու
 ըտզմօցները չեմ սիրեր, վասն զի այս բաղմօցներուն վրայ նստողը

նեղութիւն կը կրէ, հանգիստ չունենար: Թատրոններու վերնա-
տունները երբեմն բիրտ մարդեր կ'ըլլան, նաև այնպիսի մարդեր ո-
րոնցմէ արկայութիւն կը բուրէ:

Յետոյ Մարիուսի նայեցաւ, տարօրինակ կերպարանք մը ա-
ռաւ, և ըսաւ անոր.

— Պարոն Մարիուս, գիտէ՞ք որ դուք խիստ ազատ աղայ մըն
էք:

Եւ ահա նոյն միջոցին երկուքին միաքէն մի եւ նոյն բանք
անցնելով, աղջիկը ժպտեցաւ, Մարիուս ալ կարմրեցաւ:

Աղջիկը Մարիուսին մօտեցաւ և ձեռքը անոր ուսին վրայ
դնելով, ըսաւ. — Ինձի ուշադրութիւն չէք ընէր, բայց ես կը ճանչ-
նամ ձեզի, պարոն Մարիուս: Հոս երբեմն սանդուխին վրայ կը
տեսնեմ ձեզի, երբեմն ալ երբ Աւստերլիցի կողմերը կը պառտիմ,
կը տեսնեմ որ այն կողմը բնակող Մապէօֆ ախպար անուն մէկու-
մը տունը կ'երթաք: Այդ գիտախուր մաղերը շատ աղէկ կը վայե-
լեն ձեզ:

Աղջիկը թէեւ կը ջանար խիստ մեղմիկ հանել ձայնը, բայց
չէր կրնար. փոխանակ մեղմովին ելլելու մի միայն ցածէն կ'ելլէր՝
ձայնը: Բառերուն մէկ մասը կոկորդէն մինչեւ շուրթերը դալը ան-
հետ կ'ըլլար այն պակաս խաղերուն նման որոնց ձայնը չլսուիր դաշ-
նակի մը ստեղնաշարին (clavier) վրայ:

Մարիուս ետ քաշուած էր լռելեայն.

— Օրիորդ, ըսաւ անտարբեր ծանրութեամբ մը, ծրար մը կայ
հոս որ կարծեմ ձերն է: Ներեցէ՛ք որ ձեզ յանձնեմ զայն:

Եւ երկնցուց պահարանը որու մէջն էին չորս նամակները:

Աղջիկը ձեռքերը մէկգմէկու դարնելով պռտաց.

— Ո՛րքան փնտռեցինք ասիկայ:

Ապա ծրարը առաւ ուժգնակի և պահարանը բացաւ՝ բռնելով.

— Փա՛ռք ըզզ Աստուած: Ո՛րքան փնտռեցինք ես և քոյրս:

Ըսել է թէ դուք գտաք ասիկա. պուլվարին վրայ գտաք, այն-
պէս չէ՞. անշուշտ պուլվարին վրայ գտած ըլլալու էք: Հոն ինկած
պիտի ըլլայ երբ վազելով կ'երթայինք. ձգողը քոյրիկս է. խեւը՝
Երբ տուն եկանք, չգտանք ծրարը, և չուզելով պարտապ տեղը,
բոլորովին պարտապ տեղը, բացարձակապէս պարտապ տեղը ծեծ ու-

տել, ըսինք թէ նամակները տարինք որոնց որ ուզուած էին, և
թէ «Աստուած տայ» ըսին մեզ: Ահա ուրեմն այն խնդ Նամակ-
ները: Բայց ուրկէ՞ հասկցաք թէ իմս էին անոնք: Հա՛ աղէկ միտ-
քըս եկաւ, գիրէն հասկցած էք, Ը-ել է թէ դուք էիք այն անձը
որու զարկինք երէկ գիշեր երբ կ'անցնէինք: Յանցանքը մերը չէր.
մութին չկրցաւք տեսնել: Մի՛ թէ կրթեալ մըն էր այն, հալցուցի
քրոջս: Կարծեմ թէ կրթեալ մըն էր, ըսաւ ինձ քոյրս:

Ասկայն այսպէս խօսելով բացած էր այն ազերսագիրը որու
հասցէն էր. «Ա.Օ. պարոն բարերար Աէն-ժոզ-տիւ-ձօ-Բա եկեղեց-
ւոյ:

— Ահա ասիկա այն ծերինն է որ ժամ կ'երթայ, ըսաւ: Հիմա
ժամանակն է տանելու: Երթամ տանիմ: Գուցէ բան մը տայ, որով
կարենանք նախաճաշել:

Յետոյ սկսաւ խնդալ և շարունակեց.

— Եթէ այսօր նախաճաշելու ըլլանք, ի՛նչ ըրած պիտի ըլ-
լանք, գիտէ՞ք: Մեր առջի օրուան նախաճաշիկը, առջի օրուան
ընթրիքը, երէկուան նախաճաշիկը, երէկուան ընթրիքը ամէնը մէկ
անգամով ըրած պիտի ըլլանք՝ եթէ այս առաւօտ նախաճաշելու
ըլլանք, Հա՛, հա, մեզի՛ ինկեր է ատոր հողը, գացէ՛ք անօթի
ստակեցէ՛ք, շունճ՛ք:

Մարիուս այս խօսքին վրայ յիշեց թէ թշուառուհին իր սեն-
ակը ողորմութիւն ուզելու համար եկած էր:

Փիլէն խառնեց, բայց բան մը չկար գրպանը:

Երիտասարդուհին կը շարունակէր, և կարծես Մարիուսին
ներկայութիւնը մոռնալով, կը խօսէր:

— Երբեմն գիշերները կը ձգեմ կ'երթամ: Երբեմն ալ տուն
չեմ դառնար: Երբ սակաւին այս տունը եկած չէինք: Անցած տա-
րի ձմեռը կամուրջներուն կամարներուն տակ կը բնակէինք: Հոն
քով քովի կը կենայինք չտանելու համար: Պզտիկ քոյրս կուլար:
Ո՛րքան արտասլի բան է ջուրը: Երբ կը մտածէի զետը նետուիլ և
խղճուիլ, չէ, ջուրը շատ պաղ է, կ'ըսէի: Երբ որ սիրտս ուզէ,
մի՛նակս կ'երթամ ուր որ երթամ. երբեմն ալ իրաններու մէջ կը
քնանամ: Գիտէ՞ք որ գիշերը երբ պուլվարին վրայ կը քաշեմ, կը
կարծեմ թէ ծառաները երեքժանիներ են, կը կարծեմ թէ սեւա-

թոյր և մեծ տուները Նօթրը-Տամի աշտարակներն են, կ'երեւակա-
յեմ թէ ճերմակ պատերը գետ են, և կ'ըսեմ իրովի. Ա՛հ, ահա
ջուր կայ հոն: Ասողերը լուսավառութեան կանթեղներու պէս
կ'երեւան. կարծես թէ կը ծխեն և հովէն կ'անցնին, այն տառն
կը շուարիմ կը մնամ, կը կարծեմ թէ խել մը ձիեր անանջիւ մէջ
կը հեւան: Ձայներ կը լսեմ որոնք, երգեհոններու և մանարանի
մեքենաներու ձայներ են, ի՛նչ են, ես ալ չգիտեմ: Կը կարծեմ
թէ հաեւէս քարեր կը նետուին, ուտաի կը փախչիմ առանց գիտ-
նալու. ամէն բան կը դառնայ, ամէն բան կը դառնայ: Մարդս
երբ բան մը չուտեր, ի՛նչ ըլլալը ինքն ալ չգիտէ:

Յետոյ մուտրագին կերպարանքով մը Մարիուսին նայեցաւ:

Մարիուս իր դրպանները փորելով, խառնելով վերջապէս
կրցած էր հինգ Ֆրանք և տասնուվեց սու գումարել: Նոյն մի-
ջոցին աշխարհիս մէջ իր բոլոր ունեցածը այս գումարն էր միայն:
— Ահա այս օրուան ընթրիքիս համար, ըսաւ մտովի, վազը
Աստուած ողորմած է: — Տասնուվեց սուն իրեն պահեց և հինգ Ֆր-
քանքը աղջիկին տուաւ:

Աղջիկը առաւ դրամը:

— Լա՛ւ, ըսաւ, արեւ կայ վրան:

Եւ իբր թէ արեւն անոր ուղեղին մէջ արկօթեան բառերու
ձիւնակոյտեր հալեցնելու յատկութիւնն ունենար, սկսաւ պօռալ.

— Հինգ Ֆրանք. իրաւ որ արեւի պէս փալփուռն է. վրան
թաղաւոր մը կայ. ի՛նչ աղւոր ստակ. բարեսիրտ մարդ մըն էք
դուք. շնորհակալութի՛ւն մեծապէս: Ապրի՛ն աղքատասէրները:
Երկու օր հաց պիտի ուտենք. միւս ալ պիտի ուտենք. պանիր ալ
պատուական պիտի կշտանանք: (*)


Շապիկը ուտելուն վրայ վերցուց, յարգանք բարեւեց Մա-
րիուսը, յետոյ ձեռքով ընտանեքար նշան մը ըրաւ, և դէպ ի դու-
ռը ուղղուեցաւ, ըսելով.

— Մնաք բարով, պարոն: Հոգ չէ: Երթամ ձերս գտնեմ:

(*) Բնագիրն արկօթեան բառերով ալ շարադրուած է, այլ մենք յարմար դատե-
ցինք պարզ հայերէնով թարգմանել զայն:

Անցած միջոցին դարանին վրայ չորաբէկ հացի կեղեւ մը
նշմարեց որ կը բորբոսէր փոշիին մէջ. յարձակեցաւ այն հացի կե-
ղեւին վրայ և խածաւ մրմռալով. — Դէ՛շ չէ ասիկա, կարծր է,
ակունքս կը խորտակէ:

Յետոյ դուրս ելաւ:



Գ Լ Ո Ւ Ն Ե

ՆԱՆԱՆՆԱՄՈՒԹԵԱՆ ՅՈՒԹԱՅԱԾԱԿԸ

Մարիուս հինգ տարիէ ի վեր աղքատութեամբ, զրկումով,
չքաւորութեամբ իսկ տարած էր, բայց հիմա նշմարեց որ իրական
թշուառութիւնը տակաւին չէր ճանչցած: Դեռ հիմա կը տեսնէր
բուն թշուառութիւնը: Պահ մը առաջ իր առջեւէն անցնող այն
ծիւաղն էր բուն թշուառութիւնը: Եւ իրօք, ո՛վ որ միայն մար-
դուս թշուառութիւնը տեսած է, բան մը չէ տեսած: պէտք է
տեսնել կնոջ թշուառութիւնը. ով որ միայն կնոջ թշուառութիւնը
տեսած է, բան մը չէ տեսած. պէտք է տեսնել մանկան թշուա-
ռութիւնը:

Երբ մարդս վերջին ծայրը հասած է, կ'ստիպուի նաև վեր-
ջին ապաւէններու դիմել: Վա՛յ այն անպաշտպան անձերուն որ այս-
պիսի մարդու մը բոլորաբը կը գտնուին: Աշխատութիւն, վարձք,
հաց, կրակ, խրախոյս, արամաղորութիւն, վերջապէս ամէն բան
կը պակսի իրեն համար: Արեւին ճառագայթը կարծես կը խաւարի
դուրսը. բարոյական լոյսն ալ ներսը կը մարի. այս կրկին մթու-
թեան մէջ մարդս կնոջ և մանկան տկարութեան կը հանդիպի, եւ
զանոնք խայտառակութեանց կը վարժեցնէ բռնապէս:

Այն ատեն հնարին կ'ըլլան ամէն պժգալի իրերը: Յուսահատութիւնը կը շրջապատուի դիւրաբէկ միջնորմներէ որոնց ամէնն ալ մոլորեցան կամ ոճիրի վրայ կը նային:

Առողջութիւնը, երիտասարդութիւնը, պատիւը, անարատ մարմինն սրբաւէտ և անընդեկ փառիկութիւնները, սիրտը, կուսութիւնն ու ամօթխածութիւնը, որ հոգիին կեղեւն է, աղէտաւ լի կերպով կը շօշափուին այն խարխալուամէն որ ապրելու միջոցներ կը փնտռէ, որ խայտառակութեան կը հանդիպի և որ կ'ընդունի այն խայտառակութիւնը: Հայր, մայր, մանուկ, եղբայր, քոյր, մարդ, կին, աղջիկ, ամէնքն ալ կը հաւանին, եւ՝ գրեթէ հանքային կազմութեան մը պէս՝ իրարու հետ կը շաղուին սեռերու, ազգակառութեանց, հասակներու, նշաւակութեանց և անմեղութեանց այս միգապատ խառնուրդին մէջ: Իրարու հետ կ'անակ կ'անակ ատելով տեսակ մը ողորմելի ճակատագրի մէջ կը կ'ծկուին: Ո՛ր թըշուառներ, քանի՞օ՛ն տժգոյն, ո՛րքան ցրտահար կը տառապին: Կարծես թէ այնպիսի մոլորակի մը մէջ են, որ մեզմէ շատ աւելի հեռու էր արեւէն:

Այս երիտասարդունին Մարիուսի համար խաւարին կողմէն եւ կամ տեսակ մը առաքելուհի եղաւ:

Այս առաքելուհին խաւարին մէկ կողմը ամբողջապէս յայտնեց անոր:


Մարիուս գրեթէ ինքզինքը մեղադրեց իր խելէը միտքը մտախոնդութեան և սիրոյ տուած ըլլալուն համար, վասն զի այն պատճառաւ մինչեւ հիմա ժամանակ ունեցած չէր անգամ մը իր դրանքները նկատելու: Անոնց ընակարանի վարձքը վճարած ըլլալը մեքենական յօժարութիւն մըն էր. ամէն մարդ կրնար այս յօժարութիւնը ունենալ: Բայց Մարիուս կը պարտաւորէր աւելի մեծ բան մը ըրած ըլլալ: Ի՛նչ, պատու մը միայն բաժնուած մնալ այն լքեալ անձերէն որոնք կենդանի մարդերէ հեռու և խաւարի մէջ խարխալեցով կ'ապրին, անոնց դպիլ, մարդկային սեռի շրթային կերպիւ իւրք յետին օլակը ըլլալ անոնց մօտ, իր քով անոնց ապրիլ՝ կամ լաւ եւս է ըսել՝ հռչակել լսել և ամենեւին ուշադրութիւն չընել. ամէն օր, ամէն վայրկեան պատին ետեւէն անոնց քալելը, երթալը, դալը, խօսիլը լսել եւ՝ ականջ չտալ. անոնց

խօսքերը հեծումնե՛ր պարունակեն, և այս հեծումները չլսելով միտքը ուրիշ տեղ ալ, երազներու, անհնարին ճառագայթումներու, երևակայական սիրոյ առարկաներու, յիմարութեանց պարապիլ. այլ սակայն իր քրիստոնեայ եղբայրները, ժողովրդային եղբայրները իր քով կը հօգեվարէին, պարագայ տեղը կը հօգեվարէին, և ինքն ալ անոնց դժբաղդութեան մէկ մասը կը կազմէր, և այն դժբաղդութիւնը կը ծանրացնէր: Վասն զի եթէ անոնք ուրիշ դրացի մը, նուազ ցնորամիտ և աւելի ուշադիր դրացի մը, հասարակ և զթոտ դրացի մը ունենային, անշուշտ իրենց չքաւորութիւնը դիտուած պիտի ըլլար, իրենց կարօտութեան նշանները նշմարուած, և շատ ժամանակէ ի վեր թերեւս պաշտպանուած և աղատուած պիտի ըլլային: Ստոյգ է թէ անոնք շատ ապականուած, շատ խայտառակուած, շատ նուաստացած, շատ պժգալի իսկ կ'երեւային, բայց հաղուազիւտ են անոնք որ կ'իյնան առանց խայտառակուելու. ժանաւանդ թէ կէտ մը կայ ուր դժբաղդներն ու անուանարկները կը խառնուին և կը շփոթուին բառով մը, աղէտալի՛ բառով մը, որ է թշուառներ. որոնք է յանցանքը. և մի՞թէ մարդս ալ աւելի չպարտաւորիք գթալ երբ ալ աւելի խորունկ է այն անգունը ուր կը գլորի թշուառը:

Մարիուս ինքն իրեն այս յանդիմանութիւնները ընելու միջոցին, ըստ որում կային պարագաներ ուր Մարիուս՝ ամէն ստուգապէս բարեւէր սիրտերու պէս՝ ինքն իր դաստիարակը կ'ըլլար և պէտք եղածէն աւելի կը յանդիմանէր ինք զինքը, Մարիուս, կ'ըսենք, զինքը ժօնարէթի ընտանիքէն բաժնող պատը կը դիտէր՝ իր թէ կարող ըլլար իր գթալի նայուածքը այս միջնորմին մէջէն անդի կողմը անցնել և միխթարել այն թշուառները: Պատը մարդակներով և նսւրբ օտխտակներով հիւսուած բռածեփ նուրբ թիթեղ մըն էր, որու ետեւէն՝ ինչպէս ըսինք՝ միւս սենեակին խօսքերուն ձայներուն շուքը կատարելապէս կը լսուէր: Մարիուսին պէս մտախոն մը միայն կրնար տակաւին նշմարած չըլլալ այս իրողութիւնը: Այս պատի՛ վրայ որ և է թուղթ մը փակած չէր, ոչ ժօնարէթի կողմէն, ոչ ալ Մարիուսի կողմէն. հետեւաբար պատին անշնորհ շինութիւնը յոյտնապէս կը տեսնուէր: Մարիուս՝ զրեթէ առանց դիտակցութեան՝ այս միջնորմը կը քննէր. մտա-

խոհութիւնը՝ երբեմն մտքին պէս՝ կը քննէ, կը դիտէ, և կ'որոնէ։ Յանկարծ ոտքի վրայ ելաւ Մարիուս, վասն զի պատին վերի կողմը, ձեղունին քով եռանկիւնաձեւ ծակ մը նշմարած էր, որ իրենց մէջ անջրպետ մը ձգող երեք տախտակներէ կը գոյանար։ Չկար այն բրածը որ հարկաւ այս անջրպետը գոցած էր, և դարանին վրայ ելլելով այն ծակէն կարելի էր տեսնել ժօնարէթի հիւղակիներսը։ Կարեկցութիւնն ալ իր հետաքրքրութիւնը ունի և պէտք է որ ունենայ։ Այն ծակը տեսակ մը յուղայի կը նմանէր։ Օգնելու դիտաւորութեամբ դժբաղդութեան յուղայարար նայիլը ներելի է։ — Տեսնեմ քիչ մը թէ ինչ տեսակ ժարդեր են և ինչ է անոնց արդի վիճակը. ըսաւ մտապէս Մարիուս։

Դարանին վրայ ելաւ, բիբը ձեղքին մօտեցուց և նայեցաւ։



Գ. Լ. ՈՒՆԻՍ Զ.

ՈՐՁԻՆ ՄԷՋ ԳԱԶԱՆԱԲԱՐՈՅ ՄԱՐԴ ՄԸ

Անտառներուն պէս քաղաքներն ալ անձաւորներ ունին ուր կը պահուի ինչ որ ամենաչար և ամենասոսկալի է։ Միայն թէ՛ քաղաքներուն մէջ՝ ինչ որ այսպէս կը պահուի, անգութ, աղտոյղի և պղտիկ այսինքն տգեղ է, մինչդեռ անտառներուն մէջ այսպէս պահուողը անգութ, վայրենի և մեծ այսինքն գեղեցիկ է։ Որջերու դէմ որջեր. բայց գազաններու որջերը մարդերու որջերէն նախամեծար են։ Խոռոչները խցիկներէն աւելի աղէկ են։

Մարիուսի տեսածն էր խցիկ մը։

Մարիուս աղքատ էր և իր սենական ալ չքաւոր, բայց ինչպէս ազնիւ էր իր աղքատութիւնը, նոյնպէս մաքուր էր իր վերնայարկը։ Իսկ այն խուցը՝ որու մէջ կը սուզէր հիմա իր նայուածքը՝ դձուձ, աղտոտ, նեխօտ, ժանտահօտ, խաւարին և ստորին խուց մըն էր, ուր կարասիի տեղ ոչ այլ ինչ կար բայց եթէ խսիրէ աթոռ մը, կաղ սեղան մը, քանի մը հին խեցիներ, և երկու տեղ երկու անկարագրելի խշտեակ. իսկ իբր պատուհան քառապակեայ երդ մը ունէր զոր սարդոստայններ կը վարագուրէին։ Այս երդէն ճիշդ այնքան լոյս կուգար որքան պէտք է որպէս զի մարդու դէմք մը ուրուականի դէմք մը երեւայ։ Պատերը բորոտ տեսք մը ունէին, և ծածկուած էին կարերով և սպիներով՝ սոսկալի հիւանդութիւն մը քաշելով ազեղած դէմքի մը պէս. այս պատերուն վրայ՝ որոնցմէ բժային խոնաւութիւն մը կը հոսէր, տձևօրէն մրուտուած լրբենի ծրագիրներ կը նշմարուէին։

Մարիուսին բնական սենեակը աղիւսաչէն յատակ մը ունէր աւուրած. բայց ժօնարէթի սենեակը ոչ աղիւսէ և ոչ ալ տախտակէ

յատակ ունէր. քալողը գետինը խարխուլ տուներն հին գաճին վրայ կը քայէր, որ ոտքերու տակ կոխտուելով սեւցած էր: Այո անհաւասար գետնին վրայ ուր փոշին կարծես թէ ծեփուած էր և որ միայն մէկ կուսութիւն մը ունէր, այսինքն աւելի երես տեսած չէր, հոն հոս հին շղուականներու, հինուփուտ մուճակներու և պժգաւի քուրջերու գէզեր կային. սակայն բուխերիկ մը կար այս սենեկին մէջ, և ասոր համար տարին քառասուն ֆրանքի կը վարձուէր: Այս բուխերիկին մէջ ամէն բան կար, այսինքն կրակարան մը, սան մը, կտրուած տախտակներ, բեւեռներէ կախուած ծուկներ, թռչունի վանդակ մը, մոխիր և նաև քիչ մը կրակ: Երկու կիսախանձ փայտ տրամապէս կը ծխէին այս բուխերիկին մէջ:

Բան մը եւս կար, որով այս գձուձ սենեկին սարսափը կ'աւելնար, և որ էր սենեկին մեծութիւնը: Այս սենեակը ցցուած մասեր, անկիւններ, մութ ծակեր, տանիքներու նիրքին կողմեր, ծոցեր և հրուանդաններ ունէր: Այս պատճառաւ սոսկալի և խորունկ խորշեր կը կազմուէին որոնց մէջ ներելի էր կարծել թէ ձեռքի չափ մեծ սարդեր, ռաքի չափ լայն նեպուկներ և թերեւս չգիտեմ ի՞նչ տեսակ մարդկային հրէշներ կ'ծկուելով կը պահուէին:

Խշտիներէն մէկը դռան քով, միւսն ալ պատուհանին մօտ դրուած էր: Երկուքն ալ ծայրով մը բուխերիկին կը հպէին և Մարիուսին դիմացի կողմը կ'իջնային սենեակին մէկ անկիւնը՝ որ Մարիուսին նայած ծակին մօտ էր՝ պատին վրայ սեւ փայտէ շղանակի մը մէջ գունաւոր պատկեր մը կախուած էր, և աակը խոշոր առներով դրուած էր. ԵՐԱՉ: Այս պատկերին նկարներն էին կին մը և քնացած մանուկ մը որ կնոջ ծունկերուն վրայ նստած է. ամպի մէջ արծիւ մը որ կտուցովը պսակ մը բռնած է, և կինը առանց արթնցնելու մանուկը, անոր գլուխէն կը հեռացնէ պսակը. ներսը բաց երկինքի մէջ նարուէն կ'երեւայ՝ մութ-կապոյտ սիւնի մը կաթնած ոլու խոյակը դեզին է և որ յետագայ փորագրերը ունի:

ՄԱՐԷՆԿՕ
ԱԻՍՏԵՐԼԻՑ
ԻԷՆԱ
ՎԱԿՐԱՄ
ԷԼՕԹ

Այս շղանակին տակը և գետինը աւելի երկայն քան թէ լայն և փայտեայ տապակի նման բան մը դրուած և պատին կաթնած էր չեղակի. դարձած պատկերի մը, հաւանօրէն միւս կողմը մրտուած շղանակի մը, պատէ մը վար առնուած կամ տեղը կախուելու տեղ հոն մոռցուած հայելիի պէս բան մըն էր այն:

Սեղանին քով՝ որու վրայ Մարիուս գրիչ մը, մելան և թուղթ կը նշարէր՝ գրեթէ վաթսուն տարեկան, պզտիկ, նիհար, գունատ, վայրենադէմ, վարպետորդի, անգութ և անհանդարտ մարդ մը, սոսկալի անզգամ մը նստած էր:

Լավաթէր եթէ դիտած ըլլար այս դէմքը, պիտի տեսներ անգղ մը որ նենգամիտ գառատերի մը հետ խառնուած է. պիտի տեսներ զիշակեր թռչունը և խաբեբայ մարդը որոնք զիրար կը տգեցնեն և կ'ամբողջացնեն, այսինքն զիշակեր թռչունը գարշելի դառնալով խաբեբայ մարդուն օգնութեամբ, և խաբեբայ մարդն ալ սոսկալի հանդիսանալով զիշակեր թռչունին օգնութեամբ:

Այս մարդը ալեխառն երկայն մօրուք մը ունէր. կինը շապիկ մը հագած էր որով իր թաւ կուրծքը կ'երեւար, նաև մերկ թեւերը որոնց վրայ ալեխառն մազեր անկուած էին: Այս շապիկէն ի զատ մարդը տղմուտ բանթալօն մը և կօշիկներ հագած էր որոնցմէ դուրս կ'ելլէին ռաքերուն մատները:

Բերանը ծխափայտ մը ունէր և կը ծխէր: Խուցին մէջ ա'լ հաց չկար, բայց տակաւին ծխախոտ կար:

Հաւանօրէն նամակ մը կը գրէր նման այն նամակներուն զոր Մարիուս կարդացած էր:

Սեղանին մէկ կողմը կարմիր և անգոյգ հատոր մը կար հինցած. այս գիրքին ձեւէն որ ընթերցարարներու հին 12 նոց ֆօրմայի ձեւն էր, կը հասկցուէր թէ վէպ մըն էր այն. կախարչին վրայ խոշոր զլխագիրերով այս վերնագիրը տպուած էր.

ԱՍՏՈՒԱԾ, ԱՐԲԱՅՆ, ՊԱՏԻՒՆ ՈՒ ՏԻԿԻՆՆԵՐԸ,
ՀԵՂԻՆԱԿ ՏԻԻԳՐԷՅ-ՏԻԻՄԻՆԻԼ

Մարդը գրելու ժամանակ միանգամայն կը խօսէր բարձր ձայնով, և Մարիուս սա խօսքերը կը լսէր.

—Ո՛հ, հաւասարութիւն չկայ, նաև մեռնելէն ետք: Տե՛ս փոքր ինչ Բէր-Լաշէզի գերեզմանատունը: Մեծերը, որոնք որ հարուստ են, վերերը ագաթիաներու ծառուղիին մէջն են որ քարայրայրապէս ունի: Անոնք կրնան կառքով գալ հոն: Բայց պղտիկները, աղքատ մարդիկը, թշուառ մարդիկը, է՛հ, ասոնք վարի կողմը կը կրնան, կը թաղուին ուր որ տիղմը մարդուս մինչև ծունկը կը հասնի, կը նետուին ծակերուն մէջ, խոնաւութեան մէջ: Հոն կը թաղուին որպէս զի աւելի շուտ փառին: Անկարելի է զանոնք տեսնելու երթալ առանց ընկղմելու տիղմին մէջ:

Հոս կանգ առաւ մարդը, ձեռքը սեղանին զարկաւ և ակուանները կրճելով շարունակեց.

—Ո՛հ, կ'ուզէի աշխարհս ուտել:


Բուխերիկին քով իր մերկ ներքաններուն վրայ կծկուած մտեղ կին մը կար որ քառասուն կամ յիսուն տարեկան կրնար կարծուիլ՝ Այս կինը եւս շաղիկ մը հագած էր և կտաւէ միջազգեստ մը որ հին չուխայի կտորներով կարկտուած էր: Հաստ կտաւէ դեմքակ մը միջազգեստին կէտը կը ծածկէր: Թէև կծկուած և սմքուած, կ'երեւար սակայն որ խիստ բարձրահասակ էր ան: Էրկանը քով տեսակ մը հակայուհի մըն էր: Կարմիր կապոյտի զարնոզ ալեխառն և սոսկալի մազեր ունէր զոր ժամանակ առ ժամանակ կը խառնուէին տափարակ ըղունքներով փալփլոզ ահագին ձեռքերով:

Այս կնոջ քով գետինը բոլորովին բաց գիրք մը կար որ միւսին դիրքը ունէր և հաւանօրէն նոյն վէպին մէկ հատորն էր:

Խշիկներէն մէկուն վրայ Մարիուս տեսակ մը երկայնահասակ, գունատ և գրեթէ մերկանդամ պղտիկ աղջիկ մը կը նշնշմարէր որ ռաքերը երկնցնելով նստած էր և որ կերեւար թէ ոչ մտիկ կը նէր, ոչ կը տեսնէր և ոչ ալ կ'ապրէր:

Ասիկա անշուշտ Մարիուսին սենեակը եկող աղջկան կրտսեր քոյրն էր:

Տասնըմէկ կամ տասներկու տարեկան կ'երեւար ան: Ուշադիր ըննող մը կրնար սակայն դիտել թէ ճիշդ տասնընորս տարեկան էր: Ասիկայ այն պատանուհին էր որ առջի օր երեկոյեան դէմ պուլ վարին վրայ ըսած էր. Փախայ, անմիջապէս փախայ:



Հոս կանգ առաւ մարդը, ձեռքը սեղանին զարկաւ: Լջ 74
Պատկեր թիւ 59
Թ՛շուառներ, Գ՛.

Այ՛ ազջիկը այն տկար տունկերուն կը նմանէր որոնք երկար
 առնն կը յապաղին, յետոյ շուտ մը և յանկարծ կ'աճին: Չքառ-
 րութիւնն է այս մարդկային տկար տունկերը կազմողը: Այս ա-
 րարածները ոչ մանկութիւն և ոչ չափանաւորութիւն ունին: Տասնը-
 հինգամեայ հասակի մէջ տասներկու տարեկան կ'իրևան, իսկ երբ
 տասնըվեց տարեկան կ'ըլլան, քսանամեայ կ'երեւան: Այսօր պըզ-
 տիկ ազջիկ են, վաղը կին: Կրնայ ըսուիլ թէ՛ փոխանակ քայլ
 առ քայլ ապրելու՝ ոստումով կ'ապրին շուտ մը ծերանալու և
 վերջանալու համար:

Նոյն պահուն այս անձը մանկուհիի մը կը նմանէր:

Սակայն այս բնակարանին մէջ աշխատութեան մը հետքը չէր
 տեսնուէր բնաւ. ամենեւին ոչ արուեստ մը, ոչ ճախարակ մը, ոչ
 դործիք մը կար: Տեղ մը քանի մը հինուփուտ երկաթներ կային
 որոնց տեսքը կասկածելի էր: Սենեակին մէջ կը տիրէր այն տխուր
 ծուլութիւնը որ յուսահութենէ կտք և հոգեվարութենէ առաջ
 կուգայ:

Մարիուս ժամանակ մը դիտեց այս տխրալի սենեկին ներսը որ
 դերեզմանի մը ներսէն աւելի ահարկու էր, վասն զի կ'զգար թէ
 հոն մարդկային հոգին կը շարժի և կենդանութիւնը կը յուզուի:

Գձուձ բնակարանը, նկուզը, ցած փոսը ուր չքաւորներէ ո-
 մանք ընկերային շէնքին ամէնէն վարի կողմերը կը սողան, բուն
 դերեզմանը չէ, այլ տնօր նախասենեակն է. բայց՝ ճիշդ այն հա-
 լուստներուն պէս որ իրենց ամենէն մեծ ճոխութիւնները իրենց
 պալատին դրան քով կը տարածեն. մահն ալ որ բոլորովին մօտ է,
 կարծես թէ իր ամենէն մեծ թշուառութիւնները այն նախասենե-
 կին մէջ կը դնէ:

Մարդը լուած էր, կինը չէր խօսեր, նորատի աղջիկը կարծես
 թէ շունչ չէր առներ: Թուղթին վրայ գրչին հանած ձայնը կը
 լսուէր:

Մարդը՝ առանց գրելէ դադրելու՝ մրմուռաց:

— Սրիկա՛յ են, սրիկա՛յ, ամենքն ալ սրիկայ:

Կինը անգամ մը հառաչեց երբ Սողոմոն իմաստունին այս վըճ-
 ուական վերջաբանութիւնը լսեց:

— Սիրուն բարեկամ, հանդարտէ՛, ըսաւ: Մի՛ այդքան նե-

զանաք, սիրելիս: Շատ բարի ես որ այդ ամէն մարդերուն նամակներ կը գրես, հոգիս:

Մարմինները ինչպէս ցուրտին նոյնպէս և թշուառութեան մէջ իրարու կը մօտենան, բայց սիրտերը կը հեռանան: Ըստ երևոյթի կերևար թէ այս կինը ժամանակաւ սիրած էր այս մարդը որքան որ կրնար սիրել, բայց այս սէրը հաւանական է թէ մարած էր սուկալի չքաւորութեան մը փոխադարձ և հանապազօրեայ յանդիմանութիւններով: Այս կինը սրտին մէջ իր տմուսնոյն նկատմամբ ա՛լ սիրոյ մոխիր կար միայն: Սակայն գգուելի անականները մնացած էին, ինչպէս շատ անգամ կը սլատանի այս: Բերնով՝ Սիրելի, սիրուն, բարեկամ, հոգիս, կ'ըսէր ամուսնոյն, բայց սիրտը կը լռէր: Մարդը նորէն սկսած էր գրել:

Գ. Լ. ՈՒՆԵՍ Է.

ՉՕՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Մարիուս սիրտը ճնշուած՝ կը պատրաստուէր վար իջնել այն տեսակ մը դիտարանէն զոր անակնկալ կերպով գտած էր. բայց ձայն մը առնելով ուղեց հասկնալ ի՛նչ ըլլալը, և տեղէն չչարժեցաւ:

Հիւզին դուռը յանկարծ բացուեցաւ, և առջինէկ աղջիկը սեմին վրայ երևցաւ: Մարդու հաստ մուճակներ հագած էր, դոր տիղմը ոչ միայն ցնխոտած ալ նաև աղջկան մինչև կարմիր պլեճեղներուն վրայ ժայթքած էր: Վրան հին լօթիկ մը ունէր, որ ծուրիկ ծուրիկ էր: Մարիուս ժամ մը առաջ անոր վրայ տեսած չէր այս լօթիկը. հաւանական է թէ աղջիկը անոր արգահատանքը աւելի շարժելու համար դուրս ձգած և ետքէն դարձեալ վրան տեսած էր զայն: Ներս մտաւ, ետեւը դառնալով դուռը հրեց, կանգ առաւ շունչ առնելու համար, վասն զի բոլորովին շնչասպառ էր, յետոյ յաղթական և ուրախալի ձայնով մը սրուաց.

- Պիտի դայ:
- Հայրը աչքերը դարձուց, կինը գլուխը դարձուց, պղտիկ ըոյրը տեղէն չչարժեցաւ:
- Ո՞վ հարցուց հայրը:
- Պարո՛նը:
- Մարդասէ՞րը:
- Այո՛:
- Սէն-ժ'ազ եկեղեցիին մարդասէրը:
- Այո՛:
- Ծե՛րը:
- Այո՛:

- Հիմա պիտի գայ:
- Ետեւեւ կուգայ արդէն:
- Ապահով ես:
- Ապահով եմ:
- Իրա՞ւ կ'ըսես, իբաւ պիտի դա՞յ:
- Կառքով կուգայ:
- Կառքով. Բօլի'լուն է ուրեմն:
- Հայրը ոտքի վրայ ելաւ:

— Ինչպէս կրնաս ապահով ըլլալ, եթէ կառքով կուգայ, դու ինչպէս կրցար անկէ առաջ հասնիլ. դէ՞թ աղէկ մը հասկցուցի՞ր թէ հոս կը բնակինք մենք. ըսի՞ր թէ նրբանցքին ներսը և աջ կողմը վերջին դուռն է մերինը. բաւական է որ չսխալի՛. ո՞ւր գտար զինքը, եկեղեցւո՞յն մէջ. նամակս կարդաց. ի՞նչ ըսաւ:

— Կամա՛ց, քիչ մը կամա՛ց, ծերուկ, շատ շուտ կ'արշաւես, ըսաւ աղջիկը: Ահաւասիկ իրողութիւնը. եկեղեցի մտայ. մարդը իր սովորական տեղը նստած էր. յարգանքը բարեւեցի և նամակը յանձնեցի. կարդաց և ըսաւ ինծի: Ո՞ւր կը բնակիք, ո՞րդեակ: Հետո եկէք, ցուցնեմ մեր տունը, ըսի: — Ոչ, տուր ինձ ձեր հասցէն. աղջիկս քանի մը բան պիտի գնէ. գնելէն ետքը կառք մը պիտի մտնեմ, ետեւէդ գալով քեզի հետ միատեղ տուն կը հասնինք: Տուի հասցէն: Երբ տունին ո՞ւր և ո՞ր տունը ըլլալը ըսի, զարմացաւ և պահ մը դեղեւցաւ. յետոյ ըսաւ ինձ: Լա՛ւ, պիտի գամ: Երբ պատարագը լինցաւ, իր աղջկանը հետ ժամէն ելելը և կառք մը մտնելը տեսայ: Աղէկ մը հասկցուցի թէ նրբանցքին ներսը աջակողմեան վերջին դուռն է մեր սենեակը:

- Եւ ուրի՞նչ գիտես թէ անպատճառ պիտի գայ:
- Հիմա կառքը տեսայ որ բըթի-Պանքիէի վտղոցէն կուգար, անա անոր համար վաղելով եկայ հասայ:
- Ուսկէ՞ գիտես թէ եկողը այն կառքն է:
- Է՛հ, դո՞ւն ալ, գիտեմ, վասն զի թիւը միաքս պահած էր.
- Գանի՞ է թիւը,
- 440:
- Լաւ, խելացի աղջիկ մը ես եղեր:

Աղջիկը համարձակացէս հօրը նայեցաւ, և ոտքը հագած մուծակները ցուցնելով, ըսաւ.

— Կարելի է թէ խելացի աղջիկ մը ըլլամ, բայց գիտնաս որ ա՛լ չպիտի հագնիմ այս մուծակները, և թէ և ոչ իսկ անոնց երեսը կ'ուզեմ տեսնել, նախ՝ առողջութեան, երկրորդ մաքրութեան համար: Մարդուս ամէնէն աւելի ջիղերուն դպչող բանն է հագնիլ այնպիսի կօշիկներ որու ներբանները ջուր կ'առնեն և ճամբան քաշելու տեսն չըզ, չըզ, չըզ ձայն կը հանեն: Աւելի աղէկ կը սեպեմ բոկոտն երթալ:

— Իրաւունք ունիս, ըսաւ հայրը մեզմ կերպով մը որ նորատի աղջկան խստութեան հակապատկերն էր. բայց եթէ՛ բոկոտն երթաս, թոյլ չարուիր որ եկեղեցիէն ներս մտնես. պէտք է որ աղքատները մուծակ ունենան: Աստուծոյ տունը բոկոտն երթալը նեփելի չէ. շարունակեց դառնապէս:

Յետոյ իր միաքը գրաւող առարկային վրայ մտածելով, հարցուց.

- Ապահով ես թէ պիտի գայ, ստուգապէս գիտե՞ս:
- Ետեւեւ ձգեցի, հիմա կուգայ, ըսաւ աղջիկը:
- Մարդը կանգնեցաւ: Դէմքին վրայ տեսակ մը լուսաւորութիւն կ'երեւար:
- Կը լսե՞ս, կնի՛կ, պուսց: Ահա՛ կուգայ մարդասէրը: Մաքէ կրակը:
- Կինը շուարելով տեղէն չշարժեցաւ:
- Մարդը ձեռնածուի մը արագաշարժութեամբ բերանը կտրուած անօթ մը առաւ որ բուխերիկին վրան էր, և ջուրը թափեց կրակին վրայ:

- Յետոյ առջինեկ աղջկանը դառնալով.
- Դուն ալ սա աթոռին խօրը հանէ՛:
- Աղջիկը չէր հասկնար թէ ինչ ըսել կ'ուզէր հայրը:
- Հայրը անմիջապէս բռնեց աթոռը և օտքով անգամ մը զարնելով խօրը պատուեց: Ոտքը խօրին մէջէն միւս կողմը անցաւ:
- Մինչդեռ ոտքը խօրէն դուրս կը քաշէր, աղջկան ալ կը շարցնէր.
- Յուրա կա՞յ:

— Սաստիկ ցուրտ կայ: Ձիւն կուգայ:

Հայրը դէպի կրտսեր աղջիկը դարձաւ որ պատուհանին քով խշտեակին վրան էր, և որոտալիբ ձայնով մը պօռաց:

— Շո՛ւտ ըրէ, վա՛ր իջի՛ր անկողինէդ, ծո՛յլ. բան մըն ալ դուն չե՛ս ըներ. ապակի մը կօտրէ՛, շո՛ւտ:

Պատանուհին շաւարեցաւ մնաց:

— Ի՛նչ ըսի, չլսեցի՞ր կրկնեց հայրը. ըսի քեզ որ ապակի մը կտօրես:

Պատանուհին տեսակ մը անարեկ հնազանդութեամբ ոտքին ծայրովը ելաւ կանգնեցաւ, և կռուփովը ապակիի մը զարկաւ: Սպակին խորտակուեցաւ և մեծ աղմուկով մը ինկաւ:

— Լա՛ւ, ըսաւ հայրը:

Մանր և խիտ էր այս մարդը: Արագօրէն սենեակին չորս կողմը աչքէ կ'անցընէր:

Կարծես թէ զօրավար մըն էր որ վերջին պատրաստութիւնս ները կը կարգադրէ պատերազմը սխելու միջոցին:

Մայրը որ տակաւին բան մը ըսած չէր ելաւ, և հարցուց յամբ և խորին ձայնով մը. կարծես թէ թանձրացեր էին խօսքերը:

— Սիրելիդ իմ, ի՛նչ է դիտաւորութիւնդ:

— Անկողինին մէջ պառկէ դուն, պատասխանեց մարդը:

Որոտալի հրամանը խորհրդակցութիւն չէր ընդուներ:

Գնիկը հնազանդեցաւ, և ծանրութեամբ խշտեակներէն մէկուն վրայ ինկաւ:

Սակայն սենեակին մէկ անկիւնէն հեծկտանք մը կը լսուէր:

— Ի՛նչ է այն, պօռաց հայրը:

Կրտսեր աղջիկը առանց ելլելու այն մութ տեղէն ուր կըծ կուած էր, ձեռքը ցուցուց որ արիւնաթաթաւ էր:

Սպակին խորտակելով ձեռքն ալ վերաւորած էր, և մօրք խշտեակին քով երթալով լսելնայն կուլար:

Հիմա կարգը մօրը եկաւ կանգնելու և պօռալու:

— Հիմա հաւնեցա՞ր ըրած խենդութիւններուդ ապակին խորտակելով ձեռքը կտրեց:

— Ի՛մն ուզածս ալ այդ է, գիտէի թէ ձեռքը պիտի վիճարարուի, ըսաւ մարդը:

— Ի՛նչ ըսիր քու ուզածդ ալ ա՛յ է եզեր հա՛, կրկնեց կինը...:

— Լա՛է՛, սպտասխանեց հայրը. մամուլի ազատութիւնը կը ջնջեմ:

Յետոյ պատուելով իր վրայի կնային շապիկը, լաթի պատառ մը ըրաւ և շուտ մը պղտիկին արիւնաշաղաղ ձեռքը կապեց անով:

Կապելէն ետք պատառուած շապիկին նայեցաւ գոհունակութեամբ:

— Շապիկն ալ ասանկ պատառուած աւելի աղէկ է. հիմա ամէն բան կարգին է, ըսաւ:

Ստանալի քամի մը կը փչէր կտրուած ապակիէն և ներս կը մտնէր: Դուրսի մշուշը նոյնպէս ներս կը մտնէր և սենեակին մէջ կը տարածուէր աներեւոյթ մատներէ անյայտնապէս պարզուած գրեթէ սպիտակ և նրբաթել բամբակի մը պէս: Խորտակուած ապակիէն կ'երեւար դուրսը եկած ձիւնը: Առջի օրը Տեաանընդառաջի արեւին խոտացած ցուրտը իրօք ելած էր:

Հայրը անգամ մը չորս դին նայեցաւ արագօրէն՝ լաւ մը դիտելու համար որ մի՛ գուցէ բան մը մոռցած ըլլայ: Հին բան մը առաւ և մօխիբ ցանեց թրջուած խարոյկներուն վրայ՝ զանոնք բոլորովին ծածկելու համար: Յետոյ կանգնելով և բուխերիկին կռթնելով:

— Հիմայ կրնանք ընդունիլ մարդասէրը, ըսաւ:

Գ. Լ. ՈՒՆԻ Ը.

ՈՐՉԻՆ ՄԷՉ ՃՍՈՍԱԳՍՅԹ ՄԸ

Անչրանիկ աղջիկը մտեցաւ և ձեռքը հօրը ձեռքին վրայ շնեցով,

— Նայէ՛, որքան պաղ է ձեռքս, ըսաւ:

— Վա՛շ, պատասխանեց հայրը, ես ատկէ աւելի կը մօխմ:

Մայրը ուժգին կերպով մը պօռաց.

— Դուն ատանկ ես ահա. միշտ քու ունեցածդ ուրիշներուն ունեցածէն աւելի կ'ըլլայ, նաեւ գէշութիւնդ:

— Պիտի պտպանձիս, ըսաւ մարդը:

Կինը՝ տեսնելով որ ամուսինը մասնաւոր կերպով մը կը նայէ իրեն՝ լռեց:

Որչին մէջ պահ մը լռութիւն տիրեց: Առջինէկ աղջիկը անհող կերպարանքով մը լօթիկին վարի կողմին ցեխերը կը հանէր՝ պղտիկ քոյրը տակաւին կը հեծկտար. մայրը ասոր գլուխը ձեռքերուն մէջ առած էր, և սաէպ համբուրելով մեղմիկ կ'ըսէր.

— Կ'աղաչեմ, գանձդ իմ, մի՛ լար, շուտ մը կ'անցնի. հիմա հայրդ պիտի նեղացնես:

— Ո՛չ, պօռաց հայրը, ընդհակառակը լա՛ց, լա՛ց, գէշ չէ լալդ:

Յետոյ առջինէկին դառնալով.

— Բայց ո՛ւր է եա՛, աակաւին չեկաւ: Եթէ չգալու ըլլայ՝ պարապ տեղը կրակս մարած, աթոռս խորտակուած, շապիկս պատրտուած և ապակիս կտրուած պիտի ըլլայ:

— Պզտիկն ալ վերաւորուած, մրմաց մայրը:

— Դիտե՛ն որ սո՛ւղիւն ցարս է այս դժոխային սենեակը՝



Հրամանեցի՛ք, պարոն. ■նաճեցի՛ք մտնելու: Էջ 83

Պատկեր թիւ 60

Թշուառները Զ.

Եթէ այդ մարդը չգայ: Ո՛հ, ահա սպասել կուտայ մեզի: Թո՛ղ սպասեն ինձ, սպասելէ ի զատ ի՞նչ գործ ունին հոն, կ'ըսէ անշուշտ իրովի: Ո՛հ, ո՛րքան ատելի են ինձ այդ հարուստները. քրքան կը փափաքիմ ամենայն զուարճութեամբ, ուրախութեամբ, եռանդով և գոհունակութեամբ խեղդել այդ հարուստները, այդ ամէն հարուստները, այդ ամէն ինքնակոչ գլխատէր մարդերը որոնք քաղցրաբարոյ կը ձեւանան, ժամ կ'երթան, տէրտէրներուն, քարոզիչներուն, վարդապետներուն պոչէն չեն զատուիր. որոնք ինքզինքնին մեղմէ վեր կը դասեն, և որոնք կուգան մեզի նուաստացնելու և զգեստներ այսինքն ինչպէս կ'ըսեն անոնք, լաթեր բերելու որոնք հինգ ստակ չեն ըներ, նաեւ հաց տալու համար: Իմ ուղածս ատիկայ չէ, ա՛ սրիկաներ, ուղածս ստա՛կ է. ստակ: Ա՛հ, ստակ չեն տար ամենեւին, վասն զի կ'ըսեն թէ կ'երթանք գինի կը խմենք և թէ գինով ենք, թափառաչքիկ ծոյլ ենք. հապա իրենք, ով են իրենք, և ի՞նչ էին ժամանակաւ. գողեր. եթէ գող չըլլային, ասանկ հարուստ չէին կրնար ըլլալ: Ո՛հ, պէտք է որ մարդկային ընկերութիւնը ոտքէն և գլուխէն բռնուի, և վերէն վար նետուի ամէն բան. այն ատեն կարելի է թէ ամէն բան պիտի խորտակուի, բայց գէթ ոչ ոք բան մը պիտի ունենայ. գէթ այս օդուտը ունեցած կ'ըլլանք: — Բայց ո՛ւր է, ի՞նչ կ'ընէ քու այդ էշու կտոր պարոն բարբարդ. ե՛րբ պիտի գայ. աւանակը դուցէ մոռցաւ հասցէն. տարակոյս չկայ թէ այս պառաւ սպուշն ալ...

Նոյն պահուն թեթեւ կերպով մը դուռը զարնուեցաւ. մարդը անսպարելով եկաւ դուռը բացաւ, և յարգական բարեւաններով և պաշտումի ժպիտներով պուսաց.

— Հրամեցէ՛ք, պարոն, հաճեցէ՛ք մտնելու, յարգի բարբարդ իմ, և դուք սիրուն օրիորդ:

Սենեակին սեմին վրայ հասակաւոր մարդ մը և նորառի աղջիկ մը երեւցաւ:

Մարիուս իր տեղէն չէր շարժած: Թէ ի՞նչ զգաց այն միջոցին, մարդկային լեզուի տրուած չէ բացատրել:

Նէ էր:

Ով որ սիրած է գիտէ թէ ի՞նչ ճառագայթաւոր նշանակու-
թիւններ ունին «նէ» բառին երկու տառերը :

Իրօք Լիւքսէնպուրկի պատանուհին էր ան : Մարիուս հազիւ
հազ որոշակի զայն կը նշմարէր այն լուսեղէն շողիին մէջէն որ
յանկարծ ծաւալած էր իր աչքերուն վրայ : Նշմարածն էր իր տա-
րակայ քաղցր էակը , այն աստղը որ վեց ամիս փայլած էր իր առ-
ջեւ , այն բիրը , այն ճակատը , այն բերանը և այն գեղեցիկ դէմքը
որ աներեւոյթ ըլլալով գիշերային խաւար կազմած էր : Տեսիլքը
խաւարած էր , և հիմա նորէն կ'երեւար :

Նորէն կ'երեւար մթութեան մը , գձուձ սենեակի մը , աճեւ
որջի մը , սոսկուձի մը մէջ :

Մարիուս կը սարսուար մոլեգին : Ի՞նչ , իրօք այն էր եկողը ,
սրտին բաղխումները իր աչքը կը պղտորէին : Կ'զգար թէ պատ-
րաստ էր լալու , ի՞նչ , վերջապէս նորէն կը տեսնէր զայն՝ այնքան
ժամանակ փնտռելէն ետք . այնպէս կ'երեւար Մարիուսի թէ իր
հոգին կորսնցուցած էր , և թէ հիմայ կը գտնէր :

Նորատի աղջիկը մի և նոյն աղջիկն էր . միայն թէ քիչ մը
գունատ էր . մանիշագոյն թաւշեայ գլխարկ մը անոր փախուկ կեր-
պարանքը կը շրջանակէր և սեւաթոյր սնդուսէ մաշկեակ մը մէջքը
կը ծածկէր : Երկայնաձեւ քոպային տակէն պզտիկ ոտքը կ'երեւար
որ մետաքսեայ կիսաձեւ կոշիկի մը մէջ կը սեղմուէր :

Դարձեալ Պ . Լըպլանին հետ եկած էր : Բանի մը քայլ առնել
լով ներս մտած և սեղանին վրայ բաւական մեծկակ ծրար մը
դրած էր :

Ժօնտրէթին առջինէկ աղջիկը դրան ետեւը քաշուած էր և
տխուր նայուածքով մը անոր թաւիշէ փեղոյրը , մետաքսեայ լո-
թիկը և երանաւէտ սիրուն դէմքը կը նայէր :



Գ Լ Ա Ն Ե Թ .

Ժ Օ Ն Տ Ր Է Թ Գ Բ Ե Թ Է Կ Ո Ւ Լ Ա Յ

Ժօնտրէթին խուցը այնքան մութ էր որ դուրսէն եկող մար-
դիկ երբ ներս կը մտնէին ստորերկրեայ շտեմարան մը մտնել կըզ-
գային : Ուստի երկու նորեկները դեղեւուձով մը յառաջացան հա-
ղիւ հազ անյայտ կերպարանքներ նշմարելով իրենց չորսդին , մինչ-
դեռ խուցին ընակիչները որոնք սովորած էին այս մշուշին կատա-
րելագէտ կը տեսնէին և կը զննէին զանոնք :

Պ . Լըպլան բարեսէր և տրտում նայուածքովը մօտեցաւ , և
ըսաւ ժօնտրէթին .

— Պարոն , այս ծրարին մէջ նոր դգեստներ ասուէ , գուլ-
պաներ և վերմակներ կան :

— Մեր հրեշտակային բարերարը երախտագիտութեամբ կը
համակէ զմեզ , ըսաւ ժօնտրէթ՝ մինչեւ գետինը խոնարհելով :—
Յետոյ իր առջինէկ աղջկան մօտեցաւ՝ մինչդեռ երկու այցելուները
այս ողորմելի սենեակը կը դիտէին , և անոր ականջին կամաց մը
և արագօրէն ըսաւ .

— Տեսար . միթէ ձեզ չըսի՞ . ահա բերածը լաթեր են , ստակ
չկայ : Ամենքն ալ մէկ հորի ջուր են : Աղէկ միտքս ինկաւ , ի՞նչպէս
ստորագրուած էր այս ապուշ ծերին գրուած նամակը :

— Ֆապանթու , պատասխանեց աղջիկը :

— Դերառանապետ , լա՛ւ :

Ժօնտրէթ աղէկ որ նամակին ստորագրութիւնը հարցուց , վա-
որն զի մի եւ նոյն միջոցին Պ . Լըպլան դէպ անոր կողմը կը դառ-
նար և կը հարցունէր՝ անունը յիշել ուղղի մը կերպարանքով :

— Կը տեսնեմ որ շատ ցաւալի է ձեր վիճակը , պարոն . . . :

— Յապանթու, պատասխանեց ժօնտրէթ սասակապէս :

— Պ. Յապանթու, այո՛, այս է. կը յիշեմ անունդ :

— Դերասանապետ, պարոն, որ յաջողութիւններ ունեցած է :

Հոս Բօնտրէթ կարծեց թէ «մարդասէրը» դրաւելու վայրկեանը եկած է : Ուստի պօռաց այնպիսի ձայնով մը որ տօնավաճառներու մէջ ծաղրածուի մը սնափառութեան ու միանգամայն մեծ ճամբարներու վրայ մուրացողի մը խոնարհութեան յատուկ ձայն մըն էր :

— Թալմայի աշկե՛րտ, պարոն, Թալմայի աշկե՛րտն եմ : Բազմազգ ժամանակաւ ժպտեցաւ ինծի : Աւա՛ղ, որ հիմա կարգը եկաւ դժբաղդութեան : Տէր իմ բարերար, տեսէ՞ք անգամ մը, ոչ հաց ունինք, ոչ կրակ : Խեղճ զաւակներս կրակ չունին : Մէկ աթոռ ունիմ, անոր ալ խտրը պատռած է : Պատուհանին ապակին կտրած է ասանկ ցուրտ եղանակի մը մէջ : Կինս ալ հիւանդ է, անկողնին մէջ կը տառապի :

— Խե՛ղճ կին ըսաւ Պ. Լըպլան :

— Չաւակս ալ վիրաւոր է, շարունակեց ժօնտրէթ :

Վիրաւոր աղջիկը օտարականներուն զայուստովն իր ցաւը մոռնալով սկսած էր «օրիորդին» նայիլ ակնապիշ, և դադրած էր հեծկլտայէ :

— Լա՛ց, պոռչտէ՛՛ քիչ մը, ըսաւ ժօնտրէթ աղջկան մեղմով մը : Եւ անմիջապէս աղջկան վիրաւոր ձեռքը ճմլեց :

Այս ամէնը ձեռնածուի մը յատկութեանց կը նմանէր :

Պատանուհին սկսաւ մեծաձայն լալ :

Պաշտելի երիտասարդուհին զոր Մարիուս իր սրտին մէջ «Իւր սիւլս» կանուանէր՝ անմիջապէս մօտենալով :

— Խե՛ղճ աղջիկ. ըսաւ :

— Տե՛ս ինչպէս օրիւնուայ է ձեռքը, գեղանի օրիորդ, շարունակեց ժօնտրէթ : Օրը վեց սու վաստիկու համար երբ մեքենայի մը տակ կ'աշխատէր, վտանգի մը հանդիպելով վիրաւորեցաւ : Գուցէ հարկ պիտի ըլլայ թեւը կտրել :

— Իրա՛ւ կ'ըսէք, հարցուց ձեր պարօնը՝ խռովելով :

Պզտիկ աղջիկը այս խօսքը իրաւ կարծելով սկսաւ նորէն հեծկլտալ :

— Աւա՛ղ, այո՛, բարերարդ իմ, պատասխանեց հայրը :

Բանի մը վայրկենէ ի վեր ժօնտրէթ տարօրինակ կերպով մը կը դիտէր «մարդասէրը» : Միշտեւ կը խօսէր, կ'երեւար թէ նաեւ ուշադրութեամբ կը զննէր զայն իբր թէ ուզէր միաքէն ելած բաներ յիշել : Յանկարծ պատեհ առիթ մը սեպելով այն բոպէն ուր նորեկները համակրութեամբ պզտիկին հարցումներ կ'ընէին իր վիրաւոր ձեռքին նկատմամբ, կնոջը քովը գնաց որ անկողնին մէջ նստած էր վհատ և ապուշ կերպարանքով մը, և շուտով աւ մեղմով ըսաւ անոր .

— Նայէ՛, աղէկ նայէ սա մարդուն :

Յետոյ դէպ ի Պ. Լըպլան դառնալով, իր ողբը շարունակեց .

— Տեսէ՛ք, պարոն. Կնոջ շապիկէն ի զատ զգեստ մը չունիմ ամենեւին. այն ալ բոլորովին պատռած է ասանկ ամենասաստիկ ցուրտ եղանակի մէջ : Թիկնոց չունիմ որ կարենամ դուրս ելլել : Եթէ որ եւ է թիկնոց մը ունենայի, կերթայի օրիորդ Մարսը (երեւելի դերասանուհի) տեսնելու որ կը ճանչնայ և շատ կը սիրէ զիս : Միթէ միշտ թուր-Տէ-Տամ փողոցը չընակիր : Միատեղ դեր խաղացած ենք զաւառներու մէջ, լսած էք արդեօք : Ես ալ պսակներ ընդունած եմ իրեն հետ : Սէլիմէն ձեռնտու ըլլալ պէտք էր ինձ, պարոն : Էլ միւր ողորմիլ պէտք էր Պէլիդէրին : Բայց ոչ, ըսն մը չեմ տեսներ : Եւ տունս ալ ստակ մը անգամ չկայ : Կինս հիւանդ է, ստակ մը չկայ : Աղջիկս վտանգաւոր կերպով վիրաւորուած է, ստակ մը չկայ : Կինս հեղձումներու կ'ենթարկուի. տարիքն է պատճառ ուրիշ պատճառ մըն ալ ջղային դրութիւնն է որ խանգարուեցաւ : Պէտք է որ դարձանուի ան, նաեւ աղջիկս : Բայց բժիշկը, բայց դեղավաճա՛ւը, ուրկէ՞ գտնեմ ստակը որ ասոնց տամ, և ոչ իսկ լուծայ մը ունինք, պարոն : Մէկ բուլի առջեւ երկրպագութիւն կ'ընէի, եթէ գտնէի : Ահա տեսէք թէ մինչեւ ուր իջած են ճարտարութիւնները : Գիտէ՞ք, սիրուն օրիորդ, և դուք, վեհանձն իմ բարերար, դուք որ առաքինութիւն և բարութիւն կը շնչէք, գիտէ՞ք որ խեղճ աղջիկս աղօթք ընելու համար եկեղեցի կ'երթայ, այն եկեղեցին զոր դուք կ'անուշահոտէք և ուր ձեզի կը նշմարէ միշտ, վասն զի աղջիկներուս կրօնական պարտականութիւններ կատարել կուտամ : Չուզեցի որ դերասանուհի ըլլան : Ա՛հ, եթէ անգամ մը գայթին լակոտները, կը հասկցնեմ իրենց իմ ո՛վ ըլլալս :

Ես կատակ չգիտեմ: Պատիւի, բարոյականի, առաքինութեան վը-
րայ անոնց խրատներ տալէ բերանս կը չարնայ, պարոն: Հարցու-
ցէք, եթի չէք հաւատար: Կ'ուզեմ որ աղջիկներս ուղիղ քայլեն:
Հայր մը ունին անոնք. չեն բնաւ այն թշուառուհիներու կարգէն
որոնք սկզբան ընտանիք չեն ունենար և որոնք հուսկ յետոյ հասա-
րակութեան հետ կ'ամուսնանան. որոնք նախ օրիորդ Անհատ կ'ան-
ուանուին, և յետոյ արկին Ամէն-Մարդ կ'ըլլան: Ասանկ բան չկրնար
ըլլալ Յապանթուի ընտանիքին մէջ: Կ'ուզեմ առաքինապէս դաս-
տիարակել զանոնք, կ'ուզեմ որ պարկեշտ ըլլան, ազնիւ ըլլան,
Աստուծոյ հաւատան, թէ ոչ: Աստուած վկայ...: Բայց սակայն,
պարոն, իմ ազնիւ պարոնս, գիտէ՞ք թէ վազը ի՞նչ փորձանք պի-
տի պատահի: Վազը փետրվարի 4ն է, օ՛ր աղետալի, յետին պայ-
մանաժամ զոր այս տունին տէրը տուած է ինձ. եթէ այս գիշեր
սենեկիս վարձքը չվճարեմ, վազը մեծ աղջիկս, ես, կնիկս իր տեն-
դովը, պզտիկ աղջիկս իր վէրքովը, ամէնքս ալ ասկէ պիտի ար-
տաքսուինք, դուրս նետուելով առանց պատասպարանի փողոցը պի-
տի մնանք, պուլվարին վրայ պիտի մնանք անձրեւին տակ. ձիւ-
նին տակ կենալով: Ահա վիճակս, պարոն: Չորս եռամսեայ, այ-
սինքն մէկ տարուան վարձք պարտք ունիմ որ է վաթսուն ֆը-
րանք:

Ժօնարէթ կը ստէր: Չորս եռամսեայն քառսուն ֆրանք կ'ընէր՝
և չէր կրնար չորս եռամսեայ պարտուորիլ քանի որ Մարիուս՝ դեռ
վեց ամիս չկար՝ երկու եռամսեայն վճարած էր:

Պ. Լըպլան գրպանէն հինգ ֆրանքնոց մը հանեց և սեղանին
վրայ նետեց:

Ժօնարէթ ժամանակ ունեցաւ իր մեծ աղջկան ականջին մըր-
մըռալու:

— Անդգամը. ի՞նչ ընեմ ես հինգ ֆրանքը: Աս և ոչ իսկ
աթուրիս և ապակիիս արժէքն է: Եկո՛ւ ատ՛ ծախս ըրէ՛ ասանկ
մարդերու համար:

Սակայն Պ. Լըպլան թխգոյն մեծ վերարկու մը հանելով զոր
իր կապտագոյն վերարկուին վրայէն հագած էր՝ աթուրին կունակին
վրայ նետած էր:

— Պ. Յապանթու, ըսաւ, վրաս հինգ ֆրանք ունիմ միայն՝

բայց հիմա աղջիկս տուն պիտի տանիմ, և այս իրիկուն դարձեալ
հոս պիտի գամ. ըսիք թէ պարտաւոր էք այս գիշեր վճարել, այն-
պէս չէ՞:

Ժօնարէթի դէմքը տարօրինակ արտայայտումով մը լուսաւո-
րեցաւ:

— Այո՛, տէր իմ յարգապատիւ: Այս իրիկուն ժամը ութին
տան տիրոջս տունը երթալու պարտաւոր եմ:

— Ժամը վեցին հոս պիտի ըլլամ, և վաթսուն ֆրանքը պիտի
բերեմ:

— Տէր իմ, բարեբար, պօռաց ժօնարէթ մօլեգին:
Եւ կամաց մը շարունակեց.

— Կնի՛կ, աղէկ նայէ իրեն:

Լըպլան գեղանի աղջկան թեւը մտաւ դարձեալ և դէպ ի
շուրջ դառնալով.

— Այս իրիկուն, բարեկամներ, ըսաւ:

— Ժամը վեցին, այնպէս չէ՞, հարցուց ժօնարէթ:

— Չիշք ժամը վեցին:

Նոյն պահուն ժօնարէթի մեծ աղջիկը աթուրին վրայ ձգուած
վերարկուն տեսնելով.

— Պարոն, ըսաւ, մտցաք առնել ձեր վերարկուն:

Ժօնարէթ ահարկու կերպով մը ուսերը վեր ընելով անգամ
մը աղջկանը նայեցաւ շանթաձիգ նայուածքով մը:

Պ. Լըպլան ետեւը դարձաւ և ժպտելով պատասխանեց.

— Չեմ մոռնար, այլ կը թողում:

— Ո՛ր պաշտպանդ իմ, ըսաւ ժօնարէթ, ո՞ր վեհազն բարեարդ
իմ, կարտասուեմ երախտագիտութեամբ: Ներեցէ՛ք որ մինչեւ կառ-
քը տանիմ ձեզի:

— Եթէ դուրս պիտի ելլէք, կրկնեց Պ. Լըպլան, առէ՛ք սա
վերարկուն: Ստուգիւ սաստիկ ցուրտ կայ:

Ժօնարէթ երկրորդ անգամ ըսել տալու հարկ չթողուց: Ան-
միջապէս կռնակը անցուց գորշագոյն վերարկուն:

Եւ երեքը մէկ դուրս ելան, ժօնարէթ օտարականներուն առ-
ջեւէն երթալով:



ՉԼՈՒԽ Ժ.

ՐԷՃԻԻ ԿԱՌՔԵՐՈՒՆ ՎԱՐՁՔԸ ԵՐԿՈՒ ՁՐԱՆՔ Է ԱՄԷՆ ՄԷԿ ԺԱՄԻՆ ՀԱՄԱՐ

Մարիուս այս տեսարանը ամէն պարագաներովը տեսած էր՝ այլ սակայն իրապէս բան մը տեսած չէր. Աչքերը նորաօրի օրիորդին վրայ յառեր էին անդուլ. օրիորդին դէպ ի սենեակը առած առաջին քայլէն ի վեր՝ կրնանք ըսել թէ՛ Մարիուսի սիրտը բոլորովին բռնած և պաշարած էր զայն. Անոր գալէն մինչև երթալը Մարիուս ապրած էր այն հիասքանչ կեանքով որ ամէն նիւթական ըմբռնումները կը դադրեցնէ և հողին ամբողջապէս միայն մէկ կէտի մը վրայ կը գահավիժէ. Կը նայէր ակնապինջ չէ թէ այն աղջկան այլ այն լոյսին որ անդուսեայ լոթիկ և թաւիչէ փեղոյր մը ունէր՝ Եթէ Սիրիուս աստղը սենեակը մտած ըլլար, աւելի սաստիկ շատցում չպիտի տար Մարիուսին:

Մինչդեռ անտիական օրիորդը ծրարը կը քակէր, զգեստները և վերմակները կը բանար, բարեսիրապէս հիւանդ մօրը և կատակցաբար վիրաւոր աղջկան հարցումներ կընէր. Մարիուս անոր ամէն շարժումները կը դիտէր, ամէն խօսքերը լսելու կը ջանար՝ Կը ճանչնար անոր աչքերը, ճակատը, գեղեցկութիւնը, հասակը, քայլը, բայց ճայնին հնչիւնը չէր ճանչնար. Կարծած էր թէ Լիւքսէնպուրկի մէջ անոր քանի մը խօսքը լսած է, բայց կատարելապէս ապահով չէր լսած ըլլալուն: Իր կեանքէն տասը տարի կուտար՝ անոր խօսիլը լսելու, այն երաժշտութենէ մաս մը առնելով հողիին մէջ պահելու համար: Բայց ամէն բան անլսելի կը մնա՞ր ժօնարէթի ողորմելի վայնասուններուն և շեփորական աղմուկներուն պատճառաւ: Մարիուս հիացումով գրաւուած ժամանակ, միանգամայն իրապէս կը բարկանար ժօնարէթին դէմ. Գեղանի օրիորդին կը նայէր անընդհատ և սիրագին: Չէր կրնար երեւակայել թէ իրօք այն երկնային արարածն էր այն գոր այն գարշելի մարդերուն և սոսկալի խուցին մէջ կը նշմարէր: Կը կարծէր թէ գորտերու մէջ կօլիպրի (*) մը կը տեսնէ:

Երբ դուրս ելաւ գեղանի աղջիկը, Մարիուս ուղեց անմիջապէս ետեւէն երթալ, հեռքը չթողուլ, չբաժնուիլ մինչև գիտնալը թէ ո՛ւր կը բնակի, գէթ դարձնալ չկորսնցընել զայն՝ այսպիսի հրաշքով մը վերստին գտնելէն ետք: Վար ցատկեց դարանէն և փեղոյրը առաւ: Երբ ձեռքը պարզունակի սողնակին կը տանէր՝ դուրս ելլելու համար, բան մը եկաւ միտքը. և կանգ առաւ: Ներբանցքը երկայն, սանդուխը ցից, ժօնարէթ ալ շաղակրատ էր. Գ. Լըպլան անշուշտ տակաւին կառքը մտած չէր. հետեւաբար նրբանցքին մէջ, կամ սանդուղին վրայ, կամ շէմին վրայ եթէ ետ դառնալով Մարիուսը տեսնէր այս տունին մէջ, անշուշտ պիտի խոսվուէր, և նորէն անոր ձեռքէն ազատելու միջոց պիտի գտնէր, և այս անգամ ալ Մարիուսին յոյսն ի դերև կելլէր: Ի՛նչ ընեմ, սպասեմ արդեօք քիչ մը, կըսէր իրովի Մարիուս. բայց սպասելու ատենս կառքը կրնայ մեկնիլ: Մարիուս վարանումի մէջ էր: Վերջապէս վտանգը աչքը առաւ, և սենեկէն դուրս ելաւ:

Նրբանցքին մէջ ալ ոչ ոք կար: Ի՛նչ ի սանդուղը վազեց: Սանդուղին վրան ալ ոչ ոք կար: Շուտ մը իջաւ, պուլվարը հասաւ ճիշդ այն պահուն ուր կառքի մը Բըթի-Պանքիէի փողոցին անկիւնէն դառնալը և Բարիզ վերադառնալը տեսաւ:

Մարիուս վազելով դնաց դէպ այն կողմը. երբ պուլվարին անկիւնը հասաւ, նորէն տեսաւ այն կառքը որ Մալթարի փողոցին կուգար արագապէս. կառքը արդէն բաւական հեռու էր, և ամենեւին կարելի չէր հասնիլ անոր քով. Ի՛նչ ընէր. մի՞թէ վազէր. անկարելի բան. մանաւանդ թէ Գ. Լըպլան իր նստած կառքին մէջ անշուշտ պիտի տեսնէր անոր այսպէս վազելով կառքի մը ետեւէն երթալը, և պիտի ճանչնար զայն: Նոյն պահուն, — Ի՛նչ ան-

(*) Կօլիպրի, փոքր և գունեղ թռչուն մըն է շատ գեղեցիկ:

լուր և հրաշալի դիպուած, — Մարիուս Բէթիի երկանիւ կառք մը նշմարեց որ պուլվարին վրայէն պարապ կ'անցնէր: Մտածելու հարկ չկար. պէտք էր մտնել այս երկանիւ կառքը և Պ. Լըպլանին կառքին ետեւէն երթալ: Ասիկայ ապահով, ազդու և անվտանգ միջոց մըն էր:

Մարիուս նշան ըրաւ կառապանին որ կենայ և պուռաց.

— Ժամի վրայ հաշուելով:

Մարիուս փողակապը դրած չէր. վրայի թիկնոցը ամէն օրուան հին թիկնոցն էր որու քանի մը կոճակները փրթած էին, իսկ շարժելը կուրծքին վրայի ծալքերուն մէկուն քովէն խզուուած էր:

Կառապանը կանգ առաւ, աչքերը թարթեց (cligner) և դէպի Մարիուս երկնցուց ձախ ձեռքը իր ցուցամատը բոյթին հետ մեզմիկ շփելով:

— Ի՞նչ, ըսաւ Մարիուս:

— Կանխիկ վճարէ, ըսաւ կառապանը:

Յիշեց Մարիուս թէ վրան տասնըվեց սու ունէր միայն:

— Ո՞րքան, հարցուց:

— Քառասուն սու:

— Ի դարձին կը վճարեմ:

Կառապանը՝ փոխանակ պատասխան մը տալու՝ Լա Բալիսի երգանակը սուլեց և երիվարը մտրակեց:

Մարիուս մտորագին կերպարանքով մը երկանիւ կառքին հեռանալուն նայեցաւ: Քսան չորս սուի համար՝ զոր չունէր՝ իր ուրախութիւնը, երանութիւնը, սէրը կը կորուսէր. նորէն խաւարով կը պաշարուէր. աչքը բացուած էր, այլ հիմայ նորէն կը կուրծքէն Դառնապէս՝ և պէտք է ճիշդը ըսել՝ սաստիկ վիշտով մը յիշեց այն հինգ ֆրանքնոցը զոր նոյն օր առտուն այն թշուառական աղջկան տուած էր: Եթէ քովը ըլլար այն հինգ ֆրանքնոցը, պիտի աղափառէր, պիտի վերածնէր, լիմպուէն և խաւարէն պիտի ելլէր. առանձնութենէ, թախծութենէ, այրիութենէ պիտի ազատուէր. իր ճակատագրին սեւաթոյր թելը նորէն պիտի կապէր այն ոսկեղէն գեղեցիկ թելին հետ որ պահ մը առաջ իր առջև կը ծիար և որ երկրորդ անգամ կտրուած էր: Տունը դարձաւ յուսաբեկ:

Մարիուս կրնար ըսել իրովի թէ Պ. Լըպլան խօսք տուած էր իրիկունը դարձեալ գալու. և թէ այս անգամ անոր ետեւէն երթալու համար կը պարտաւորէր լաւագոյն կերպով պատրաստուիլ. բայց Մարիուս հոգեով սրտով գեղանիին նայելու զբաղելով հազիւ հազ լսած էր Պ. Լըպլանին խոստումը:

Երբ սանդուղէն վեր պիտի ելլէր, պուլվարին միւս կողմէն Ժօնտրէթը նշմարեց որ Պարիէր Տէ Կօպլէնի փողոցին ամայի պատին քովն էր «մարդասէրին» վերարկուովը պլլուած, և կը խօսակցէր կասկածելի կերպարանք ունեցող այն մարդերէն մէկուն հետ զոր սովորութիւնն եղած է քաղաքադուռերու քափառիկներ անուանել. մարդէր որոնք երկդիմի կերպարանք, կասկածելի մեխաօսութիւն ունին. որոնք շարախորհուրդ կ'երեւան և որոնք գրեթէ սովորաբար ցորեկը կը քնանան, ուրկէ ներելի է ենթադրել թէ զիշերը կ'աշխատին:

Այս երկու մարդերը որ յորձանքով եկող ճիւղին տակ անշարժ կը խօսէին, խուճը մը կը կազմէին զոր ոստիկան մը անշուշտ պիտի կրնար դիտել և զոր սակայն Մարիուս հազիւ հազ նշմարեց:

Թէև վշտագին մտատանջութեամբ մը գրաւուած էր Մարիուս, բայց և այնպէս ստիպուեցաւ ըսել իրովի թէ քաղաքադուռերու այն թափառիկը (rôdeur) որու հետ կը խօսէր Ժօնտրէթ, կը նմանէր Բրէնթանիէ ըսուած, Պիկրընայլ ըսուած Բանչօ անուն մէկու մը զոր Գուրֆէյրագ անգամ մը ցուցուցած էր իրեն, և որ թաղին մէջ իբր գիշերային բաւական վտանգաւոր շրջող մը կը նկատուէր: Նախորդ գիրքին մէջ այս մարդուն անունը տեսանք արդէն: Այս Բրէնթանիէ, Պիկրընայլ ըսուած Բանչօն ետքէն բազմաթիւ եղեռնական դատերու մէջ գտնուեցաւ, և անկէ ետք հուշակաւոր անառակ մը եղաւ: Այն ատեն տակաւին անուանի առանակ մըն էր միայն: Այսօր աւանդութիւն մըն է աւազակներու և մարդասպաններու մէջ: Նախորդ իշխանութեան վերջերը աւազակութեան դաս կուտար: Եւ երեկոյին գիշերուան մութը տիրած ժամանակ ուր խուճբերը կը կազմուին և ցած ձայնով կը խօսին, բանտարկեալները Ֆօրսի (բանտ) Ֆօս-օ-Լիօն ըսուած գաւիթը խմբուելով անոր վրայ կը խօսակցէին: Այս բանտին մէջ, ճիշդ հոն ուր գիշերապահներու ճամբուն տակէն արտաքնոցի խողովակը

կ'անցնի, — այս խողովակը 1843, ն երեսուն բանտարկեալներու ան-
լուր փախուստին ծառայեց ցերեկով, — ուղղը կրնայ այս ար-
տաքնոցին սալաքարին վերեւը տեսնել անոր ԲԱՆՇՕ անունը զոր
անգամ մը փախչելու փորձ մը ըրած ժամանակ ինք յանդգնաբար
քանդակած էր պահնորդներու պատին վրայ: Ոստիկանութիւնը
1832ին արդէն հսկողութեան տակ դրած էր զայն, բայց Բանջօ
տակաւին մեծ գործերու ձեռնարկած չէր:

Գ. Ա. ՈՒՒԽ Ժ. Ա.

ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԲՆԵԼ ՎՇՏԻՆ

Մարիուս տունին սանդուղէն վեր ելաւ յամրաքայլ. երբ ի՛ր
խուցը մտնելու վրայ էր, նրբանցքին մէջ ժօնարէթի մած աղջիկը
տեսաւ որ իր ետեւէն կուգար: Մարիուս ատելութիւն մը զգալով
այս աղջիկը տեսնելով, վասն զի անոր քովը էր իր հինգ ֆրանքը
զոր չէր կրնար ետ ուզել վասն զի շատ ուշ էր, երկանիւ կառքը
ալ գացած, և 9. Լըպլանի կառքն ալ շատ հեռացած էր: Մարի-
ուս անհաշտ թէ ետ ուղելու ալ ըլլար հինգ ֆրանքը, աղջիկը չպիտի
տար: Ինչ մը առաջ իրենց սենեակը եկող անձերու տունին վրայօք
անոր հարցումներ ընելն ալ աւելորդ էր անշուշտ. այն չէր գիտել
անոնց ո՛ւր բնակիրը, վասն զի Ծապանթու ստորագրուած նամակին
հասցէն էր Ա. պարոն բարեգործ Սեմ-ժագ-տիւ-Հօ-Բա եկե-
ղեցոյ:

Մարիուս իր սենեակը մտաւ և դուռը հրեց ետեւէն:
Չգոցուեցաւ դուռը. ետեւը դարձաւ Մարիուս և տեսաւ
ձեռք մը որ կիսաբաց դուռը կը բռնէր չգոցուելու համար:
— Ի՞նչ է այն, ո՞վ է այն, հարցուց Մարիուս:
Դուռը բռնողը ժօնարէթին աղջիկն էր:
— Դ՞ո՞ւր էք, կրկնեց Մարիուս գրեթէ խստիւ: Դա՞րձեալ
դուք էք: Ի՞նչ կ'ուզէք:

Աղջիկը խոհուն կ'երեւար և չէր նայէր: Առաւօտուան հա-
մարձակութիւնը չունէր հիմա: Ներս մտած չէր և նրբանցքին ըստ-
ուերին մէջ կը կենար ուր Մարիուս կիսաբաց դուռէն կը նշմարէր
զայն:

- Է՛, վերջապես պիտի պատասխանէ՞ք թէ ոչ: Ի՞նչ կ'ուզէք:
- Աղջիկը անոր վրայ պարտացուց իր տխուր նայուածքը ուր
գարծես թէ տեսակ մը ճառագայթ կը վառէր աղօտաբար, և ըսաւ.
- Տրտում կ'երեւաք, պարոն Մարիուս: Ի՞նչ ունիք:
- Ե՞ս, ըսաւ Մարիուս:
- Այո՛, դուք:
- Բան մը չունիմ:
- Այո՛, ունիք:
- Ոչ:
- Ես կ'ըսեմ թէ ունիք:
- Հանդարտ ձգեցէք զիս:

Մարիուս նորէն հրեց դուռը, բայց աղջիկը ձեռքը չբաշխելով
զուան վրայէն:

— Իրաւունք չունիք այդպէս վարուելու հետս, ըսաւ: Թէև
հարուստ չէք, բայց այս առտու բարեպէս վարուեցաք հետս: Հի-
մա նայնպէս վարուեցէք: Ստակ տուիք ինձի որ հաց ուտեմ. հի-
մակ ալ ըսէք ինձ թէ ի՞նչ ունիք: Յայտնի կ'երեւայ թէ վիշտ մը
ունիք: Չեմ ուզեր որ վիշտ աւնենաք: Ի՞նչ ընել պէտք է ասոր
համար: Կրնա՞մ ձեզ ծառայութիւն մը ընել: Գործածեցէք զիս:
Ձեր գաղտնիքները չեմ հարցուներ, պէտք չունիք յայտնելու ինձ
զանոնք, բայց վերջապէս կրնամ օգտակար ըլլալ: Կրնամ օգնել
ձեզ, քանի որ հօրս կ'օգնեմ: Երբ հարկ ըլլայ նամակներ տանիլ,
տունը երթալ, դուռնէ դուռ հարցնել, հասցէ մը գտնել:

մէկու մը ետեւէն երթալ, իմ ձեռքէս կուգայ այդ ամէնը: Արդ ուրեմն կրնաք ըսել ինձ ինչ որ ունիք. կ'երթամ խօսելու որոնց հետ որ պէտք է. երբեմն մարդ մը մարդերու հետ կը խօսի, և ահա կրնամ գիտնալ ինչ որ հարկէ գիտնալ, և ամէն բան կը կարգադրուի: Պատրաստ եմ ձեզ ծառայելու:

Մարիուսի մտքէն գաղափար մը անցաւ: Մարդս երբ իյնալը կ'զգայ, կայ՛յ ոտս մը զոր առ ոչինչ համարէ:

Ժօնտրէթի աղջկան մօտեցաւ:

— Մտի՛կ ըրէ... ըսաւ անոր:

Աղջիկը Մարիուսի խօսքը ընդմիջեց ուրախութեամբ մը որ իր աչքերուն մէջ կը փալատակէր:

— Ո՛հ, ապրիք, այդպէս դուդեկով խօսեցէք հետս. աւելի սիրելի է ինձ դու քան թէ դուք ըսուիլը:

— Լա՛ւ, կրկնեց Մարիուս, դո՛ւն ըերթի՛ր հոս այն ծեր պարտնձ այն աղջկան հետ, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Ո՛ւր է անոնց տունը, գիտե՞ս:

— Ոչ:

— Գտի՛ր և ըսէ ինձի:

Ժօնտրէթուհիին նայուածքը արտօնւած ըլլալէ դադրելով ուրախութեամբ համակուած էր. հիմա ուրախ ըլլալէ դադրելով արջութեամբ համակուեցաւ:

— Այդ է ձեր ուղածը, հարցուց Մարիուսին:

— Այո՛:

— Մի՛թէ կը ճանչնաք զանոնք:

— Ոչ:

— Այսինքն, կրկնեց ուժգնակի, չէք ճանչնար զնէ և կուղե՞ք ճանչնալ:

Այս գանոնքը որ գնէի փոխուած էր, չգիտեմ ի՛նչ յայտարարուած և դառնալի բան մը ունէր:

— Վերջապէս, կրնա՞ս, ըսաւ Մարիուս,

— Գեղանի օրիորդին հասցէն պիտի տամ ձեզի:

Այս գեղանի օրիորդ բառերն ալ նուրբ նշանակութիւն մը ունէին որ Մարիուսին սիրտը նեղացուց: Մարիուս կրկնեց.

— Վերջապէս ինչ և է. հօրը և աղջկան հասցէն, անոնց հասցէն կ'ուզեմ. կրնա՞ս գտնել:

Աղջիկը ուզակի Մարիուսին նայելով, ըսաւ.

— Ի՛նչ պիտի տաք ինձի:

— Ի՛նչ որ պիտի ուզեա՛ս:

— Ի՛նչ որ պիտի ուզեմ:

— Այո՛:

— Հասցէն պիտի ունենաք:

Աղջիկը վար ըրաւ գլուխը, ապա յանկարծական շարժումով մը քաշեց դուռը որ գօցուեցաւ:

Մարիուս մինտի մնաց իր սենեակին մէջ:

Աթոռի մը վրայ նստաւ իյնալու պէս, գլուխը և երկու արմուկները անկողինին վրայ կոթնցուց և պաշարուեցաւ այնպիսի մտածումներէ զոր չէր կրնար ամփոփել և կարծես թէ գլուխը կը դառնար: Իր ուղեղին մէջ խառն ի խառն դիզուած էին ինչ որ առաւօտէն ի վեր տեղի ունեցած էր, այսինքն հրեշտակին երեւալը, աներեւութանալը, ինչ որ ժօնտրէթի աղջիկը քիչ մըն ալ ըսած էր իրեն, և յոյսի նշոյլ մը որ անբաւ յուսահատութեան մը մէջ կը ծփար:

Յանկարծ իր մտախոհութենէն սթափեցաւ ուժգնակի:

Ժօնտրէթի բարձր և բիրտ ձայնը լսեց որ յետագայ խօսքերը կ'ըսէր, խօսքե՛ր որոնք իրեն համար տարօրինակ կարեւորութիւն մը ունէին:

— Կը կրկնեմ թէ ապահով եմ և թէ կը ճանչնամ զինքը:

Ժօնտրէթ որո՞ւ վրայ կը խօսէր: Զո՞վ ճանչցած էր. Պ. Լըպլանը. «Իր Իւրսիւլին» հայրը. ի՛նչ, մի՛թէ ժօնտրէթ կը ճանչնար զայն: Մարիուս ասանկ յանկարծական և անակնկալ կերպով մը վերջապէս ալ պիտի ստանա՞ր այն ամէն տեղեկութիւնները առանց որոյ իր կեանքը նոյն իսկ իրեն համար միթիւն էր. ա՛լ պիտի գիտնա՞ր վերջապէս թէ ո՞վ էր իր սիրածը, թէ ո՞վ էր այն երիտասարդուհին, նաև անոր հայրը. այն միթութիւնը որ կը պաշարէր զանոնք, ա՛լ վերջապէս պիտի փարատէ՞ր ուրեմն. Ա՛հ, սո՛ւրբ Աստուած:

(Զ. Հսսր)

(ԹՇՈՒՆԱՆՆԵՐ 71)

Իարանին վրայ աւելի ուստեց քան թէ ելաւ, և միջնորմին
պզտիկ ծակին մօտեցաւ դարձեալ նայելու համար:
Նորէն կը տեսնէր ժօնարէթի որջին ներսը:

Պ. Լ. ՈՒՆԻ Վ. Բ.

Պ. Լ. ՊԱՆԵՆԻ ՀԻՆԳ ՅԻՍՆԲԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ընտանիքին տեսքը գրեթէ ամփոփօս մնացած էր, վասն զի
կինն և աղջիկները ծրարին պարունակածները առնելով ասուէ
զանկպաներ և շապիկներ հագած էին: Երկու անկողիններուն վը-
րան ալ երկու նոր վերմակ նետուած էր. այս էր միայն եղած փո-
փոխութիւնը:

Ժօնարէթ յայտնի է թէ նոր եկած էր դուրսէն: Տակաւին
չնչասպառ կ'երեւար: Աղջիկները բուխերիկին քով գետինը նստած
էին, և առջինէկը կրտսերին վիրաւոր ձեռքը կը դարմանէր: Կինը
բուխերիկին մօտակայ խշտեակին վրայ կարծես թէ սմքեր էր զար-
մանալի դէմքով մը: Ժօնարէթ խուցին մէջ աջ ձախ կ'երթեւեկէր
մեծաքայլ: Աչքերը տարօրինակ կ'երեւային:

Կինը որ էրկանը առջեւ վեհերոտ և շուարուժով համակուած
կերեւար, համարձակեցաւ ըսելու անոր.

- Իրա՞ւ կ'ըսես: Ապա՞նովապէս գիտե՞ս:
- Զարմանալի՛ հարցում: Ութը տարի առաջ էր. այո՛, կը
ճանչնամ զինքը: Ա՛հ, կը ճանչնամ, իսկոյն ճանչցայ թէ ո՛վ է:
Զարմանք որ անմիջապէս աչքիդ չղարկաւ:

— Ոչ:

— Բայց ըսի քեզ որ ուշադրութիւն ընես. հասակը նոյնը,
դէմքը նոյնն է. հազիւ թէ աւելի ծեր է. կան մարդիկ որոնք չեն
ծերանար, չգիտեմ թէ ի՞նչ կ'ընեն որ չեն ծերանար. ձայնն ալ
նոյնն է: Աւելի մաքուր հագուած է. ահա այս է միայն փոփոխու-
թիւնը: Ա՛հ, սմսեղո՛ւկ ծերուկ, հիմակ ա՛լ բռնեցի քեզի, կեցի՛ր:
Կանգ առնելով իր աղջիկներուն ըսաւ.

— Դուք ելէք գացէք ասկէ: Շա՛տ զարմանալի բան որ ան-
միջապէս աչքիդ չղարկաւ այդ մարդը:

Աղջիկները հնազանդելու համար ոտք ելան:

— Իր վիրաւոր ձեռքովը, թոթովեց մայրը:

— Օգ առնելով ցաւը պիտի մեղմանայ, ըսաւ ժօնարէթ: Գացէ՛ք
Յայտնի էր թէ ժօնարէթ այն մարդոց կարգէն էր որոնց նե-
րելի չէ դիմադարձութիւն ընել: Դուրս ելան աղջիկները:
Մինչդեռ դռնէն դուրս կ'ելլէին, հայրը առջինէկին թեւը
բռնեց, և մասնաւոր ձայնով մը ըսաւ անոր.

— Ծիշդ ժամը հինգին հոս պիտի գտնուիք երկուքնիդ ալ:

Պէտք պիտի ունենամ ձեզի:

Մարիուս կրկնապատկեց ուշադրութիւնը:

Ժօնարէթ եքք մինակ մնաց կնիկին հետ, նորէն սկսաւ քալել
սենեակին մէջ և լռելեայն երկու կամ երեք անգամ շրջան ըրաւ
ծայրէ ի ծայր: Յետոյ վրայի կնային շապիկին ստորին մասը իր
բանթալօնին գօտիին մէջ խօթեց և իջեցուց. քանի մը վայրկեան
եւս անցաւ:

Յանկարծ դէպ իր կնիկը դարձաւ, և թեւերը կուրծքին վրայ
դնելով պօռաց.

- Կ'ուզե՛ս որ քեզ ուրիշ բան մըն ալ ըսեմ. օրիորդը...
- Է՛, ըսէ նայիմ, ի՞նչ է օրիորդը, պատասխանեց կինը:
- Մարիուս չէր կրնար կասկածիլ. իրօք անոր վրայ էր խօսքը:
Նուանդազին անձկութեամբ մտիկ կ'ընէր: Իր բոլոր կեանքն ակամջ-
ներուն մէջն էր:

Բայց ժօնարէթ ծուած և կնոջը ցած ձայնով բան մը ըսած էր:
Յետոյ կանգնեցաւ, և բարձր ձայնով վերջացուց խօսքը:

— Աճ է,

— Ան որ... ըսաւ կինը:

— Ան է հա', ըսաւ էրիկը:

Բաւ չենք գտներ որ կարենանք մեկնել ինչ որ կը պարունա- կէր կնոջը այս ա՞ն որ...ը: Այս խօսքին մէջ ամփոփուածն էր զարմանք, կատողութիւն, ատելութիւն, բարկութիւն որոնք հրէշա- ցին գտնուի մը հետ խառնուած և միացած էին:

էրիկը կնկան ականջին քանի մը բառ ըսելով, անշուշտ օրիորդին անունը տալով անա այս ամենի և սմբած կինը արթնցաւ, և պօզալի ըլլալէ դադարելով անարկու կերպարանք մը առաւ:

— Անկարելի բան, պոռաց: Երբ կը մտածեմ թէ իմ աղջիկնե- րը բողոքն կը քայլեն և բոպա մը չունին որ հազնին: Ի՞նչ. սըն- դուսէ մաշկեակ մը, թաւչէ փեղոյր մը, մեծաքսեայ կիսաձեւ կօ- շիկներ և ուրիշ բաներ, որոնք ամէնը մէկ երկու հարիւր Ֆրանքէն աւելի կ'արժեն. հագո՛ւստ մը զոր տեսնողը պիտի կարծէ թէ աղ- նիւ օրիորդ մըն է ան. ոչ, կը սխալիս, բարեկամ, ասիկայ ան չէ՛ բայց նախ դիտէ՛ որ միւսը սոսկալի տգեղ մըն էր. ասիկայ գէշ չէ. իրօք կսեմ թէ ասիկայ գէշ չէ. ասիկայ չկրնար ա՛ն ըլլալ:

— Ես ալ կ'ըսեմ թէ ան է: Պիտի տեսնես:

Ժօնտրէթի կնիկը երբ այս բացարձակապէս հաստատական պա- տասխանը առաւ, իր լայն դէմքը՝ որ կարմիր և խարտիեալ էր վեր ըրաւ և ձեղունը նայեցաւ տձեւ նայուածքով մը: Նոյն պա- հուն այս կինը իր էրիկէն աւելի անարկու երեւցաւ Մարիուսին: Մատակ վազրի մը պէս նայող մատակ խող մըն էր այն:

— Ի՞նչ, կրկնեց կինը, ուրեմն այն մուրացկան լակո՞տն է այս սոսկալի գեղեցիկ օրիորդն որ կարեկից կերպարանքով մը աղջիկ- ներուս կը նայէր: Ո՛հ, ո՛ւր էր թէ կարող ըլլայի ոտքերուս տակ առնել և սանդաղներովս կոխկրտելով փորը դուրս թափել:

Անկողինէն վար ցատկեց և պահ մը ոտքի վրայ կեցաւ՝ զլուխը բաց, ուռնգերը ուռեցած, բերանը կիսաբաց. և ձեռքերը ալ պրկուած ու դէպ ետեւը նետուած: Ապա իյնալու պէս նորէն երկնցաւ խշտակին վրայ:

Մարդը կ'երթեւեկէր առանց ուշ դնելու իր էգին:

Քանի մը վայրկեան անցաւ լուելեայն. մարդը կնոջը մօտեցաւ և կանգ առաւ անոր առջև՝ թեւերը կուրծքին վրայ առնելով ինչ- պէս ըրած էր պահ մը առաջ:

— Կուզե՞ս որ քեզ օւրիշ բան մըն ալ ըսեմ:

— Ինչ հարցուց կինը:

Կարճ և ցած ձայնով պատասխանեց,

— Ա՛լ հարստացայ:

Կինը էրիկին նայեցաւ այն նայուածքով որ կը նշանակէ: Մի՞ թէ փախուկ է հետս խօսողը:

Ժօնտրէթ շարունակեց.

— Նղովի՛ց արմատ. Անթի-մեռի՛ր-եթէ-կրակ-ուռնիս-, ցըր- տահար-մեռի՛ր-եթէ-հաց-ուռնիս, թաղին թաղեցին էի միջեւ հի- սա. ա՛լ այսքանը կը բաւէ. կը բաւէ ա՛լ կրած թշուառութիւնս, ինձի համար, ուրիշներուն համար ալ կրեցի. ա՛լ կատակը մէկդի. ա՛լ ծիծաղաշարժ չերեւար ինձ այս վիճակը, այսքան բառախաղ- ները կը բաւեն, ո՛, Աստուած, ա՛լ կատակ չեմ վերցնեմ, հա՛յրդ յաւիտենական ես ալ պիտի ուտեմ յագենալու համար, ես ալ պիտի խմեմ ծարաւս անցնելու համար. ես ալ կ'ուզեմ շը- ւայթիլ, քնանալ, չբանիլ ամենեւին. սատկելէս առաջ կ'ուզեմ որ կարգը ինձի ալ եկած ըլլայ, կ'ուզեմ քիչ մը միլիոնատէր ըլլալ:

Որչին բոլորտիքը շրջան մը առնելէն ետք.

— Բերիշներուն պէս, շարունակեց:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց կինը:

Գլուխը օրեց. աչքը թարթեց և ձայնը հանեց փողոցներու բը- նագէտի մը պէս որ կ'ուզէ հնարք մը ցուցնել,

— Ի՞նչ ըսել կ'ուզեմ. մտիկ ըրէ՛:

— Կամաց խօսէ՛, ժրմուաց կինը. մի՛ աղքատն բարձր խօսիր. եթէ գործի վրայ պիտի խօսիս, պէտք չէ որ լսուի ըսելիքդ:

— Վա՛չ, ո՞վ պիտի լսէ. դրացի՞ն. քիչ մը առաջ դուրս ելլելը ես տեսայ, Բայց եթէ չելած ըլլայ անգամ, սա առանակին աւա- նակը մի՞թէ կը լսէ. բայց կը կրկնեմ թէ դուրս ելլելը աչքովս տեսայ:

Ասկայն տեսակ մը բնական դրդումով Ժօնտրէթ սկսաւ աւե- լի ցած ձայնով խօսիլ, թէեւ բաւական ցած ձայնով չխօսելուն

համար, Մարիուս կը լսէր անոր խօսքերը: Մարիուս այս խօսակցութիւնը կէտ առ կէտ և ա՛րողջապէս կրցաւ լսել նպաստաւոր պարագայի մը շնորհիւ. այս պարագայն էր ձիւն եկած ըլլալը որով պատճառաւ չէր լսուեր պուլվարէն անցնող կառքերուն աղմուկը:

Ահաւասիկ ինչ որ Մարիուս լսեց.

— Աղէկ մտիկ ըրէ: Բռնուեցաւ Բօշիլար, բռնուած ըսել է. արդէն եղաւ լմնցաւ այս գործը: Ամէն բան կարգի դրուած է: Պէտք եղած անձերու հետ տեսնուեցայ: Այս իրիկուն ժամը վեցին պիտի գայ վաթսուն ֆրանքը բերելու համար, սինլքո՛րը: Տե սա՛ր ի՛նչպէս շակեցի և կլլեցուցի. վաթսուն ֆրանք պարտք ունիմ, ասն տիրոջօ տունը պիտի երթամ, պայմանաժամը փետրը վարի հին կը լրանայ ըսի, ինչ որ ըսի, ամէնն ալ հաւտաց. աւանակ էր, ի՛նչ էր. արդ ժամը վեցին պիտի գայ, այսինքն այն միջոցին ուր դրացին ալ ընթրելու գացած կ'ըլլայ: Պիւրկօն խաթունն ալ քաղաքին մէջ սպասները լուսու վրայ պիտի ըլլայ: Դրացին ժամը տասնը մէկէն առաջ տուն չդառնար: Պզտիկները պիտի հօկեն դուրսը: Դուն պիտի օգնես մեզ: Մարդը մեր գործը պիտի սփայուի լմնցնելու:

— Եւ եթէ չլմնցնէ՞, հարցուց կինը:

Ժօնարէթ սոսկալի շարժում մը ընելով, ըսաւ.

— Մենք ալ զինքը կը լմնցնենք:

Եւ սկսաւ քահ քահ խնդալ:

Մարիուս առաջին անգամն էր որ անոր խնդալը կը տեսնէր: Այս խնդուքը ցուրտ եւ մեղմ էր և սարսուռ կուտար:

Ժօնարէթ շրմինէին քով պահարան մը բանալով, գլխանոց մը առաւ և թեզանիքովը դայն խողանակելէն ետք գլուխը դրաւ:

— Հիմա ես կերթամ, ըսաւ: Տակաւին տեսնուելու մարդեր ունիմ, լաւ տեսակներէն: Պիտի տեսնես թէ ինչպէս գործը պիտի յաջողի: Կարելի եղածին չափ շուտ պիտի դառնամ. շահաւոր գործ մըն է մեր այս կատարելիք գործը, դուն տունը պահպանէ:

Եւ՝ երկու ձեռքը բանթալօնին զրպաններուն մէջ դրած՝ պահ մը կեցաւ խորհելով, յետոյ ազաղակեց.

— Մեծ բարեբաղդութիւն մըն ալ սա է որ ան չճանչցաւ զիս: Եթէ ան ալ զիս ճանչցած ըլլար, ա՛լ չպիտի գար հոս: Պի-

տի փախցնէինք զինքը: Մորուս ազաւեց զիս, վիպական ժօրուսիկս, իմ աղւոր վիպական ժօրուսիկս:

Եւ նորէն սկսաւ խնդալ:

Պատուհանին քով գնաց: Անդադար ձիւն կուգար և երկնից գոր: գոյնը կը դժաւորէր:

— Ի՛նչ սոսկալի օդ, ըսաւ:

Ապա վերարկուն հագնելով:

— Քիչ մը լայն կտրուած է, բայց հոգ չէ, շարունակեց Ժօնարէթ, աղէկ որ թշուառական ծերուկը ինձ տուաւ այս վերարկուն: Եթէ այս վերարկուն չըլլար, չպիտի կրնայի դուրս ելլել, և դարձեալ ամէն բան պարտալի գացած պիտի ըլլար: Տե՛ս թէ ինչպիտի բաներէ կախում ունին դէպքերը:

Եւ՝ գլխանոցը մինչև աչքերուն վրայ իջեցնելով դուրս ելաւ:

Հազիւ թէ դուրսը քանի մը քայլ առնելու ժամանակ ունեցած էր, և ահա դուռը նորէն բացուելով Ժօնարէթի շիկադէմ և ուշիմ կերպարանքը կիսովին երեւցաւ դուռին բաց տեղէն:

— Մոռցայ ըսելու. կրակարանին համար ամուխ առնես:

Եւ կնոջը զենջակին մէջ նետեց հինգ ֆրանքնոց դրամը զոր «մարդասէրը» տուած էր իրեն:

— Կրակարանին համար, հարցուց կինը:

— Այո՛:

— Քանի՞ օխա:

— Չորս օխա:

— Երսուն սու կընէ չորս օխան: Մնացորդովը ընթրիքին պէտք եղածը կ'առնեմ:

— Չէ՛ գա՛:

— Ի՛նչու:

— Մի վատներ հինգ ֆրանքնոցը:

— Ինչո՞ւ:

— Վասն զի ես ալ բան մը պիտի գնեմ:


— Ի՛նչ:

— Բան մը:

— Ո՞րքան պէտք է քեզ:

— Այս կողմերը ու՛ր կայ երկաթեղէն վաճառող մը:

- Մուֆթարի փողոցը :
- Հա՛, աղէկ ըսիր, փողոցին ծայրն է. կրպակը կը տեսնեմ :
- Բայց չըսե՛ս ինձ թէ ո՛րքան պէտք է քեզ այն ծախու առնելու բանիդ համար :
- Երեք Ֆրանքի չափ :
- Ընթրիքին համար շատ բան մը չպիտի մնայ :
- Այսօր ընթրելու օր չէ : Աւելի աղէկ գործ ունինք կառարելու :
- Կը բաւէ այս, գոհա՛րդ իմ :
- Ժժնարէթ կնոջ այս խօսքին վրայ նորէն գոցեց դուռը, և այս անգամ Մարիուս լսեց նրբանցքին մէջէն անոր հեռանալը և սանդուղէն արագօրէն իջնելը :
- Նոյն պահուն Սէն-Մէտարի եկեղեցիէն ժամը մէկ կը զարնէր :



Գ Լ Ո Ւ Ն Ս Ժ Գ .

ԱՌԱՆՁԻՆ ԵՄ ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԾԱԾՈՒԿ ՏԵՂ ՄԸ ՈՒՐ
ՁԵՆ ԽՈՐՀԻՐ ԱՂՕԹԻ ԸՆԵԼ, ՀԱՅՐ ՄԵՐ

Մարիուս թէև մտախօս, բայց և այնպէս՝ ինչպէս ըսած ենք արդէն՝ հաստատ և գործունեայ բնաւորութիւն մը ունէր : Առանձնական մտախոհութեան սովորութիւնները անոր համակիր և կարեկից զգայութիւնները բարգաւաճեցնելով թերևս բարկանալու կարողութիւնը նուազած : այլ սրամտելու կարողութիւնը անեղծ պահած էին. պրահմայի մը պէս բարեօէր և դատաւորի մը պէս անչառ էր. կը գթար գորտի մը վրայ, այլ կը ջախջախէր իժ մը : Արդ Մարիուս իր կեցած տեղէն նայած էր իժերու ծակի մը մէջ Մարիուսի առջև տեսնուածն էր հրէշներու բոյն մը :

— Պէտք է ջախջախել այս թշուառականները, ըսաւ ինքնին : Կը յուսար թէ պիտի պարզուէին զինք շրջապատող կնճիռները, բայց բան մը յայտնուած չէր. ընդհակառակը ամենքն ալ թերևս աւելի անիմանալի եղած էին. աւելի տեղեկութիւն մը առած չէր ոչ Լիւքսէնպուրկի գեղանի պատանուհիին և ոչ ալ այն մարդուն վրայ զոր Պ. Լըպլան կ'անուանէր. հասկցած էր միայն թէ ժժնարէթ կը ճանչնար զանոնք : Այն ըսուած միջին խօսքերէն որոշապէս հասկցած էր միայն թէ դաւաճանութիւն մը կը պատրաստուէր, անյայտ այլ սոսկալի դաւաճանութիւն մը. թէ երկուքն ալ այսինքն հայրը անհրաժեշտաբար և աղջիկն ալ հաւանօրէն մեծ վտանգի մէջ էին. թէ պէտք էր թողաւել զանոնք. թէ պէտք էր ժժնարէթներուն սոսկալի կարգադրութիւնները ապարդիւն ընել և կորել այս սարդերուն ոռոտայնը :

Մարիուս պահ մը ժօնարէթին կինը դիտեց: Կինը սենեակին մէկ խորշէն թիթեղեայ հին հնոց մը քաշած էր, և հին երկաթներ կը խառնէր:

Մարիուս դարանէն վար իջաւ խիստ կամաց մը և ուշադրութիւն ընելով որպէս զի ձայն մը չհանէ:

Մինչդեռ կը համակուէր երկիւղով մը՝ զոր պատուարուած դաւաճանութիւնը կը ներշնչէր, և պփղումով մը՝ զոր ժօնարէթները կուտային իրեն, Մարիուս տեսակ մըն ալ ուրախութիւն կըզգար՝ մտածելով թէ գուցէ արժանի պիտի ըլլայ այսպիսի ծառայութիւն մը ընելու անոր զոր կը սիրէր:

Բայց ինչպէս գործէր. պէտք էր իմաց առ վտանգի ենթարկուած անձերու. բայց ո՛ր գտնար զանոնք քանի որ անոնց ո՛ւր ընտելիւր չէր գիտեր: Պահ մը երեւցած էին իրեն, յետոյ նորէն սուղուեր էին Բարիզի անբաւ անդունդներուն մէջ: Միթէ իրիկունը ժամը վեցին դուռը սպասէր՝ Պ. Լըպլանը եկած միջոցին որոգայթը անոր իմացնելու համար. բայց ժօնարէթ և մարդերը անշուշտ պիտի տեսնէին թէ կը լրտեսէ ինք. վայրն ամայի տեղ մըն էր. անոնք իրարմէ զօրաւոր էին, հետեւաբար պիտի կրնային բռնել զինքը կամ հեռացնել, և այն զոր Մարիուս կ'ուզէր ազատել, պիտի կորսուէր: Ժամը մէկ զարկած էր, դաւաճանութիւնը վեցին պիտի կատարուէր. Մարիուս հինգ ժամ ատեն ունէր գործելու համար:


Մէկ բան կար ընելիք:

Մարիուս հագաւ իր թիկնոցը որ բաւական աղէկ էր դեռ, վիզը թաշկինակ մը կապեց, գլխարկը առաւ և դուրս ելաւ անոնց ձայն ձուն հանելու, իբր թէ մտմուռներու վրայ կը կոխել բոկոտն:

Մանուանդ թէ ժօնարէթին կինը տակաւին հին երկաթեղէնները խառնելու կը պարապէր:

Մարիուս տունէն դուրս ելլելուն պէս Բըթի-Պանզիէի փողոցը գնաց:

Այս փողոցին մինչև կիսավայրը եկած և հասած էր խիստ ջած պատի մը քով, որուն քանի մը տեղերէն կարելի էր ոտտելով անցնիլ և որ անմշակ դաշտի մը վրայ կը նայէր. մտատանջութիւն



Մագասը արժուկովը կը ներէ միւսը : Լջ 1 17

Պատկեր թիւ 61

ԹՅՆՈՒՄՆԵՐ Զ .

ունենալու համար կամաց կամաց կը քալէր. ոտքին դժուարութեամբ չէր լսուէր, վասն զի ձիւնին վրայ կը քալէր: Յանկարծ ձայներ լսեց որոնք խիստ մօտէն կը խօսէին: Ետեւը դարձաւ, փողոցը ամայի էր. ճանճ մը անգամ չկար, թէև կոտորելապէս ցորեկ էր տակաւին, այլ սակայն որոշապէս ձայներ լսեց:

Միտքը նկատ նայիլ պատին վրայէն որու քովէն կ'երթար:

Հոն իրօք երկու մարդ կար որոնք պատին կռթնելով ձիւնին վրայ նստած էին և ցած ձայնով կը խօսէին:

Մարիուս չէր ճանչնար այս երկու կերպարանքները. մին պիտի հագած մօրուանի մարդ մըն էր, միւսն ալ հնոտիներ հագած և մազոտ մարդ մը:

Մօրուանի յունական կրկնօց մը ունէր. միւսին գլուխը բաց էր և մազերուն մէջ ձիւն կար:

Մարիուս գլուխը անոնց վերեւը յառաջացնելով կրնար լսել:

Մազոտը արժուկովը կը հրէր միւսին և կըսէր.

— Բաթրօն-Մինէթի հետ կրնայ յաջողիլ այս գործը:

— Կը կարծե՞ս, ըսաւ մօրուանին: Մազոտն ալ պատասխանեց.

— Ամէն մէկը հինգ հարիւր ֆրանք պիտի առնէ. և հետեւանքն ալ ըլլայ ըլլայ հինգ տարի, վեց տարի, տասը տարի ամէնէն շատը:

Միւսը՝ վարանումով մը և իր յունական գզակին տակ ցրտահար դողալով՝ պատասխանեց.

— Ատիկայ յայտնի բան է: Ասանկ բաներու կարելի չէ հակառակիլ:

— Ես կ'ըսեմ թէ գործը չի կրնար չյաջողիլ, կրկնեց մազոտը: Բան ախպարին մարեկիօքը (*) պիտի լուռի:

Յետոյ սկսան խօսիլ նուագաւոր ներկայացումի մը վրայ զոր առջի օրը կէթէի թատրոնը տեսած էին:

Մարիուս իր ճամբան շարունակեց:

Մարիուսի կը թուէր թէ տարօրինակ կերպով մը պատին ետեւը պահուող և ձիւնին մէջ կծկուող այս մարդերուն մութ խօսքերը թերեւս վերաբերութիւն մը ունէին Ժօնարէթի գարշելի նը-

(*) Տեսակ մը կտոր:

պատակներուն հետ: Գործը անշուշտ ժօնարէթին պատրաստած
դաւաճանութիւնն էր:

Դէպ ի Սէն-Մարտոյի արուարձանն ուղղուեցաւ և հարցուց
կրպակի մը թէ ո՛ւր կար ոստիկանութեան գործակալ մը:

Բօնթուաղի փողոցը և 14 թիւը ցուցուեցաւ իրեն:

Մարիուս հոն գնաց:

Հացագործի մը առջեւէն անցնելու ատեն երկու սու տալով
հաց մը առաւ և կերաւ, մտածելով թէ գուցէ չպիտի ընթրէ:

Ճամբան մինչդեռ կը քալէր, իրաւունք տուաւ Նախախնար-
մութեան: Մտածեց որ եթէ առտուն իր հինգ ֆրանքը ժօնարէթի
առջինէկ աղջիկին տուած չլլար, Պ. Լըպլանին կառքին ետեւէն
գացած պիտի ըլլար և բան մը իմացած չպիտի ըլլար. թէ ժօնար-
րէթի նիւթած դաւաճանութիւնը անարգել պիտի կատարուէր, թէ
Պ. Լըպլան պիտի կորսուէր, և անշուշտ աղջիկն ալ իր հետը



ԳԼՈՒԽ ԺԴ.

ՈՒՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴ ՄԸ ԵՐԿՈՒ ԱՏՐՃԱՆԱԿ

ԿՈՒՏԱՅ ՓԱՍՏԱՐԱՆԻ ՄԸ

Մարիուս Բօնթուաղ փողոցին 14 թիւը հասնելով՝ առջի յար-
կը ելաւ և ոստիկանութեան գործակալը հարցուց:

— Ոստիկանութեան պարոն գործակալը հոս չէ, ըսաւ ծառայ
մը. բայց տեսուչ մը կայ որ անոր տեղակալն է: Կ'ուզէ՞ք խօսիլ
հետը. միթէ ստիպողական է գործը:

— Այո՛, ըսաւ Մարիուս:

Ծառան գործակալին խօսքը տարաւ Մարիուսը: Հոն վանդակի
մը ետեւ ոտքի վրայ կանգնած՝ և կրակարանի մը կռթնած բարձ-
րահասակ մարդ մը կար որ եռօձիկ ընդարձակ թիկնոցի մը ծայ-
րերը կը վերցնէր ձեռքերովը: Կերպարանքը քառակուսի, բերանը
նուրբ և հաստատուն, կիսամօրուքները թանձր, ալեւոր և վայ-
րենաձև, իսկ նայուածքը մարդու գրպանին յատակն անգամ դի-
տելու կարող նայուածք մըն էր: Կրնար ըսուիլ թէ այս նայուածքը
չէ թէ կը թափանցէր այլ կը խուզարկէր:

Այս մարդը գրեթէ ժօնարէթին չափ ահարկու և անապօրոյն
կ'երեւար. երբեմն ամենի շունչի մը հանդիպելը գայլի մը հանդի-
պելէն ոչ նուազ վտանգաւոր է:

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց մարդը Մարիուսին՝ առանց պարոն
ըսելու:

- Հո՞ս է ոստիկանութեան պարոն գործակալը:
- Բացակայ է: Ես եմ իր տեղակալը:
- Խիստ գաղտնի գործի մը համար եկած եմ:

— Պօսեցէ՛ք ուրեմն :

— Եւ խիստ ստիպողական .

— Ուրեմն շուտ խօսեցէք :

Այս հանդարտ և տմարդի մարդը, ահարկու և միանգամայն վտանակի էր : Երկիրը և վտանութիւն կը ներշնչէր : Մարիուս իրողութիւնը պատմեց, ըսելով — Թէ անձ մը զոր տեսքով միայն կը ճանչնար, երեկոյն դաւաճանութեան մը պիտի մատնուէր . թէ որչին կից սենեկին մէջ բնակելով ինքը, Մարիուս Բոնմէրսի՛ փաստաբան, միջնորմին ետեւէն լսած էր բոլոր դաւադրութիւնը . թէ Ժօնարէթ կ'անուանուէր այն ապիրատը որ որոգայթը գաղափարած էր . թէ Ժօնարէթ մեղսակիցներ, քաղքադոնեբոու թափառիկներ պիտի ունենար իր գործակից, որոնց մէկը մանաւանդ Բրէնթանիէ : Պիկրընայլ ըսուած Բանչօ անուն անձ մըն էր . թէ Ժօնարէթին աղջիկները դուրսը պիտի լրտեսեն . թէ ամէնեւին միջոց մը չկար եղելութիւնը իմացնելու այն մարդուն որ վտանգի մէջ էր . վառն զի անոր և ոչ իսկ անունը յայտնի էր . և թէ վերջապէս այս ամէնը երեկոյեան ժամը վեցին տեղի պիտի ունենայ 50-53 թիւ տունին մէջ որ օփիթալի պուլվարին ամէնէն ամայի կողմն է :

Տեսուչը երբ լսեց այս թիւը, գլուխը վերցուց անտարբերութեամբ :

— Ուրեմն նրբանցքին խորի սենեակին մէջ տեղի կ'ունենայ այնպէս չէ՞ :

— Ճիշդ, պատասխանեց Մարիուս, և շարունակեց .

— Մի՛թէ կը ճանչնաք այն տունը :

Տեսուչը պահ մը կեցաւ լռին, յետոյ կօշիկին ներքանը կրակարանին բերանը դնելով որ տաքնայ, պատասխանեց .

— Թերեւս :

Եւ աւելի փողկապին քան թէ Մարիուսին հետ խօսելով ակուաներովը մոմաաց .

— Գործի մէջ հարկաւ փոքր ինչ Բաթրօն-Մինէթ պիտի ըլլայ՝

Այս անունը Մարիուսի ուշադրութիւնը գրգռեց :

— Բաթրօն-Մինէթ, ըսաւ : Իրօք տեղ մը այդ անուն ինտրուիւր լսեցի :

Եւ Բըթի-Պանգիէի փողոցին պատին ետեւը ձիւնին մէջ պատուով մազոտ մարդուն և մօրուանի մարդուն տրամախօսութիւնը տեսուչին պատմեց :

Տեսուչը մրմոաց ակուաներովը .

— Մազոտը Պրիւթօնը պիտի ըլլայ, և մօրուանին ալ Տէօ-Միւիար ըսուած Տըմի-լիարը ըլլալու է հարկաւ :

Նորէն վար ըրած էր արտեւանունքը և կը խորհէր :

— Իսկ Բան տխարին ո՛վ ըլլալը կ'ընդունմարեմ : Անա թիկնոցս այրեցի : Այս անիծեալ կրակարաններուն մէջ միշտ շատ կը դնեն կրակը : Թիւ 50-53 : Կօրպոյի հին կալուածն է այն :

Յետոյ Մարիուսին նայելով ,

— Այն մօրուանիէն և մազոտէն ի դատ ուրիշ մարդ չը տեսա՞ք .

— Նաեւ Բանչօն :

— Տեսակ մը պզտիկ և շաներեօ սրիկայի մը այն կողմերը թափառիւր չտեսա՞ք :

— Ոչ :

— Եւ ո՛չ իսկ անագին յաղթանդամ արձան մը որ Բուսական պարտէզի փղին կը նմանի :

— Եւ ո՛չ իսկ հանած վարած մը որ վաղեմի ծաղրածուի (queuerouge) մը կերպարանքը ունի :

— Ոչ :

— Իսկ չորրորդը ոչ ոք, և ոչ իսկ օգնականները, գործակալներն և ծառաները կը տեսնեն : Չեմ այնքան դարձանար զայն չնչմարելուդ :

— Ոչ : Ի՞նչ տեսակ մարդիկ են այդ ամէն անձերը, հարցուց Մարիուս :

Տեսուչը պատասխանեց .

— Մանաւանդ թէ անոնց ժամանակը տակաւին եկած չէ :

Նորէն լսեց, յետոյ կրկնեց .

— 50-53 . գիտեմ խրճիթը : Անկարելի էր որ ներսը պահուինք առանց նշմարուելու դերասաններէն . եթէ նշմարեն, վտակիլի ներկայացումը ետ ձգելով կը պրծին . այնքան ամկոտ են որ հանդիսականներու առջեւ նեղութիւն կը կրեն : Ատանկ չեմ ուզեր :

ոչ, առանկ չեմ ուզեր: Կ'ուզեմ անոնց երգերը լսել և պարել տալ զանսնք:

Երբ լինցաւ այս մենախօսութիւնը, դէպի Մարիուս դարձաւ, և ուղղակի նայելով հարցուց.

— Կը վախնա՞ք:

— Ի՞նչ բանէ, ըսաւ Մարիուս:

— Այն մարդերէն:

— Եւ ո՛չ իսկ ձեզմէ, պատասխանեց խստութեամբ Մարիուս որ կ'սկսէր նշմարել թէ սօտիկանութեան այս լրտեսը տակաւին պարոն ըսած չէր իրեն:

Տեսուչը աւելի ուշադրութեամբ Մարիուսին նայեցաւ դարձեալ, և տեսակ մը վճռական հանդիսաւորութեամբ կրկնեց.

— Իբր քաջասիրտ և իբր պարկեշտ մարդ կը խօսիք: Գո՞ւշութիւնը ո՞ճիրէն չվախնար և պարկեշտութիւնը իշխանութենէ չվախնար:

Մարիուս ընդմիջեց.

— Լա՛ւ, բայց ի՞նչ պիտի ընէք:

Տեսուչը միայն սօ պատասխանը տուաւ:

— Այն տունին վարձարձակները բանալիներ ունին գիշերը իրենց սենեակը վերադառնալու համար: Անշուշտ դուք ալ ունի՞ք բանալի մը:

— Այո՛, ըսաւ Մարիուս:

— Հիմա ձեր քո՞մն է այն:

— Այո՛:

— Ինձի տուէք, ըսաւ տեսուչը:

Մարիուս բանալին գրպանէն հանեց, և տեսուչին յանձնելով շարունակեց:

— Եթէ կ'ուզէք հաւտալ խօսքիս, շատ մարդ առնելով եկէք:

Տեսուչը արագապէս Մարիուսին նայեցաւ անգամ մը այն նայուածքով որով անշուշտ վօլթէր նայած պիտի ըլլար՝ իրեն ստաւ նաւորի յանգ մը առաջարկող գաւառական ազատէմի անդամի մը: Մէկ շարժումով իր թիկնոցին երկու տնազին գրպանները խօթեց ձեռքերը և երկու պողպատեայ պզտիկ ատրճանակ հանեց, այն

ատրճանակներէն որոնք գու աք բուռն կ'անուանուին: Մարիուսի տուաւ այս ատրճանակները ուժգնակի և կարճ կերպով մը ըսաւ.

— Առէք այս ատրճանակները: Ձեր սենեակը գացէք, հոն պահուեցէք, և թող կարծուի թէ դուրս ելած էք: Լեցուն են առնք, ամէն մէկուն մէջ երկու գնդակ կայ: Ինչպէս ըսիք, պատին վրայ ծակ մը կայ ուրկէ դիտեցիք: Երբ գտն մարդերը, թողէք որ քիչ մը առաջ երթան: Երբ գործը յարմար կէտին հասած և ա՛լ արգիլելու ժամանակը եկած սեպէք, ատրճանակին մէկը նետեցէք: Բայց ոչ այնքան շուտ: Անկէ ետք պէտք եղածը ինձ կը վերաբերի: Ատրճանակ մը պարպեցէք միայն դէպի օդը, ձեզունը, ո՛ւր որ կ'ուզէք վերջապէս, բայց նայեցէք որ շատ շուտ չպարպէք: Սպասեցէք որ գործադրութիւնը սկսած ըլլայ, փաստարան էք և գիտէք ի՞նչ ըսել կ'ուզեմ:

Մարիուս ատրճանակները առաւ և իր թիկնոցին կողի գրպանը դրաւ:

— Այդ գրպանին մէջ ուռոյց մը կը կաղմեն դուրսէն և կ'երևան, ըսաւ սօտիկան տեսուչը: Աւելի աղէկ է բանթալօնիդ գրպաններուն մէջ դնել:

Մարիուս բանթալօնին գրպաններուն մէջ պահեց ատրճանակները:

— Հիմա, շարունակեց տեսուչը, ոչ դուք և ոչ ես կրնանք և ոչ իսկ բոպէ մը կորսնցնել: Ժամը քանի՞ է, երկուք ու կէս: Չըսիք թէ ժամը եօթին պիտի ըլլայ:

— Վեցին, ըսաւ Մարիուս:

— Ժամանակ ունի՞մ, կրկնեց տեսուչը, բայց ճիշդ այնքան որքան պէտք էր ինձ: Ըսածներէս բան մը չմոռնաք: Տա՛նկ կ'ընես ատրճանակը պարպելով:

— Անհոգ եղիք, պատասխանեց Մարիուս:

Եւ մինչդեռ Մարիուս՝ դուռը բանալու և դուրս ելլելու համար՝ ձեռքը դռնափակին կը տանէր՝ տեսուչը ետեւէն պոռայ.

— Աղէկ միտքս եկաւ. եթէ մինչեւ այն ժամանակ ինձի պէտք ունենաք, հոս եկէք կամ մէկը զրկեցէք: Անունս է Ժավէր, տեսուչ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԺՕՆՏՐԷԹ ԿԸ ԳՆԷ ԻՆՉ ՈՐ ՊԷՏՔ Է ԻՐԵՆ

Գանի մը րօպէ ետքը, յա՛նը երեքին միջոցները Գուրֆէյրազ Պօսիւէի հետ պատահաբար Մուֆթարի փողոցէն կ'անցնէր: Զիւնը եւս քան զեւս կը շատնար և անջրպետը կը գրաւէր:

Պօսիւէ Գուրֆէյրազին կ'ըսէր:

— Զիւնի այս բաթիլներուն իյնալը տեսնելով կրնայ ըսուիլ թէ երկինքը սպիտակ թիթեռնիկներու ժանտախտ մը կայ:— Պօսիւէ հագիւ ըսած էր խօսքը, և անա Մարիուսը նշմարեց որ փոքր կը մտնէր դէպ ի պուլվարը երթալու համար, և անսովոր կերպարանք մը ունէր:

- Անա Մարիուսը, ըսաւ Պօսիւէ:
- Տեսայ, ըսաւ Գուրֆէյրազ: Զխօսինք հետը:
- Ինչո՞ւ:
- Գործ ունի:
- Ի՞նչ գործ.
- Չե՞ս տեսներ կերպարանքը:
- Ի՞նչ կերպարանք:
- Մէկու մը ետեւէն գացողի կերպարանքը ունի:
- Ի՞րաւ է, ըսաւ Պօսիւէ:
- Տե՛ս ինչպէս կը նայի, կրկնեց Գուրֆէյրազ:
- Բայց ո՞ր շուտիկին ետեւէն կ'երթայ արդեօք:
- Անշուշտ աղւորիկի մը, աղջիկի մը, պոռնիկի մը ետեւէն:

Սիրահար է ան:

— Բայց, կրկնեց Պօսիւէ, փողոցին մէջ ոչ աղւորիկ, ոչ պոռնիկ և ոչ աղջիկ կը տեսնեմ: Եւ ոչ կին մը կայ:

Գուրֆէյրազ նայեցաւ և պոսաց.

— Մարդու մը ետեւէն կ'երթայ:

Իրօք Մարիուսին առջեւէն և քսան քայլի չափ հեռուէն մարդ մը կը քալէր, որ գլխանոց մը ունէր և որու ալեւոր մօրուսը կը նշմարուէր թէ եւ կռնակի կողմէն կը տեսնուէր մարդը:

Այս մարդը բոլորովին նոր և իրեն համար շատ մեծ թիկնոց մը հագած էր, նաեւ ծուրկ ծուրկ և տիղմէն սեւցած անագին բանթալօն մը:

Պօսիւէ քան քան խնդաց:

— Ո՞վ է այն մարդը:

— Անիկա՛յ, կրկնեց Գուրֆէյրազ, բանահիւս մըն է: Բանահիւսները ճագարի մորթ ծախողներու բանթալօններ և Ֆրանսայի առնակալներու թիկնոցներ կը հագնին բաւական յօժարութեամբ:

— Տեսնենք թէ ո՛ւր կ'երթայ Մարիուս, տեսնենք թէ ո՛ւր կ'երթայ այդ մարդն ալ, ի՞նչ կ'ըսես, երթանք սվոնց ետեւէն:

— Պօսիւէ՛, արծիւդ Մօյի, պօւսաց Գուրֆէյրազ, երեւելի ապուշ մըն ես եղեր: Մի՛թէ լսուած բան է մարդու մը ետեւէն գացող մարդու մը ետեւէն երթալը:

Եւ յանկարծ ետ դարձան:

Իրօք Մարիուս Մուֆթարի փողոցէն ժօնարէթին անցնիլը տեսնելով գաղտնապէս կը դիտէր զայն:

Ժօնարէթ գլուխը կախած կ'երթար առանց կասկածելու թէ ետեւէն նայուածք մը արդէն կը գրաւէր զինքը:

Ժօնարէթ Մուֆթարի փողոցէն ելաւ, և Մարիուս կրասիէօզ փողոցը անոր ամենաստակալի խրճիթ մը մտնելը տեսաւ, ուր ժօնարէթ քառորդի մը չափ մնալէն ետք նորէն Մուֆթարի փողոցը եկաւ: Այն ժամանակ Բիէր-Լօմպար փողոցին անկիւնը երկաթեղէններու կրպակ մը կար. ժօնարէթ այս կրպակը մտաւ, և պահ մը ետք դուրս ելաւ ձեռքը տեսակ մը մեծ դուր(*) բռնած որու կոթը ճերմակ փայտէ էր և զոր թիկնոցին տակ պահեց: Երբ Բըթի-ժօնարիյեի փողոցին վերի կողմը հասաւ, ձախ կողմը դարձաւ,

(*) Siseau à froid տեսակ մը դուր, որ չկտրէր և որ արկղերու բացումը զիւրացնելու կը ծառայէ:

և շուտ մը Բըթի-Պանգիէի փողոցը մտաւ: Օրը կը տարածաժէր: ձիւնը որ պահ մը դարձած էր, նորէն սկսած էր դալ: Մարիուս որ ժօնարէթին մկրատ մը առնելն ալ տեսած էր, նոյն իսկ Բըթի-Պանգիէի փողոցին անկիւնը պահուեցաւ որ միշտ ամառի էր, և չգնաց ժօնարէթին ետեւէն: Աղէկ որ չգնաց, վասն զի ժօնարէթ երբ մօտեցաւ այն ցած պատին ուր Մարիուս մազոտ մարդուն և մօրուանի մարդուն խօսակցիլը լսած էր՝ ետեւը դարձաւ, տեսաւ որ ոչ ոք կուգար իր ետեւէն, յետոյ պաահին վրայէն ցատկեց աներեւոյթ եղաւ:

Այս պատը եզերող անմշակ երկրէն անցնելով կարելի էր երթալ ժամանակաւ կառք վարձող վատանուն մարդու մը տունին յետնարակը. սնանկացած էր այս կառք վարձողը և տակաւին քանի մը հին կառքեր ունէր հիւղերու մէջ:

Մարիուս խօհեմութիւն սեպեց ժօնարէթի բացակայութեան միջոցին իր սենեակը վերադառնալը. մանաւանդ թէ ժամանակը կ'անցնէր. Պիւրկօն խաթունը ամէն իրիկուն սպասները լուարու համար երբ քաղաքը կ'իջնէր, սովորութիւն ունէր գոցելու տունին դուռը որ միշտ գոց էր երեկոյեան ժամանակ: Մարիուս որ տիկան տեսուչին տուած էր իր բանալին, ուստի պէտք էր անձապարել:

Իրիկուն եղած և գիշերուան մութը գրեթէ տիրած էր ամեն նուրբք, հորիզոնին և երկնից վրայ արեւէն լուսաւորուած միտք մէկ կէտ կար որ էր լուսինը:

Լուսինը Սալթէթրիէրի ցած գմբէթին ետեւէն կ'ելլէր կարմրագոյն:

Մարիուս մեծաքայլ երթալով 50-52 թիւ տունը հասաւ: Գուռը բաց էր տակաւին: Ոտքին ծայրովը կոխելով սանդուխէն վեր ելաւ, և նրբանցքին պատին քովէն մինչև իր սենեակը սպրդեցաւ: Ընթերցողը ինչպէս կը յիշէ անշուշտ, այս նրբանցքին երկու կողմէ վարձու սենեակներ կային որոնք այն ժամանակ ամէնքն ալ պարտաւ էին: Պիւրկօն խաթունը սովորաբար բաց կը թողուր անոնց դուռները: Մարիուս երբ այս դուռներէն մէկուն առջևէն անցաւ, անձապարելու տեսնելով մեծ անասն մարդերու հոսու ուղու շնամարտ կար

ծեց զոր աղօտապէս կ'ապիտակացնէր երգէ մը եկող վերջալոյսի մը նացորդ մը:

Մարիուս՝ չուղելով տեսնուիլ՝ չուզեց տեսնել զանոնք: Յաջողեցաւ մտնել իր սենեակը՝ առանց նշմարուելու և ձայն մը հանելու: Ժամանակն էր մտնելու, վասն զի պահ մը ետք Պիւրկօն խաթունն ելաւ գնաց և տունին դուռը գոցուեցաւ:

Պ. Լ. ՈՒՐԱ Մ. Զ.

ՈՒՐ ԱՆԳՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ, ԵՐԳ ՄԸ ՊԻՏԻ ԳՏՆՈՒԻ
ՈՐ 1832 ԻՆ ԱՄԵՆՈՒՆ ԲԵՐԱՆԵ ԷՐ

Մարիուս իր անկողնին վրայ նստաւ: Ժամը հինգ ու կէս կար: Կէս ժամ մնացած էր տեղի ունենալու համար ինչ որ պիտի պատահէր: Իր շնչերակներուն զարկը կը լսէր՝ մութին մէջ ժամացոյցի մը զարկը լսելու պէս: Կը մտածէր որ նոյն միջոցին երկու բան կը քալէր. մէկը խաւարի մէջ, ոճիւրը որ մէկ կողմէն կը յառաջանար. միւսն արդարութիւնը որ միւս կողմէն կուգար: Չէր վախնար, բայց չէր կրնար առանց սասանում մը զգալու մտաբերել այն իրերը որ տեղի պիտի ունենային: Յանկարծ զարմանալի արկածի մը ենթարկուող ամէն անձերու պէս Մարիուս կը կարծէր թէ այն օրը առաւօտէն մինչև իրիկուն երազ մըն էր իրն համար, և սոսա կալի անուրջէ մը ճնշուիլ չկարծելու համար պէտք ունէր զգալու

իր բանթօլօնի գրպաններուն մէջ պահուած պողպատեայ երկու-
ատրճանակներուն ցուրար :

Ա՛յ ձիւն չէր գար . լուսինը՝ հետզհետէ պայծառանալով՝ մէ-
գերէն կը բաժնուէր , և իր նշոյլը՝ եկած ձիւնին սպիտակ ցոլու-
մին հետ խառնուելով՝ վերջալուսական տեսք մը կուտար Մարի-
ուսի սենեակին :

Ժօնտրէթի հիւղին մէջ լոյս կար : Մարիուս միջնորդին ծակին
կարճիր լոյսով մը փայլիլը տեսաւ որ աիւնագոյն կերեւար :

Յայտնի էր թէ այս լույսը ճրագէ մը չէր կրնար արտագրուիլ՝
Մանուանդ թէ Ժօնտրէթի սենեակը ամէնեւին շարժում մը չկար ,
ոչ ոք կը թնաար , ոչ ոք կը խօսէր , ոչ ոք կը շնչէր . սառնային և
խորին լուսութիւն մը կը տիրէր , և եթէ այն լոյսը չըլլար , կրնար
կարծել մարդ թէ գերեզմանի մը քով կը գտնուի :

Մարիուս կոչիկները հանեց մեղմիկ և անկողնին տակը հրեց՝
Քանի մը բոպէ անցաւ : Մարիուս վարի դռան իր ծխնիին վրայ
դառնալը լսեց . ծանր և արագաշարժ քայլ մը վեր ելաւ սան-
դուղէն և եկաւ նրբանցքէն անցաւ . որջին դռնափակը վեր ելաւ
ձայն հանելով . Ժօնտրէթն էր եկողը որ սենեակը կը մտնէր :

Անմիջապէս բազմաթիւ ձայներ բարձրացան : Ընտանիքը ամ-
բողջապէս հիւղին մէջն էր : Միայն թէ տիրոջ բացակայութեան
ժամանակ ամէնքն ալ կը լռէին գայլին բացակայութեան ժամանակ
լռող գայլիկներու (louveteau) պէս :

- Ես եմ , ըսաւ Ժօնտրէթ :
- Բարի իրիկուն , հայրիկ , սոռնացին աղջիկները :
- Ի՞նչ ըրիր , հարցուց մայրը :
- Ամէն բան կարգին է , պատասխանեց Ժօնտրէթ , բայց ոտքերս
փէտ (*) կտրած են ցուրտէն : Լա՛ւ , աղէկ ըրեր ես այդպէս հազ-
ուելովդ : Պէտք պիտի ըլլայ որ կարենաս վտանգութիւն ներ-
շնչել :

- Բոլորովին պատրաստ եմ դուրս ելլելու :
- Ըսածներէս բան մը չպիտի մոռնաս . ամէն բան լաւ պիտի
կատարես , այնպէս չէ՞ :

(*) Փայտ :

— Անհոգ եղիր :

— Ինչու որ . . . ըսաւ Ժօնտրէթ : Բայց չլմնցուց խօսքը : Մա-
րիուս լսեց որ Ժօնտրէթ ծանր բան մը դրաւ սեղանին վրայ . հա-
ւանական է թէ մկրատն էր դրածը :

— Հա՛ , աղէկ միտքս եկաւ , կերակուր կերա՞ք , կրկնեց
Ժօնտրէթ :

— Այո՛ , ըսաւ մայրը . երեք հատ խոշոր գետնախնձոր և աղ
առի : կրակին մէջ եփել տուի և կերանք :

— Աղէկ , կրկնեց Ժօնտրէթ . վաղը ձեզի հետս կը տանիմ
ընթրելու : Բազ մը պիտի ուտենք և ուրիշ ինչ որ պէտք է : Շար-
ւը Տասներորդնիւուն պէս պիտի ընթրէք . ամէն բան յաջող կ'եր-
թայ :

Յետոյ ձայնը ցածցնելով շարունակեց .

— Կախուլը բացուեցաւ : Կատունները հոս են :

Եւս աւելի ցածցուց ձայնը և ըսաւ .

— Կրակի դի՛ր սըվի :

Մարիուս ածուխի շառաչիւն մը լսեց . իրօք ունելիքով կամ
երկաթէ գործիքով մը ածուխ կը կարուէր . Ժօնտրէթ շարունակեց .

— Դուռին ծխնիներուն եղ քսեցի՛ր որպէսզի ձայն չհանեն :

— Այո՛ , պատասխանեց կինը :

— Ժամը քանի՞ է :

— Վեցը պիտի զարնէ հիմա : Կէս դարկաւ արդէն Սէն-Մէաա-
րի ժամացոյցը :

— Իրա՛ւ ըսիր , ապա ուրեմն պէտք է որ պղտիկները երթան
լրտեսեն , կրկնեց Ժօնտրէթ : Հոս եկէք դուք , և մտիկ ըրէք ինձ :

Փափառք մը եղաւ :

Ժօնտրէթին ձայնը նորէն բարձրանալով ըսաւ .

— Պիւրկօն խաթունը դուրս ելա՞ւ :

— Այո՛ , ըսաւ կինը :

— Աղէկ գիտե՞ս թէ դրացիին սենեակը մարդ չկայ :

— Այսօր չեկաւ ան , և գիտես արդէն թէ հիմա անոր ընթ-
րելու ժամն է :

— Աղէկ գիտե՞ս :

— Այո՛ :

— Բայց ի՞նչ լինաւ ունի, կրկնեց Ժօնտրէթ. պէտք է անգամ մը երթալ և նայիլ թէ հո՞ն է Աղջիկ, ա՛ն սա ճրագը և գնա նայէ անգամ մը:

Մարիուս ձեռքերուն և ծունկերուն վրայ կռթնելով կամայ մը իջաւ և լռելեայն դէպ անկողինին տակը սպրդեցաւ:

Հազիւ թէ անկողինին տակ կծկուած պահուած էր և անախ դուռին ճեղքերէն լոյս մը նշմարեց:

— Պապա՛. աղաղակեց ձայն մը, դուրս ելած է դրացին:

Մարիուս Ժօնտրէթի առջինէկ աղջկան ձայնը հանչեցաւ:

— Ներս մտա՛ր հարցուց հայրը:

— Ձէ, պատասխանեց աղջիկը, բայց յայտնի է թէ դուրս ելած է, վասն զի բանալին դուռին վրան է:

Հայրը պուսաց:

— Հոգ չէ, մտի՛ր անգամ մը:

Դուռը բացուեցաւ, և Մարիուս տեսաւ աղջկան ներս մտնելը՝ ձեռքը աշտանակ մը բռնած: Առաւօտուան պէս էր աղջիկը՝ միայն թէ աւելի ահարկու կ'երեւար ձեռքի ճրագին լոյսովը:

Ուղղակի դէպ անկողինը գնաց. Մարիուս պահ մը անմեկնելի անձկութիւն մը ունեցաւ. բայց անկողինն քով պատին վրայ բեւեռուած հայելի մը կար. աղջիկը դէպ աչքն հայելին կերթար. Ոտքերուն ծայրովը բարձրացաւ և հայելին նայեցաւ: Մօտակայ սենեակին մէջ հին երկաթեղէններ կը խառնուէին և ձայն կը հանէին:

Աղջիկը ձեռքին ագուռովը մազերը յղկեց և ժպիտներ տուաւ հայելին՝ իր գիզուն և գերեզմանական ձայնով յետագայ տունը երգելով:

Մեր սերը տեսեց շաբաթ մը միայն,
Ո՛հ, ո՛րքան կարճ են երջանիկ օրեր.
Ո՛հ օր պաշտօնի, աշխատանք ունայն.
Միտոյ ժամանակ միշտ տեսել պետք էր,
Միշտ տեսել պետք էր, միշտ տեսել պետք էր:

Բայց Մարիուս կը դողար: Կը կարծէր թէ աղջիկը անտարա՛կ կոյճիկը լսէր իր շնչառութիւնը:

Աղջիկը դէպ ի պատուհանը ուղղուեցաւ, դուրս նայեցաւ և բարձր ձայնով խօսեցաւ կէս մը փախուկի կերպարանքով, ինչպէս որ իր սովորութիւնն էր:

— Ո՛րքան տղեղ է Բարիզ երբ ճերմակ շապիկ մը կը հագնի, ըսաւ:

Նորէն հայելին քով եկաւ, և նորէն ինքն իրեն ձեւեր և շարժումներ ըրաւ՝ հետզհետէ շիտակ և քովնօր ինքն իրեն նայելով ակնապիչ:

— Է՛, ի՞նչ կրնես հոգ, պուսաց հայրը:

— Անկողինն և կարասիներուն տակը կը նայիմ, մարդ չկայ, պատասխանեց՝ առանց մազերը շտկելէ դադարելու:

— Շա՛ներես աղջիկ, չո՛ւտ հոս եկուր, ժամանակ չկորսնցընենք, ունաց հայրը:

— Եկայ, եկայ, ըսաւ աղջիկը: Իրենց խրճիթին մէջ ամենեւին բան մը բնելու ժամանակ չկայ, շարունակեց ինքնիրեն:

Յետոյ ակռաներովը երգեց.

Կը մեկնիս՝ փառքով կուռելու համար.
Տրտում սիրտըս միշտ հետըդ պիտ' ըլլայ:

Անգամ մըն ալ հայելին նայեցաւ և դուրս ելաւ դուռը ետ տեսնելու գոցելով:

Պահ մը ետք Մարիուս երկու նորասօի աղջկանց բոկ ստքերուն ձայնը լսեց որ նրբանցքին կ'երթային, նաև Ժօնտրէթին ձայնը որ կը պուսար անոնց:

— Աղէկ ուշադրութիւն ըրէ՛ք. մէկը քաղաքագուռին քովէն, միւսն ալ Բրթի-Պանդիէի փողոցին անկիւնէն: Պահ մը մի՛ դադարէք դիտելէ տունին դուռը, և եթէ բան մը տեսնելու ըլլաք, շուտ մը հոս եկէք չորս սաքով վազելով: Ներս մտնելու համար բանալի մը ունիք:

Առջինէկ աղջիկը մրմուռաց:

— Ձիւնին մէջ բոկոսն կենալով պահնորդութիւն ընել:

— Վաղը բզէզի (*) (scarabée) գոյնով մետաքսեայ կօշիկներ պիտի ունենաք, պօռաց հայրը:

Վար իջան սանդուղէն, և քանի մը բռնէ կաքը վարի դուռին գոցուելու ձայնը իմաց տուաւ թէ դուրս ելած էին աղջիկները:

Տունին մէջ ա՛լ միայն Մարիուս և Ժօնարէթները կային, և հաւանօրէն նաև այն պահուած անձերն զոր Մարիուս մշուշին մէջ անբնակ սենեակին դուռին ետեւը ընդերջմարած էր:



ԳՆՈՒՆ ԺԵ:

ՄԱՐԻՈՒՍԻ ՀԻՆԳ ՖՐԱՆԲԵՆՈՅ ԴՐԱՄԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Մարիուս մտածեց թէ նորէն իր դիտարանը ելլելու և սպասելու վայրկեանը եկած է: Ակնթարթի մը մէջ և իր հասակին յառուկ դիւրաշարժութեամբը միջնորդին ծակին քով գտնուեցաւ նայեցաւ:

Ժօնարէթի սենեակին ներսը տարօրինակ տեսք մը բռնէր, և Մարիուս հասկցաւ թէ ինչ է եղեր այն տարօրինակ լոյսը զոր նշմարած էր: Ծրագ մը կը վառէր ժանգոտ աշտանակի մը վրայ, բայց սենեակը իրապէս լուսաւորողը այն չէր: Թանազէ մեծկակ կրակարան մը որ ածուխով լի էր և բուխերիկին մէջ դրուած, իր ցօլումովը սենեակը բոլորովին կը լուսաւորէր: Ասիկայ այն կրակարանն էր զոր Ժօնարէթ առտուն պատրաստած էր: Ածուխը խա-

(*) Բզէզ. տեսակ մը Թխագոյն զեռուն մըն է: Մ. Թ.

րոյկ և կրակարանը կարմիր էր. կապտագոյն բոց մը ասոր մէջ կը պարէր և կը նպաստէր որոշապէս ջուցնելու այն դուրին ձեւը, զոր Ժօնարէթ Բիէր-Լօմպար փողոցէն գնած էր և որ խարոյկին մէջ դրուած կը կարմրէր: Դուան քովը մէկ անկիւնը երկու կուտակ կը տեսնուէր որոնք նախապէս գործածութեան մը համար պատաստուեր էին կարծես, և որոնց մէկը հին երկաթեղէններու կուտակ մը, միւսն ալ չուաններու կուտակ մը կ'երեւար: Եթէ մէկը տեսնէր այս ամէնը և տեղեկութիւն մը չուենար պատրաստուող դէպքին նկատմամբ, իր միտքը ամէնաստակալի կամ ամէնապարզ զաղափար մը ունենալով երկուքին մէջ պիտի վարանէր: Որչը այսպէս լուսաւորուելով՝ աւելի դարբնոցի քան թէ գեհնեական բերանի մը կը նմանէր, բայց այս լոյսով Ժօնարէթ աւելի դեւի քան թէ դարբինի մը կերպարանք ունէր:

Կրակին տաքութիւնը այնքան շատ էր որ սեղանին վրայի մօտը կրակարանին կողմէն կը հալէր և շեղակի կը հատնէր: Բուխերիկին վրայ պղնձեայ ծանր և հին գողի լապտեր մը կար որ Գարթուշ դարձող Դիոգինէսին արժանի էր:

Կրակարանը՝ որ բռն իսկ բուխերիկին վաւարանին մէջ և գրեթէ մարած փայտերուն քով դրուած էր՝ իր շոգին բուխերիկին ծխանէն դուրս կը դրկէր և հոտ չէր հաներ:

Լուսինը՝ պատուհանին չորս ապակիներէն ներս մտնելով՝ իր սպիտակութիւնը ծիրանեգոյն և բոցափայլ սենեակին մէջ կը ծաւալէր, և Մարիուսի բանահիւսական մտքին համար որ նաև գործողութեան միջոցին կը մտախոհէր՝ կարծես թէ երկնային մտածում էր որ երկրային անձեւ երազներու հետ կը խառնուէր:

Հովի շունչ մը՝ կտրուած ապակիէն ներս մտնելով՝ ածուխին հոտը փարատելու և կրակարանը ծածկելու կը նպաստէր:

Եթէ ընթացողը կը յիշէ ինչ որ ըսինք արդէն Կօրպօյի տեսնին նկատմամբ, Ժօնարէթի որչը սքանչելի կերպով ընտրուած էր բուռն և տխուր իրողութեան մը թատրը և ոճիօրի մը պահարանը ըլլալու համար: Այս որչը Բարիզի ամէնէն ամայի պուլվարին, ամէնէն առանձին տունին ամէնէն ներքին և հեռու սենեակն էր: Եթէ դաւաճանութիւն ըսուած քանը էութիւն չուենար անգամ, կրնար հնարուիլ այս որչին մէջ:

Տունի բոլոր շէնքը և խել մը աւերակ սննեակներ պուլվարէ
կը դատէին այս որջը, որու միակ պատուհանը պատերով և ցցա-
պատեէշներով շրջափակ անմշակ երկիրներու վրայ կը նայէր:

Ժօնտրէթ ծխափայտը վառելով անխտիր աթոռին վրայ նըս-
տած էր և կը ծխէր: Կինը ցած ձայնով հետը կը խօսէր:

Եթէ Մարիուս Գուրֆէյրաք ըլլար, այսինքն այն մարդերէն
մէկը որոնք կենաց ամէն պարագաներու մէջ կը խնդան, անշուշտ
քահ քահ մը պիտի ձգէր Ժօնտրէթին կինը աեսնելով: Այս կինը
փետուրներով զարդարուն սեւ փեղոյր մը ունէր որ Շարլը Ժ. ին
օծումին զինակիր քարոզներուն փեղոյրներուն կը նմանէր բաւա-
կան. ահագին թարթան շալ մը իր կտաւէ շրջազգեստին վրայէն
արած, և մարդու մուճակներ հազած էր. ասոնք այն մուճակներն
էին զոր ազջիկը առտուն արհամարած էր: Ժօնտրէթ ահա իր
կնոջը այս հազուստը տեսնելով աղազակած էր եռանդագին:
Լա'ն հագուեր ես եղեր. շատ աղէկ քրիք: Պէտք է որ կարենաւ
վստահութիւն երջեցել:

Իսկ Ժօնտրէթ վրայէն հոնած չէր Պ. Լըպլանի տուած այն
նոր թիկնոցը որ մեծ կուգար իրեն, և իր հազուստը տակաւին
կ'ընծայէր այն թիկնոցի և բանթալօնի հակապատկերը որ Գուր-
ֆէյրաքի կարծիքին հակամատ տեսլական բանաստեղծը կը կազմէր:

Յանկարծ Ժօնտրէթ ձայնը բարձրացուց.

— Աղէկ որ միտքս եկաւ: Այս օդին նայելով անշուշտ կառ-
քով պիտի դայ ան: Վառէ՛ լապտերը, ա՛ն և իջիր: Վարի դու-
ռին ետեւը պահուէ: Երբ կառքին կանգ առնելը լսես, անմիջա-
պէս դուռը բաց. սանդուխէն ելլելու և նրբանցքէն դէպ ի հոս
գալու ժամանակը ետեւէն ճրագը բեր որ լսյս ըլլա. յետոյ ան
ներս մանելու միջոցին դուն վար իջի՛ր շուտով, կառապանին
վարձքը վճարէ՛ և ետ ձամբէ՛ կառքը:

— Ստակը ո՛ւր գտնեմ, հարցուց կինը:

Ժօնտրէթ բանթալօնին քսակը խառնեց և հինգ ֆրանքնոյն
մը տուաւ անոր:

— Ի՞նչ է այդ, պօռաց կինը:

Ժօնտրէթ արժանապատուութեամբ մը պատասխանեց.

— Դրացիին այս առտու տուած թաղերն է:

Յետոյ շարունակեց.

— Երկու աթոռ պէտք է հոս, գիտե՛ս:

— Ինչո՞ւ:

— Նստելու համար:

Մարիուս աղիքին մէջ սարուռի մը շրջաբերիւ զգաց երբ
լսեց կնոջը յետագայ հանդարտ պատասխանը.

— Աս ալ մտածելու բա՛ն է. կ'երթամ դրացիին աթոռները
կը բերեմ:

Եւ արագ շարժումով մը որջին դուռը բացաւ և նրբանցքը
եկաւ:

Մարիուս դարանէն վար իջնելու, մինչև անկողինը երթալու
և տակը մտնելու ժամանակ չունէր իրապէս:

— Ճրագը ա՛ն, պօռաց Ժօնտրէթ:

— Չէ, ըսաւ, աւելորդ արգելք մըն է այդ ինծի համար,
վասն զի երկու աթոռ պիտի բերեմ: Լուսինը ձառագայթած է:

Մարիուս լսեց որ կնոջը ծանր ձեռքը խարխափելով իր դռան
բանալին կը փնտռէր մութին: Բացուեցաւ դուռը: Մարիուս տեղը
կեցաւ՝ երկիւղէն և շուարումէն բուեռուելով:

Ժօնտրէթին կինը մտաւ:

Մանասրդեան երգէն լուսնի ճառագայթ մը կ'անցնէր և եր-
կու մեծամաս ստուերներու մէջ տեղը կ'երկննար: Այս ստուերներէն
մէկը բոլորովին կը ծածկէր այն պատը որու վրայ կռթնած էր Մա-
րիուս, այնպէս որ սա աներեւոյթ կը մնար:

Կինը վեր ըրաւ աչքերը, չտեսաւ Մարիուսը, առաւ երկու
աթոռները՝ որոնցմէ ի զատ ուրիշ չունէր Մարիուս, և ձգեց գնաց
թողլով դուռը որ շրա՛ն մը ընելով նորէն դոցուեցաւ:

Ժօնտրէթի կինը որջը մանելով.

— Ահա աթոռները, ըսաւ:

— Ահա լապտերն ալ, ըսաւ էրիկը: Շուտ իջիր:

Կինը աճապարումով հնազանդեցաւ, և Ժօնտրէթ մինակ
մնաց:

Աթոռները սեղանին երկու կողմը դէմ դէմի դրաւ. դուռը
կրակարանին մէջ դարձուց, բուխերիկին առջեւէն հին հովարգել մը
դրաւ որ կրակարանը կը ծածկէր, յետոյ գնաց չուաններուն կու-
տակին քով և ծռեցաւ, կարծես բան մը քննելու համար:

Մարիուս այն ատեն դիտեց թէ այն՝ զոր տնիւ կուտակ մը կարծած էր՝ շատ վարպետութեամբ շինուած առասանէ ելարան մըն էր որ փայտէ աստիճաններ ունէր, նաեւ երկու ակիւ՝ որոնց մով ելարանը կրնար տեղ մը կառչելով կախուիլ :

Թէ՛ այս ելարանը և թէ քանի մը մեծ գործիքներ որոնք երկաթէ իրական մահակներ էին և որոնք դուռին ետեւը դիզուած հին երկաթեղէններու դէզին հետ խառնուած էին, առտուն ժօնարէթի որջին մէջ չկային, և անշուշտ կէսօրէն ետք՝ Մարիուսի բացակայութեան ժամանակ բերուած էին :

— Գործիք շինող դարբինի գործիներ են անոնք, ըսաւ Մարիուս մտապէս :

Եթէ Մարիուս այս տեսակ իրերու մէջ տեսիլ հմտութիւն ունեցած ըլլար, պիտի ճանչնար թէ այն լծակները զոր դարբինի գործիներ կը կարծէր, կղպակ մը խորտակել կամ դուռ մը բանալ՝ նաեւ կտրել կամ յատանել կրցող այլ և այլ գործիներ էին, և կը կազմէին աղէտալի գործիներու երկու ընտանիքը զոր գողերը կրտսերներ և հնձողներ կ'անուանեն :

Բախտերիկը, սեղանը և երկու աթոռները ճիշդ Մարիուսի դէմն էին : Կրակարանը պահուած էր. սենեակը ա՛լ միայն ճրագէն լոյս կ'առնէր. սեղանին կամ բախտերիկին վրայ ամենախոքը խեցին մեծ շուք մը կը կազմէր : Զուրի սափորը որուն բերանը կտրուած էր պատի մը կէսը կը ծածկէր : Այս սենեակին մէջ չբխած ի՛նչ սուտ կալի և սպառնալի հանդարտութիւն մը կը տիրէր : Կ'զգար մարդը թէ անարկու բան մը տեղի պիտի ունենար հոն,

Ժօնարէթ մտնալով ծխել, ծխափայտը մարած էր. ծախք նշան մտատանջութեան : Ժօնարէթ իր տեղը նստած էր : Մտնալով լոյսը անոր դէմքին վայրկեանական և նուրբ անկիւնները դուրս ցցել կուտար : Յօնքերը կը պոստէր, և աջ ձեռքով յանկարծակի մտաուրախութեան շարժումներ կ'ընէր՝ կարծես ներքին տխուր մեծախոսի մը յետին խրատներուն պատասխան տալով, Երբ անգամ մը եւս այսպիսի անյայտ պատասխան մը տուաւ ինքն իրեն, սեղանին գլորոցը ուժգնակի քաշեց, խոհարանի երկայն դանակ մը հանեց զոր անոր մէջ պահած էր, և անոր սայրը եղունգին վրայ փորձեց՝ Ստորը դանակը նորէն ներս դնելով գլորոցը հրեց :

Մարիուս ալ իր աջ կողմի գրպանէն տարճանակը բռնեց հանեց, և պարպելու պատրաստեց :

Ատրճանակին կայծահան ըլթակը քաշուելու ատեն պզտիկ ձայն մը հանեց, նուրբ և ցամաք ձայն մը :

Ժօնարէթ սարսեցաւ, և կէս մը աթոռին ջլրայէն ելաւ :

— Ո՛վ է ան, պօռաց :

Մարիուս շունչը բռնեց. Ժօնարէթ պահ մը մտիկ ըրաւ, յետոյ սկսաւ խնդալ՝ ըսելով.

— Ապո՛ւշ եմ, ի՛նչ եմ, Միջնորմը ճանչած է անշուշտ :

Մարիուս ատրճանակը ձեռքը պահեց :



Գ. Լ. ՈՒՆԵ Ժ. Ը.

ՄԱՐԻՈՒՍԻ ԵՐԿՈՒ ԱԹՈՒՆԵՐԸ ԴԷՍ ԱՌ ԴԷՍ ԿԸ ԿԵՆԱՆ

Յանկարծ զանգակի մը հեռուոր և մեղամագձային ճօճումը պակիները դղրդեց : Սէն-Մէաարէն ժամը վեց կը զարնէր :

Ժօնարէթ ամէն մէկ զարկը գլուխը անգամ մը վեր ընելով շամբեց : Երբ վեցերորդը զարկաւ, մատներովը ճրագին քիթը առաւ :

Յետոյ սկսաւ քալել սենեակին մէջ, մտիկ ըրաւ լսելու համար թէ արդեօք ձայն մը կուգայ նրբանքէն քալեց և նորէն մտիկ ըրաւ :

— Բաւական է որ գայ. կսկմաց. յետոյ նորէն իր աթոռին ըով եկաւ :

Հազիւ թէ կը նստէր, և անա դուռը բացուեցաւ :

Ժօնարէթին կինը բացած էր դուռը, և նրբանցքին մէջ կը կենար սոսկալի սիրուն ձեւ մը ընելով զոր գողի լապտերին ծակերէն մէկը վարէն կը լուսաւորէր:

— Հրամեցէք, պարսն, ըսաւ կինը:

— Հրամեցէք, բարերար իմ, կրկնեց ժօնարէթ արագապէս ելլելով:

Պ. Լըպլան երեւցաւ:

Հանդարտ կերպարանք մը ունէր, որ տարօրինակ պատկառանք մը կուտար իրեն:

Չորս լուիճի դրաւ սեղանին վրայ:

— Պ. Յապանթու, ըսաւ, տհաւասիկ ձեր սենեակին վարձքին և առաջնական պիտոյից համար: Ետքն ալ Աստուած ողորմած է:

— Աստուած փոխարէնը հաաուցանէ ձեզ, առատասիրտ բարերարդ իմ, ըսաւ ժօնարէթ, և արագապէս կնոջը մօտենալով:

— Ետ դրկէ՛ կառքը, ըսաւ կամաց մը:

Կինը ձգեց գնաց մինչդեռ էրիկը բարի եկաք ըսելով հաղաբուժէկ քաղաքավարական ձեւեր կ'ընէր և աթոռ մը կուտար Լըպլանին: Պահ մը ետք կինը եկաւ և ըսաւ անոր ականջին:

— Կառքը գնաց:

Ձիւնը որ առաւօտէն ի վեր անընդհատ կուգար, այնքան թանձրացած էր որ ոչ կառքին գալը և ոչ ալ մեկնելը լսուած էր:

Սակայն Պ. Լըպլան նստած էր:

Ժօնարէթ նոյնպէս նստած էր միւս աթոռին վրայ որ Պ. Լըպլանին դէմն էր:


Հիմա գաղափար մը ունենալու համար այն տեսարանին վրայ որ պիտի հետեւի, ընթերցողը թող մաքին առջեւ բերէ սառնարներ գիշերը, Սալթթրիէրի ձիւնապատ և ամայի վայրերը որոնք անբաւ պատանքներու պէս ճերմակ կ'երեւան լուսնի ճառագայթովը, կանթեղներուն պատրոյզի լոյսը որ տեղ տեղ այս տխրալի պուլվարները և սե կնձնիներու երկայնաձիգ շարքերը կը կարմրէ, գիշերապատհներու կայանէն մինչև Կորպոյի տունը քառորդ մղոնի մէջ թերեւս ամենեւին անցորդ մը չգտնուիլը, այն յետին ծայր լուսնիները, սոսկուժը և խաւարը որոնք Կորպոյի տունը կը շրջապատեն, ժօնարէթին ճրագով մը լուսաւորուած ընդարձակ սեն-

եակը որ այս խարխուլ տունին, առանձնական վայրերուն և մըթութեան մէջ տեղն է, և այս որջին մէջ երկու մարդու սեղանի մը քով նստած ըլլալը, Պ. Լըպլանի՛ որ հանդարտ է, ժօնարէթի՛ որ կը ժպտի և ահարկու է, կինը որ մատակ գայլ մըն է և անկիւն մը քաշուած, Մարիուս որ միջնորմին ետեւ աներեւոյթ՝ կանգուն կ'սպասէ, որ ամէն բան կը լսէ, որ ամէն շարժում կը տեսնէ, և աչքովը կը դիտէ՝ ձեռքը աթոճանակ մը բռնած:

Մարիուս գանիլ կ'ըզար միայն, բայց ամենեւին չէր վախնար: Աթոճանակին բունը կը սեղմէր և սիրտ առնել կ'ըզար: Պիտի կեցընեմ այս թշուառականը երբ որ ուղեմ, կ'ըսէր մտապէս:

Կ'ըզար թէ սատիկանութեան մարդերը տունին քովերը տեղ մը դարանի մտած են, թէ որոշուած նշանը արուելուն կ'սպասեն և թէ բոլորովին պատրաստ են հասնելու և թշուառականը բանելու:

Մանաւանդ կը յուսար որ ժօնարէթի և Պ. Լըպլանի այս բուռն հանդիպումէն լոյս մը ժայթքելով պիտի լուսաւորէր ինչ որ Մարիուս կ'ուզէր իմանալ:



Չ. ՀԱՍՆՐ

(ԹԵՂԱՆԱԳԵՐ 73)

Գ. Լ. ՈՒՆԵ Ժ. Թ.

Պ. ԼՐԱՅԻՆ ՄԹԻՆ ԽՈՐՇԵՐ ՏԵՍՆԵԼՈՎ, ՄՏԱՏԱՆՁՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԻՏ

Պարոն Լրպլան նստաւ չնստաւ դէպ ի խշտեակները նայեցաւ որոնք թափուր էին :

— Ի՞նչպէս է վիրաւոր խեղճ պղտիկդ, հարցուց :

— Գէշ կ'երթայ, պատասխանեց ժօնարէթ աղիողորմ և շնորհ պարտ ժպտով մը, շատ գէշ է, տէ՛ր իմ յարգի: Առջինէկ քոյրը Պուրպ տարաւ զայն վէրքը դարմանելու համար: Հիմա պիտի տեսնէք զանոնք, շատ չանցնիր կուգան:

— Տրկին Ֆապանթու աւելի աղէկ կ'երեւայ ինձ, կրկնեց Պ. Լրպլան ժօնարէթի կնոջ այլանդակ հագուստին նայելով: Նոյն միջոցին այս կինը Պ. Լրպլանի և դուռին մէջ կարծես դուռը պահ պանելու համար սպառնացողի և կռուողի մը դիրքով օտքի վրայ կեցած էր և զայն կը դիտէր:

— Խեղճը մեռնելու մօտ է, ըսաւ ժօնարէթ: Բայց բարեբաղդաբար այս կինը քաջասիրտ է, պարոն: Չէ թէ կին այլ կով մըն է ան:

Կինը այս ողջուճէն յուզուելով՝ փաղաքշուող հրէշի մը պչրանքով աղաղակեց.

— Միշտ բարեսիրութիւն կը ցուցնես ինձ, Պ. ժօնարէթ:

— Ժօնարէթ, հարցուց Պ. Լրպլան, կը կարծէի թէ Ֆապանթու է ձեր անունը:

— Ֆապանթու ժօնարէթ, կրկնեց անմիջապէս էրիկը. Դե՛ռ րասանի մականունն է այս:

Նւ անգամ մը կնոջը նայելէ և ուսերը վեր ընելէ ետք զոր Պ. Լրպլան չնշմարեց, ժօնարէթ շարունակեց պաճուճազարդ ողորջալի ձայնով մը զոր կեղտութեամբ կը հանէր:

— Ա՛հ, վասն զի այս խեղճ սիրականս և ես միշտ սիրով և միարանութեամբ տարած ենք միատեղ: Եթէ ասիկայ ալ չունենայինք, հապա ա՛լ մեր ի՞նչը մնացած պիտի ըլլար: Շա՛տ թըրուառ ենք, տէր իմ պատուարժան: Բազուկ կայ, բայց աշխատանք չկայ: Միրա կայ, բայց գործ չկայ: Չգիտեմ թէ կառավարութիւնը ինչ կը մտածէ այս մասին, բայց՝ թէեւ պատուոյս վրայ կ'երդնում, սլարոն, թէ ժագօպէն չեմ, թէեւ խոտվարար չեմ, թէեւ չեմ ուզեր որ գէշութիւն մը ըլլայ անոր, բայց եթէ պաշտօնեաներուն տեղը ըլլալի, պատուոյս վրայ կ'ըսեմ թէ գործերը տարբեր ընթացք մը կ'ունենային: Ահա ձեզ օրինակ մը տամ. ուղեցի որ աղջիկներս գիրք խաւաքարտելու արհեստը սորվին: Թե՛րեւս ըսէք ինձ. ի՞նչ. արհեստ մը: Այո՛, արհեստ մը, պա՛րզ արհեստ մը, հաց հանելու գո՛րծ մը: Ո՛հ, ինչ անկում, տէ՛ր իմ բարեբար. մի՞թէ այս մեծ նուատուութիւն մը չէ մեզի երբ ժամանակաւ բարեբաստ վիճակի մէջ գտնուած ենք: Աւա՛ղ, որ մեր այն բարեբաստութեան ժամանակէն ոչինչ ունինք հիմա, ոչինչ, բաց ի բանէ մը, պատկերէ մը որմէ չեմ ուզեր զրկուիլ, և որմէ պիտի զրկուիմ սակայն, վասն զի պէտք է ապրիլ, կը կրկնեմ թէ պէտք է ապրիլ:

Մինչդեռ ժօնարէթ կը խօսէր տեսակ մը առերեւոյթ շփոթով որ ամենեւին չէր այլայլեր անոր դէմքին խորամանկ և կեղծ արտայայտութիւնը, Մարիուս վեր ըրաւ աչքը և սենեկին դէպ ի ներսի կողմը մարդ մը տեսաւ զոր ասկաւին նշմարած չէր: Իրօք քիչ մը առաջ մարդ մը ներս մտած էր այնքան մեղմիկ որ դուռին իր ձխնիներուն վրայ դառնալը լսուած չէր: Այս մարդը մասնիշաղոյն կտաւէ հին, մաշուած, արատաւոր, կտրուած և իր ամէն ծաղքերով ճեղքեր կաղճող ժիլէ մը, բամբակեայ թաւիչէ լայն բանթալօն մը հագած էր, ոտքերն ալ առնդալի հողաթափներ ունէր, շապիկ հագած չէր, վիզը մերկ, բազուկները նոյնպէս մերկ էին, և գունաւոր նկարներ ունէին, իսկ դէմքը սեւով մրտաւած էր: Մօտադոյն անկողնին վրայ լոխկ մնջիկ նստած էր, և ժօնարէթի կնոջը ետեւը դանուելուն համար աղօտապէս կը նշմարուէր:

Մարիուս այս մարդը նշմարած միջոցին նաեւ Պ. Լրպլան ետեւը դարձած էր դրդուելով այն տեսակ մը մաքնիսական բնազ-

դուռէն որ մարդուս նայուածքին իմաց կուտայ. Պ. Լըպլան չկըր-
ցաւ զսպել իր զարմանքը և շարժում մը ըրաւ զոր նշմարեց
Ժօնտրէթ:

— Ա՛հ, կը տեսնեմ որ ձեր թիկնոցին կը նայիք, պօռաց
Ժօնտրէթ քողցր կերպարանքով մը իր վրայի թիկնոցը կոճկելով:
Յարմար եկաւ ինձ այն, ստուգիւ յարմար եկաւ:

— Ո՛վ է այս մարդը. հարցուց Պ. Լըպլան:
— Ասիկայ՝, ըսաւ Ժօնտրէթ, դրացի մըն է ան: Հոգ մի՛
ընէք:

Գրացին տարօրինակ կերպարանք մը ունէր: Սակայն Սէն-
Մարսօյի արուարձանին մէջ քիմիական արտաբերութեանց բազմա-
թիւ գործարաններ կան: Գործարաններու բանւորներուն շատերուն
դէմքը կրնայ մրտա ըլլալ: Մանաւանդ թէ Պ. Լըպլան ոտքէն մինչ-
չեւ գլուխը ամբողջ և անկերկիր վստահութիւն մը կը ցուցնէր:

— Ներեցէք: Ի՞նչ կ'ըսէիք ինձ, Պ. Ֆապանթու:

— Ձեզ կ'ըսէի սիրելի և տէր իմ պաշտպան, կրկնեց Ժօնտ-
րէթ՝ սեղանի վրայ կոթնելով և Պ. Լըպլանին նայելով անշարժ և
գորովալի աչերով որոնք Պօա օձի մը աչքերուն կը նմանէին բա-
ւական, կ'ըսէի թէ ծախու պատկեր մը ունիմ:

Դունէն պզտիկ շշուք մը լսուեցաւ: Երկրորդ մըն ալ եկաւ և
Ժօնտրէթի կնոջը ետեւը անկողնին վրայ նստաւ: Միւսին պէս ա-
սոր ալ թեւերը բաց էին և երեսն ալ մեղանէ կամ մրուրէ դիմակ
մը ունէր:

Թէպէտեւ այս մարդն իրապէս սպրդելով սենեակը մտած էր
բայց և այնպէս չկրցաւ չնշմարուիլ Պ. Լըպլանէն:

— Անհոգ եղիք, ըսաւ Ժօնտրէթ: Տունը բնակող մարդիկ
են անոնք: Կ'ըսէի ուրեմն թէ թանկագին պատկեր մը ունիմ...
Ահա, տեսէք, պարոն:

Աթոռէն ելաւ, մօտեցաւ պատի մը, որու ստորոտը նկար
տախտակ մը դրուած էր, Ժօնտրէթ դարձուց զայն՝ դարձեալ պա-
տին կոթնած թողով: Իրօք պատկերի նմանող բան մըն էր այն
և ճրագին լոյսովը ինչ ըլլալը դրեթէ կ'երեւար: Մարիուս
պատկերը չէր կրնար որոշապէս նշմարել՝ Ժօնտրէթ իր և պատկերին
մէջ տեղը նստած ըլլալուն համար. միայն թէ իր դիտարանէն կ'ընդ-

նըմարէր տձեւ կերպով մրտուած նկար մը և գլխաւոր անձի պէս
բան մը, որ օտարոտի կտաւներու և հողմարգելի նկարներու ակըն-
հար տձեւութեամբ գունաւորուած էր:

— Ի՞նչ բան է այդ, հարցուց Պ. Լըպլան:
Ժօնտրէթ զարմանքով մը աղաղակեց.

— Վարպետի նկար մը, մեծագին պատկեր մը, ի՛մա բարե-
բար. աղջիկներուս պէս կը սիրեմ զայն, վասն զի յիշատակներ կը
բերէ մտքիս, բայց ըսի ձեզ արդէն և խօսքս ետ չեմ առներ, այն-
քան դժբողդ եմ որ կ'ուզեմ վաճառել...:

Պ. Լըպլան կամ պատահաբար և կամ թերեւս փոքր ինչ խու-
վի սկսելով նորէն դէպ ի սենեակին ներսի կողմը նայեցաւ: Հոն
հիմա չորս մարդ կար, երեքը անկողնին վրայ նստած, մէկը դրան
մոյթին քով ոտքի վրայ կանգնած, չորսին ալ բազուկները բաց և
երեսները մրտուած, և չորսն ալ անշարժ: Անկողնին վրայ նըս-
տողներէն մէկը պատին կը կոթնէր՝ աչքերը գոցած, և կրնար
կարծուիլ թէ կը քնանար: Նա ծեր էր. իր ձերմակ մազերը սեւա-
դէմ երեսին վրայ սոսկալի կերպով կ'երեւային: Միւս երկուքը ե-
րիտասարդ կ'երեւային. մէկը մօրուանի, միւսը մազոտ էր: Եւ ոչ
մէկը մուճակ ունէր. անոնք որ հողաթափ չունէին, բոկոտն էին:
Ժօնտրէթ գիտնալով թէ Պ. Լըպլանին աչքն այս մարդերուն
վրայ կը յօռէր, ըսաւ.

— Բարեկամներ են, դրացի են ասոնք: Մրտ է անոնց դէմ-
քը, վասն զի ամիսագործ են, ծխահան կը մաքրեն: Հոգ մի՛ ընէք,
տէր իմ, բայց դնեցէք ոտ պատկերս: Գութ ունեցիք իմ թշուա-
ուութեան վրայ: Մուղ չպիտի ծախեմ ձեզ: Ի՞նչ գին կը կարէք:

— Բայց, ըսաւ Պ. Լըպլան Ժօնտրէթին նայելով աչքին ծայ-
րովն և զգուշացող մարդու մը պէս, կապէլիտայի նշանատախտակ
մի՛ է այդ. երեք ֆրանքի չափ կ'արժէ:

— Թ՛ղթակալդ քօ՛վդ է. հազար թալերով գո՛հ կ'ըլլամ, ըսաւ
Ժօնտրէթ:

Պ. Լըպլան ոտքի վրայ ելաւ, պատին կոթնեցաւ և արագօ-
րէն սենեակին չորս դին նայեցաւ: Իր ծախ կողմը պատուհանին
քովն էր Ժօնտրէթ. իսկ աջ կողմը դուռին քովն էին կիսը և չորս
մարդերը, Չորս մարդերը չէին շարժեր և կարծես թէ և ոչ իսկ

- Կառք մը կա՛յ վարը :
- Այո՛ :
- Մարէնկօթին երիվար լծուեցա՛ւ :
- Լծուեցաւ :
- Երկու լաւ երիվար, այնպէս չէ՛ :
- Պատուական երիվարներ :
- Ուրեմն մարէնկօթը կ'ապասէ՛ ուր որ ըսի թէ պէտք է ըս՝
պասել :

- Այո՛ :
- Լա՛ւ, բաւ ժօնարէթ :

Պ. Լըսլլան բոլորովին դեղնած էր : Որչին մէջ իր բոլորովին եղածները կը դիտէր, ո՛ւր ինկած ըլլալը հասկցող մարդու մը պէս և իր գլուխը կարգ ըսա կարգի իր չորս կողմը առնող գլուխներուն ուղղուելով՝ վզին վրայ կը շարժէր ուշադրութեամբ և զարմացող մարդու մը յամբուժեամբ : Բայց կերպարանքին վրայ չկար բան մը որ երկիւղի նմանէր : Սեղանը յանկարծադէպ պատնէշ մը ըրած էր իրեն և ահա այս մարդը որ վայրկեան մը առաջ բարի բուկի մը կերպարանքը ունէր. յանկարծ տեսակ մը ըմբիշ դարձած էր, և իր հաստաբազուկ ձեռքը աթոռին կռնակին վրայ կը դնէր ահարկու և զարմանալի շարժումով մը :

Ծերը որ այսպիսի վառնդի մը առջեւ շատ հաստատ և արի էր, կ'երեւայ թէ այն անձերու կարգէն էր որոնք ինչպէս բարի նոյնպէս և արի կ'ըլլան դիւրապէս և պարզապէս : Բնաւ օտարական չէ մարդուս այն հայրը որու աղջիկը կը սիրէ ինք : Մարիուս հպարտութիւն մը զգաց այս անձանօթին արիութիւնը անանկով : Եկած մարդերուն երեքը որոնց համար ժօնարէթ՝ ծխահաւ մարդը եւ անոնք՝ ըսած էր, երկաթեղէններու կուտակին մօտեմալով մէկը թիթեղի մկրատ մը, միւսը ծանր մարմիններ վերցնելու յատուկ լծակ մը, երրորդը կռան մը առաւ, և երեքն ալ դուռին առջև շարուելով կեցան առանց խօսք մը արտասանելու : Ծերը անկողնին վրայ մնացած, և աչքերը միայն բացած էր : Ժօնարէթ կինն ալ անոր քով նստած էր :

Մարիուս մտածեց թէ քանի մը բոպէէն ետք միջամտելու ժամանակը եկած պիտի ըլլայ, և աջ ձեռքը նրբանձքին ուղղութեամբ պէպ ի ձեղունը վերցուց՝ պարաստ ըլլալով ամբողջ նեւելու :



Նոյն պահուն սենեակին դուռը յանկարծ բացուելով
երեք մարդ երեւցան : Էջ 135
Պատկեր քիւ 62
ԹՊՂԱՌՈՒՆԵՐԸ Զ .

Ժօնարէթ բրաւոր մարդուն հետ խօսելէ դադրելէն ետք՝ նորէն դէպ ի Պ. Լրպլան դարձաւ և կրկնեց իր հարցումը իր սովորական խնդումովը որ ցած, զսպուած և սոսկալի խնդում էր:

Չէ՞ք ճանչնար ուրեմն զիս:

Պ. Լրպլան ուղղակի երեսը նայելով պատասխանեց.

— Ոչ:

Անառն ժօնարէթ մինչեւ սեղանը եկաւ. ճրագին վրայէն ծըռնեցաւ, թեւերը կուրծքին վրայ դրաւ, անկիւնաւոր և վայրենի ծամելիքը Պ. Լրպլանի հանդարտ երեսին մօտեցուց, կրցածին չափ յառաջացաւ առանց սակայն ետ քաշուիլ տալու Պ. Լրպլանը, և խածնելու պատրաստուող վայրենի գազանի մը այս դիրքը պահելով պօռաց.

— Անունս, ո՛չ Յապանդու է, ո՛չ ալ ժօնարէթ. Թենարտիէ՛ է անունս, Մօնֆէրմէյլի պանդոկապետն եմ ես, լսեցի՞ք. Թենարտիէ՛ է անունս. հիմա ճանչցա՞ք զիս:

Պ. Լրպլանի ճակտին վրայէն աննշմարելի կարմրուք մը անցաւ. և իր սովորական հանդարտութեամբը պատասխանեց՝ առանց վախով հանելու, ոչ ալ բարձրացնելու ձայնը.

— Դարձեալ ոչ:

Մարիուս չլսեց այդ պատասխանը: Ո՛վ որ նոյն միջոցին և մութին տեսնէր Մարիուսը, պիտի տեսնէր որ վայրենի, ապուշ և շանթահար մարդ մը դարձած է ան: Երբ Թենարտիէ կ'անունս, ըսած էր ժօնարէթ: Մարիուս մարմնովին սարսուելով պատին կըռթնած էր իրր թէ սիրաբ մտուած սուրի մը երկաթին ցուրտը զգացած ըլլար: Յետոյ յամբարար վար առած էր իր բազուկը որ նըշան տալու համար պատրաստ էր հրացանակը պարպելու, և երբ ժօնարէթ լսեցիք, Թենարտիէ կ'անունս կրկնած էր, քիչ մնաց որ Մարիուսի ուժարեկ մատները պիտի ձգէին որ իյնայ աարձանակը: Ժօնարէթ իր ո՛վ ըլլալը յայտնելով չէր յուզած Պ. Լրպլանը, բայց տակն ու վրայ ըրած էր Մարիուսը: Այս Թենարտիէ անունը զոր Պ. Լրպլան կ'երեւար թէ չէր ճանչնար, Մարիուսին ծանօթ անուն մըն էր: Յիշենք անգամ մը թէ ի՞նչ էր իրեն համար այս անունը. Մարիուս արտին մէջ պահած էր իր հօրը կտակին մէջ գրուած այս անունը. մաքին մէջ, յիշողութեան մէջ կը կրէր զայն սա նուրի-

րական յանձնարարութեան պատճառաւ . «Թենարտիէ անուն
 կեանքս ազատեց : Եթէ զաւակս հանդիպի անոր , թող ընէ
 այն ամէն բարիքը զոր կարող պիտի ըլլայ ընելու » : Ինչպէս
 յիշենք , այս անունը անոր հոգիին բարեպաշտութեանց մէկն էր
 և իր հօրը անունին հետ նաեւ Թենարտիէի անունը եռանդաբար
 կը պաշտէր : Ինչ , ա՛յս է եղեր ուրեմն այն Թենարտիէն :
 Ֆերմէյի ա՛յն պանդոկապետը զոր այնքան ժամանակ և
 րապ տեղը փնտռած էր : Վերջապէս ահա կը գտնէր զայն ,
 ինչպէս . իր հօրը այն փրկիչը աւագակ մըն էր . այն մարդը
 համար Մարիուս եռանդագին կը փափաքէր անձը նուիրել ,
 մըն էր . Բօնմէրսի զնգապետին այն ազատիչը եղեռնագործու
 մը կատարելու վրայ էր , եղեռնագործութիւն որու ձեւը տակաւ
 որոշապէս չէր երեւար Մարիուսին և որ օակայն դաւադրակամ
 մարդասպանութեան մը կը նմանէր . և որո՞ւ վրայ պիտի կատար
 ուէր այն եղեռնագործութիւնը , աէ՛ր իմ Աստուած . ի՛նչ ազէ՞տ
 ի՛նչ դառն հեգնութիւն բաղդի . հայրը դադաղին մէջէն հրատա
 կ՛ընէր անոր ամէն կրցած բարիքը ընել Թենարտիէին . չորս տարի
 ի վեր Մարիուսին միակ դադափարն էր իր հօրը այս պարտ
 վճարել , և ճիշդ այն միջոցին ուր աւագակ կը ոճրագործու
 ժամանակ արդարութեան ձեռքը պիտի յանձնէր , ճակատագրի
 Թենարտիէն է ան՝ կը պօռար . Մարիուս վերջապէս հօրը կեն
 փոխարէնը պիտի հատուցանէր այն մարդուն , կեա՛նք մը որ
 թերւոյի դիւցազնական դաշտին վրայ ուճրատարափի մը միջոց
 ազատուած էր . բայց եկու տե՛ս որ հատուցանելու փոխարէն
 կառափնառը ինքն իրեն խոստացած էր Թենարտիէին մօտեց
 ժամանակ նախ և առաջ անոր օտքերուն առջեւ նետուի՛ր
 երբէք յաջողէր գտնելու զայն և իրօք ահա հիմա գտած էր , բայց
 չէ թէ անոր ոտքը ինչալու այլ զայն դահիճին մատնելու համար
 Օգնէ՛ Թենարտիէին , կ՛ըսէր հայրը , իսկ Մարիուս այս պաշտ
 և նուիրական ձայնին իրը պատասխան Թենարտիէին կեանքը
 բառնար . և մի՞թէ ներելի էր որ իր կեանքը վտանգելով ժող
 Բօնմէրսի կեանքը ազատող մարդը , հիմա գերեզմանին մէջ պատ
 կող նոյն ինքն ժօրժ Բօնմէրսիին այսինքն իր հօրը տեսարան
 ըլլայ Սէն-Ժագի հրապարակին վրայ գլխատուելով՝ իր պատճառ

այսինքն այն Մարիուսին մատնութեամբը որ իր հօրէն կտակա
 հրաման առած էր բարիք ընելու անոր . և միթէ հեգնութիւն մը
 չէր հօրը վերջին կամքը զոր ձեռքովը գրած էր՝ այնքան ժամա
 նակ իր հուրճքին վրայ կրած ըլլալը սակայն կերպով բոլորովին
 հակառակ ընթացք մը բռնելու համար . բայց միւս կողմէն ալ նե
 բիլի՛ էր ահանտեսս ըլլալ այսպիսի դաւաճանութեան մը և չար
 գիլել զայն . նահատակը դատապարտել և մարդասպանին խնայել .
 մի՞թէ մարդս կրնա՞յ երախտագէտ մնալ այսպիսի թշուառականի մը :
 Այն ամէն գաղափարները զոր չորս տարիէ ի վեր ունեցած էր Մարի
 ուս , հիմա կարծես թէ մէկ մէկու միջէն կ'անցնէին ներկայ անա
 կնկալ դէպքին պատճառաւ : Մարիուս կը օտարուէր , Ամէն բան իրմէ
 կախում ունէր : Առանց գիտնալու՝ Մարիուսի իշխանութեան տակն
 էին այն անձերը որոնք անոր առջեւ կը շարժէին : Եթէ պարպէր
 հրացանը , Պ . Լըպլան կ'ազատէր և Թենարտիէ կը կորուէր .
 եթէ չպարպէր , Պ . Լըպլան կը զօնուէր , և՛ ո՞վ գիտէ , թերեւ
 Թենարտիէ կը փախչէր : Կամ մէկը տապալել կամ թողուլ որ միւսը
 հինայ , երկու կերպն ալ իր խեղճը կը տազնապեցնէր : Ինչ ընէր , մը
 ընտրէր . մոռնա՛ր արդեօք ամէնէն անդիմադրելի յիշատակները ,
 ինքն իրեն տուած այնքան խոստումները , պարտաւորութեանց ա
 մէնէն սրբազանը , պատուէրներու ամէնէն մեծարելին , այսինքն իր
 հօրը կտակը , և կամ թողո՞ւր արդեօք որ կտտարուի ոճրագործու
 թիւնը : Կը թուէր Մարիուսի թէ մէկ կողմէն « իր Իւրսիլը » զինքը
 կ'աղերսէր հայրը ազատելու համար , թէ միւս կողմէն ալ գնդա
 պետը իրեն կը պատուիրէր խնայել Թենարտիէն : Մարիուս խելքը
 կորուսած ըլլալ կը կարծէր : Ծունկերը կը դողդոջէին , և խորճը
 դակցելու ժամանակ անգամ չունէր , ա՛յնքան արանգօրէն և կատա
 դօրէն և կատաղաբար կը յառաջանար այն տեսարանը որ իր առ
 ջեւ կ'երեւար : Կայծես թէ յորձանք մըն էր այն տեսարանը որու
 կարծած էր թէ ինքը կ'իշխէ և որ զինքը կը քէն կը օտարէր : Ինչ
 մնաց պիտի նուաղէր :

Սակայն Թենարտիէ , — այսուրեւեւ ուրիշ անուն չպիտի տանք
 անոր , — սեղանին առջեւ աջէն ձախ կը պտըտէր տեսակ մը
 մօլորուժով և յիմարական յաղթանակով :

Ճրագը բռնեց ուժգնակի և բուխերիկին վրայ դրաւ այնպէս
զարնելով որ քիչ մնաց պատրոյգը պիտի մարէր, ճրագին իւրը
կաթիլներով պատին վրայ ոտոտակեց:

Յետոյ ահարկու կերպով մը դէպի Պ. Լըպլան դարձաւ և
թքաւ յետագայ թուքերը:

Բռնուեցա՞ր, սա՛գդ ապուշ, պիտի եփի՛ս, պիտի տապ
կուխ առդ:

Եւ նորէն սկսաւ քալել ահագին պայթուճով մը:

— Ա՛հ, կը պուար. վերջապէս գտայ քեզի, մարդասէրդ
պարո՛ն, մաշուած զգեստներ հագնող միլիոնատէր պարոն, պէ-
պէկներ տուող պարոն. ապուշդ դու ծերուկ. զիս չե՛ս ճանչնար,
հա՛. դու չէի՛ր ասկէ ութ տարի առաջ, 1823ի Մնուկին օրը Մոն-
Ֆերմէյլ եկողը և պանդոկս իջնողը. դու չէի՛ր Փանթիլին
մանկուհին, Արաոյար տունէս առնող տանողը. դու չէի՛ր դե-
ղին թիկնոց մը ունեցողը դու չէի՛ր հա, դու չէի՛ր ձեռքը
ծրա՛ մը զգեստ ունեցողը ինչպէս որ այս առտու ալ ունէի՛ր.
Գա՛ կնիկ, չըսե՛ս թէ այս մարդուն ախտն է եզեր անոր
ասոր տուները գալ եւ ասուէ զանկապաններով լի ծրարներ բերել.
Վա՛յ խելքիդ վա՛յ, ողորմաթի՛րտ ծերուկ. Մի՛թէ գտակավածառ
ե՛ս. պարոն միլիոնատէր: Կ'երեւայ թէ խանութիդ գրածագլուխը
աղքատներու կուտաս սո՛ւրբդ դու: Շիտակը աղէկ լարախաղաց
մըն ես եզեր: Ա՛հ, զիս չե՛ս ճանչնար ուրեմն: Լա՛ւ, բայց ես
քեզի կը ճանչնամ. ես անմիջապէս ճանչցայ քեզի երբ կնճիթդ
հոս երկնցնելով ցուցուցիր: Ա՛հ, վերջապէս պիտի տեսնենք հիմա
թէ շատ դիւրին բան չէ եզեր անանկ վարպետութեամբ մը անոր
ասոր տունը երթալ՝ պատրուակելով թէ պանդոկ են անոնք, նոր
մտնել աղքատի զգեստներով, լուծայ մը հայցող և ընդունող աղ-
քատի մը կերպարանքով, մարդերը խաբել, վեհանձնութիւն ծա-
խել. անոնց հացբերը (gagne-pain) առնել, և ապա անտառ-
ներուն մէջ սպառնալ. պիտի տեսնենք թէ մարդերը տնտեսականա-
լէն ետք անոնց ահագին թիկնոց մը և հիւադանոցի արժանի եր-
կու անպիտան վերմակ բերելով պարաքէ աղատիլ չկրնա՛ր ըլլալ
հասկցա՞ր, նենգաւոր ծերուկ, մանուկներ գողցող:

Թենարաթիէ կանգ առաւ, և կարծես թէ պահ մը ինքն իրեն
կը խօսէր. կրնար կարծուիլ թէ իր կատաղութիւնը կը թափէր լի

չուրերը ծակի մը մէջ թափող Ռօն գետին պէս. ապա կարծես
բարձր ձայնով վերջացնելով այն բաները զոր մեղմիկ ըսած էր ի-
րովի, ձեռքը սեղանին վրայ դարկաւ և պուաց:

— Իր կերպարանքին շինձու բարեսիրութեամբը:
Եւ պարոն Լըպլանին երեսին պուարով:

— Միտքդ բե՛ր. ժամանակաւ զիս ծաղրեցիր: Դո՛ւ ես պատ-
ճառ իմ ամէն դժբաղդութեանց: Հազար հինգ հարիւր Փրանք
տալով աղջիկ մը առիւր քովէս, որ անշուշտ հարուստներու կը վե-
րաբերէր որ արդէն շատ ստակ չահել տուած էր ինձ, և որմէ մին-
չեւ մեռնիլս տարելու շախ ստակ պիտի առնէի: Աղջիկ մը որու
երեսէն հանած պիտի բլայի այն ամէն վնասներս զոր կրեցի գար-
չելի խաղատունի մը մէջ, խաղատուն մը ուր օթերկնեան ոսկինե-
րու սոսկալի աղժուկներ կ'ըլլային, և որու պատճառաւ ունեցածս
չունեցածս կերայ աւանակի մը պէս: Ո՛հ, կ'ուզէի որ այն ամէն
խմուած գինիները թոյն ըլլային խմողներուն համար: Բայց ի՛նչ և
է, հոգ չէ: Շիտակը ըսէ, մի՛թէ ծիծաղալարժ աւանակի տեղ
չէրի՛ր զիս երբ Արաոյարին հետ ձգեցիր գացիր: Դու զօրաւորագոյն
էի՛ր այն օրը, Այսօր ալ զօրութիւնը իմ քովս է՝ ըրածիդ փոխա-
րէն: Ալ ախիս մէջն ես. ծերուկ: Բայց խնդուկս կուգայ. իրաւ որ
խնդուկս կուգայ: Տե՛ս ինչպէս որոգայթը ինկաւ միամիտը: Ըսի
իրեն թէ դերասան եմ, փապանթու կ'անուանիմ, թէ օրիորդ Մար-
տին, օրիորդ Մարտիկին հետ կատակերգութեան ներկայացում
տուած եմ. թէ տանտէրս վաղը փետրվար կին վարձք կը պահան-
ջէր. այլանդակ ապուշը և ոչ իսկ կրցաւ հասկնալ թէ պայմանա-
ժամ մը յունվար ծին կը լրանայ և ոչ թէ փետրվարի կին: Հապա
ի՛նչ ըսեմ սա չորս անպիտան լուիճներուն. օրիկան չուզեր գէթ
հարիւր Փրանքի լեցնել: Ի՛նչպէս կ'ընց անհամ անճոռնի սուտերս,
զոր կը շակէի զուարճանալով, ինքն իրեն կ'ըսէի: Ապու՛շդ դու,
հիմակ ա՛լ ձեռքիս մէջն ես: Այս առտու ոտքերդ կը լզեմ, գի-
չերն ալ սիրտդ պիտի կրծեմ:

Թենարաթիէ դադարեցաւ: Շունչը հատած էր: Իր նեղ և պզ-
տիկ կուրծքը դարբնոցի փուքի մը պէս կը հեւար: Իր աչքը լի էր
նուառա երջանկութեամբ մը, երջանկութիւն տկար, անգութ և
վատ արարածի մը որ վերջապէս կրնայ տապալիլ ինչ որ ահարե-

կած է զինքը և նախատել ինչ որ ողորմած է. ուրախութիւն
թզուկի մը որ ներքանը Գողիաթին գլուխին վրայ դրած է. ուրա-
խութիւն շնագայլի մը որ կ'սկսի գիշատել հիւանդ ձուլ մը որ
բաւական մեռած ըլլալով ա'լ չը կրնար դէժ գնել և բաւական
կենդանի ըլլալով տակաւին կրնայ համբերել տառապանքի:

Պ. Լըպլան չընդմիջեց անոր խօսքը, բայց երբ Թենարտիէ
դադրեցաւ խօսելէ, ըսաւ.

— Չգիտեմ թէ ինչ ըսել կ'ուզես: Կը սխալիս: Խիստ աղ-
քատ մարդ մըն եմ, և ասննեւին միլիոն ունեցող հարուստ մը չեմ:
Չեմ ճանչնար քեզի: Ձիս ուրիշ մը կը կարծես:

— Ա՛հ, հանչեց Թենարտիէ, աղէկ փախուստի ճամբայ, Այն
կատակով զի՛ս պիտի խաբես: Կը շիթիս, ծերուկ: Ա՛հ, չե՛ս յի-
շեր: Չտեսնե՞ս թէ ո՛վ եմ ես:

— Ներէ՛, պարոն. պատասխանեց Պ. Լըպլան քաղաքավա-
րաւան ձայնով որ այսպիսի վայրկեանի մը մէջ տարօրինակ և զո-
րաւոր բան մը ունէր, կը տեսնեմ որ աւաղակ մըն ես:

Ամէն մարդ դիտած է թէ ամէնէն պօքալի անձինք ալ դիւ-
րադրգուութիւն ունին. հրէշները զգայուն են: Այս աւաղակ բա-
ռին վրայ Թենարտիէին անկողնէն վար ցատկեց, Թենարտիէն ալ
աթոռը բռնեց իբր թէ ուզէր ձեռքնորուն մէջ խորտակել զայն:

— Դուն անդք կեցի՛ր, պոռաց կնոջը, և դէպի Պ. Լըպլան
դառնալով.

— Աւաղակ, ըսիր. այո՛, գիտեմ որ դուք այսպէս կ'ան-
ուանէք մեզի, պարոն հարուստներ: Աղէկ միտքս եկաւ. ստոյգ է
թէ անանկացայ, կը պահուիմ, հաց չունիմ, ստակ չունիմ, և աւա-
ղակ մըն եմ: Երեք օրէ ի վեր հացի կտոր մը դրած չունիմ բե-
րանս, այլ սակայն աւաղակ եմ եղեր: Ա՛հ, դուք հարուստներ,
դուք ձեր սոքերը կը տաքցնէք, հողաթափներ կը հողնիք, արքե-
պիսկոպոսներու պէս տաքուկ թիկնոցներ ունիք, դոնապան ունե-
ցող տուներու առաջին դատիկոնները կը բնակիք. գետնասուռի
կ'ուտէք, յունուար ամիսին մէջ մէկ տրձակ ծներկը քառասուն
Ֆրանքի արձնելով կ'ուտէք, ոլոռն կուտէք, կերուխուսներով կը
յափրիք, և երբ կ'ուզէք հասկնալ թէ ցուրտ կայ, օրադիրը
նայիք դիտելու համար է ինչ աստիճան կը շշմանակէ Շըվալիէ

ճարտարապետին ջերմաչափը. բայց մենք, ա՛հ, ջերմաչափները
մենք ենք: Մենք ցուրտին քանի՛ աստիճան ըլլալը հասկնալու
համար պէտք չունինք քարտիին ժամացոյցի աշտարակին անկիւնը
կրթալու և տեսնելու. մենք մեր արիւնին մեր երակներուն մէջ
թանձրանալը, մեր սրտին սառնահարիւր կ'ըզանք և կ'ըօնք. Աս-
տուած չկայ: Ե՛ւ մեր խոռոչները կուգաք, այո՛, մեր խոռոչները
կուգաք մեզի աւաղակ անուանելու համար: Բայց պիտի ուտենք,
պիտի լափենք ձեզի, խեղճ ձագեր: Պարոն միլիոնատէր, գիտնաս
որ ժամանակաւ ընկերական վիճակ մը ունէի, սուրք կը վճարէի,
ընարող էի. քաղքենի մըն եմ ես, բայց դո՛ւ, Թերեւս դո՛ւ քաղ-
քենի իսկ չես:

Հոս Թենարտիէ քայլ մը առաւ դէպի դուռին քով կեցող
մարդերը, և սասանումով մը շարունակեց.

— Ե՛րբ կը մտածեմ թէ կը համարձակի հոս գալով հետս իբր
հին մուճակներ կարկառոյի մը հետ խօսելու:

Յետոյ մոլեգնութեան վերածումով մը Պ. Լըպլանին դառ-
նալով,

— Գիտնա՛ս նաեւ, պարոն մարդասէր, թէ անյայտ մարդ մը
չեմ ես: Չեմ այն մարդերու կարգէն որոնց անունը յայտնի չէ և
որոնք տուները կը մտնեն մանուկներ առեւանգելու համար: Գաղ-
ղիական վաղեմի գինուոր մըն եմ ես. պէտք էր որ շքանշան մը
տուած ըլլայի. վաթէրլոյի պատերազմին մէջ ես ալ կուռեցայ, և
պատերազմին մէջ կոմս աը Բօնմէրսի անուն զօրապետ մը ազա-
տանցի: Այս պատկերը դոր կը տեսնես և դօր Դաւիթ նկարեց
Պրիւսէլի մէջ, գիտե՞ս զով կը ներկայացնէ, զիս կը ներկայացնէ:
Դաւիթ ուղեց անմահացնել (immortaliser) այս ուղմական քա-
ջութիւնը: Բօնմէրսի զօրապետը շալակս առած եմ, և ումբերու
մէջէն տանելով կ'ազատեմ: Այս է անա պատմութիւնը: Այս դօ-
րապետն ալ երբէք բան մը չըրաւ ինձ. ան ալ ուրիշներուն պէս է
ճղեր: Բայց և այնպէս ես ազատեցի իր կեանքը՝ իմինս վտանգե-
լով, և զայս հաստատող վկայագիրներով լի են գրպաններս: Վա-
թերլոյի գինուոր մըն եմ ես, հիմա հասկցա՛ր, նզովից արմատ: Եւ
հիմա կ'որ այս ամէնը քեզի ըսելու բարութիւնը ունեցայ, վերջ
տանք, պատկ պէտք է ինձ, շատ ստակ պէտք է, տհաղին գումար

պէտք է, թէ ոչ կտոր կտոր պիտի ընեմ քեզի, ապիրատներուն ապիրատը:

Մարիուս փոքր ինչ զսպած էր իր անձկութիւնները, և մտիկ կ'ընէր: Ա՛լ ամենափոքր տարակոյս մը ունենալը անկարելի էր: Կտակին մէջ նշանակուած թենարտիէն իրօք այս մարդն էր: Մարիուս սարսուեցաւ երբ լսեց իր ապերախտութեան այսպէս յանդիմանուիլը, ապերախտութիւն զոր ազէտապէս արդարացնելու կէտին մէջն էր ինք: Մարիուսի վարանումները կրկնապատկուեցան: Մանաւանդ թէ թենարտիէի այս ամէն խօսքերը, արտասանութիւնը, շարժումները, նայուածքը՝ որ ամէն մէկ բառէն բոցեր կը ժայթքեցնէր, ամէն բան ցուցնող յոռի բնաւորութեան մը այս պայթուժը, սնապարծութեան և նուաստութեան, հպարտութեան և փոքրագութեան, կատաղութեան և թեթեւամտութեան այս խառնուրդը, իրական տրտունջներու և կեղծ զգացումներու այս գառաբունաբարութեան հեշտութիւնը վայելող շարսիրտ մարդու այս անամոթութիւնը, ազեղ հոգիի մը այս լրբենի մերկութիւնը, ամէն ատելութեանց հետ խառնուած ամէն տառապանաց այս համակիզումը (conflagration) բան մը ունէին որ չարութեան պէս սոսկ կալի և ճշմարտութեան պէս կսկծալի էր:

Ճարտաբազէտի պատկերը, Դաւիթին նկարը զոր Պ. Լըպլանին առաջարկած էր գնել, ընթերցողը գուշակեց հարկաւ թէ ոչ այլ ինչ էր եթէ ոչ իր խոհատունին դրան վրայ դրած նշանատախտակը զոր ինչպէս ընթերցողը կը յիշէ անշուշտ, թէնարտիէ ինք նկարած էր և որ իր Մօնֆերմէյլի նաւաբեկութենէ մնացած միակ բեկորն էր:

Մարիուսի տեսողական ճառագայթը խափանուելէ դադարած ըլլալով, հիմակ ան կրնար դիտել այս բանը, և այս դեղնագորշու ներկանկարին մէջ իրօք պատերազմ մը, միապատ յատակ մը մարդու մը ուրիշ մարդ մը տանիլը կը տեսնէր որոշպէս: Այս երկու մարդերն էին թենարտիէ և Բօնմէրսի. ազատիչ յիսնապետը և ազատուած գնդապետը: Մարիուս արբիւրի մը կը նմանէր. այս պատկերը կերպով մը կենդանութիւն կուտար իր հօրը. ա՛լ Մօնֆերմէյլի պանդոկին նշանատախտակը չէր այն, հապա յարութիւն մը, գերեզման մը կիսովին կը բացուէր անոր վրայ,

բուական մը կ'ելլէր գերեզմանէն. Մարիուս ցունքերուն մէջ սրտին դռնակը կը լսէր, Վաթէրլոյի թնդանօթը ականջներուն մէջ կորոտար, կ'ահարեկէր զինքը իր արիւնաթաթաւ հայրը որ այս սոսկալի նկարատախտակին վրայ ազօտապէս նկարուած էր, և կը թուէր Մարիուսի թէ այն դիմաստուէրը իրեն կը նայէր ուղղակի: Երբ թենարտիէ շունչ առաւ, իր արիւնաբայր բերբը Պ. Լըպլանին վրայ յառեց, և ցած ու կտրուկ ձայնով մը ըսաւ անոր.

— Չարչարուիլ սկսելէ առաջ ըսելիք մը ունի՞ս:
Պ. Լըպլան կը լսէր: Այս լուսութեան միջոցին թոյլ ձայն մը յետագայ սոսկալի հեզնութիւնը ըրաւ նրբանցքէն
— Եթէ պէտք է վայտ ձեղքել, ես պատրաստ եմ հոս:
Տապարակիր մարդն էր խօսողը որ կը գուարճանար:
Նոյն պահուն անկուած մազերով և հողագոյն անագին դէմք մը երեւցաւ դուռէն սոսկալի խնդումով մը որ չէ թէ ակուանք այլ ակիչներ կը ցուցնէր:
Տապարաւոր մարդուն դէմքն էր այն:
— Ինչո՞ւ դիմակդ հանեցիր, գուցեք թենարտիէ կառաղութեամբ:

— Խնդալու համար, պատասխանեց մարդը:
Բանի մը վայրկենէ ի վեր կ'երեւար թէ Պ. Լըպլան թենարտիէի ամէն շարժումները կը նայէր և կը դիտէր, մինչդեռ թենարտիէ նոյն իսկ իր կատաղութենէն շլանալով և կուրնալով որջին մէջ կ'երթեւեկէր, վստահ ըլլալով թէ դուռը պահպանուած է, թէ իր սպառազէն իշխանութեան տակին է անզէն մարդ մը, թէ մէկին դէմ ինն էր ինք՝ իր կինը միայն մէկ մարդու տեղ հաշուելով: Թենարտիէ տապարակիր մարդուն այն յանդիմանութիւնը ուղղած վայրկեանին կռնակը Պ. Լըպլանին դարձուցած էր:

Պ. Լըպլան այս վայրկեանը պատեհ առիթ սեպեց, ստքովը թողր և ձեռքովը սեղանը հրեց, և ոստումով մը, զարմանալի արագաշարժութեամբ մը պատուհանին քով հասաւ՝ առանց ժամանակ տալու թենարտիէին որ ետեւը դառնայ: Մանրեկորդի մը մէջ պատուհանը բացաւ, յենարանէն վեր ելաւ և վրայէն ցատկեց: Կիսովին դուրս էր արդէն երբ վեց հաստաբազուկ ձեռքեր բռնեցին և ուժով մը որջը բերին զայն: «Մխանան մաքրող» երեք

Չ. Հատոր
(Թղտաւաներ 74)

մարդերն էին անոր վրայ խոյացողները: Մի և նոյն ժամանակ թե-
նարտուհին ալ մարդուն մազերը բռնած էր արհեստով:

Ոտքերու դժուտութիւնը լսելով միւս աւազակներն ալ նրբանցքէն
վազեցին եկան: Այն ծերը որ անկողնին վրայ էր և արդիւն կ'երե-
ւար, խշտեակէն վար իջաւ, և երեքսուրով հասաւ ուղեգործի կռան
մը ի ձեռին:

«Միտանան մաքրողներէն» մէկը Պ. Լրպլանին գլուխին վերեւը
երկաթէ բիր մը կը վերցնէր որու երկու ծայրը երկու կապարեայ
գունդեր կային. այս աւազակին երեսը թէեւ մրտ էր, բայց
ձեռքի ճրագին լոյսէն լուսաւորուած ըլլալուն համար, Մարիուս
անոր երեսին մուրովը հանդերձ ո'վ ըլլալը ձանձկան Բրէնթանիէ:
— Պիկրոնայլ ըսուած Բանչօն էր ան:

Մարիուս չկրցաւ դիմադրել այս տեսարանին. — Ներէ՛ ինձ,
հայր իմ, ըսաւ մտապէս, և մատովը ատրճանակին կայծահանը
փնտռեց: Ատրճանակը քիչ մնաց պիտի պարպուէր, և ահա թե-
նարտիկի ձայնը պսոաց:

— Գէշութիւն մի՛ ընէք իրեն:

Նահատակին այս յուսահատական փորձը թե՛նարտիկին չէ թէ
ղայրոյթ այլ հանդարտութիւն տուած էր: Թե՛նարտիէ կրկին մարդ
մըն էր, մարդ անգութ և մարդ վարպետորդի: Անգութ մարդը
մինչեւ հիմա յաղթանակի աւիւնովը համակուելով իշխած էր ինչո՞ղ
և չչարժող որսին առջեւ. երբ նահատակը խլրտեցաւ և կռուի
ուղեց, վարպետորդի մարդը երեւցաւ և յաղթանակեց:

— Գէշութիւն մի՛ ընէք իրեն, կրկնեց, և՛ առանց ինքն ալ
գլխնալու՝ իբր առաջին յոշոողութիւն, կեցուց նետուելու պատ-
րաստ ատրճանակը և հաշմեց Մարիուսը որու համար ստիպողական
հարկը վերցաւ, և որ տեսարանին այս նոր կերպարանը տեսնելով
անպատեհ չսեպեց տակաւին համբերելը: Ո'վ գիտէ. թերեւս բաղդի
նոր շրջում մը պատահելով Իւրսիւլի հայրին մահուանը համբերե-
լու կամ գնդապետին ազատիչը կորուստի մատնելու սոսկալի ըն-
տրութիւնը ընելէ պիտի ազատէր զինքը:

Հէրքիւլեան կռիւ մը սկսած էր: Պ. Լրպլան անողին կռուի
մը իջեցնելով ծերը սենեակին մէջտեղը թաւալալոր նետած, ձեռ-
քին արտաքին կողմովը երկու ապստակ տալով յարձակողներուն



Հերիւլեան կռիւ մը սկսած էր: Էջ 145
Պատկեր քիւ 63 ԹՅՈՒՍԱՆՆԵՐՈՒ 2.

երկուքն ալ տապալած, և միւսներէն ալ երկու հոգի իր ծունկերուն տակը առած էր. ապիրատները կրանիթէ երկաթաքարի մը ներքեւ գտնուողի պէս կը հռնչէին անոր ծունկին ներքեւ ճընշուելով. բայց միւս չորսը ահարկու ծերունիին երկու թեւերէն և ծածրակէն բռնած և առաջադրելով երկու մրադէմներու վրայ կըծկած էին զայն: Այսպէս մէկ քանին նուաճելով և մէկ քանին նուաճուելով. վարինները ճմլելով և վերիններուն տակը շնչապառ մնալով, իր վրայ դիզուող ամէն ոյժերը նանրաբար ցնցելով Պ. Լըպլան աւազակներու սոսկալի խումբին ներքեւ աներեւոյթ կ'ըլլար սոռնացող ահագին շուներու և պառականներու դէզի մը տակ մնացող վարազի մը պէս:

Աւազակները վերջապէս կրցան պատուհանին ամէնէն մօտ անկողնին վրայ տապալել և հանդարտ կեցնել զայն: Թեհարտուհին անոր մազերը թողած չէր:

— Դու, ըսաւ Թեհարտիէ, գու մի' խառնուիր այս գործին: Հիմա շալդ պիտի պատուես:

Թեհարտուհին՝ արուին հնազանդող մտառակ գայլի մը պէս գոռումով մը հնազանդեցաւ:

— Դուք ալ, ըսաւ Թեհարտիէ, ատոր վրան վնասեցէք. Պ. Լըպլան կ'երեւար թէ ա'լ որոշած էր չդիմադրել: Աւազակներն անոր ամէն գրպանները որոնեցին: Կաշիէ քսակ մը դառան միայն որու մէջ վեց ֆրանք կար, և թաշկինակ մը:

Թեհարտիէ թաշկինակը առաւ և իր գրպանը դրաւ:

— Ինչ. թղթակալ չկա՞յ: հարցուց:

— Ոչ ալ ժամացոյց, պատասխանեց «ծխահան մաքրողներէն» մէկը:

— Հոգ չէ, մըմուսց որովայնախօսի ձայնով մը այն դիմակաւոր մարդն որ ձեռքը մեծ բանալի մը ունէր, վայրենի ձեր մըն է այս:

Թեհարտիէ դուռին քովի անկիւնը դնած և անկէ շուաններ առնելով աւազակներուն նետեց:

— Անկողնինն առքին կապեցէք զինքը. և նշմարելով աւազակներուն ձերք որ Պ. Լըպլանին կուսփէն օհնեակին մէջ տեղը նետուած և փոռուած էր անշարժ:

— Մ'ը՞նչ մեռած է Պալաթրիէն, հարցուց:

— Ոչ, պատասխանեց Պիկրընայլ, գինով է:

— Ի՛նչ անկիրեն մը աւելցէ՞ք զայն, ըսաւ Թենարտիէ:

«Միտանան մաքրողներէն» երկուքը ոտքով երկաթեղէններու դէզին քով հրեցին արբշիւր:

— Պա՛պէ, ինչո՞ւ այդքան շատ մարդ բերիր, ըսաւ կամայ մը Թենարտիէ բրաւոր մարդուն. անօգուտ էր այդքանը:

— Ի՞նչ ընեմ, պատասխանեց բրաւոր մարդը, ամէնքն ալ ուղեցին մասնակցիլ: Յոռի է եղանակը: Գործ չկայ:

Այն խշտեակը օրու վրայ տապալուած էր Պ. Լըպլան. հիւանդանոցի տեսակ մը անկողին էր և հազիւ հազ քառակուսուտ փայտէ չորս օրէններու վրայ կը կռթնէր: Պ. Լըպլան դիմադրութիւն չըրաւ: Աւազակներն ոտքի վրայ կեցնելով պատուհանէ ամենէն հեռու և բուխերիկին ամենէն մօտ անկողինն օրէնին կայեցին զայն՝ օտքերը գետինը դնելով: Երբ վերջին հանգոյցը կատարուեցաւ, Թենարտիէ աթոռ մը առաւ և եկաւ գրեթէ Պ. Լըպլանի դէմ նստաւ: Թենարտիէ ա՛լ առջի Թենարտիէին չէր նմանէր քանի մը վայրկեանի մէջ իր դէմքը մոլեգին բռնութիւնը ձգած և հանդարտ ու կեղծ հեղութիւն մը առած էր: Մարիուս գրասենեակի մարդու յատուկ անոր այս քաղաքավարական ժպիտը տեսնելով դժուարաւ կը ճանչնար թէ պահ մը առաջ փրփրացող գրեթէ անասնային բերանն էր այն ժպտող բերանը. շուարումով կը դիտէր այս ծիծաղական և տաղնապալի այլակերպութիւնը կը կղզար որ մարդս կ'ըզայ երբ վազրի մը նենդամիտ դատասէրի մը փոքր ուրիւր կը տեսնէ:

— Պարոն... ըսաւ Թենարտիէ:

Շարժում մը ընելով հեռացուց աւազակները, որոնք իրեն ձեռքը տակաւին Պ. Լըպլանի վրայէն քաշած չէին: Ամենքն դէպի դուռը քաշուեցան:

— Պարոն, կրկնեց Թենարտիէ, աղէկ չես ըներ պատուհանէ ցատկելու փորձ ընելովդ: Թերեւս ոտքդ կտրէիր: Հիմա, կը ներես, հանդարտօրէն պիտի խօսինք: Բան մը դիտեցի՞ պէտք է որ այս դիտողութիւնս յայտնեմ քեզ. մինչեւ հիմա կաւին աղաղակ մը չհանեցիր:

Թենարտիէ իրաւունք ունէր. այս պարագայն ստոյգ էր, թէև Մարիուս իր խռովութեանը մէջ նշմարած չէր զայն: Պ. Լըպլան հազիւ թէ քանի մը խօսք արտասանած էր առանց բարձրացնելու ձայնը, և՛ նաև պատուհանին քով վեց աւազակներու հետ կըռուած միջոցին ամենախորին և խիստ տարօրինակ լռութիւն մը պահած էր: Թենարտիէ շարունակեց.

— Ի՛նչ դարմանք, եթէ փոքր ինչ՝ դո՛ղ կայ, մարդասպա՛ն կայ, պոռայիր, անպատեհ չպիտի սեպէր պօռալդ. ի պահանջել հարկի ներելի է այդ աղաղակը ձգել, և ես իմ մասին չար միտքով չպիտի առնէի աղաղակդ: Խիստ ընական բան մըն է քիչ մը վիճուկ հանել երբ մարդս կը գտնուի այնպիս անձերու մէջ որ բաւական վստահելի չեն երեւար: Եթէ պոռայիր անգամ, ոչ ոք բան մը պիտի ըսէր քեզ, և ոչ իսկ զայլ պիտի դրուէր բերանդ: Ըսեմ քեզ թէ ինչո՞ւ. վասն զի այս սենեակին ձայնը չըլտուիր. այս սենեակը այս յատկութիւնէն ի դատ բան մը չունի. բայց՝ ինչպէս ըսի՝ ունի այս յատկութիւնը: Ստորերկրեայ մասան մըն է այս, որու մէջ եթէ ուսւմը մը նետելու ալ ըլլայ, ամենէն մօտակայ պահնորդարանը պիտի կարծէ թէ գինովի մը խորդումին ձայնն է այն: Հոս թնդանօթի գոռոււմը պո՛ւմ, որոտումն ալ բո՛ւմ ըսել է դուրսի մարդերու համար: Յարմար ընակարան մըն է այս: Բայց ինչ է է, աւելի աղէկ ըլլիր չպօռալով. շնորհակալութիւն, և ահա ըսեմ քեզ թէ ի՛նչ կը հետեւցնեմ այդ լռութենէդ: Սիրելիդ իմ պարոն, երբ աղաղակ ձգուի, ո՛վ կուզայ. Ոստիկանութիւնը: Եւ ոստիկանութեանէն ե՛տք. Արդարութիւնը: Արդ քանի որ չպօռացիր, ըսել է թէ դու ալ մեզի պէս ոստիկանութեան և արդարութեան հօս գալը չես ուզեր. ըսել է թէ, — շատ ժամանակէ ի վեր ունիմ այս կասկածը, — ըսել է թէ բան մը ունիս զոր շահդ կը պահանջէ թագուն պահել: Մեր շահն ալ մի և նոյնը կը պահանջէ. Ուրեմն կրնանք համաձայնիլ:

Թենարտիէն մինչդեռ այսպէս կը խօսէր, կարծես թէ՛ բիրը Պ. Լըպլանին վրայ յառելով՝ իր աչքերէն ելլող սրածայր սլաքները կալանաւորին մինչև խիղճը մխելու կ'աշխատէր: Սակայն իր խօսուածքը որ տեսակ մը սմանողովի յատուկ և չտիպաւոր անամօթութեան մը դրոշմը կը կրէր, զգուշաւոր և գրեթէ ընտիր ձեւ

մը ունէր, և լսողը կ'զգար թէ ան որ քիչ մը առաջ աւազակ էր հիմա էր նաև «այնպիսի մարդ մը որ ուսում առած է եկեղեցական ըլլալու համար:

Կալանաւորին պահած լուսթիւնը, իր կեանքի ազատումին հոգը անգամ մտնալու աստիճան ըրած զգուշութիւնը, և այն դիմադրութիւնը զոր ցուցուցած էր բնութեան առաջին շարժումին որ է աղաղակ մը հանել, պէտք է ըսել թէ՝ Թենարտիէի դիտողութենէն ի վեր՝ անախորժ տպաւորութիւն մը և ցաւալի զարմանք մը կուտային:

Թենարտիէի շատ իրաւացի դիտողութիւնը Մարիուսի համար ա'լ աւելի կը մթահարէր այն անիմանալի թանձրութիւնները որոնց ներքև կը պահուէր այս ծանր և տարօրինակ կերպարանքը, կերպարանք որու Գուրֆէյրազ Պ. Լըպլան ծիծաղելի մականունը տուած էր: Բայց ո՛վ կ'ուզէր թող ըլլար այս մարդը, չուաններով կայուած, դահիճներէ շրջապատուած և կարծես կիսովին ընկղմած էր փոսի մը մէջ որու խորութիւնը ամէն րոպէ աստիճան մը կ'աւելնար, բայց և այնպէս Թենարտիէի թէ՛ կատաղութեան և թէ՛ հեղութեան առջև անզգայ կը մնար, և Մարիուս այնպիսի պարագայի մը մէջ չէր կրնար չսքանչանալ այս դէմքին վրայ որ վըսեմ թախծութիւն մը ունէր:

Անշուշտ այս մարդը բոլորովին աներկիւզ հոգի մըն էր և շուտով ի'նչ բան է չէր գիտեր: Այն մարդոցմէն մէկն էր որոնք յուսահատական կացութիւններու զարմանքը կը զսպեն: Թէև շատ ծայրայեղ էր ճգնաժամը, թէև անխուսափելի էր աղետալի վախճանը, բայց և այնպէս ան ամենեւին չէր ցուցներ այնպիսի բան մը որ կարենար նմանիլ ջուրին տակ սոսկալի կերպով աչքերը բացող ծովաձկնի մը հոգեւորութեան:

Թենարտիէ առանց սեթեւեթի ոտքի վրայ ելլելով բաւական քիչին քով գնաց, հողմարդելը վերցնելով մօտակայ խառնակիւն կռթնցուց, և այնպէս երեւան հանեց հրաբորբոք կրակարանը որու մէջ կալանաւորը կրնար կատարելապէս տեսնել ճերմակ երնուալու չափ կարմրած և տեղ տեղ շառագոյն պղտիկ ասագերու ձեւը առած դուռը:

Յետոյ Թենարտիէ Պ. Լըպլանի մօտ գալով նստաւ:

Կը շարունակեմ, բառ: Կրնանք համաձայնիլ: Բարեկամաբար կարգադրենք գործը: Իրանունք չունէի քիչ մը առաջ բարկանալու: չգիտեմ թէ ո՛ր էր խելքս. սահմանէն անցայ, այլանշակ բաներ ըրի: Օրինակի համար ըսելով թէ միլիտանտէր ես, ստակ, շատ ստակ, անագին գումարներ կը պահանջէի: Բայց անիրաւութիւն մըն է այդպիսի պահանջում մը: Է՛ն որքան ալ հարուստ ըլլաս, դու ալ ծախք ունիս, և ո՛վ է չունեցողը. չեմ ուզեր անանկել զքեզ. վերջապէս կծծի մը չեմ: Չեմ նմանիր այն մարդոց որոնք կացութեան մը մէջ երբ զօրաւորագոյն կ'ըլլան, պատեհ առիթ կը համարին ծիծաղելի ըլլալը: Ահա ես կը զիջանիմ և իմ կողմէ զոհողութիւն մը կ'ընեմ: Պարզապէս երկու հարիւր հազար ֆրանգ պէտք է ինձ:

Պ. Լըպլան բառ մը չարտասանեց: Թենարտիէ շարունակեց:

Կը տեսնես որ պահանջումս բուական չափաւորեցի: Չգիտեմ թէ որքա՛ն է հարստութիւնդ: Բայց գիտեմ թէ ստակին չես նայիր, և ջեղի պէս բարեգործ մարդ մը շատ աղէկ կրնայ երկու հարիւր հազար ֆրանք տալ ընտանեաց զլուխի մը որ ապերջանիկ է: Անշուշտ դուն ալ նոյնպէս իրաւունքը ճանչցող ես, անշուշտ չերեւակայեցիր թէ քիչ մը գինի խմել և Տէնուայի պանդոկը կովի միս ուտել կարենալու չափ օտակ ուղելու համար աշխատած ըլլամ ինչպէս է այսօրուան աշխատանքս, և կարգադրեմ այս գիշերուան գործը որ այս պարօններուն վկայութեան նայելով լաւ կարգադրուած գործ մըն է: Երկու հարիւր հազար ֆրանք, այս է անաւոր արժէքը: Երբ այս չնչին գումարը գրպանէդ կ'ելլէ, կ'ապահովեմ քեզ թէ ամէն բան կը լիննայ և թէ մազիդ մէկ թեւին անգամ չպիտի դպցուի: Պիտի ըսես ինձ թերեւ թէ երկու հարիւր հազար ֆրանք չկայ վրադ: Ո՛հ, ես չափազանցող չեմ: Ատիկայ չեմ պահանջեր: Բան մը միայն կը պահանջեմ քեզմէ: Բարեհաճէ գրելու ինչ որ պիտի ըսեմ քեզի:

Հոս Թենարտիէ ընդմիջեց խօսքը, յետոյ շարունակեց բառերը ծանր ծանր արտասանելով և գէպի կրակարանին կողմը ժպիտ մը տալով,

— Այժմէն ըսեմ թէ մտիկ չպիտի ընեմ եթէ գիր գրել չգիտնալ ձեւացնես:

Երեւելի հաւատաքննիչ մը կրնար նախանձիլ այս ժպիտէն :
Թենարտիէ սեզանը Պ. Լըպլանին քով հրեց , և կաշամար մը
գրիչ մը և թերթ մը թուղթ առաւ գզրոցին մէջէն զոր կիտարաց
թողուց և ուր դանակին երկայն երկաթը կը փայլէր :

Թուղթը Պ. Լըպլանին առջեւ դրած :

— Իրէ՛ , ըսաւ :

Կալանաւորը վերջապէս խօսեցաւ .

— Ի՞նչպէս կ'ուզես որ գրեմ . կապուած եմ :

— Իրաւ ըսիր , ներէ՛ ըսաւ Թենարտիէ , շատ իրաւունք
ունիս :

Եւ դէպի Պիկրընայլ դառնալով .

— Իսկէ պարոնին աջ թեւը :

Բանշօ-Բրէնթանիէ-Պիկրընայլ աւտոզակը կատարեց Թէնարտիէի
հրամանը : Երբ կալանաւորին աջ ձեռքը ազատ եղաւ , Թե-
նարտիէ գրիչը մեղանին թաթխեց և անոր տուաւ :

— Պարոն , ազէկ դիտէ՛ որ մեր իշխանութեան աակն ես ,
մեր ափին մէջ ես . թէ որ և է մարդկային զօրութիւն չկրնար քեզի
ասկէ ազատել , և թէ յիրաւի պիտի ցաւինք եթէ ըռնադատութիւնք
անախօրժ միջոցներու դիմելու : Ոչ անունդ , ոչ ալ հասցէդ զե-
տեմ , բայց ահա այժմէն իմաց կուտամ քեզ թէ գրելու նամակք
տանող անձին մինչեւ վերադառնալը կապուած պիտի մնաս : Այժմ
հաճէ գրելու :

— Ի՞նչ , հարցուց կալանաւորը :

— Ահա տուն կուտամ :

Պ. Լըպլան գրիչը առաւ :

Թենարտիէ սկսաւ տուն տալ :

— «Աղջիկս . . .»

Կալանաւորը սարսուկեցաւ , և աչքերը վեր ընելով Թենարտիէին
նայեցաւ .

— Ի՞նչ «սիրելի աղջիկս» , ըսաւ Թենարտիէ :

Պ. Լըպլան հնազանդեցաւ : Թենարտիէ շարունակեց .

— «Անմիջապէս եկո՛ւ . . .»

Խօսքը ընդմիջելով ,

— Զինք դուրսելով կը խօսիս հետը , այնպէս չէ՛ :

— Որո՞ւ հետ , հարցուց Պ. Լըպլան :

— Զարմանալի հարցում , պզտիկին հետ , ըսաւ Թենարտիէ :
Պ. Լըպլան առերեւոյթս առանց ամենափոքր յոյզ մը ցու-
ցուեցելու պատասխանեց .

— Զգիտեմ թէ ի՞նչ ըսել կ'ուզես :

— Լա՛ւ , շարունակէ , ըսաւ Թենարտիէ , և սկսաւ տուն տալ :

— «Անմիջապէս եկո՛ւ : Անհրաժեշտ պէտք ունիմ քեզի : Այս
տոմսակը յանձնողը քեզի առնելով քովս բերելու է : Կ'ապտեմ :
Եկո՛ւ վտտահու՞թեամբ» :

Պ. Լըպլան գրած էր Թենարտիէի ամէն ըսածը : Թէնարտիէ
կրկնեց :

— Ա՛հ , սրբո՛ր եկու վստահութեամբը , այդ կրնայ եթադրել
տալ թէ գործը բոլորովին պարզ բան մը չէ և թէ անվստահու-
թիւնը կարելի է :

Պ. Լըպլան աւրեց երկու բառը :

— Այժմ , շարունակեց Թենարտիէ , ստորագրէ : Ի՞նչ է ա-
նունդ :

Կալանաւորը վար դրաւ գրիչը և հարցուց .

— Որո՞ւ պիտի ուղղուի այս նամակը :

— Սրդէն գիտես , պատասխանեց Թենարտիէ , պզտիկին պիտի
ուղղուի : Ի՞նչ մը առաջ ըսի :

Յայտնի էր թէ Թենարտիէ կ'զգուշանար անուանել այն նո-
րատի աղջիկը որու վրայ էր խնդիրը : «Արտոյտը» կ'ըսէր , «պըզ-
տիկը» կ'ըսէր , բայց անունը չէր տար : Յանցակիցներուն առջեւ
էր գազանիքը պահող սատանայ մարդու մը զգուշութիւնը էր այս :
Անունը տալով բոլոր «գործը» իր յանցակիցներուն յանձնել և պէտք
եղածէն աւելի բան իմացնել էր անոնց :

Թենարտիէ կրկնեց .

— Ստորագրէ , Ի՞նչ է անունդ :

— Իւրպէն Ֆապրը , ըսաւ կալանաւորը :

Թենարտիէ կատուի մը շարժումով անմիջապէս ձեռքը գրպա-
նը տարաւ և հանեց Պ. Լըպլանին վայէն առնուած թաշկինակը :
Թաշկինակին նշանագիրը փնտռեց և ճրագին մօտեցուց :

— Ի . Ֆ . ձիւղ է . Իւրպէն Ֆապրը , Լա՛ւ , ստորագրէ Ի . Ֆ .

Կալանաւորը ստորագրեց :

— Նամակը ծալելու համար երկու ձեռք պէտք է, ինծի տուր, ես ծալեմ :

Ծալելին ետք Թենարտիէ կրկնեց.

— Դրէ հասցէն. Օրիորդ Յապրը, տունդ : Գիտեմ որ տունդ, ասկէ շատ հեռու չէ, Սէն-Ժաղ-տիւ-Հօ-Բայի մօտերն է, վասն զի ամէն օր այն ժամը պատարաք տեսնելու կ'երթաս, բայց չեմ գիտեր թէ ո՞ր փողոցն է : Կը տեսնեմ որ կը հասկնաս ինչ կայտութեան մէջ գտնուիր : Ինչպէս որ անունդ չկեղծեցիր, չպիտի կեղեւս նաև հասցէդ : Դուն ձեռքովդ գրէ հասցէն :

Կալանաւորը պահ մը կեցաւ խորհելով, յետոյ գրիչը առաւ և գրեց.

— Օրիորդ Յապրը, Գ. Իւրպէն Յապրի տունը, Սէն-Տօմիսիք տ'Անֆէր փողոց, թիւ 17 :

Թենարտիէ նամակը առաւ տեսակ մը տենդային յուզմունքով :

— Կնի՛կ, պօռաջ :

Թենարտուհին երեւցաւ :

— Ահա նամակը : Գիտես թէ ինչ պիտի ըսես : Վարը կառք մը կայ, Շուա գնա՛, և շուտ դարձի՛ր :

Եւ տապարաւոր մարդուն ուղղելով խօսքը,

— Դու քանի որ դիմակդ հանեցիր, տիկնոջ հետ գնա՛ : Կառքին ետեւը հեծիր : Գիտե՞ս մարէնկօթը ո՞ւր ձգելդ :

— Այո՛, ըսաւ մարդը :

Եւ՛ տապարը անկիւն մը դնելով՝ Թենարտուհին ետեւէն գնաց՝ Երբ կ'երթային, Թենարտիէ գլուխը կիսաբաց դռնէն դուրս հանեց և փողոցէն պօռաջ անոնց :

— Նայէ՛ որ նամակը չկորսնցնես. մտածէ՛ որ երկու հարիւր հազար ֆրանք կայ վրայդ :

Թենարտուհին բիրտ ձայնը պատասխանեց.

— Անհող եղիր : Ստամոքսիս մէջ գրի նամակը :

Վայրկեան մը անցած չէր, և ահա մորակի մը շաշու մը լսուեցաւ որ շուտ մը նուազելով անլսելի եղաւ :

— Լա՛ւ, կմկմաց Թենարտիէ : Արագապէս կ'երթան : Այս արջալուծով տիկինը երեք քառորդէն պիտի դառնայ,

Աթոռ մը մօտեցուց բուխերիկին և վրան նստաւ՝ թերերը խաչաձեւելով և իր տղամօտ կօշիկները կրակարանին մօտեցնելով,

— Ոտներս կը պաղին, ըսաւ :

Որջին մէջ ա՛լ Թենարտիէի և կալանաւորին հետ միայն հինգ աւազակ մնացած էին :

Այս մարդիկը իրենց դէմքը ծածկող դիմակներով կամ սեւ սոթինձով, որոնց մով անոնք՝ վախցողի մը վախին համեմատ՝ ամսադործներու, սեւամորթներու կամ սատանաներու կը նմանէին, թմրած և տխուր կերպարանքներ ունէին, և տեսնողը կ'զգար թէ դործ մը կատարելու արդէս ոճիր մը կը գործէին՝ հանդարտօրէն, առանց բարկութեան, առանց կարեկցութեան և տեսակ մը ձանձրութեամբ : Անասուններու պէս անկիւն մը դիզուած էին և կը լռէին : Թենարտիէ իր ոտքերը կը տաքցնէր : Կալանաւորը իր լուկայութեամբը զբաւուած էր նորէն : Տխուր հանդարտութիւն մը յաջորդած էր այն վայրենական աղմուկին որ քանի մը վայրկեան առաջ կը տիրէր սենեակին մէջ.

Ճրագը որու պատրոյգին ծայրը այրելով սպունգ մը կազմուած էր, հազիւ հազ կը լուսաւորէր ահագին հիւզը. խարոյկը նսեմացած էր, և այս ամէն գլուխները պատերուն և ձեղունին վրայ տձեւ ստուերներ կը կազմէին :

Սենեակին մէջ քնացող արջիւռ ձերուիին մեղմ շնչառութեան ձուքը կը լսուէր միայն :

Մարիուս կ'սպասէր անձկութեա կը դող կը սաստկացնէր ամէն բան : Հանկուկը առաջուանէն աւելի անլուծելի կը մնար : Ո՞վ էր այն «պղտիկը» դոր Թենարտիէ Արտոյտ անուանած էր. իր «Իւր-սիւն» էր արդեօք : Կալանաւորը Արտոյտ բառը լսած միջոցին յուզուած չէր, և ամենաբնական կերպով մը ըսած էր. Չգիտեմ թէ ինչ ըսել կ'ուզես : Միւս կողմէն ալ Ի. Ֆ. գիրերը մեկնուած էին. Իւրպէն Յապր էին, և Իւրսիւրի անունը Իւրսիւր չէր : Մարիուսին յայտնապէս տեսածը այս էր՝ ահա : Տեսակ մը սոսկալի շապու մով բեւեռուած կը կինար իր տեղը ուրիշ ամէն բան կը դիտեր և այս տեսարանին կը նայէր : Հոն կը կինար գրեթէ անկարող ըլլալով խորհրդածելու և շարժելու, և կարծես շնչասպառ յոգնելով այն ամենապժուալի իրերէն դոր մօտուտէն կը տեսնէր : Չկրնալով իր

գաղափարները ժողովել և չգիտնալով ի՞նչ որոշում ընելը, կ'ըստասէր որ դէպք մը, որ և է դէպք մը պատահի:

— Ինչ և ըլլայ, կ'ըսէր, եթէ Արտոյտը այն է, պիտի տեսնեմ, վասն զի Թենարտուհին հիմա հոս պիտի բերէ: Ան ատեն ա'լ ըսելիք չեմ ունենար. եթէ հարկ ըլլայ, արիւնս և կեանքս պիտի տամ, ըայց պիտի ազատեմ զԱյն: Ոչինչ պիտի կեցնէ, զիս:

Կէս ժամի չափ անցաւ այս կերպով: Թենարտիէ կ'երեւար թէ խաւարային մտածումով մը պաշարուած էր, կալանաւորը չէր երերար: Բայց Մարիուս մերթ ընդ մերթ և քանի մը վայրկեանէ ի վեր կալանաւորին կողմէն պղտիկ և խորին ձայն մը լսել կը կարծէր:

Յանկարծ Թենարտիէ կալանաւորին դառնալով, գոչեց:

— Պ. Յասպըը, ահա շուտ մը ըսեմ միտքս:

Այս քանի մը բտուերը կարծես թէ լոյս մը տալ կ'սկսէին: Մարիուս ականջ տուաւ, Թենարտիէ շարունակեց.

— Կինս հիմայ պիտի գայ, անհանդիստ մի լլլար: Կը կարծեմ թէ արտոյտը իրօք քու աղջիկդ է, և բնական կը թուի ինձ որ քովդ պահեա զայն: Միայն թէ, մտիկ ըրէ քիչ մը, կնիկս նամակովդ պիտի երթայ գտնելու զայն: Ըսի կնոջս որ ինչպէս արդէն տեսար՝ հազուի այնպիսի կերպով մը որ օրիորդդ առանց զժուարութեան հետը գայ: Երկուքը մէկ կառք պիտի մտնեն, ետեւն ալ ընկերակիցս պիտի նստի: Քաղաքադուռէն դուրս տեղ մը երկու պատուական ձիերով լծուած մարէնկօթ մը կայ: Աղջիկդ հոն պիտի տարուի. հոն կառքէն պիտի իջնէ: Ընկերակիցս ա'նոր հետ մարէնկօթը պիտի մտնէ, և կնոջս հոս վերադառնալով պիտի ըսէ մեզ: Եղաւ կատարուեցաւ: Քու աղջկանդ գալով կըսեմ թէ գեշութիւն մը չպիտի ըլլայ անոր, մարէնկօթը տեղ մը պիտի տանի ուր հանգիստ պիտի սպասէ, և երբ տաս ինձ երկու հարիւր հազար Փրանք ըսուած պղտիկ գումարը, աղջիկդ ետ պիտի առնես: Եթէ զիս բռնել տաս, ընկերակիցս պիտի զարնէ Արտոյտը. ահա այս պիտի ըլլայ եղելութիւնը:

— Կալանաւորը խօսք մը չըսաւ: Պահ մը կենալէն ետք Թենարտիէ շարունակեց.

— Ինչպէս կը տեսնես, պարզ բան մը է իրողութիւնը, Գէշութիւն չպիտի ըլլայ, եթէ ուզես որ գէշութիւն չըլլայ: Գործը ահա պատմեցի. յառաջուց իմաց տուի քեզ որպէս զի գիտնաս:

Կանգ առաւ Թենարտիէ: Յետոյ կրկնեց, մինչդեռ կալանաւորը իր լուութիւնը կը շարունակէր:

— Հիմա կինս հոս գալով երբ պիտի ըսէ թէ Արտոյտը ձամբան է, պիտի թողունք քեզի, և ազատօրէն պիտի կրնաս տունդ երթալ և պառկիլ: Ահա կը տեսնես որ գէշ դիտաւորութիւններ չունինք:

Չարհուրելի գաղափարներ անցան Մարիուսի մտքէն. ինչ պիտի չբերուէ՞ր ուրեմն այն նորատի աղջիկը որ կը հափափուէր. այս հրէշներէն մէկը ուրեմն անյայտ տեղ մը պիտի տանէր զայն. և ուր արդեօք...: Հապա եթէ իր Իւրօնը ըլլար տն. և յայտնապէս կ'երեւար թէ ան էր: Մարիուս կզգար թէ կանգ կառնէին իր սրտի բաղխումները: Ինչ ընէր. պարպէ՞ր արդեօք հրացանը. արդարութեան ձեռքը յանձնէ՞ր արդեօք այս ամէն անգամները: Այլ սակայն յանձնելու ալ ըլլար, գարձեալ տապարաւոր սոսկալի մարդը նորատի աղջկան հետ ձերբակալութենէ ոչ նուազ ազատ պիտի մնար, և Մարիուս միտքը կը բերէր Թենարտիէի սա խօսքերը որոնց արիւնաբոյր նշանակութիւնը կընդնմարէր. երբ զիս բռնել տաս, ընկերակիցս պիտի գարնէ Արտոյտը:

Մարիուս կզգար թէ հիմա զինք ոչ միայն գնդապետին կտաւ կը կ'արգելէր աւազակին ձերբակալութեան նշանը տալու, այլ նաև իր սէրը, այլ նաև այն վտանգը որու կենթարկուէր իր սիրած նորատի աղջիկը:

Այս սոսկալի կացութիւնը որ արդէն մէկ ժամէ ի վեր և տւելի իսկ կը տեսէր. ամէն բոպէ տեսք կը փոխէր: Մարիուս ամէնէն կսկծալի կարծիքները մի առ մի աչքին առջեւ բերելու ոյժը ունեցաւ յոյս մը փնտռելով, այլ չգտնալով: Իր խորհուրդներուն շփոթը որջին գերեզմանական լուութեան հակապատկերը կ'ընծայէր:

Այս լուութեան միջոցին սանդուղի դրան բացուելուն և գոցուելուն ձայնը լսուեցաւ:

Կալանաւորը շարժում մը ըրաւ իր կապերուն մէջ:

— Ահա կինս, ըսաւ Թենարտիէ :

Հաղիւ թէ ըսած էր, և ահա իրօք Թենարտուհին կաս կարմիր դարձած, շնչասպառ, հեւալով, հրարորոք աչքերով ներս խուժեց, և երկու ահագին ձեռքերը իր երկու ազդրերուն զարնելով պռնաց :

— Կե՞ղծ է եղեր հասցէն :

Աւաղակը զոր Թենարտուհին հեաը բերած էր, անոր ետեւէն երեւալով եկաւ սապարը առաւ :

— Կե՞ղծ է եղեր, կրկնեց Թենարտիէ :

— Մարդ մը չկայ, կրկնեց Թենարտուհին. Աէն-Տօմինդ փողոցը, թիւ 17 տունը Պ. Իւրպէն Փապրը չկայ : Չեն գիտեր թէ ո՞վ է ան :

Շունչը հատնելով լուելէն ետք, շարունակեց.

— Պ. Թենարտիէ, այս ծերը ծաղրեց քեզի. ահա ասանկ կ'ըլլայ բարեարտութեան վերջը. եթէ ես ըլլայի քու տեղդ, նախ և առաջ անոր լեզուն կը կտրէի, և եթէ շարութիւն ընէր, կենդանւոյն կ'եփէի դաջն : Անատեն պիտի ստիպուէր խօսելու, պիտի ըսէր թէ ո՛ւր է աղջիկը, պիտի ըսէր թէ ո՛ւր է գարշելի ագեղուկը : Ահա ես ասանկ կ'ընէի, եթէ ձեր տեղը ըլլայի : Շատ իրատունք ունին եղեր անոնք իսկ որ կ'ըսեն թէ մարդիկ աւելի անմիտ են քան թէ կիները : Մարդ մը չկայ. տասնրեօթը թիւը ամենամեծ դուռ մըն է : Պ. Փապրը չկայ Աէն-Տօմինդ փողոցը. հոգիս բերանս բերելով վաղելս, կառապանին տուած ընծաս, ամէն բան պարսպը գնաց : Խօսեցայ դանապանին և դանապանուհիին հետ որ խիստ գեղեցիկ մեծ կին մըն է. չգիտցան ո՞վ ըլլալը :

Մարիուս շունչ առաւ. Իւրսիւրը կամ Արտոյաը, այսինքն աղջիկը, այն դոր ա՛լ չէր գիտեր ինչպէս անուանել, ազատուած էր :

Մինչդեռ կինը հայոյութեամբ կը խօսէր, Թենարտիէ սեղանին վրայ նստած էր. քանի մը վայրկեան կեցաւ առանց խօսք մը ըսելու, աջ ոտքը տարուբերելով և մտախօս վայրենիի մը կերպարանքով կրակարանը դիտելով : Վերջապէս համր և տարրօրէն անագորոյն հնչումով մը ըսաւ կալանաւորին :

— Կե՞ղծ հասցէ. ի՞նչ յուսացիր մեզ խաբելով :

— Ժամանակ վատակի՛ր, պռնաց կալանաւորը ահագին ձայնով մը :

Եւ մի և նոյն պահուն ցնցեց իր կապերը որոնք կարուած էին : Կալանաւորը ա՛լ մէկ ոտքովը կապուած էր անկողնին :

Եթէ մարդոց դիրար ճանչնալու և իր վրայ խոյանալու ժամանակ շտալով բուխերիկին տակ ծռուած, ձեռք դէպի կրակարանը երկնցուցած, յետոյ ելած կանգնած էր, և հիմա Թենարտիէ, Թենարտուհի և աւաղակները վախով որջին դէպի ներքը մղուելով շուարած կալանաւորին կը նայէին որ գլխուն վերելը կը բարձրացնէր կարմիր դուրը ուրկէ սոսկալի նշոյլ մը կարծակուէր. ա՛լ դրեթէ ազատ էր և զարնուելի դիրք մը ունէր :

Դատաստանական խուզարկութիւնը որու տեղի տուաւ Կօրպոյի խարխուլ տունին դաւաճանութիւնը, հաստատեց թէ ստիկանութիւնը Թենարտիէի սենեակը մտած օրը. մեծ սու մը գտաւ. որ մասնաւոր կերպով մը կարուած և շինուած էր. այս մեծ սուն ճարտարութեան այն հրաշալիքներէն մէկն է զոր թիարանի համբերութիւնը խաւարին մէջ և խաւարին համար կ'արտադրէ, հրաշալիք. որոնք ոչ այլ ինչ են թէ ոչ փախուածի գործիներ : Ինչ որ են բանահիւսութեան՝ արկօթեան լեզուին այլաբանութիւնները, նոյնն են նաև գործարկէններու մէջ զարմանալի արհեստի մը այս սոսկալի և նուրբ արտաբերութիւնները : Ինչպէր որ Վիլյուներ կան լեզուին մէջ, նոյնպէս և Պէնվէնութօ Չլլինիներ կան թիարանի մէջ : Ազատիլ փախաքող թշուառը երբեմն առանց գործիի, խարբով մը, հին դանակով մը կերպ կը գանէ սու մը աղօցելով երկու նուրբ առխտակի բաժնելու, այս երկու առխտակները պեղելու՝ առանց աւերելու դրամական դրոշմները, և սուին կողին վրայ պտուտակի ծակ մը բանալու՝ սրպէսզի երկու առխտակները նորէն կարենան կցուել : Այս սուն կ'ուզեօ կը բանաս, կ'ուզեօ կը գոցեօ պտուտակը այս կամ այն կողմը դարձնելով. աուփ մըն է այն : Այս տուփին մէջ ժամացոյցի դսպանակ մը կը պահուի, և ժամացոյցի այս դսպանակը՝ որ օրածայր է՝ հաստ սանողակներ և երկաթէ ձողեր կը կտրէ : Կը կարծուի թէ այն թշուառ թիապարտին ունեցածը սու մըն է. բայց ոչ, սու մը չէ այն. այլ իր ազատութիւնը : Երբ ոստիկանութիւնը ետքէն խուզարկութիւններ ըրաւ Թենարտիէի օրջին մէջ, պատուհանին քովի խշտեակին տակէն ահա այս տեսակ բացուած և երկու կտորի բաժնուած մեծ սու մը գը-

առաւ Նոյնպէս պողպատեայ և կապտագոյն պղտիկ սղոց մը գըտնուեցաւ որ կրնար պահուիլ այն սուին մէջ: Հաւանական է թէ աւաղակները երբ կալանաւորին վրան վնասուցին, վրան էր այն սուին դոր կրցաւ պահել ձեռքը և թէ ետքը երբ քակուեցաւ ձեռքը, պտուտակը հանելով սուին բացաւ, և մէջի սղոցովը զինքը կապող չուանները կտրեց. ասով թերևս մեկնուին այն պղտիկ ձայնը և աննշմարելի շարժումները դոր Մարիուս դիտած էր:

Պ. Լըպլան վախնալով թէ կը հասկնան աւաղակները. չէր կրցած ծախ և ձախ ոտքը կապող չուաններն ալ կտրել:

Աւաղակներուն առաջին դարձանքը անցած էր:

— Անհոգ եղիր, ըսաւ Պիկըրնայլ Թենարտիէին: Տակաւին կապուած է ոտքին մէկը, և ես երաշխաւոր կ'ըլլամ թէ չպիտի կրնայ փախիլ: Ես կապեցի անոր այն ոտքը:

Սակայն կալանաւորը ձայնը բարձրացուց.

— Թշուառականներ մարդեր էք դուք. կեանքս մեծ արժէք մը չունի որ այնքան պաշտպանեմ: Բայց եթէ կերեւակայէք թէ զիս խօսիլ պիտի տաք, թէ ինձ գրել պիտի տաք ինչ որ չեմ ուզեր գրել, թէ ինձ ըսել պիտի տաք ինչ որ չեմ ուզեր ըսել...


Իր ձախ բաղուկին թեղանին վեր ըրաւ և շարունակեց.

— Ահաւասիկ:

Եւ ահա թեւը երկնցնելով մերկ մարմինին վրայ դրաւ հրաբորբոք դուրը զոր աջ ձեռքով փռնած էր փայտէ կոթէն:

Այրող մարմինին սարսուռը լսուեցաւ, չարչարանքի սենեակներու յատուկ հոտ մը ծաւալեցաւ սենեակին մէջ: Մարիուս սարսափահար երեբաց, աւաղակներն անգամ սրփուք մը զգացին, տարօրինակ ձերքն զէմքը հազիւ թէ կարկամեցաւ, և՛ մինչդեռ հրադոյն երկաթը ծխող վէրքին մէջ կը միտէր, անզգայապէս և գրեթէ վեհութեամբ Թենարտիէին կը նայէր իր գեղեցիկ նայուածքովը, նայուածք մը որ անտխակալ էր և ուր տառապանքը հանդարտ վեհութեան մը մէջ աներեւոյթ կ'ըլլար:

Մեծ և ազնիւ բնաւորութեան տէր մարդոց մարմինն և զգալարանքը երբ Ֆիլիքթական ցաւով համակուելով կ'ապտամբին, հոգին երեւան կը հանեն և ճակատին վրայ կը ցուցնեն, ինչպէս



Թշուառական մարդեր և. Գուգ: Էջ 430
Պատկեր քիս 64
Թշուառակներ 2.

որ անկիրթ զինուորներու ապստամբութիւնները դորապետը կ'ըս-
տիպեն ինքզինքը ցուցնելու :

— Թշուառականնե՛ր, ըսաւ, մի՛ վախնաք ինձմէ ինչպէս որ
ես չեմ-վախնար ձեզմէ :

Եւ դուրը վերքէն հանելով բաց մնացած պատահանէն դուրս
նետեց. հրատուրը և սոսկալի գործին մթութեան մէջ դառնալով
աներեւութացաւ, հեռու տեղ մը ձիւնին մէջ ինկաւ և մարնցաւ :

Կալանաւորը կրկնեց .

— Հիմազ ըրէք ինձի ինչ որ կ'ուզէք :

Զինաթափ էր կալանաւորը :

Բանեցէք զինքը, ըսաւ Թենարաիէ :

Աւազակներուն երկուքը իրենց ձեռքը անոր սւտին վրայ
դրին, և որովայնախօսի ձայն տւնցող դիմակաւոր մարդն ալ դէ-
մը կեցաւ՝ պատրաստ ըլլալով անոր դանկը բանալիով խորտակելու
եթէ ամենափոքր շարժում մը ընել սուղէր :

Նոյն միջոցին Մարիուս իր ներքեւ, միջնորմին քովէն յետա-
դայ խօսակցութիւնը լսեց որ ցած ձայնով տեղի կ'ունենար. Մա-
րիուս չէր տեսներ խօսողները. վասն զի շատ մօտեցած էին միջ-
նորմին :

— Ա՛լ մէկ բան կը մնայ մեզ ընել :

— Սպաննել (escarper) :

— Աղէկ ըսիր :

Խօսողները էրիկ և կնիկ էին որոնք կը խորհրդակցէին :

Թենարաիէ կամաց կամաց քալելով դէպի սեղանը գնաց,
դզրոցը բացաւ և դանակը առաւ :

Մարիուս ատրճանակի բունին գունդը կը չարչարէր : Անլո՛ւր
վարանում : Ժամէ մը ի վեր իր խղճին մէջ երկու ձայն կար. մէկը
երեսն կ'ըսէր յարգել հօրը կտակը, միւսը կ'ըսէր օգնել կալանաւո-
րին : Այս երկու ձայները անընդհատ իրենց կռիւը կը շարունակէին
որով Մարիուս հողեւարի մը պէս կը չարչարուէր : Մինչեւ այն
վայրկեանը անյայտապէս յուսացած էր գտնել միջոց մը՝ այս եր-
կու պարտաւորութիւնները հաշտեցնելու համար. բայց հնարաւոր
բան մը պատահած չէր : Սակայն վտանգը ստիպողական էր. ա՛լ

սպասելու վայրկեան մըն ալ չկար. Թենարտիէ կալանաւորէն քանի մը քայլ անդին՝ դանակը ձեռքը՝ կը մտածէր:

Մարիուս իր աչքերը չորս դին կը շրջէր մոլորագին. յուսահատութեան մեղքնայական յետին միջոցն էր այս:

Յանկարծ սարսուեցաւ:

Բոլորակ լուսնի սաստիկ ճառագայթ մը անոր ոտքերուն տակ սեղանին վրայ թուղթի կտոր մը կը լուսաւորէր և կարծես կը ցուցնէր զայն: Մարիուս այս թուղթին վրայ կարդաց սա տողը զոր նոյն առտու Թենարտիէի առջինէկ աղջիկը գրած էր:

Փ Ա Յ Տ Ի Ո Ր Ն Ե Ր Ը Ե Կ Ա Ն

Մարիուսի մաքէն գաղափար մը, լոյս մը անցաւ. իր փնտրումն միջոցն էր, զինքը հարչարող խնդիրին լուծումն էր այն այս սինքն մարդասպանը խնայել և նահատակը աղատել: Ծուներ դրաւ դարանին վրայ, թեւը երկնցուց, առաւ թուղթին կտորը, միջնորմին բուռէն կտոր մը դատեց կամաց մը, թուղթին մէջ դրաւ բուռին կտորը, և ծակէն Թենարտիէի որջը նետեց:

Ժամանակն էր նետելուն. Թենարտիէ նուաճելով իր վերջին երկիւղները և յետին խղճահարութիւնները դէպ ի կալանաւորը կ'ուղղուէր:

— Բան մը ինկաւ, պօռաց Թենարտուհին:

Ի՞նչ է, ըսաւ էրիկը:

Կինը խոյանալով թուղթով պլլուած բուռին կտորը առած էր գետնէն: Ամուսինին տուաւ զայն:

— Ուրկէ՞ եկաւ այս, հարցուց Թենարտիէ:

— Չարմանալի՛ հարցում, ըսաւ կինը, ուրկէ՞ կրնայ մտած

ըլլալ: Պատուհանէն եկաւ:

— Պատուհանէն անցնելով մտնելը տեսայ, ըսաւ Պիկրընայլ: Թենարտիէ շուտ մը բացաւ թուղթը և ճրագին մօտեցուց:

— Էթօնիսի գիրն. ո՛ւրջ:

Նշան ըրաւ կնոջը որ անմիջապէս մօտեցաւ. թուղթին վրայ

գրուած տողը ցուցուց անոր. յետոյ թորին ձայնով մը շարունակեց:

— Ծո՛ւտ, ելարանը, կափուլին մէջ թողունք մօեզ որսը և կծիկը դնենք:

— Նախ մարդուն գլուխը չպիտի կտրէ՞ք, հարցուց Թենարտուհին.

— Ժամանակ չունինք:

— Ուրկէ՞ պիտի փախինք, կրկնեց Պիկրընայլ:

— Պատուհանէն, պատասխանեց Թենարտիէ:

— Բօնին քանի որ քարը պատուհանէն նետեց, ըսել է թէ տունը այն կողմէն պաշարուած չէ:

Որովայնախօսի ձայն ունեցող դիմակաւորը վար դրաւ մեծ բանալին, երկու թեւերը վեր ըրաւ օդին մէջ և առանց բառ մը արտասանելու արագապէս երեք անգամ ձեռները բացաւ և դոցեց: Նաւասարիներու մէջ արուած ահաղին ճգնաժամի մը նշանը եղաւ այս: Աւազակները թողուցին կալանաւորը: Ակնթարթի մը մէջ շուտէ սանդուղը պատուհանէն դուրս կախուեցաւ և երկու երկաթէ ափիչներովը պատուհանին եզրին յարեցաւ պնդապէս:

Կալանաւորը ուշադրութիւն չէր ըներ նշմարելու համար ինչ որ կ'անցնէր իր բոլորաիջը: Կ'երեւար թէ կը մտախոհէր կամ կ'աղօթէր: Երբ սանդուղը հաստատապէս կախուեցաւ, Թենարտիէ պօռաց.

— Եկո՛ւ, կնիկ:

Եւ դէպ ի պատուհանը վազեց:

Բայց երբ ոտքը պատուհանէն դուրս հանելու վրայ էր, Պիկրընայլ ուժգնակի անոր օձիքը բռնելով, ըսաւ.

— Չէ՛, կեցիր նայինք, աներես ծերուկ. մեզմէ ետք:

— Մեզմէ՛ ետք, տոնացին աւազակները:

— Տղա՛յ էք տղա՛յ, ըսաւ Թենարտիէ, ժամանակ չկորսնցընենք: Ոստիկանութիւնը մեր ետեւն է:

— Ապա ուրեմն, ըսաւ աւազակներէն մէկը, վիճակ ձգենք. անցնի առաջ որու որ վիճակը պիտի խնայ:


Թենարտիէ գոչեց.

— Խնւ էք, փախուկ էք. ահա խել մը մորոտներ որոնք
կ'ուզեն ժամանակ անցնել աղայարար, մատ թրջել (*) վիճակ ձգել,
անուաններ դրել, և անուանները գլխարկի մը մէջ դնել, այնպէս չէ՛:

— Գլխարկս կ'ուզէ՛ք, պօռաց ձայն մը դուռին սեմէն:

Ամէնքն ալ դարձան: Ժամէրն էր պօռացողը:

Ժամէր գլխարկը ձեռքը բռնած էր, և ժպտելով աւազակ
ներուն կ'երկնցնէր զայն:



Գ Լ Ո Ւ Մ Ի Ա

ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ ՊԵՏԲ Է ՄԻՇՏ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ ՋԵՐՐԱԿԱԼԵԼ

Երբ գիշերուան մութը սկսած էր տիրել, ժամէր տեղ տեղ մար-
դեր դրած, և ինքն ալ Պարիէր Տը Կօպրէնի փողոցին ծառերուն
ետեւը դարանի մտած էր. այս փողոցը պուլվարին միւս կողմէն
Կօրպօի խարխուլ տունին դէմն է: Նախ իր գրպանը (իմա բանտը
բացած էր մէջը նետելու համար երկու նորատի աղջիկները որոնք
որջին բռնորտիքը հսկելու պաշտօն ունէին: Բայց միայն Աղէլման
գրպանած էր. Իսկ էրօնին իր տեղը կեցած չէր. աներեւոյթ եղած
ըլլալով բռնուած չէր: Յետոյ ժամէր պահուած էր սպասելով որ
որոշուած նշանը տրուի: Կառքին երթեւեկութիւնները սաստիկ
յուզած էին զինքը: Վերջապէս համբերութիւնը հատած էր, և ա-
պահով ըլլալով թէ բոյն մը կայ հոն, ապահով ըլլալով թէ բա-
րեբաղդուրիւն պիտի ունենայ, և ճանչած ըլլալով աւազակներուն
չասերը որ ներս մտած էին, որոշած էր մտնել և վեր ելլել առանց
սպասելու որ ատրճանակը նետուի:

Ինչպէս կը յիշէ ընթերցողը, ժամէր Մարիուսին բանալին
ունէր քովը:

Յարմար ատենին հասած էր:

Աւազակները՝ ահաբեկ իրենց զէնքերուն վրայ յարձակեցան
զոր փախչելու միջոցին հոս հոն նետած էին: Մանրերկրորդ մը ան-
ցած չէր տակաւին և ահա այս եօթը մարդերը՝ զոր տեսնողը կը
դարձուրէր՝ պաշտպանողական դիրքով մը խմբուեցան. մէկը իր
տապաբը, մէկը իր բանալին. միւսը իր ըխրը, միւսներն ալ մկրաա-
ները, երկաթէ լծակները և կռանները առնելով: Իսկ Թենարտիէի
ձեռքը իր դանակը կտր: Թենարտուսին ահագին սալաքար մը

(*) Խաղ մը կայ որ է մատերուն մէկը թրջել և հինգ մատը միատեղ երկնցնել
ուրիշի մը. ասիկայ թրջուած մատը բռնելով կը շահի կամ կը կորսնցնէ ինչ որ
զին դրուած է:

բունեց որ պատուհանին անկիւնն էր և որ աթոռի տեղ կը ծառայէր իր աղջիկներուն :

Ժավէր գլուխը դրաւ գլխարկը, և երկու քայլ առաւ դէպի սենեակը. թեւերը կուրծքին վրայ, գաւազանը թեւին տակ, սուրբ պատեանին մէջ ունենալով :

— Մի՛ շարժի՛ք, ըսաւ : Պատուհանէն չպիտի անցնի՛ք. դուռնէն պիտի անցնի՛ք : Դուռնէն անցնիլը նուազ վնասակար է : Դուք եօթը հողի էք, իսկ մենք տասնըհինգ : Համալի պէս մէկ մէկու պարանոց չբունենք : Աղնիւ ըլլանք :

Պիկրընայլ ատրճանակ մը առաւ զոր պլուզային տակ պահած էր, և թենարտիէին ձեռքը տուաւ, անոր ականջին ըսելով .

— Ժավէրն է այն : Ես այս մարդուն վրայ չեմ համարձակիլ ատրճանակը նետելու. դուն կը համարձակի՞ս :

— Հապա կը հարցնե՞ս, ըսաւ թենարտիէ :

— Ապա ուրեմն նետէ :

Թենարտիէ հրացանակը բունեց, և ժավէրին ուղղեց :

Ժավէր որ երեք քայլ հեռու էր. ուղղակի թենարտիէի նայեցաւ, և ըսաւ միայն .

— Մի՛ նետեր հա՛, կրակ չպիտի առնէ :

Թենարտիէ կայծահանը քաշեց, բայց կրակ չառաւ :

— Քեզի չըսի՛, կրկնեց ժավէր .

Պիկրընայլ իր մահակը ժավէրին օտքերուն առջև նետելով .

— Սատանաներուն թագաւո՛րն ես դուն, անձնատուր կ'ըլլամ ըսաւ :

— Հապա դո՛ւք, հարցուց ժավէր միւս աւազակներուն :

Մենք ալ, պատասխանեցին :

Ժավէր հանդարտօրէն կրկնեց .

— Լա՛ւ, տհա տօանկ ըլլալ պէտք է. կ'ըսէի թէ աւելի աղնիւ է այս կերպը :

— Մէկ բան կ'ուզեմ միայն, կրկնեց Պիկրընայլ, կ'ուզեմ որ երբ բանա՞ր դրուիմ, ծխախոտ արուի ինձ :

— Շնորհուած է, ըսաւ ժավէր :

Յետոյ դարձաւ և ետեւը գտնուողները կանչելով :

— Հիմա մտէ՛ք, ըսաւ :

Անմիջապէս քաղաքապահներու և ոստիկաններու խումբ մը սուրերով, մահակներով և բերեբով ներս խուժեցին ժավէրին ձայնը առնելով : Աւազակները կաշկանդուեցան : Մարդերու այս բազմութիւնը զոր ճրագ մը հազիւ հազ կը լուսաւորէր. օտուերով կը զրաւէր որջը :

— Ամէնուն ալ շրուշակ (poucette) անցուցէ՛ք, պօռաց ժավէր :

— Մօտեցէ՛ք տէ, կը տեսնէք, պօռաց ձայն մը որ մարդու ձայն չէր և որու համար ոչ ոք կրնար ըսել թէ կնոջ ձայն մըն է :

— Թենարտուհին պատուհանին անկիւններուն մէկը պտանէջ մը ըրած էր իրեն, և այն էր այն մանչու մը հանողը :

Քաղաքապահները (sergent de ville) և փայտուորները ետ քաշուեցան :

Թենարտուհին վրայէն շալը նետած և գլխարկը պահած էր. էրիկը որ անոր ետին կծկուած էր, գրեթէ աներեւոյթ կ'ըլլար ինկած շալին տակ. կինը իր մարմինովը կը ծածկէր զայն. երկու ձեռքերովը գլուխին վերեւը բարձրացնելով սալաքարը՝ քարածայռ մը նետելու պատրաստուող հսկաուհիի մը օրոտումով :

— Քաշուեցէ՛ք, պօռաց :

Ամէնքն ալ դէպի նրբանցքը քաշուելով, սենեակին մէջ թափուր տեղ մը բացուեցաւ :

Թենարտուհին աւազակներուն նայեցաւ որոնք կաշկանդուած էին առանց դիմադրութեան, և կոկորդային ու բիրտ ձայնով մը մրմռաց .

— Վատե՛րը :

Ժավէր ժպտեցաւ և յառաջացաւ սենեակին դէպի թափուր ձգուած տեղը, ուր կը նայէր թենարտուհի իր երկու բերեբովը :

— Մի՛ մօտենար, կորիւր, թէ ոչ գլուխդ կը ջախջախեմ, պօռաց թենարտուհին :

— Ի՛նչ արի զինուոր, ըսաւ ժավէր. մա՛յր դու, ստոյգ է թէ մարդու մը պէս մօրուս ունիս, բայց ես ալ կնիկի մը պէս ճիրաններ ունիմ :

Եւ նորէն յառաջացաւ :

Թեև արտուհին՝ հերարձակ և սոսկալի՝ իրարմէ զատեց սրունքը, ետեւը ծռեցաւ և սալաքարը ժովէրին գլուխին նետեց մոլեղնաբար: Ժովէր ծռեցաւ, սալաքարը վրայէն անցաւ, ներսի ճատին դարկաւ, պատին վրայէն բուռի մեծ կտոր մը վար իջեցուց, և որջին մէջ տեղէն՝ որ բարեբաղդաբար թափուր էր՝ անկիւնէ անկիւն սաստատելով մինչև ժովէրին ներբաններուն քովն եկաւ կեցաւ:

Նոյն պահուն ժովէր ամոլներուն յօտեցաւ: Իր լայն ձեռքերէն մէկը կնիկին ուտին վրայ դրաւ օւժգին և միւսն ալ էրիկին գլուխը բռնելով:

— Ծրուշակնե՛րը, պօռաց:

Ոստիկանութեան մարդերը ներս մտան խոնելով, և քանի մը մանրերկրորդի մէջ ժովէրին հրամանը կատարուեցաւ:

Թեև արտուհին՝ յուսահատ՝ իր և էրիկին կաշկանդուած ձեռքերը նայեցաւ, գետինը ինկաւ և լալով պօռաց:

— Աղջիկնե՛րս:

— Բանան են, ըսաւ ժովէր:

Սակայն ոստիկանները դուռին ետեւը քնացող գինովը նշմարելով կը ջնցէին:

Արթնցաւ գինովը:

— Լմնցա՛ւ, ժօնարէթ:

— Այո՛, պատասխանեց ժովէր:

Կաշկանդուած վեց աւաղակները օտքի վրայ էին. բայց տակաւին ճիւղի կերպարանք օւնէին, երեքին՝ երեսը սեւով մրոտուած երեքն ալ դիմակ դրած էին:

— Մի՛ հանէք դիմակները, ըսաւ ժովէր:

Եւ Բօթսաամի զօրահանգէսի ներկայ Ֆրետերիկ Բ. ի մը նայուածքով աւաղակներուն նայելով հանդիսապէս, «ծխահան մաքրողներուն» ըսաւ:

— Բարի լո՛յս, Պիկրընայլ: Բարի լո՛յս, Պրիւժօն: Բարի լո՛յս Տէօ-Միլիար:

Ապա դէպ ի երեք դիմակները դառնալով ուռնաւոր մարդուն ըսաւ.

— Բարի լո՛յս, Կէօլմէր:

Բրաւոր մարդուն:

— Բարի լո՛յս, Պապէ:

Եւ որովայնախօսին.

— Բարե՛ւ, Գլազու:

Ժովէր նոյն միջոցին աւաղակներուն կալանաւորը նշմարեց որ ոստիկանութեան մարդերուն գալէն ի վեր գլուխը կախած էր առանց խօսք մը արտասանելու:

— Ի՜նչ կեցէք պարոնը, ըսաւ ժովէր, և թո՛ղ ոչ ոք դուրս ելլէ:

Ասիկայ ըսելէն ետք իշխանաբար տեղանին առջև նստաւ որով վրայ մնացած էին ճրագը և կաղամարը. գրպանէն դրոշմաւոր թուղթ մը հանեց և սկսաւ տեղեկագիրը գրել:

Երբ գրեց առջի տողերը որոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ միշտ մի և նոյն սովորական խօսքերը, աչքերը վեր ըրաւ:

— Մօտ բերէք այն պարոնը զոր այս պարոնները կապած էին:

Ոստիկանները չորս գին նայեցան:

— Է՛, ո՛ւր է պարոնը, հարցուց ժովէր:

Աւաղակներուն կալանաւորը, Պ. Լըպլան, Պ. Իւրպէն Փապը, Իւրսիւլի կամ Արտոյաին հայրը աներեւոյթ եղած էր:

Դռանը քով պահապաններ դրուած էին, բայց պատուհանին քով ոչ: Մարդը քակուելէն ետք՝ երբ ժովէր անդեկագիրը պատրաստելու կը պարապէր, սենեակին մէջ տիրող շփոթէն, աղմուկէն, բազմութենէն օգուտ քաղելով պատուհանէն դուրս յարձակած էր վայրկեանի մը մէջ ուր ոչ ոք աւշադրութիւն կ'ընէր իրեն:

Ոստիկան մը պատուհանը վաղեց և նայեցաւ: Ոչ ոք կը տեսնուէր դուրսը:

Չուանէ եւարտնը դեռ կ'երբերար:

Մի՛ շք, մրմուռաց ժովէր. գուցէ լաւագոյնն էր այն:



Գ Լ ՈՒՆ Ի Բ.

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ ՃՉՈՂ ՊԶՏԻԿԸ

Օրթիթալի պուլվարի տունին մէջ այս դէպքերը կատարուելէն օր մը ետք, աղայ մը՝ որ կ'երեւար թէ Աւստերլիցի կամուրջին կողմէն կուգար՝ աջ կողմի կողմնական ծառուղիէն երթալով դէպ ի մօնթէնպոյի կողմերը կ'ուղղուէր: Արդէն գիշեր եղած էր: Այս արդան որ դալկադէմ և նիհար էր, հնոթիններ և կտաւէ բանթալան մը հագած էր փետրվար ամիսին մէջ, և բոլոր զօրութեամբը կ'երգէր:

Բըթի-Պանգիէի փողոցին անկիւնը պառաւ կին մը ծռելով աղբերու դէզի մը մէջ բան մը փնտռէր լամպարին լոյսովը. տղան անցնելու միջոցին ոտքովը պառաւին զարկաւ յանգէտս, յետոյ ետ քաշուելով:

— Վա՛յ, շուն չէ եղեր. մինչդեռ ես ահագին, ահագին շուն մը կարծեր էի ասիկայ: Ահագին բառը երկրորդ անգամին ձայնը այնպիսի հեղձութեամբ մը հասօցնելով արտասանեց որ բաւական լաւ արտայայտելու համար պէտք է գլխադիրներով գրել. *անառ դի'ն, Ա.Հ.Ա.Գ.Ի.Ն շուն մը:*

Պառաւը սաստիկ բարկանալով կանգնեցաւ:

— Կիրամուտքի վաստա՛կ, մրմռաց: Եթէ ծռած չըլլայի՛ր գիտէի թէ ո՛ր տեղդ ոտքիս տակ առնելով պիտի ջախջախէի՛: Տղան արդէն հեռացած էր:

— Ի՛ր՛ս, քը՛ս, կրկնեց: Ապա ուրեմն թերեւս սխալած չեմ զարնելովս:

Պառաւը՝ զայրոյթէն շնչասպառ՝ բալորովին կանգնեցաւ, և լամպարին նշոյլը գլխովին լուսաւորեց անոր կապարազոյն դէմքը:

որու վրայ անկիւններ խորշմներ փորուած էին, զանազան գիծերու հետ որոնք բերնին խորշերուն կը մօտենային: Մարմինը մութին մէջ աներեւոյթ կ'ըլլար, և միայն գլուխը կը տեսնուէր: Չաւանցումի դիմակն էր այն զոր կարծես թէ նշոյլը գիշերային խաւարին մէջ նկարած էր: Պատանին պառաւը դիտելով:

— Տիկինը, ըսաւ, չունի այն գեղեցկութիւնը որ իմ հաշիւիս կուգայ:

Յետոյ իր ճամբան շարունակեց, և նորէն սկսաւ երգել:

Գոստրասպօ քագանոր
Ոսնացուպով կը քայլեր,
Տակէն անցնողն տար անոր...

Երրորդ տողը լմնցնելէն ետք երգը ընդմիջեց: Թիւ 50-52 տունին առջեւ հասած էր, և դուռը գոց դառնելով սկսած էր օտքերովը դուռին զարնել, գրդրուձով և դիւցազնական կերպով զարնելով, որով անոր մարդու մուճակներ հագած ըլլալը կը յայտնուէր աւելի քան թէ պատնեկան ոտքեր ունենալը:

Սակայն այն պառաւը որու պատանին հանդիպած էր Բըթի-Պանգիէի փողոցին ծայրը, անոր ետեւէն վազելով կուգար, ազմկալի աղաղակներ հանելով և մեծ մեծ շարժումներ ընելով:

— Ի՛նչ է այն, ի՛նչ է այն. Աստուած իմ Աստուած, դուռը պիտի խորտակէ հիմա, տունը պիտի փլցնէ:

Պատանին ոտքովը տակաւին կը զարնէր դուռին:

— Մի՛թէ հիմա այս կերպով կը նորագուին տուները:

Յանկարծ կանգ առաւ պառաւը՝ ստամբակը ճանչնալով:

— Վա՛յ, այն շուտիկն է եղեր:

— Վա՛յ, պառաւն է եղեր, ըսաւ պատանին: Բարի լո՛յս, Պիւրկօնիկ խաթունիկ, նախահայրերս տեսնելու եկայ:

Պառաւը պատասխանեց դէմքը ծռելով. բաղադրուած ծռու-

թիւն դէմքի զոր՝ առելութիւնը պառաւին տկարութեան և տգե-

ղութեան շնորհիւ յանկարծ կազմած էր սքանչելապէս և որ զրժ-

բաղդարաբ կորսուեցաւ մութին մէջ :

— Տունը ա՛լ մարդ չկայ, շա՛ներեա :

— Վա՛շ, կրկնեց պատանին. ո՛ւր է ուրեմն հայրս :

— Ծորոխ բանան է :

— Իրա՞ւ. հասա մայրս :

— Սէն-Լազարն է :

— Է՛, աղէկ. հասա քոյրերս :

— Սնոնք ալ Մատրլօնէթն են :

Պատանին ականջին ետեւը քերեց, Պիւրկօն լսածունին նայեցաւ և ըսաւ .

— Ա՛հ :

Յետոյ ներբաններուն վրայ դարձաւ, և պահ մը ետք պառաւ՝ դուռին սեմին վրայ կեցած՝ պատանին աղղու և կայտառ ձայնը լսեց որ ձմեռնային հովէն ստրստող սեւաթոյր կնճնիներու մէջ սուղելով կ'երգէր .

Գոտըս ապօ թագաւոր

Ոտնացուպով կը քայլէր .

Տակէն անցնողն տար անոր



Երկու փուլ, երբ ագուաներ

Նա որսալու կը մեկնէր

Ոտնացուպին վրայ կանգնած :

ՎԵՐՋ ՎԵՅԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ԵՒ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



10

294

4 -

?

804

« Ազգային գրադարան

NL0318035

6386